



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերմագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

ստանձնել և տարածել այս քո ցանկացած մեջաբերով կամ կրիչով
մեջաբերել կամ օգտագործել առկա այս քո ասեղմելու համար երբ

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԿԻՒՆՄԱՆՐԿ ՄԱՏԵՆԱՆԱՐ

ԹԻ 46

ՀԻՄՆՈՒԱԾ 1909ԻԸ

Հանրի Ազատույ

Մ Ե Ր Կ Կ Ի Ն Ը

(ԲԱՅԵՐԱԿԱՆՂ, ՉՈՐԾ ԱՐԱՐՈՒԱԾՈՂ)

Թարգմանեց ՉԱՐՆԱՆՆՍԻ:



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ «ԿԻՒՆՄԱՆՐԿ»

Կ. Ն. ՄԱԳԱՍՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Կ. ՊՐԱԳՐԱՆՆԵՐ

1923

24
33

1845

THE UNIVERSITY OF CHICAGO



LIBRARY OF THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

5720 S. UNIVERSITY AVE.

CHICAGO, ILL.

84
P-33

84

ԿԻՒՔԻՄՊԷՐԿ ՄԱՏԵՆՈՇՈՐ ❁ թիվ 46 ❁
ՀԻՄՆՈՒՄ 1909ին

Հանրի Ազատայ


Մ Ե Ր Կ Կ Ի Ն Ը

A 41701
II

(LA FEMME NUE)

ՔԱՅԵՐԱԿԱՆ ԶԱՐԾ ԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Թարգմանից ԶԱՐԾՆ ԿՆՈՒՅԻ



ՏՊԱԳՐ. ԿԻՒՔԻՄՊԷՐԿ

Կ. Ն. ՄԱԳԱՍՅԱՆ ԵՒ ԸՆԿ.

Կ. ՊՈՒԹՍ

1924

Ներկայացված մասին քարգմանչին իրառույթները
վերապահում է:



45376-64

Ի սրձող Անձերք

ԲԻԷՐ ՊԷՐՆԻԷ

ՌՌԻՇԱՐ

ԿՐԷՎԻԼ

ՌՌԻՍԷԼ

ԹԱՊՈՒՐՕ

ՇԱՅԵԱՐ

ՓԱՍՏԱԲԱՆ ՌԻՎԷ

ՎԷՐՍԷԼ

ԺՕՊԷՌ

ԿԷԹԷՆ

ՄԱՆԹՆ

ՍԱՊԱԹԻԷ

ՀԹՏԻՆԵԻ

ԺԱՆ

ԻՇԽԱՆ ՏԸ ՇԱՐՊԱՆ

ԿԱՐՁԷՆ

ՌՕԼՍԻՆԻ

ԼԱՅԱՐԿ

ԱՐՆՀԱՅՄ

ՍԷՐԹԷՆ

ԷՕԺԷՆ ՊԷՐՆԻԷ

ՍԷԼԻԷ

ՏԻԻՄԱ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ

ՌԻԻՍԻՆԵՕԼ

ՎԻԱԼԱ

ՊԱԹՐԷՆ

ԼՕՐԷԹ ԳԱՍԱՆԵԸ

ԻՇԽԱՆՈՒՀԻ ՏԸ ՇԱՐՊԱՆ

ՍԻԻՉՕՆ ԳԱՍԱՆԵԸ

ՏԻԿԻՆ ԿԱՐՁԷՆ

ՏԻԿԻՆ ՍԷՐԹԷՆ

ՆԻՆԻ

ԻՉԱՏՕՐԱ ԼՕՐԷՆՉ


ԷՄՄԱ

ՕՐ. ԺԻԻԼԻ

ՏԻԿԻՆ ՄՈՒՎՉԻ

ՖՐԱՆՍՈՒՍ

ԻՄԲԱՆԵՐ ՈՒ ԿԱՐՍՕՆՆԵՐ





Սօսիւթէ տէ գ'Արթիսք Յրանտի պալատին մէջ, բանդակագործութան քամնի պիւժէն, պատուոյ շքանքովի փառաբանութան օր: Արձաններու շարքին մէջ կը տեսնուին զանէ ու մարմարէ խմբանկարներ, ծառափիմակներ, խոտոր ծածկոյթներ: Պիւժէն վանդակորմով մը անջատուած է սրանին խորէն: Չախակոյզմը, սեղանի շաւ մը աւելցուի, ոլորուն փայտէ բարավան մը: Մէջտեղը՝ Այլ գործարանը շինուած սեղաններ եւ աթոռներ: Պալատին երկայնքը երկարէ կամարներուն տակ եւ ժողովարանին մօտ հաստատուած են, ուր տեղի կ'ունենայ ժիւրքիին փառաբանութիւնը: Վարագոյրը բազուէ լուն՝ պիւժէն քափուր է գրեթէ: Քշիկ մը խորը, դէպ ի աջակոյզմը, սեղանի մը առջեւ կը զտնուին Բիւր Պերնիտ, Լօլէր Գասաներ եւ իրենց բարեկամը՝ Թապուրօ:



Պէ՛րՆԻԻ՛.— Վերջապէս, արդիւնքը գէշ չէ. ես այդքանն ալ չէի տկնակալեր:

ԹԱՊՈՒՐՕ.— Եւ ոչ ալ ես:

Պէ՛րՆԻԻ՛.— Եկո՛ւր, ճշդե՛նք սա պանկը... Ինձի առ՛ւր մատիտը (Արձանագործութեան սրահի տակոյ սանդուխէն կը յառաջանայ վաստակաւոր բննադատ Վերսէլ, օրագրողի մը ընկերակցութեամբ: Անոնք Պերնիտի ուսը ձեծելու կ'ըլլան, եւ անա՛ Պերնիտէ ետին կը դառնայ:)

Օ՛հ, սիրելի վարպետ, դուք ալ հո՞ս էք:

Վէ՛րՈՒԻ՛.— Հոս եկայ, հասկնալու համար թէ արդիւնքը նարատաւո՞ր է ձեզի...:

Պէ՛րՆԻԻ՛.— Որքանն ազնիւ էք: Երեսունըմէկ քուէ

չահեցայ առաջին քուէարկութեան ատեն... իսկ ութսուն
քուէ՝ երկրորդ քուէարկութեան մէջ . . . : Հիմա, վերջին
քուէարկութիւնն է որ կը կատարուի... : Ձեմ կարծեր որ
չահիմ. բայց ամենքն ալ կ'ըսեն թէ Ֆիկարոյի մէջ գրած
ձեր յօդուածին կը պարտիմ, եթէ յաջողելու ո'ւնէ հաւա-
նականութիւն կայ... : Շիտակը, անակնկալ մը եղաւ ձեր
յօդուածը... : Մեծապէս շնորհակալ եմ ձեզի... : Յուզուած
եմ, յուզուած... :

ՎԷՐՄԷԼ, — Ինծի շնորհակալ ըլլալու բան չկայ : Ձեր
նկարը կը գնահատեմ իբր գլուխ-գործոց մը, ինչպէս իր
գրած եմ արդէն, ու պատուոյ շքադրամը պահանջելով ձեզի
համար, իմ պարտքս է որ միայն կատարած եմ... : Գուք
բաւական քուէներ պիտի շահիք, բայց ոչ՝ շքադրամը :

ՊԷՐՆԻԷ, — Ինքզինքս չեմ խարեր : Խորաշնորհ մը
պիտի ըլլայ ատիկա :

ՕՐԱԳՐՈՂԸ, խօսք ասելով. — Տասը տարիէն միայն
պիտի կրնաք ձեռք բերել այդ շքադրամը՝ փորձակայքէ
(սքած) մը յետոյ, ու ձեր անյաջող մէկ նկարին շնորհիւ :

ՎԷՐՄԷԼ, — Ձեզի կը ներկայացնեմ Մ. Մէրսիէն, որ
«Մանօն» կը ստորագրէ, ինչպէս յայտնի է :

ՊԷՐՆԻԷ, — Այո՛... Մանօն : Հանրածանօթ է : Թոյլ
տուէք որ ես ալ ձեզի ներկայացնեմ Մ. Թապուրօն ու քնքուշ
բարեկամուհիս՝ Օր. Գասաներ, որուն նկարը գծած եմ :

ԼՕԼԷԹ, համետօրէն ոտքի ելլելով — Պարոննե՛ր... :

ՎԷՐՄԷԼ, — Շնորհաւորութիւններս, օրիորդ... : Եր-
կուքնիդ ալ արիութիւնը կ'ունենաք քուէարկութեան սրա-
նէն հետու մնալու... :

ՊԷՐՆԻԷ, — Լաւագոյնը... պատշաճագոյնը աս է... :
Նախընտրելի է որ շատ չտեսնեն զիս... : Մեծ յուզումներ
պատճառող բաներ են ասոնք... : Բարեկամները հոս կու-
զան ու իրազեկ կը պահեն զիս... : Երբեմն սրահին մէջ
կ'երեւամ... : Ինչպէս յայտնի է, իւրաքանչիւր քուէար-
կութենէ յետոյ՝ այս կողմը կուզան, պատկանին անցնելու

և շաղակրատելու համար: Հրապարակը հոս է...: Աւրեմն...:

ՎԷՐՄԻԷԼ. — Քիչ յետոյ պիտի վերադառնամ...: Առանց
որան մտնելու, քանի որ այդ իրաւունքը չունիմ, ձեր մա-
սին մէկ-երկու խօսք պիտի ընեմ քանի մը խօսմբերու...:
Հաւանաբար, վերջին քուէարկութիւնն է որ կը կատարուի,
այնպէս չէ՞: Միասին եկէ՛ք, Մանօն: Չախակո՞ղմն է սրահը:

ՊԷՐՆԻԷԼ. — Այո՛, հոն է... գուռը կը տեսնուի հոսկէ...
սանդուխին գլուխը:

ՎԷՐՄԻԷԼ. — Անհանդիստ մի՛ ըլլաք... ընդհուպ կը
տեսնուինք...:

Օրագրողին հետ կը հեռանայ...:

ԼՕԼԷԹ. — Շիտակը, պատուական մարդ է...: Ողջա-
գուրելիս կուգայ:

ՊԷՐՆԻԷԼ. — Լուս կեցի՛ր, Լուլու...: Ինքզինքդ
զսպէ՛... ու մի՛ խօսիր...: Լ՞նկերներ կուգան... Ի՞նչ կ'ը-
սէինք...:

Ու իրենց ցանկին մէջ թաղուած, ցած ձայնով կը խօ-
սին: Տարբեր կողմերէ ներս մտնող երկու նկարիչներ կը նանչ-
նան գիրար:

ՍԷԼԻԷԼ. — Վա՛յ, գո՛ւն ես...: Ի՞նչպէս եղաւ որ իրար
դտանք...: Օ՛ն անդր, օ՛ն անդր...:

ԼԱՅԱՐԿ. — Օ՛ն անդր, օ՛ն անդր:

ՍԷԼԻԷԼ. — Միայն յուղարկաւ որութիւններու ատեն և
րեւան կ'ելլե՛ս:

ԼԱՅԱՐԿ. — Կրնաս ըսել թէ հայր Սէրթէնի և իր յոյ-
սերուն թաղման օրը: Ի՞նչպէս ես:

ՍԷԼԻԷԼ. — Իսկ գո՛ւն, կի՛նդ աղէ՞կ է, տղաքդ աղէ՞կ
են: Դո՛նապաններիդ լա՛ւ են: Վերջապէս գո՛հ ե՛ս:

ԼԱՅԱՐԿ. — Փա՛սք Աստուծոյ, գէշ աղէկ կ'ապրուինք.
բայց քեզի հարցնելու է, քենէ լուր ատնելու է. ա՛յ իրա-
րու չենք հանդիպիր. միայն ժիւրիի գումարման օրերը՝
իրար կը տեսնենք, բայց ո՛չ ուրբաթ և ոչ ալ շքադրամի
բաշխման օրերը... Ըսէ՛ տեսնեմ, ի՞նչ կ'ընես. կցաղետնապէ
բանուկցա՞ր արդեօք, չիք դառնալու համար...:

Սէլիիէ. — Ո՛չ, ո՛չ. քիչ մը սմբած էի... սա մեծ բա-
նէս յետոյ:

ԼԱՅԱՐԿ. — Ես լաւ կը դանեմ գայն:

Սէլիիէ. — Օ՛հ, դուն չես սիրեր այդ տեսակը... նորին
Տեառամուտ ես միշտ: Բայց և այնպէս չատ սիրուն մարդ ես:

ԼԱՅԱՐԿ. — Այո՛, այո՛, փառան կղիր որ խմ ըսածիս
պէս է... փառաւոր կտորներ կան քու տարիքդ ունեցողի
մը համար:

Սէլիիէ. — Շնորհակալ եմ, փնթի՛ր դուն ալ...: Գաւաթ
մը դարեջուր խմէ՛:

ԼԱՅԱՐԿ. — Բա՛, բա՛, բա՛:

Սէլիիէ. — Կարսօ՛ն... երկու գաւաթ դարեջուր... :
Աս ի՛նչ տաքութիւն է: Լաւագոյն չպիտի ըլլա՞ր լուղոր-
դութեան շքադրամի համար քուարկել այս օղին:

ԼԱՅԱՐԿ. — Այսօր որքան ամայի է հոս: Կարծես թէ
հանրութեան առջեւ փակ է:

Սէլիիէ. — Սովորականին պէս...: Բայց չե՞ս գիտեր
որ Ալֆօնս Ժ.Պ. այսօր կատախուժքով կը հասնի Պուա տը
Պուլօնների կայարանը: Ամէն մարդ Շան դ'էլիդէ գացած է,
անոր անցքը գիտելու համար...: Երեսի վրայ ձգած են մեզ:

ԼԱՅԱՐԿ. — Աւելի լաւ չպիտի ըլլա՞ր, եթէ սա արքա-
յատոհմիկ Ալֆօնսէն խնդրէին որ բարեհաճի փոքր այցելու-
թիւն մը տալ հոս, փոխանակ ձանձրանալու մեր գիմացի
բացման հանդէսին մէջ: (Ուրիշ նկարիչ մը կ'անցնի ու Լա-
նարկի ձեռքը կը սեղմէ): Սովորութիւն չունիմ բարեւ տա-
լու այդքան աղւճ մօրուք ունեցող մարդոց:

Սէլիիէ. — Ժօպէրը չէ՞: Աս ի՛նչ դէմք է:

ԺՕՊԷՐ. — Ի՛նչ կայ որ... այս ձմեռ մօրուք ձգեցի... :
Այս տարի այնքան տքնեցայ որ ամիլուելու ատեն իսկ
չունեցայ:

ԼԱՅԱՐԿ. — Չե՞ս նստիր:

ԺՕՊԷՐ. — Ո՛չ: Պէրնիէն կը փնտտեմ. ինծի ըսին թէ
պիտի ֆէն է:

ԼԱՅԱՐԿ. — Աւասի՛կ, գիմացի է: Չե՞ս տեսներ:

ԺՕՊԷՐ. — Այս . . . : Դուն շատ լաւ կը ձանձնաս ապ-
րանքդ :

ԼԱՖԱՐԿ. — Երկուքէն ո՞րը :

ԺՕՊԷՐ. — Միւսը :

ԼԱՖԱՐԿ. — Շնորհակալ եմ (Չեռի ողջոյնով մը) : Ընդ-
հուսդ : Ա՛հ, ո՞րքան ազնիւ են ընկերները :

(Յանի մը հոգի իրարու ետ կը համախմբուին սրահին
խորը, ու սեղաններու առջեւ կը սեղաւորուին :

ԺՕՊԷՐ. — Քուէարկողները դուրս կ'ելլեն սրահէն : Յու-
գայի գոհունակ գէմքերնին կը մասնէ գիրենք :

Նկարիչ Տիւմա կը նստարեւ ժօպերը եւ Լաֆարկը :

ՏԻԻՄԱ. — Նողկանք չազգե՞ր ձեզի . . . : Պիտոն յիսուն
երկու քուէ շահի :

ԺՕՊԷՐ. — Իրար մի՛ անցնիր : Ժիւլիանի քուէներն են :
Վերջին քուէրկուժեան ատեն պիտի լքեն զայն . . . կը
տեսնե՞ս . . . : Վերջացա՞ն մի՞թէ :

ՏԻԻՄԱ. — Չեմ գիտեր : Իրարանցումին վերջը չի գար :
Մնաց որ, քուէարկուժեան զանգակին ձայնը պիտի լսենք
հոսկէ . . . : (Իրենց սեղանին առջեւ նստելով) : Որքա՞ն տաք
է . . . տէ՛ր Աստուած . . . : Կարսո՞ն, ձերմակ գարեջուր մը . . . :
Կարծես թէ Մուսթաֆայի մէջ ըլլայինք . . . : Թո՞ղ կէս ըլ-
լայ գարեջուրը . . . եթէ այդպէս կ'ուզէք . . . ատալ հոգս չէ :

ԼԱՖԱՐԿ. — Ըսէ՛ տեսնեմ, Պէրնիէի տարփու՜նին կը
ձանձնա՞ս :

ՏԻԻՄԱ. — Ո՛չ :

ԼԱՖԱՐԿ. — Տե՛ս, քիչ մը անդին է :

ՏԻԻՄԱ. — Սա՛ թոնթոջիկ կ'նոջ քով նստած է : Շի-
տակը, ապշեցուցիչ վարմունք մը ունի այդ տղուն հետ . . . :
Պէրնիէ չքաղրամը չպիտի ստանայ՝ երիտասարդ ըլլալուն,
քայց անիրաւութիւն է :

ՍԷԼԻԷ. — Դուն ի՞նչ կ'ըսես, եթէ երբեք Վէրսէլ յօղ-
ուած մը գրած չըլլար «Ֆիկաոս»-ի առաջին էջին մէջ, պա-
հանջելով որ չքաղրամ տրուի Պէրնիէի, բոլորին ուշադրու-
թիւնը Թարթամբիոնի վրայ պիտի դասնար . . . :

ԼԱՖԱՐԿ. — Պահանջելը բուն բանն է . . . : Մանաւանդ որ յօղուածն ալ սմանողուկ խորագիր մը ունէր . . . : Տխմարները չեն կրնար գիմանալ, երբ սա խորագրով յօղուած մը կարդան. «Քլուխ գործոց մը» :

Սէլիէ. — Ա՛հ, սա օրագրողները . . . : Ի՞նչ հասա գլուխ կողեր են . . . : Անոնց արիւնը քամելու է . . . :

ՏԻՒՄԱ. — Շիտակը ըսելու համար, մերկ կը գտնեմ Պէրնիէի կիւնը, այնքան մերկ, որքան չէ Մանէի մէկ նկարը :

ԼԱՖԱՐԿ. — Ինձի նայէ՛, ափեղցիեղութիւնն չուզեր . . . : Մի՛ խօսիր ատոր վրայ :

Սէլիէ. — Ահա՛ բախտաւոր մարդ մը . . . : Եթէ շքադրամ ալ չառնէ, նորէն բան մը չպիտի կորսնցնէ, այլ քուէներ միայն շահած պիտի ըլլայ : Ասկէ առաջ, ի՞նչ էր այդ մարդը : Հազիւ մէկ ամիս առաջ, անձանօթ մարդուն մէկն էր : Երկրորդական, խեղճուկ շքադրամ մը ունէր . . . : Եւ ահա՛, մէկ օրէն միւսը, գազաթնակէտին վրայ կը գտնէ ինքզինքը. վստահ եղիր որ ձաթելիք բան է . . . : Պոռոտախօսութիւն կ'ըսեն ատոր, և ոչ ուրիշ բան :

ԼԱՖԱՐԿ. — Տանեանի ըրած փորձն է որ կրկնել կ'ուզեն :

Սէլիէ. — Բայց, ներողութիւն, Տանեան նախապէս շքադրամ մը առած էր . . . : Նուիրապետական կարգ ըսուած բան մը կայ . . . : Եթէ ոչ թքեր եմ վրան :

ՏԻՒՄԱ. — Պէրնիէի հետ գտնուող սա նոնուշիկ կիւնը ո՞վ է :

ԼԱՖԱՐԿ. — Այն կիւնը, որուն մերկ պատկերը գծած է, իր սիրունին է :

ՏԻՒՄԱ. — Չճանչցայ :

Սէլիէ. — Կոնակի կողմէն կը տեսնուի նկարին վրայ .

ԼԱՖԱՐԿ. — Հին մօտէլ մըն է, որ գրեթէ ամէն նկարիչի առջեւ կեցած է . . . : Քօլլա-Ռօսիի մօտ տեսած եմ զայն . . . : Երկու տարիէ ի վեր անոր հետ է . . . : Լօլէթ կամ Լուլէթ կը կոչուի . . . : չե՞ս ճանչնար :

ՏԻՒՄԱ. — Ո՛չ, իմ քոյս չէ եկած բնաւ . . . : Սիրուն

... : Բայց, կեցի՛ր... Բիքառի առջև կեցած է, նկարի համար : Ինծի այնպէս կը թուի որ սլիտի ճանչնամ... :

ԼԱՅԱՐԿ. — Այո՛, նոյն ինքն է... Բիքառ իբր մտէլ ունենալով Լօլէթը, առասպելական նկարներ կը գծէր... լազուարթ խորքի վրայ, ինչպէս յայտնի է :

ՏԻԻՄԱ. — Լօլէթ լաւ բնաւորութիւն ունի... : կը սիրեմ այդ տեսակ ազջիկները... :

ԼԱՅԱՐԿ. — Իբր կրած շրջազգեստը կը նմանի այն շրջազգեստներուն զոր մեր անուշիկ տարօրուհիներուն կը հագցնէինք տասը տարի առաջ, Պօթիչէլիի մէջ, վեց մէթը լիպէրթի կերպաս գործածելով... :

ՏԻԻՄԱ. — Այո՛, այդ սիրահարը քիչ մը ուշ մնացած է, շահարակները հաստակու համար : Մեր երիտասարդութիւնը կը յիշեցնէ, այնպէս չէ՞... : Շան տը Մարսի բացումը... : Խորհրդանշական նկարիչները... : Բիրխոթները... :

ՍԷԼԻԷ. — Ա՛հ, սա բիրխոթները... : ա՛հ, սա բիրխոթները... : ատենօք, բաւական խաղեր խաղացին մեր զբոսուն... : Բարեբախտաբար, ոչ եւս են անոնք :

ՏԻԻՄԱ. — Ինծի նայէ՛, ինծի նայէ՛, կէթէն :

ՍԷԼԻԷ, կանչելով զայն — է՛յ, ինծի նայէ՛... : Ձիւսեր :

ԼԱՅԱՐԿ. — է՛յ, հոս նայէ՛ :
Նշաններ կ'ընէ ձեռքով :

ԿԷԹԷՆ. — Վա՛յ, դուն ես, բարի լո՛յս :

ՍԷԼԻԷ. — Ըսէ՛ նայինք, սրահէն կուգաս :

ԿԷԹԷՆ. — Քուէթուղթերը իրարու կը յաջորդեն... :

Անանկ հրմշտուք մը կայ... որ սոսկալի բան է... : Հապա՛սա քուէհամարի քննիչներուն... : հայր թօնիի և հայր Լըֆէվրի գէմքերը... : Շիտակը, կ'արժէ տեսնել... : Բայց, կրո՛ղ, որքան տաք կ'ընէ այս որջին մէջ :

ՍԷԼԻԷ. — Կրընատին մը կը խմե՛ս :

ԿԷԹԷՆ, անոնց սեղանը նստելով. — Ո՛հ, շնորհակալ եմ, գաւաթ մը գարեջուր ապսպրած եմ արդէն : Անբարոյական բան մըն է շքադրամի սա փոքր արարողութիւնը, մարդկային ամբողջ գարշանքը կը բովանդակէ իր մէջ :

Սէկիէ. — Ընդհակառակը, ես շատ յանկուցիչ կը գրասեմ... : Չիարչաւի... բախտախաղի կը նմանի քիչ մը... բաղձանքներու, ցանկութիւններու, ակնկալութեան, յուսախարութեան հիւսքը կայ անոր մէջ... : Արտասոց, կը ծկուած ու խոժոռ գէժքերը կը տեսնուին անոնց, որոնք կը յուսան... ու գասնացած գէժքերը Ռօմէ-Պօնթականներուն... : Յետոյ կայ սա արչաւը գէյլի ցնորական բան մը, որ շքադրամ կը կոչուի... : Անխմաստ... այլ հաճելի խելացնորում մըն է : Հոն կը տեսնես թէ ի՞նչպէս ուրիշներու հոգին բերանը կուգայ : Նոյն խել եթէ գիտնամ որ ամէն տարի պիտի յաջողիմ անպայման, դարձեալ հոս պիտի գամ, քիչ մը տաղտուկ պատճառելու համար թեկնածուներուն :

ՏիփՄԱ. — Իմ տարեկան հրճուանքս է ան : Պատրաստուած պարբերութիւններ ունիմ... : Ուստի, կը մօտենամ իրար անցած մարդուն, ու անխութօրէն կ'ըսեմ. «Մա՜նր աչքիդ սոջեւ չե՞ս բերեր միթէ : Տասնըփնց տարուան կեանք ունիս... : Շքադրամը ինչի՞ պիտի ծառայէ, երբ անհունութեան մէջ ոստոստես» : Թէեւ բան մը չէ աս, բայց միշտ հաճոյք կը պատճառէ ինձի :

Կէթի՛ն. — Ա՛հ, այդ մեծ մեծ օրերու մէջ մեր ունեցած հանդիպումները... : Աակէ աւելի մեյամաղձոտ բան չկայ ինձի համար... : Ամէն մարդ կամբջակին վրայ կը գանուի... ծերերը, երիտասարդները, խլեակները... : Մարդ իր ամբողջ երիտասարդութիւնը կը տեսնէ պայծաս լոյսի մը մէջ... ինչպէս նաեւ այն փոքր խումբը, որ չուած է, հանգերձեալի մեծ ուղեւորութիւնը կատարելու համար... : Ամէն ոք գիրար կը գիտէ... : Ոմանք խանձամ, ուրիշներ թուխ դարձած գէժքեր ունին... կան որ անխոփոխ կամ մենէ աւելի երիտասարդ մնացած են... : Կարծես, զուարթութեան խոյանք մը ունին իրարու հանդէպ... : «Ինչո՞ւ մարդ...» կ'ըսեն իրարու : Որքա՞ն տխուր բան է, Տէ՛ր Աստուած... : Եւ միեւնոյն պարբերութիւնները կը կրկնուին... : «Ի՞նչ ջուրի վրայ էք : Լաւ... ամուսնա-

ցած եմ... երկու զաւակ ունիմ...: Ի՞նչ ընենք: Աշխարհ
ասանկ է:

ԼԱՅՈՒՐԿ.— Մանաւանդ սա ճակատագրական խօսքը.
«Բան մը դրկեցի՞ր հոս...—Փոքր ու աննշան գործ մը...—
Ի՞նչ կ'ըսես, ո՞ւր գրուած է...— Ատոր համար նեղութիւն
յանձն մի' ասներ... ԺՁ. սրահը .. Ռօշկրօսի սրահը կը
գտնուի...: — Լա՛ւ, լա՛ւ, հիմա հոն կ'երթամ...»: Բայց
հոն զայցող չկայ և չպիտի ըլլայ երբեք...: Եւ ահա՛, մեր
մազերը կը ճերմկին ու մեր փորերը կը խոչորնան: Մեծ
ուղին կ'աւնայանայ... նորարոյս երիտասարդներ գտնիթա-
փէն կը յառաջանան... անոնց անունները գիտցող չկայ...
ու այսպէս շարան շարան կ'երթան անոնք... Ի՞նչ տխուր
բան է:

Կր ծիծաղին:

Սէլիէ, — Բայց ինչո՞ւ կը տխրիս... (Կարսօնիկ)
Ահա՛ հինգ ֆրանք յիսուն սանթիմ...: Վրայիբքը չեմ ու-
զեր...: Սիկատէթ կը հրամցնէ՞ք... չնորհակալ եմ:

Երեք միասին ոտի կ'ելլեն ու կը յառաջանան, խօսելով
եւ ծխելով: Հեռացած ասեննիս, Պերնիէի, Լօլէի եւ Թապու-
րոյի սեղանին երջապատումը դադրած է այլեւս:

ԼՕԼԷԹ.— Հոն նայէ... Տե՛ս, կանքի հեռագրական
նշաններ կ'ընէ մեզի...: Կ'երևայ, մեզի հասկցնել կ'ուզէ
որ գործը ո՞ւր տեղուանքն է...: (Լօլէք արուի մը վրայ
կ'ելլէ անապարանով): Այո՛, այո՛, բաժիս պէս է: Թիւեր
կը համրէ ձեռքովը...: Հարիւր... հարիւր քսան... հա-
րիւր քսանը հինգ...:

Լօլէք, ձեռքերը օդին մեջ կ'երկնցնէ խուլ համբերու պէս:

Պէ՛րնիէ, անոր երջապատեան փաշտով. Ի՞նչ կ'ընես:
Վար իջի՛ր, Լօլէթ... վրանիս խնդացնել պիտի տաս...:

ԼՕԼԷԹ.— Քսանը հինգ... յետո՞յ... երեսուն, իրա՞ւ
կ'ըսես... (Ետին կը դառնայ): Ի՞նչ աղուոր բան: Հարիւր
երեսուն...: Բիէր, հարիւր երեսուն քուէ շահած ես...:
Ես քեզի չըսի՞, մարդուկս:

Պէ՛րՆԻԷ — Հանդարտ կեցի՛ր, Լօլէթ: Օ՛ն, վար իջի՛ր: Չե՛ս տեսներ, մեզի կը նային...:

ԼՕԼԷԹ, սեղը նստելով. — Ատ ալ հոգ պիտի ընեմ եղեր... Հարիւր երեսո՛ւն, հարիւր երեսո՛ւն...:

Պէ՛րՆԻԷ. — Ի՛նչ է եղեր, մեծ բան մը չէ այդ թիւը: Մինչեւ հարիւր յիսուն պիտի ելլենք: Այսպէս եղած է արդէն:

ԼՕԼԷԹ. — Ո՞վ գիտէ...: Գարեջուրի փրփուրին մէջ թաթխէ մատդ, ու մազերուդ քսէ, բախտարեք է:

Պէ՛րՆԻԷ. — Դո՛ւմ դուն ալ:

ԼՕԼԷԹ. — Իմ բաժնս ըրէ...: Նախատանջարում մը ունիմ այդ մասին...:

Պէ՛րՆԻԷ. — Ատոր վրայ մի՛ խօսիր...:

ԹԱՊՈՒՐՕ, ցոյց տալով երկու անձեր, որոնք կը յառաջանային. — Ահա՛, կրէվիլը... նայէ՛, Լօլէթ...:

ԼՕԼԷԹ. — Ծաղրանկարիչի՞ն համար կ'ըսես:

Պէ՛րՆԻԷ. — Չիմանա՛յ: Ծաղրանկարիչ, հէ՛:

ԼՕԼԷԹ. — Ան չէ՞ որ ծաղրանկարներ կը շինէ թերթին մէջ:

Պէ՛րՆԻԷ. — Այո՛... յարգանք ունեցի՛ր մեր փառքերուն հանդէպ...: Այդ մարդը սրամտութիւնս ցոյց կուտայ տասներհինգ տարիէ ի վեր, ինչ որ մեծ բան է նկարիչի մը համար:

ԼՕԼԷԹ. — Բայց խոր հիացում մը չի պատճառեր ինձի: Այլանդակ դէմք մը ունի:

Պէ՛րՆԻԷ. — Դէմքին ո՞ր մասը այլանդակ կը գտնես:

ԿՐԷՎԻԼ, իրեն բնկերացող անձին ուղղելով խօսելու. — Սիրելիս, Մ. Պէրնիէի ներկայացուցէ՛ք զիս:

ԼԱՅՍԲԿ. — Ես ալ չեմ ճանչնար:

Պէ՛րՆԻԷ. — Ուրեմն պատե՛ն առիթը չպիտի ունենանք ծանօթանալու... պարոնին հետ...:

ԿՐԷՎԻԼ, Պերնիէին. — Պարոն, կ'ուզէի ըսել թէ ձեր նկարը աչքառու է, ու...:

Խօսիմ մնացեալ մասը անյսելի կը մնայ խումբի մը ժամանումով, որ սեղաններէն մեկուն առջեւ կը նստի, դեպի

բեւին յառաջսկողմը: Այդ անձերը կը կոչուին Ռուսէլ, Տե-
րեմպուերկ եւ Վիայա:

Տէ՛ր է՛ՄՊՈՒՐԿ.— Օ՛ն, այս սեղանը հրամմէ՛ . . . : Կար-
սօ՛ն . . . :

ՎԻԱԿԱ.— Կրէ՛վի՛լ, ձախակողմը նստող մարդը կը
տեսնե՛ս :

Տէ՛ր է՛ՄՊՈՒՐԿ.— Հոս ի՛նչ գործ ունի . . . : Շան-տը-
Մարսէն է ան :

ՎԻԱԿԱ.— Ինքզինքը ցուցնելու եկած է . . . սպուշ
արարած, չե՛ս հասկնար միթէ :

Այդ պահուն կրկվի, որ հրածեօս առած եր Պերնիեկն,
սրահին խորը՝ դեպ ի աջակողմ ուղղուած միջոցին կը ճանչ-
նայ Վիայան:

ԿՐԷՎԻԼ, մօտենալով.— Պարո՛ն, ի՛նչպէս ես :

ՎԻԱԿԱ.— Իսկ դո՛ւն, Պարո՛ն :

ԿՐԷՎԻԼ.— Անկիւն մը քաշուած, կը գաւաղրէք, այն-
պէս չէ՛ :

Տէ՛ր է՛ՄՊՈՒՐԿ.— Փարչելի Շան-տը-Մարս, ուզածնուն
չափ թո՛ղ քննադատեն մեզ . . . : Ցուցամոլներ են բոլորն ալ :

ԿՐԷՎԻԼ, ձեռնոցին ծայրով քեթել բարել մը տալով.—
Պատիւ ունիմ ողջունելու, պարոն համախոհներ :

Կը հեռանայ :

Տէ՛ր է՛ՄՊՈՒՐԿ.— Օ՛ն, սրբոր նայեցէ՛ք . . . : Համախոհ
կ՛ըսէ . . . : Իբրև թէ իրենք շատ մը համախոհներ չունե-
նային հոս . . . : Աս ի՛նչ յաւակնութիւն է :

ՌՈՒՍԷԼ.— Այդ անբանը զգուանք կ՛ազդէ պարզապէս :

Տէ՛ր է՛ՄՊՈՒՐԿ.— Շիտակը, անհաւատալի կը գտնեմ որ
այդ արտաուոց մարդիկը պատուոյ շքադրամի համար հոս
եկած ըլլան : Աւասիկ յօդուած մը որ կանոնագրին մէջէն
ջնջելու է :

Պերնիեի սեղանին առջեւ դաւադրական ժողով մը կը
գումարեն ցած ձայնով : Լօյէք ոտի կ՛ելլէ եւ բասերաբեմին
առջեւ կուգայ, խումբին մօտ :

ԼՕԼԷԹ. — Պարոնն Ռուսէլ, ձեզի լսան մը պիտի ըսեմ
առանձին:

ՌՌԻՍԷԼ, ոսփի կ'ելլե ու Լօլէրին քով կ'երթայ. — Ի՞նչ
կայ, անուշիկ Լօլէթ:

ԼՕԼԷԹ, ժպտուն. — Քուէ տուի՞ք:

ՌՌԻՍԷԼ. — Այո՛:

ԼՕԼԷԹ. — Ներողութիւն, ուրեմն ուշ մնացեր եմ:

ՌՌԻՍԷԼ. — Հոգ չէ, ըսէ՛:

ԼՕԼԷԹ. — Ըսելիքս սա՛ է...: Ձենէ պիտի խնդրէի,
նոյնիսկ պիտի թախանձէի որ քուէնից Պէրնիէի տաք...
ի սէր մեր չին բարեկամութեան... այնպէս չէ: Մեծ ազ-
նուութիւն մը ըրած պիտի ըլլայիք...:

ՌՌԻՍԷԼ. — Բայց ձեզի ս՞ի ըսաւ թէ անոր չի տուի
քուէս:

ԼՕԼԷԹ. — Իմ ճկոյթս... երբեք չի խարեր զիս...:
Ա՛հ, եթէ ուզէիք: Գիտենք թէ Ի՞նչ ազդեցութիւն ունիք
... իբր վարպետ, ձեր խօսքը մտիկ կ'ընեն:

ՌՌԻՍԷԼ, պարզմտեմ. — Կը չափազանցէք, զաւակս:

ԼՕԼԷԹ. — Երբեք: Մարդիկ կան, որոնք կուրօրէն կը
հետեւին ձեզի...: Տասնի չափ քուէներ կան ձեր տրա-
մադրութեան տակ... ես տեղեկութիւն ունիմ...:

ՌՌԻՍԷԼ. — Լա՛ւ, ուրեմն, Պէրնիէի ըսէք որ հակա-
ռակ իմ յանձնառութիւններու, քուէս իրեն պիտի տամ,
եթէ վերջին քուէարկութիւն մը կատարուի, որովհետեւ
դուք լաւ աղջիկ մըն էք, ու ան ալ լաւ երիտասարդ մըն
է...: Ասկէ աւելին չեմ կրնար ընել...:

ԼՕԼԷԹ. — Ա՛հ, շնորհակալ եմ, պարոն Ռուսէլ...:
Շատ աղնիւ էք:

ՌՌԻՍԷԼ. — Իմ շնորհաւորութիւններս: (Այս խօսքին
վրայ, Լօլէր անօր երեսը կը նայի: Ռուսէլ խօսք կը ԵԱՐՈՒ-
ՆԱԿԷ աչքի քերել քրօւմով մը:) Պէրնիէի գծած նկարը յոյց
կուտայ թէ բաւական գիրքած էք այն ատենէն ի վեր, երբ
ձեր պատկերը կը գծէի: Կը յիշէ՞ք...: Հինգ-վեց տարի

A $\frac{\pi}{41701}$

անցած է անկէ ի վեր... Արդէն, գիրութիւնը չաա կը վայլէ ձեզի... Իրանը աւելի լեցուն կ'երեւայ... գաւա- կը՝ աւելի ցայտուն... Շատ լաւ է, շատ լաւ է:

Լօլէք դեպի խորը կը դառնայ

Վ.Ի.Ա.Ա., Ռուսի կը սեղը դառնայի յետոյ.— Պատմէ՛, նայի՛ք... Կարծեմ կրնորը կ'աջակցին քեզի: Ի՛նչ շոգո- քորթ մըն կս որ...:

Ռ.Ռ.Ս.Ս.Ս.— Խեղճ աղջիկ... երկուքն ալ խոր թշուա- սութեան մէջ կը գտնուին... Շատ խեղճ վիճակ մը ու- նին: Թո՛ղ անոնք ալ երջանիկ ըլլան ուրիշներու պէս:

Տէրի՛Մ.Պ.Ռ.Ս.Ս.— Վերջին քուէարկութեան ատենը կը մօտենայ... Օ՛ն, անոր...:

Փարեջուրը կուլ կուտայ

Հե՛Ռ.Ռ.Ս.Ս., ՉԱՅՆ, ՄԸ.— Պէրնիէ... ո՞ւր է Պէրնիէ:

ԽՆԻՄԲԸ, ԵՏԻՆ դառնալով.— Ի՛նչ կայ... հոս է:

ՊԱԹԲԸՆ, փաւթկոտ, ջղագրգիռ անոր մօտ երթալով.—

Պարո՛ն, բարեկամներու հետ կուգամ պաշտօնապէս ծա- նուցանելու որ ի նպատակ ձեզի կը քաշուիմ թեկնածու- թեանէ:

Պէրնիէ.— Իրա՞ն կ'ըսէք:

ՊԱԹԲԸՆ, գոռ ձայնով մը, ամենուն կողմէ յսուելու համար.— Պաշտօնապէս կը ծանուցանեմ... ու բոլոր բա- րեկամներէս կը խնդրեմ որ քուէնին ձեզի տան:


ԲԱՐԵԿԱՄԵՆԵՐԸ, որոնք կ'ընկերանան.— Այո՛, այո՛...:

Պէրնիէ.— Որքա՞ն երախտապարտ եմ ձեզի: Չեմ կրնար ըսել թէ ո՛ր աստիճան...:

ՊԱԹԲԸՆ, կարճ կապելով.— Չեզի համար չէ որ այս- պէս կ'ընեմ. իմ ուզածս սա է որ Սէրթէն չստանայ այդ շքադրամը... Աս է կենսականը... Խայտառակ, ամօթալի բան մը պիտի ըլլար: (Կը գոչէ:) Եկէ՛ք, իմ խումբիս ներ- կայացնեմ ձեզ:

Իր հետ կը փառ, կը սանի Պեքեքէն, ու երկուքը միասին՝ ֆանդակագործութեան սրահին մէջ կ'անհետանան:

Մեզի կից



ՏԷՐԷՄՊՈՒՐԿ.— Այդ երկու մօտէլները ի՞նչ գործ ունին հոս: Նինին և Էմման են. ինչպէս յայտնի է, Քօրմօնի աշխատանոցին մէջ, հրեշտակի նկարներու համար իբր մօտէլ ծառայած են անոնք: (Սփի կանգնած, սանդուխին վրայ, երկու կիներուն կը մօտենայ, որոնք մէկը փնտռելու երեւոյթ ունին:) Պիւֆէ կուգա՞ք:

ԷՄՄԱ.— Նինի իր տարփածուն նշմարեր է պիւֆէին խորը, և որովհետեւ հոսկէ պիտի անցնի անիկա, սրահ վերադառնալու համար... իր մարդուն կը սպասէ...:

ՆԻՆԻ, Էմմային.— Դուն ձայնդ կտրէ՛:

ՏԷՐԷՄՊՈՒՐԿ.— Տարփածուն ո՞վ է:

ՆԻՆԻ.— Դուն ձայնդ կտրէ՛:

ԷՄՄԱ.— Վա՛յ, Ռիւսինեօլ հո՞ս է եղեր:

ՏԷՐԷՄՊՈՒՐԿ.— Օ՛, սա բլասիէ՛ն... Սիրահարին բախտը բաներ է: Ահա մարդ մը, որ նկարչութիւնը ձգեր է, վարչութեանց մէջ մտնելու և մեր քթին խնդալու համար: Շիտակը, ամօթ է որ ձեզի պէս աղուորիկ դէմք ունեցողները նկարիչներու կին ըլլան ու շարաթականով աշխատին: Դուք հիմա կառքով պտտելու էիք:

ՆԻՆԻ.— Ես նկարիչները միայն կը սիրեմ: Չափազանց չիքերէն կը ձանձրանամ: Ի՞նչ կ'ուզէք որ ըլլար. խեղճութի՛ւն է աս, խեղճութի՛ւն:

ՏԷՐԷՄՊՈՒՐԿ.— Ի՞նչ խոր մտածում: Բայց մարդ ո՞րքան ալ խեղճ ըլլայ, դարձեալ չի կրնար ինքզինքը արդարացնել, Ռիւսինեօլի պէս կով գլուխի մը օձիքը չձգելուն համար:

ՆԻՆԻ.— Ամէն պարագայի մէջ՝ ձենէ աւելի կ'արժէ պատուական տղայ է:

ԷՄՄԱ.— Ա՛հ, Նինի ո՞րքան իրար կ'անցնի, երբ Ռիւսինեօլին դպչին:

ՏԷՐԷՄՊՈՒՐԿ.— Ան էր որ աննշան տեղ մը յատկացուց ինձի, մինչդեռ լաւագոյն տեղ մը գրաւելու իրաւունք ունէի, քանի որ թիւ մը կար ձեռքս:

ՆՆՆՆ. — Յանցանքը ձերն է: Կրնայիք թիւ չառնել:
Ես թիւ ունի՞մ միթէ:

ՏԷՐԷՄՊՈՒՐԿ. — Ոչ, տակաւին, բայց սպասեցէ՛ք...: Չեմ ուզեր վիճարանիլ ձեզի հետ... Կը նախընտրեմ ազատ
ասպարէզ թողուլ ձեզի... բովանդակ գաշտը... բոլոր սու-
պատները: Առանց քաշուելու, կտրանցէ՛ք այդ խոտերը...:

ՆՆՆՆ. — Ի՞նչ ըսել կ'ուզէ այս մարդը: Բայց գիտցած
եղէ՛ք, թոյլ չեմ տար որ զիս նախատեն...:

ՏԷՐԷՄՊՈՒՐԿ. — Սիրով բարեւներ ձեր օրիորդ մօրը...:

Քեֆեւելով կը հեռանան

ՆՆՆՆ; Էմմային, երբ երկուքը միասին կը նստին ու կ'ա-
պրապրեն. — Չեմ ուզեր պատասխանել այդ անճոռնի կա-
պիկներուն: Յայտնի է թէ Պուկըրոյի աշխատանոցէն են...:
Երկու օգապարիկներ...: Արդէն, ամէնքն ալ իրարու կը
նմանին: Ռիւսիներու օձիքին կը փակին, որով
հետեւ տաղանդ չունին: Խեղճ տղան կը քաւէ ամէնուն
յանցանքը: Օրինակի համար, տե՛ս սա մարդը, որ խրմ-
բանորիին քովէն կ'անցնի... խոշոր ու նիհար մարդ մը...:

ԷՄՄԱ. — Այո՛:

ՆՆՆՆ. — Բայց աղէկ միտքդ պահէ՛...: Շուայտ մար-
դուն մէկն է...: Կը հաւատա՞ս, անցած օր, այդ մարդը
Ռիւսիներու համար ըսաւ թէ ո՛չ միայն անասունին մէկն է,
այլ եւ պոռնիկներու պաշտպան: Աւելի կոթի պէս մարդ
մը: Հաւատա՞ որ այդ խօսքը ըրաւ ինձի...: Բերնին ե-
կածը կ'ըսէր ան, թէ եւ հազիւ ճանչնայի զինքը:

ԷՄՄԱ. — Դուն ի՞նչ պատասխանեցիր:

ՆՆՆՆ. — Արժանապատուութիւնս պահեցի...: Ու ըսի
անոր. «Պարո՞ն, խնդրեմ, իսկոյն գուրս ելէ՛ք անկողնէս:
Մէյ մըն ալ չտեսնե՛մ ձեր երեսը»:

ԷՄՄԱ. — Շատ խիստ վարուեր ես...: Բայց չեմ գի-
տեր թէ ինչո՞ւ գլուխ կը բռնեն մեզի դէմ: Այսօր, հոս գա-
լու չէինք թերեւս...: Շիք չեն գտներ մեզի...: Ի՞նչ կրնան
ըլլալ հարիւր սուով վարձուած մօտէյներ...: Չմտոնամ քեզի

ժամակօրէն զխտել տալու թէ, հոս դանուելնէս ի վեր, Լօ-
լէթ աշնայէս կը ձեւացնէ թէ մեզ չի ճանչնար:

ՆՆՆՆ, (եօին դառնայով՝ յարձակելու պատրաստ) .— Ո՛ւր
է ան... ո՛ւր է այդ աղջիկը:

ԷՄՄԱ. — Ետին է:

ՆՆՆՆ. — Մոռցա՛ւ միթէ. հինգ տարի առաջ, մեզի
պէս նկարիչներուն առջեւ կը կենանք բոլոր աշխատանոցնե-
րուն մէջ, շարաթը քառասունըինը ֆրանքի փոխարէն...:
Երկու անգամ սիրող բռնած է. Պէրնիէի հետ կենակցելուն
համար է որ մեծութիւն կը ծախէ հիմա:

ԷՄՄԱ. — Պէրնիէէն առաջ ո՞րուն հետ էր ան:

ՆՆՆՆ. — Ռուշարի հետ: Երկու տարի կենակցած է ա-
նոր հետ: Ասոր համար է որ մեծութիւն կը ծախէ: Բնու
չեմ քաշուիր անկէ. հիմա կը տեսնես:

Նինի գլխի թերեւ ուղշոյն մը կ'ուղղէ Լօլէթի, որ
սարսամ նշանով մը ու անորո՞ւ ժպիտով մը կը պատասխանէ:

ԷՄՄԱ. — Աշխարհիկ կ'նոջ մը պէս վարուէ՛:

ՆՆՆՆ. — Դիւրին է ըսելը: (Նորէն նշան կ'ընէ գլխով):
Բարեւ: Ա՛հ, գլխի սա փոքր շարժումը, սիրելիա...: Տե-
սա՞ր...: Մեզ ճանչնալ կը ձեւացնէ...: Սպասէ՛...: (Ո՞-
քի կ'ելլէ ու Լօլէթի սեղանին կը մօտեցայ): Ի՞նչ կ'ընես, ա-
ղէ՞կ ես:

ԼՕԼԷԹ, սարսամօրէն. — Շնորհակալ եմ:

Մեծ ցրտութիւն մը կը սիրէ. Նինի յամբօրէն կը վերա-
դառնայ Էմմայի բով):

ՆՆՆՆ. — Չլսեցի՞ր, ի՞նչ ըսի անոր:

ԷՄՄԱ. — Ոչ:

ՆՆՆՆ. — Քիչ մը խիտ դանուեցայ, բայց չեմ կրնար
ինքզիքս դասել, երբ ինձի գալչին...: Խորամանկութիւն
այ չունի այդ աղջիկը...:

ԷՄՄԱ. — Մարդդ հան է:

Ու ցոյց կուտայ մեծ մօտեցով մաւրդ մը, որ կը յառա-
ջանայ, առանց տեսնելու Նինին ու Էմման:

ՆԿԱՐԻՉ ՄԸ.— Երկու աթոս բե՛ր հոս . . սա սեղանը
մօտեցո՛ւր :

ՈՒՐԻՇ ՄԸ.— Որքա՛ն տաք կ'ընէ ներսը . . . : Այ-
ֆօնս ժԳ.ը տեսնելու երթա՛նք :

ՈՒՐԻՇՆԵՐ.— Օ՛ն, այս կողմէն եկէ՛ք :

ՄԵՐՈՒԿ ՄԸ.— Ազջիկս չտեսա՞ք . . . : Բայց իրեն ըսած
էի որ պիւֆէն ինձի սպասէ :

ՈՒՐԻՇ ՄԸ.— Քանզակազորձութեան սրահը կը պար-
տէր ան :

ՆԿԱՐԻՉ ՄԸ, (մերժելով).— Ոչ . . . ոչ . . չեմ նրա-
տիր . . լուրջ խօսելիքներ ունիմ :

ՉԱՅՆ ՄԸ.— Կարսօ՛ն, սիկաս բե՛ր :

ՌԻԻՍԻՆԵՍԻ, ստենոգրաֆի օձակով.— Է՛յ, ինձի նա-
յեցէք . . ախտով լիմոնատ տարէք կարգապիս մասնա-
խումբին :

ՉԵՈՒՆ՝ օձակներ, ափսեով լիմոնատ, եւայլն . . . :

Չինգ վեց նկարիչներէ կազմուած խումբ մը ոգեւորու-
թեամբ կը ճառէ :

ԺՕՊԷՐ.— Չըլլա՛ր . . չըլլա՛ր . . . : Երխտասարդ մը
վաստկելու չէ շքապրամը . . : Ամբողջ ասպարէզի մը վար-
ձատրութիւնն է ան . . . : Եթէ ոչ ա՛նքն բան տակնուվրա՞
կ'ըլլայ :

ՍԷԼԻԷ.— Ի՞նչ կ'ուզէք որ ըլլայ . . . խնդիրը կը դառ-
նայ աշխատանոցի ահապեմի մը վրայ . . . : Քսան տարի
առաջ ալ միեւնոյն բանը կ'ընէինք Քասպանէլի մօտ :

ՌՌԻՍԷԼ, մօտենալով.— Ինձի համար այնպէս է, բայց
ո՛չ քեզի համար . . . : Քուրպէի պէս ան ալ մեծ բան մը չար-
ժեր, բայց անոր ձիրքերը ունի, աւելի շեշտակի և ամուր :
Այսինքն անկեղծ է ան, մէկ խօսքով :

ԺՕՊԷՐ.— Երբ նկարիչի մը համար բանն թէ անկեղծ է . . .
բացորոշապէս յայտնած կ'ըլլան կարծիքնին : Ամէն մարդ
կը հասկնայ ատոր նշանակութիւնը :

ՍԻԼԻԷ.— Իսկ դուն անկեղծ կը կոչես մարդ մը, որ մեկոնի մոլոշագոյն ցուքեր սփռած է յետոյքի մը վրայ: Աղէկ նայէ՛, մեկոնի ցուքեր ունի՞ ան...: Այո՛, շիք է...: Բայց շիքը՝ նկարչութեան Ֆրանկախտն է:

ՌՌԻՍԷԼ.— Ինծի նայէ՛, ինկրը այդ նկարիչին հետ մի՛ բաղդատեր:

ԿՐԷՎԻԼ, մօտենալով ու խումբին խառնուելով.— Յիշոցներու պէտք չկայ տղաքս...: Ես այս սալօնին չեմ պատկանիր, բայց գոհունակութեամբ կը տեսնեմ որ ինքզինքնիդ դպրոցը կը կարծէք տակաւին...: Ինծի այնպէս կը թուի որ դպրոցական մրցումի մը մէջ կը գտնուիմ: Օ՛հ, սա շքադրամն՝ ըր:

ԺՕՊԷՐ, անոր լամբակը բռնելով.— Բայց սա ժապաւէնը ի՞նչ է:

ԿՐԷՎԻԼ.— Կանաչ փողկապիս յարմարցնելու համար է:

ԺՕՊԷՐ.— Ի՞նչ որ է...: Բայց դարձեալ ճղակտոր կ'ըլլաս, ծիծի պտուկը ձեռք անցնելու համար: Նախարարական պաշտօնատուէն տեղեկացայ:

ԿՐԷՎԻԼ.— Խերը անիծեր եմ այդ բողէթին, կամ ծիծի պտուկին, ինչպէս կ'ըսեն... խերը անիծեր եմ այդ ժապաւէնին կամ սորտալարիս: Ես ու ե է դիմում չպիտի ընեմ, ձեռք անցնելու համար զայն... ու բարեբախտ կը զգամ ինքզինքնիս, շքադրամ ստացած չըլլալուս համար, ձեզի պէս, Զանի տուփի մը պէս:

ՍԷԼԻԷ.— Օ՛հ, ինչե՛ր կ'ըսէք: Եթէ չէք հաւնիր, ինծի տուէք, հոգ չէ:

ՍԱՊԱԹԻԷ.— Ու ամսէով լիմօնատ, քօմիլէին համար:

ՍԷԼԻԷ, կանչելով... — Գաւաթ մը գարեջուր:

ԿՐԷՎԻԼ.— Երկու գաւաթ ալ հո՛ւս...:

ՌԻՐԻՇ ՄԸ.— Երեք գաւաթ...:

ՍԷԼԻԷ, նորէն խօսք առնելով.— Այդ Պէրնիէն... չէ կրցած նոյն իսկ իր նկարը կոչել «Վէնիս» կամ «Տանաէ»

և կամ «Ախլազան» : Գլուխը չէ պայթեցուցած , «Մերկ կինը»
յորջորջելու համար իր նկարը : կը հասկնամ , եթէ Սէրթէ-
նի վրայ գառնայ խնդիրը . . . : Գոնէ իր մօտէլին նկարը թոյլ
գծուածք մը չունի : կոյս մըն է . . . և ճշմարիտ կոյս
մը . . . :

ԿՐԷՎԻԼ .— Ինչէն գիտես , տխմա՛ր : Այո՛ , քեզի ո՞վ
կ'ըսէ որ կոյս է ան : Նկարուն թուղթի պսակ մը զխուն
վրայ դրած ըլլալն համար : Նկարչութեան մէջ անբժու-
թիւն չարտայայտեր ան :

ՍԷՆՏԷ .— Դո՞՞ւմ գուն ալ . . . : Հին նկարիչներուն
կոյսերն ալ անբիծ չե՞ս նկատեր :

ԿՐԷՎԻԼ .— Ի՛նչ կ'ուզեն թող ըլլան . . . : Բան մը չեմ
գիտեր այդ մասին . . . : Ինծի չեն հարցներ անոնց անհա-
տական կեանքը . . . : Աւելի լաւ նկարուած մօտէլներ են ,
քիչ մը աւելի լաւ քան Պէրնիէի ծիծաղելի գործը : Ահա՛
բովանդակ տարբերութիւնը . . . :

ԼԱՅՄԵՐԿ .— Հապա վերածնութեան շրջանէն առաջ ե-
ղող նկարիչներու կոյսերը . . . : Աչքիդ առջև բե՛ր Պօթի-
չէլին , Վինչին :

ԿՐԷՎԻԼ .— Ամենէն գէշերն են . . . : Անբնական են . . . : Իմ
աղջիկս չպիտի վստահէի անոնց , եթէ երբեք աշխարհի ամ-
բողջ հարստութիւնը տային ինծի . . . :

ՏԻԻՄԱ .— Կրէօզի օրիորդներուն ի՛նչ պիտի ըսես . . . :
Անոնք ալ անբիծ չե՞ն :

ԿՐԷՎԻԼ .— Գնա՛ բանդ . . . : Փողոցի պոռնիկներ են
անոնք . . . : Կեղծ անչափահասներ՝ ձեր պարոններու համար :
Գուն ի՛նչ կ'ըսես . . . բոլորն ալ սուտ է . . . գրականութիւն
է . . . : Բայց , Ռաֆայէլի կոյսերը կաթնառատ ծիծեր ունին ,
ու աչքեր՝ անպատկառութեամբ լեցուն : Տասնընից քայլ
հեռուէն , ձեր վրայ կը սեւեռեն աչքերնին : Հապա թիթիէնի
բողբը . . . ասպարէզ կը կարգամ անոնց որ երկու վայր-
կեան գիմաղբեն փողոցէն անցնող ամենէն գեղադէմ սաղմի-
կին :

ՌՌԻՍԷԼ, հեռուէն. — Ջրւթ, իբր թէ նկարչութեան վրայ կը ճառես...: Ինծի այնպէս կը թուի որ Մատլէն Լըմէրի քով կը գտնուիմ...:

ԿՐԷՎԻԼ, շարունակելով. — Մենք, նկարիչներս, կը գծենք ինչ որ կը տեսնենք...: Եւ ոչ ուրիշ բան...: Մենք գրագէտ չենք...: Կողկանք կը զգամ, տեսնելով որ սա կեղծաւոր Սէրթէնը՝ «Մաղկեպատկով Կոյսը» կը յորջորջէ իր ողորմելի գործը: Պէրնիէն պիտի ողջագցւրէի, մերկանդամ կին մը իր բթամատով, իր սաքով և իր ծխափողով նկարած ըլլալուն համար, առանց մակդիր մը տալու անոր յետոյքին...: (Պերնիէն կը կանչե, որ Շայեարի ու Սիւզոն Գասաների հետ կը հասնի:) Պէրնիէ, քուէս ձեզի կուտամ... գուք լաւ վրձին մը ունիք:

ՊԷՐՆԻԷ, մօտենալով. — Բայց ես կը կարծէի որ միւս Սալօնէն էք, պարոն Կրէվիլ:

ԿՐԷՎԻԼ. — Այո՛... բայց ձեզի համար կը քուէարկեմ բարոյապէս:

ՊԷՐՆԻԷ, անոր ձեռք սեղմելով. — Տասը սպիտակ քուէի համարժէք է ատիկա...: Շնորհակալ եմ: (Շայեարի եւ Սիւզոնի ուղղելով խօսքը:) Տեսէ՛ք, հո՛ս է (Լօյէթը ցոյց կուտայ) ինծի նայէ՛, Լուլու, քեզ կը փնտռէին քիչ առաջ:

ԼՕԼԷԹ. — Բա՛րեւ, ձագուկ... և թղուկ...:

ՍԻԻՋՕՆ, ողջագուրելով Լօյէթը: Իր հետ մանչ մը ունի. — Ի՞նչպէս ես, սիրելի քուրիկս:

ՌՌԻՍԷԼ, միւսներուն. — Ջանգակը կը հնչէ: Օ՛ն, պարոններ, երթա՛նք տեսնենք: Քուէները կը համրեն:

ՄԻԻՍՆԵՐԸ. — Օ՛ն, դէպի դարչելի տունը...: Կարսօ՛ն... և այլն: (Ջանգակին ձայնը կը լսուի հեռուէն:)

ՇԱՅԵԱՐ, Պերնիէին. — Ամէն կողմ քեզ փնտռեցի...: Մէջտեղ չկաս:

ՊԷՐՆԻԷ. — Այո՛, չեմ կրնար սրահին մէջ մնալ: Շատ նեղացուցիչ է: Աւելի լաւ չըլլա՞ր որ օգտուիմ իմ անփառունակ վրձակէս: Մերթ, փոքր պտոյտ մը կ'ընեմ հոն:

ՇԱՅԵԱՐ.— Չկրցինք աւելի կանուխ դալ: Օվէր-սիւր-
Ոււաղի կառախումբերը, հիւսիսային գծին վրայ, հան-
գըստաւէտ չեն...: Հաշիւ ըրինք որ քուէհամարին պիտի
կրնանք հասնիլ:

Պէ՛րՆԻԷ.— Անիծեա՛լ յապաղում...: Բայց ահա՛ կը
պարպուի արձանագործութեան սրահը...: Տեղերնիս փո-
խե՛նք. աւելի հանգիստ պիտի ընենք սա սեղանին առջեւ
Հուլու, գաւաթները հոս բե՛ր:

Յառաջակողմը կը նստին, խօսելով: Իրենց հետ կը ճանից
ըմպելիները:

ՇԱՅԵԱՐ.— Այս ատու, Սիւզոն չէր ուզեր Օվէր
մնալ...: Աչքի առջեւ կը բերէր իր քուրիկին յուզումը:

ՍԻԻԶՕՆ.— Հոգիս կը սեղմուի անոր համար...: Կը
խորհէի որ շատ պիտի նեղուէր խեղճ աղջիկը:

Սիւզոն ծուկեցուն վրայ կ'առնէ մանուկը:

ԼՕԼԷԹ.— Օ՛հ, քու կարծածէդ աւելի կը նեղուիմ...:
Չեմ գիտեր թէ ի՛նչպէս կ'ապրիմ...: Երէկ իրիկուընէ ի
վեր, բերանս բան դրած չեմ: Սոսկալի՛ բան է, սոսկալի՛
բան...:

ՇԱՅԵԱՐ.— Ինչ որ է, կը շնորհաւորեմ...: Ութսուն
երկու ձայն՝ երկրորդ քուէարկութեան ատեն...:

ԼՕԼԷԹ.— Չեմ կրնար հաւատայ ձեր ըսածին... այդ
անակընկալ բախտին... Ֆիկառոյի այդ յօդուածին:

Պէ՛րՆԻԷ.— Այդպէս մի՛ յուզուիր, անուշիկս:

ՍԻԻԶՕՆ.— Այո՛... թոյլ չեմ տար որ յուզուիս...:
Իէ՛մքդ ս'րքան աւրուեր է:

ԼՕԼԷԹ.— Ու խորհի՛լ որ այս բուպէիս կը կատարուի
քուէհամարը: Ահսելի՛ բան է: Ինձի այնպէս կը թուի որ
յայտարարութեան զանգակը միշտ կը հնչէ... հոն... ձա-
խակողմը:

Պէ՛րՆԻԷ.— Ինչ մը առաջ, Լօլէթ ձայներ կը լսէր...
Փանն տ'Արքի պէս...: Հիմա ալ զանգակի ձայն կ'առնէ:

ՇԱՅԵԱՐ.— Բայց դուն ալ հանդարտութեամբդ տարօրինակ կը թուիս... : Կարծես թէ շքադրամը ստացած ես արդէն... :

ԼՕԼԷԹ, հիացումով.— Անոր նմանը չկայ... : Շատ դիմացկուն է :

ՊԷՐՆԻԷ.— Բայց ներքինը չէք տեսներ : Ու ես կը տրամաբանեմ միայն : Իբրեւ թէ վաղօնի մը մէջ կը գրտնուէի... : անկիւն մը քաշուած... : Արդէն ո՛չ մէկ փոփոխութիւն պիտի ընենք, այնպէս չէ՞ :

ԼՕԼԷԹ.— Չեմ կրնար հոս կենալ... : Նրբանցք պիտի երթամ, հասկնալու համար թէ ի՛նչ կը խօսին հոն :

ՊԷՐՆԻԷ, անոր շրջագգեսէն բռնելով.— Ոչ, չըլլար... : ԼՕԼԷԹ, քեզ կ'արգիլեմ որ հոն երթաս : Հոս կեցի՛ր, քրոջ հետ... : Կը բաւէ, որքան մէջտեղ ինկար... : Ընելիք բան չկայ : այլեւս... : Գործը իր վիճակին մէջ ձգելու է :

ԼՕԼԷԹ, հառաչելով իր բող կ'ըսէ.— Ա՛հ, դուն շատ քախտաւոր ես որ գիւղը կը քնակիս... :

ՇԱՅԵԱՐ.— ԼՕԼԷԹ, ինձի նայէ՛... : չխտակը, ՊԷՐՆԻԷի վրայ կը նախանձիմ :

ԼՕԼԷԹ.— Ա՛հ Տէր Աստուած, Տէր Աստուած : Ահա՛ թապուրօն կուգայ... : Ան է որ լուր կը բերէ մեզի :

ԹԱՊՈՒՐՕ, վազելէն շնչասպառ, սանդուխին ասի-
նաններուն վրայ.— Բարի՛ լուր մը ձեզի : Տակաւին բան մը յայտնի չէ (ԼՕԼԷԹ կը սրճնջայ), բայց հետզհետէ կ'աւելնան թղթիկներու փոքր գէղերը : Աչքառու կերպով կը շահիս... : հիմա, քուէհամարի սրահը պիտի վերադառնամ :

ՊԷՐՆԻԷ.— Բան մը խմանալէ ետքը միայն հոս եկո՛ւր... : ԼՕԼԷԹ քեզ տեսնելուն պէս, գոյնը կը նետէ : (Թապուրօ նորէն կծիկը կը դնէ) Ախորժաղրգիս ըմպելի մը կ'ուզէ՞ք :

ՇԱՅԵԱՐ.— Պիրի գինի՛ Սիւղօնի... : աստէնի մը ինձի համար :

ԼՕԼԷՔ. — Լաւ ըրիք, հոս գալով, Բարիցի մէջ պիտի ձաշէ՞ք միթէ:

ՍԻԻԶՕՆ. — Չեմ յուսար... եթէ երբեք քանի մը վայրկեանէն ծանուցուի քուարկութեան արդիւնքը, ժամը վեցը երեսունը հինգ անցած կատարու մբով պիտի վերադառնանք: Պզտիկը ձաշէն անմիջապէս յետոյ պատկելու է: Գիւղին օգէն կ'օգտուի ան:

ՊԷՏՆԻԷ. — Մէկ բոսպէ իսկ գիւղէն հետու չի կրնար մնալ:

ՇԱՅԵԱՐ. — Ա՛հ, բարեկա նս, մի՛ հեղնե՛ր...: Արդէն բաւական գծուարութեամբ կը ձարենք մեր ապրուստը...:

ՊԷՏՆԻԷ. — Ու խորհի՛ւ որ Լօլէթ ամենախոքը ձգտում մը չունի մայր ըլլալու, մինչդեռ քոյրք, մայրը...:

ՍԻԻԶՕՆ. — Ի՞նչ կայ որ...: Աօջինեկս է տակաւին: Երկրորդ զաւակս պիտի բերեմ, երբ ան շահի իր երրորդը:

ՊԷՏՆԻԷ. — Ի՞նչ բան:

ՍԻԻԶՕՆ. — Երրորդ չքապրամը:

ՇԱՅԵԱՐ. — Շատ լաւ: Հիմա հասկցուեցաւ: Գեռ ի՞նչ կ'ուզես: Կարելի չէ ամէն օր Սիւզօնիկ մը շինել... չորս տարին անգամ մը կը բաւէ...:

ՊԷՏՆԻԷ. — Գրեթէ չորս տարիէ ի վեր միասին կ'ապրիք...:

ՇԱՅԵԱՐ. — Հինգ տարի է... բարեկա՛մ:

ՊԷՏՆԻԷ. — Այգքան եղա՞ւ...: Ժամանակը ո՛րքան չուտ կ'անցնի: Մեր կենսակցութիւնն ալ երեք տարի եղաւ, այնպէս չէ՞, Լօլէթ:

ՇԱՅԵԱՐ. — Ըսելիք չկայ մեր տարօրէններու ընտանիքի մասին, ուր սիրային կենսակցութեան պարզ և նահապետական ձաշակը տիրած է...: Մարդուն բնաւորութեան մէջ ըլլալու է:

ՍԻԻԶՕՆ. — Իսկ դո՞ւք, էրիկ մարդիկդ:

ՇԱՅԵԱՐ. — Երեք տարի կ'ընէ իմս: Մարդ կը կարծէ որ շատ տարիներ անցած են: Կը յիշե՞ս, երբ իմ աշխատա-

101, 158. — Լաւ ըրիք, հոս գալով, Բարիցի մէջ պիտի
ձաշէ՞ք միթէ:

ՍԻԻԶՕՆ. — Չեմ յուսար... Եթէ երբեք քանի մը
վայրկեանէն ծանուցուի քուարկութեան արդիւնքը, մամը
վեցը երեսունըհինգ անցած կառախուժբով պիտի վերացառ-
նանք: Պզտիկը ձաշէն անմիջապէս յետոյ պատկելու է:
Գիւղին օգէն կ'օգտուի ան:

Պէ՛ՐՆԻԷ. — Մէկ բոպէ իսկ գիւղէն հետո չի կրնար
մնալ:

ՇԱՅԵԱՐ. — Ա՛հ, բարեկա նս, մի՛ հեղնե՛ր...: Արդէն
բաւական գժուարութեամբ կը ձարենք մեր ապրուստը...:

Պէ՛ՐՆԻԷ. — Ու խորհի՛ւ որ Լօլէթ ամենափոքր ձգտում
մը չունի մայր ըլլալու, մինչդեռ քոյրք, մայրը...:

ՍԻԻԶՕՆ. — Ի՞նչ կայ որ...: Աօջինեկս է տակաւին:
Երկրորդ զաւակս պիտի բերեմ, երբ ան շահի իր երրորդը:

Պէ՛ՐՆԻԷ. — Ի՞նչ բան:

ՍԻԻԶՕՆ. — Երրորդ չքազբամը:

ՇԱՅԵԱՐ. — Շատ լաւ: Հիմա հասկցուեցաւ: Դեռ ի՞նչ
կ'ուզես: Կարելի չէ ամէն օր Սիւզոնիկ մը չինել... չորս
տարին անգամ մը կը բաւէ...:

Պէ՛ՐՆԻԷ. — Գրեթէ չորս տարիէ ի վեր միասին կ'ապ-
րիք...:

ՇԱՅԵԱՐ. — Հինգ տարի է... բարեկա՛մ:

Պէ՛ՐՆԻԷ. — Այգքան եղա՞ւ...: Փամանակը ո՛րքան չուտ
կ'անցնի: Մեր կենսակցութիւնն ալ երեք տարի եղաւ, այն-
պէս չէ՞, Լօլէթ:

ՇԱՅԵԱՐ. — Ըսելիք չկայ մեր տարփուհիներու ընտա-
նիքի մասին, ուր սիրային կենսակցութեան պարզ և նահա-
պետական ձաշակը տիրած է...: Մարդուն բնաւորութեան
մէջ ըլլալու է:

ՍԻԻԶՕՆ. — Իսկ դո՞ւք, էրիկ մարդիկ:

ՇԱՅԵԱՐ. — Երեք տարի կ'ընէ իմս: Մարդ կը կարծէ
որ շատ տարիներ անցած են: Կը յիշե՞ս, երբ իմ աշխատա-

ՍԻՒԶՕՆ.— Ի՛նչ կ'ըսես: Պրիի ընտիր պանիրը սիրելու համար այդքան պարտք չըլլար:

ԼՕԼԷԹ.— Կ'ըսես թէ հազար վեց հարիւր Ֆրանք պարտք չըլլար պանիրի համար միայն...: Բայց երբեք գրամ վճարած չունինք...: Կաթնավաճառը միշտ վստահութիւն ունեցած է Բիէրի ապագային վրայ:

ՍԻՒԶՕՆ.— Այդ մարդը աղէկ հոտառութիւն ունի եղեր:

ԼՕԼԷԹ.— Բան չէի յայտնեք խեղճ Բիէրոյին...: Բայց օրեր կային... երբ երեսուն սու խկ չունէի, տան ծախքերը ընելու համար, քարիւղն ալ մէջը հաշուելով...: Ա՛հ, Ջօնգօնս... ս'ըքան գո՛հ եմ... Մ'էֆ...: Հարկաւ, գողութիւն չպիտի ընէր ան...: Շատ կտրիճ... շատ բարի... շատ հեղահամբոյր է ան:

ՍԻՒԶՕՆ.— Կը պաշտես Բիէրը, այնպէս չէ՞:

ԼՕԼԷԹ.— Սիրելն ալ խօսք է...: Կը խորհիմ թէ ատենօք ի՛նչպէս ապրած եմ առանց անոր...: Ամբողջ կեանքս է Բիէր...: Շատ կը բաղձամ որ երջանիկ ըլլայ: Երբ լաւ տրամադրութիւն չունենայ Բիէր, այն ատեն ինքզինքս անհանդիստ կը զգամ...: (Խօսք երիկ մարդոց ուղղելով): Տաղտուկ չպատճառե՛նք ձեզի:

ՊԷՏՆԻԷ.— Ոչ... ոչ...:

ՍԻՒԶՕՆ.— Նկարչական ցուցահանդէսի նախօրեակին հազած չըջաղգեսաց է՞ ատ:

ԼՕԼԷԹ.— Ուրիշ հագուստ չունիմ որ...: Ես կարած եմ... շատ աման գնեցի կերպասի կարօն մը. աղէկ չէ՞:

ՍԻՒԶՕՆ.— Քիչ մը արտառոց է, բայց չիք է:

ԼՕԼԷԹ.— Ինչպէս յայտնի է, գնդասեղներով կը կենայ այս զգեստը... (Խօսք ընդհատելով): Օ՛հ, ձախակողմի մի՛ նայիր:

ՍԻՒԶՕՆ.— Ինչո՞ւ:

ԼՕԼԷԹ, մեղմաձայն.— Ռուշարն է:

ՍԻՒԶՕՆ.— Քիչ մը առաջուրնէ աւելի գունատեցար

դարձեալ : Մարդ չի գիտեր թէ ի՞նչ կը զգայ, երբ նորէն տեսնէ այն անձը, որուն հետ քանի մը տարի կենակցած է, այնպէս չէ :

ԼՕԼԷԹ. — Ըսածիդ պէս չէ . . . : Ինծի այնպէս կը թուի որ Բիէրէն զատ, ո՛չ մէկ բան գոյութիւն ունեցած է ինծի համար . . . : Մտքովս կը հարցնեմ թէ ի՞նչպէս եղեր է այդ բանը . . . : Այսօր, նոյն իսկ կը նեղուիմ, խորհելով որ Ռուչար բազմութեան մէջ կը գտնուի . . . : Կ'երեւայ որ մեզի հետ խօսքի բնութիւն կ'ուզէ . . . : Տէր Աստուած ի՞նչ տաղտուկ :

ՍԻԻԶՕՆ. — Իրարու հետ չէ՞ք խօսիր բնաւ :

ԼՕԼԷԹ. — Ո՛չ . . . զիրար կը բարեւենք միայն :

ՍԻԻԶՕՆ. — Արդարեւ, Պէրնիէ և Ռուչար մտերիմ բարեկամներ էին :

ԼՕԼԷԹ. — Այո՛ . . . Բիէր անոր ձեռքէն առաւ զիս . . . : Ասանկ բաները չեն մոռցուիր . . . : Կեցի՛ր. ի՞նչ կ'ըսէի քեզի . . . : Ռուչար կը յառաջանայ :

ՇԱՅԵԱՐ, ոտքի ելլելով եւ Պերնիէի հետ խօսակցելով. — Երթամ տեսնեմ թէ ի՞նչ կանցնի կը գառնայ . . . : Քուէարկելու իրաւունք չունիմ, բայց կրնամ տեղեկութիւն առնել զբան առջև :

Պէրնիէ. — Անշուշտ . . . կարելի է աչքով շատ լաւ հաշուել քուէհամարի սեղանին վրայ գտնուող թղթիկներու փոքր դէզերը . . . : Ամէնուն դէզը առանձին գրուած է . . . : Պիտի տեսնես . . . : Դէզը կ'աւելնայ կամ չաւելնար . . . : Կ'ազաչեմ, մի՛ ըսեր թէ պիւժէն եմ . . . : Չեմ ուզեր մարդ տեսնել . . . :

Շայեար կը հեռանայ :

ԼՕԼԷԹ, խօսքը Պերնիէի ուղղելով մեղմածայն. — Ինծի նայէ՛, Բիէր, աւասիկ մէկը, որ դէպի մեր կողմը կը յառաջանայ . . . բայց գլուխդ վեր մի՛ առներ, ու չտեսնել ձեացո՛ւր :

Պէ՛րՆԻԷ, առանց նայելու.— Ո՞վ է ան :

ԼՕԼԷԹ.— Տեղէ՛ց մի՛ շարժիր : Ռուշարն է :

Պէ՛րՆԻԷ.— Ինչո՞ւ տեղէս չշարժիմ . . . : Ընդհակառակը՝
մեր բնական երևոյթը պահենք : Ինչո՞ւ չխօսինք անոր հետ,
եթէ կ'ուզէ մեզի հետ խօսիլ : Երկու տարի է ի վեր, իրա-
րու հետ խօսած չունինք :

ԼՕԼԷԹ.— Ինձի հաճոյ չի թուիր այդ խօսակցութիւնը :

Պէ՛րՆԻԷ.— Ասանկ գիրքի մը մէջ, թշնամիներէն խու-
սափելու է :

ՌՈՒՇԱՐ, անցած պահուն մօտենալով.— Բարեւ, սի-
րելիս :

Չեռեւու սեղմում :

ՌՈՒՇԱՐ.— Բա՛րեւ, ԼՕԼԷԹ :

ԼՕԼԷԹ.— Բա՛րեւ :

ՌՈՒՇԱՐ.— Շատ լաւ է նկարդ : Կ'ուզէի անձամբ քեզի
ըսել : Սրահէն կուգամ : Երեք անգամուն ալ, քեզի քուէ
տուի :

Պէ՛րՆԻԷ.— Շնորհակալ եմ . . . : Մեծապէս շնորհապարտ
եմ . . . :

ՌՈՒՇԱՐ.— Շնորհապարտութեան բան չկայ . . . : Ինք-
զինքիս հանդէպ անկեղծ կը գտնուիմ պարզապէս : Հիանալի՛
ձեր նկարը :

Պէ՛րՆԻԷ.— Օ՛հ, կը չափազանցես . . . : Ես շատ գոհ
չեմ . . . : Գեղարուեստական գործեր կան որոնք գէշ չեն,
բայց անշնորհքներ ալ կը գտնուին :

ՌՈՒՇԱՐ.— Ո՛չ ո՛չ, կը վստահեցնեմ քեզ . . . : Կը չա-
փազանցես : Բնաւ գէշ չէ :

Պէ՛րՆԻԷ.— Ուրեմն, հաճոյ կը թուի քեզի . . . :

ՌՈՒՇԱՐ.— Այո՛, այո՛ . . . լուրջ յատկութիւններ կը
տեսնուին անոր մէջ . . . : Ե՛ն, շատ գոհ եմ ձեր սասին . . .
ցտեսութիւն, սիրելիս . . . :

Պէ՛րՆԻԷ.— Յտեսութիւն :

ՌՈՒՇԱՐ.— Յտեառութիւն, Լօլէթ:

ԼՕԼԷԹ.— Երթաք բարո՛վ, պարոն: (Անոր մեկնելէն յետոյ կը պոռթկայ): Տեսա՞ր, ո՞րքան կատղած է:

Պէ՛րՆԻԷ.— Անշուշտ կատղած է...: Բայց քուէն ինծի տուեր է դարձեալ:

ԼՕԼԷԹ.— Կը հաւատա՞ս ատոր:

Պէ՛րՆԻԷ.— Վստահ եմ...: Պարկեշտ մարդ է...: Փորձեց ինծի անհաճոյ ըլլալ: Բայց լաւ կը ճանչնամ զի՛նքը. նկարս լաւ գտած ըլլալուն համար է որ տուած է...:

ԼՕԼԷԹ.— Ենթադրենք որ այդպէս ըլլայ... Բայց կրնար մեր քովը չգալ... մանաւանդ զիտնալով որ ես կեցած եմ քու առջեւ, այդ նկարը պատրաստելու համար...:

Պէ՛րՆԻԷ.— Ի՛նչ փոյթ: Յաղթութեան նշան է... երբ արեւը բարձրանայ...: Ինծի նայէ՛, Սիւզոն, տղուն օձիքէ՛ ձգէ՛քիչ մը...:

ՍԻՒԶՕՆ.— Ահա՛ ուրիշ մըն ալ: Օ՛հ, Սէրթէնն է:

Ծերուկ Սերթէն եւ կիներ ներս կը մտնեն. ու ձախակողմք կը տեղաւորուին:

Սէ՛րթէն, կնոջը.— Ալ չեմ զիմանար...:

ՏԻԿԻՆ Սէ՛րթէն.— Է՛հ... բոլորովին առանձին պիտի ըլլաւ...: Մեզ տեսնող չըլլար: Օ՛հ, կտրիճ եզի՛ր: Մէկ քառորդէն, ամէն ինչ վերջացած պիտի ըլլայ:

Սէ՛րթէն, դողդոջուն.— Օ՛հ, յուզումէն չէ...: Ամենաթեթեւ յուզում մը իսկ չեմ զգար:

ՏԻԿԻՆ Սէ՛րթէն.— Անշուշտ, անշուշտ...:

Սէ՛րթէն.— Յոգնութենէն է... կը հասկնա՞ս... յոգնութենէն...:

ՏԻԿԻՆ Սէ՛րթէն.— Այո՛... այո՛...:

Տիկինը գաւար մը օտարակ կ'ապսպրէ:

Սէ՛րթէն.— Աս ի՞նչ է. ո՞ւր բերի՛ր զիս: Պէ՛րնիէ հո՞ս է...:

Պերնիե ու Սերթեն այնպէս կը ձեւացնեն թէ իսկոյն իրար կը նշմարեն: Գլխաւորինն կը հանեն փոխադարձաբար: Լօյէթ ցած ձայնով կ'ըսէ Պերնիէի. «Անոր հետ խօսէ. պէտէ որ խօսիս, եւն...»:

Պէրնիէ, ոտքի ելլելով. — Պարո՛ն...:

Սէրթէն, նմանապէս. — Պարո՛ն...:

Տեղերնին կը նստին: Լօյէթ, Թապուրօ եւ Պերնիէ կը խօսակցին: Տակաւին կը լսուի. «Անոր հետ խօսէ՛. բայց ինչո՞ւ չես խօսիր...»:

Պէրնիէ, ազնուականի կտրուկ շեշտով. — Բանի որ դ՛ուրս ձեռքի շնորհիւ հանդիպում մը ունեցանք իրարու հետ, թող տուէք ինձի՛ սա վճռական ընդհանրութիւնը որ հակառակորդի դիրքին մէջ չեմ նկատեր ինքզինքս... ձեր հոշակաւոր տաղանդով՝ իրաւամբ արժանի էք այդ շքադրամին... Բարեբախտ կը զգամ ինքզինքս՝ այդ բանը ձեզի ըսելու համար:

Սէրթէն, իր սեղանէն. — Շնորհակալ եմ, պարոն: (Տեղը կը նստի: Տիկին Սերթեն եւ Սերթեն կը խօսակցին. «Բայց ինչո՞ւ չես պատասխաներ. ու հաւաստիքներ չես ընծայեր...» (խօսելու որոշում կուտայ ու ոտքի կ'ելլէ.) Պարո՛ն, իմ մտածումովս՝ երիտասարդութիւնը արժանաւորապէս վարձատրուած է...: (Ինքնաբեր:) Եթէ երբեք բախտը ժպտի ձեզի, առաջին ծափահարողը ե՛ս պիտի ըլլամ...:

Երկուքն ալ ոտքի կանգնած են փաստաբաններու պէս: Կիները լուռ կը մնան: Սանդուխին խօսքը կը տեսնուին Շայեար եւ նկարավաճառ Արնհայմ:

ԱՐՆՀԱՅՄ. — Կեցցե՛ս, կեցցե՛ս...: Երկու հակառակորդները իրար կ'ողջունեն ժրգումէն առաջ...: Բէժանաբարքեր կը յիշեցնեն իսկապէս...: Ազնուականութիւն կը բուրէ...: Կեցցէ՛, պարոններ:

Արնհայմ նախ Սերթենի ձեռքը կը բռնէ:

ՇԱՅԵԱՐ, այդ պահուն խօսքը Պերնիէի ուղղելով.

Քեզի կը բերեմ Լաֆիթ փողոցը հաստատուած նկարաւա-
ճառ Մ. Արնհայմը, որ ամէն տեղ քեզ կը փնտսէ. . . . : Ան
կ'ուզէ քեզի հետ խօսիլ. . . . (կանչելով) Պարոն Արն-
հայմ :

ԼՕԼԷՔ. Բոյր եւ Շալեար մեկդի կը Բաուին Բիչ մը :

ԱՐՆՀԱՅՄ, Պերնի էի մօտենալով. — Ահա՛ անպտանելի
մարդը, որ սեղաններուն տակ կը պահուըտի. . . : Ամէն տեղ
փնտսեցի ձեզ. . . : Արդ. . . կուզամ ըստ բախտի՝ գին մը
առաջարկելու ձեզի. . . : Թերեւս ձախող դորձ մը ըլլայ
ինձի համար. . . : Ի՞նչ փոյթ, մնասր աչք պիտի առնեմ. . . :
Հարիւրին իննըսուն հաւանական է որ շքադրամը չչա-
հիք. . . : Ձեր նկարը տասներհինգ հազար Ֆրանք պիտի ար-
ժէ, եթէ շքադրամը ստանաք : Իսկ առ առաւելն 5000 Ֆրանք
պիտի բռնէ, եթէ շքադրամը չչահիք. . . : Մ'ն, ուրեմն,
տխմար արարածի մը պէս, որ միշտ բախտը կը փորձէ՝
մինչեւ կեանքին վերջը, կ'առաջարկեմ որ ձեր նկարը ինձի
ծախէք քուէարկութեան արդիւնքէն հինգ փայրկեան ա-
ռաջ. լաւագոյն գին մը կուտամ, քառասուն հազար Ֆրանք,
ձեր յատաջիկայ երկու նկարներն ալ մէջը ըլլալու պայմա-
նաւ. . . : Ինքնախարէութենէ հաճոյք կը զգամ պարզապէս :

ԼՕԼԷԹ, ցամ ձայնով, Շալեարին. — Մ'ի աստուածային
ողորմութիւն :

Պէ՛հի. — Բնաւ երբեք : Բացարձակապէս կը մերժեմ :

ԼՕԼԷԹ. — Ի՞նչ կ'ըսէ. . . : Խնայի է, ի՞նչ է :

Պէ՛հի. — Սիրելի պարոն Աարնհայմ, դուք ո՛չ թէ
տխմար, այլ խորամանկ մարդուն մէկն էք : Այդ գնով չպի-
տի յարմարիմ երբեք. . . : Չանազան առաջարկներ եղան
ինձի, ի մէջ այլոց Նիւ-Եօրքի Թայլըր եւ ընկ.էն : Մերկ
կիներ նկարիս քսաներհինգ հազար Ֆրանք տուին հետագրով :
Այն ատեն չկրցի որոշում տալ : Ձեր առաջարկէն ետքն է որ
վճարական որոշում պիտի տամ :

ԼՕԼԷԹ, մեղմաձայն. — Ծշմարտութեան նշոյլն իսկ չկայ
Բիէրի ըսածներուն մէջ :

ԱՐՆՀԱՅՄ .— Կա՛մ կ'ընդունի՞ք և կամ կը մերժէ՞ք :
Ասկէ աւելի գին մը չեմ կրնար տալ :

Պէ՛ՐՆԻԷ .— Ինձի նայեցէ՛ք . . . Վաճառման գործին մէջ
փորձառու եմ . . . : Կը կարծէ՞ք որ այդ ծիծաղելի գնով
ձեզի պիտի թողում երկու նկարներս , ան ալ շքադրամը
չահելէս յետոյ . . . : Բայց , սիրելի պարոնս , իմ սիկառէթ-
ներուս գրամն իսկ չէ ատիկա . . . :

ԱՐՆՀԱՅՄ , Բիեռի սիկառեքին նայելով .— Ու այս խօս-
քը կ'ընէ այնպիսի մէկը որ « քարօրալ » կը ծխէ . . . : Լա՛ւ ,
քառասունըհինգ հազար ֆրանք թո՛ղ ըլլայ : Այն ատեն
կրնաք լուցիկ ալ գնել սա . . . :

Պէ՛ՐՆԻԷ .— Ոչ . . . ոչ . . . բնաւ երբեք : (Սիկառեք մը կը
հրամցնէ Արնհայմի) : « Բարօրալ » մը ատէք :

ԱՐՆՀԱՅՄ .— Շնորհակալ եմ . . . : Իմ սիկառներս կը նա-
խընարեմ :

Վառած ասեցնին :

ԼՕԼԷԹ .— Խելագարութեան նսպայի մը մատնուած է
արդեօք . . . : Մինչև հիմա բան չէ ծախած նկարավա-
ճառի մը . . . : Չեմ հասկնար լո՞նսած ընթացքը :

ՇԱՅԵԱՐ .— Գործնական ոգիէ մղուած է վայրկե-
նապէս :

ԼՕԼԷԹ .— Այս շարթուան ծախքերուն համար հարիւր
ֆրանք իսկ չունիմ , մինչդեռ կաթնավաճառին պահանջը
հազար վեց հարիւր ֆրանքի կը հասնի : Մարդ խենթ ըլ-
լալու է . . . : Հիմա իրեն պիտի ըսեմ :

ՇԱՅԵԱՐ .— Չըլլա՛յ որ ըսէք : Ինքզինքնիդ զսպեցէ՛ք :

ԼՕԼԷԹԻՆ ԵՐՉԱՊԳԵՍԵՆ ԿՐ ԲԱԵԿ :

Պէ՛ՐՆԻԷ , Արնհայմին .— Հաւատացէ՛ք որ ես ըրածս
գիտեմ . . . : Ոչ քառասուն հազարի , և ոչ ալ յիսուն հազա-
րի չեմ ձգեր նկարս . . . : Եթէ կ'ուզէք որ իրարու հետ
գործ մը ընենք , առաջին անգամ ըլլալով վաթսուն հա-
զարի կը ձգեմ . . . : Մէկ սու պակաս չըլլար :

ԱՐՆՀԱՅՄ.— Ա՛հ, ո՛րքան տարօրինակ են հիմնական
երիտասարդները...: Բայց ձեր ստորագրութիւնը, այս
պահուս, բան մը չարժեր: Պէտք է նորէն գնեմ ու ձեռքէ
ձեռք ծախեմ ձեր նկարները...: Աւելի դիւրին է նկարչու-
թիւն ընել քան թէ ծախել նկարները:

ՊԷՐՆԻԷ.— Հրեայ մի՛ ձեւանաք այդքան, քանի որ Հրեայ
չէք, սիրելի պարօն Արնհայմ...: Ամէն մարդ գիտէ որ
Պէրթրան մը կոչուիք, ու հրէական անուն մը կը գործա-
ծէք, աւելի սարսափեցնելու համար հրապարակը...: Բայց
չէք կրնար ահաբեկել գիտ...: Պէրթրանի յատուկ բարի
հոգի մը ունիք: Տասնըհինգ վայրկեանէն՝ հօթանասուն եր-
կու հազարի պիտի բարձրանայ գինը:

ԱՐՆՀԱՅՄ.— Ապահովարար, ո՛չ:

ՊԷՐՆԻԷ.— Մէկ... երկու...:

ԱՐՆՀԱՅՄ.— Ու երեք...: Հոյ չէ, կ'ընդունիմ...:
Շիտակ չէ ըրածս, բայց խօսքս խօսք է...:

ԼՕԼԷԹ.— գոչելով.— Տէ՛ր Աստուած:

ԱՐՆՀԱՅՄ.— Սկսնակի մը կողմէ խարուած ըլլալու
տպաւորութիւնը կ'ունենամ... հոգ չէ թէ շատ տարօրի-
նակ ըլլայ...: Վաղը իմ գրասենեակս կը հանդիպիք...
պայմանագրութիւնը կը կնքենք:

ՇԱՅԵԱՐ, ԼՕԻԿՔԻՆ.— Վա՛յ անպիտան... Այս մարդը
շատ առաջ պիտի երթայ, անուշս:

Յանկարծ, հեռուն, ֆուկարկութեան սենեակէն կը լսուի
ժափահարութեան արափ մը:

ԼՕԼԷԹ.— Աստուած իմ...: Այս աղմուկը... այս
ժափահարութիւնները... Բիէր:

ՊԷՐՆԻԷ.— Լուր՛ւ...: Շքազրամը տրուեցաւ...

ՍԵՐՔԵՆ ԵՆ ՊԵՐՆԻԷ ՈՏԻ ԵՂԱԾ ԵՆ. գոյներնին նե՛սած ու
սեղերնին գամուած կը մնան:

ԱՐՆՀԱՅՄ, դիտելով ՍԵՐՔԵՆ ԵՆ ՊԵՐՆԻԷ.— Ո՞վ շա-
հեցաւ:

Տապալած արոններու աղմուկ մը: Թապուրօ երեսն կուգայ: Գլխարկ մը ճօնելով կը նշէ:

ԹԱՊՈՒՐՕ. — Յաղթանահը տարիք...: Յաջողեցա՛ր...: շահեցա՛ր:

ԱՐՆՀԱՅՄ, Բարեկամի մը ուղղելով խօսքը, մինչ անոնի կ'ողջագուրուին. — *Լաւ գործ մը ըրինք:*

Պերնիէ ու Լօյէթ իրարու վիզ կը փաթրուին անձայն: Չախակողմք, Սերքեն նստարանին վրայ կ'իյնայ շնչաւ: Սիւզօն եւ Շայեար՝ կ'ողջագուրեն (Բիերը: Իսկոյն, մէկ բոպէի մէջ, Բիեր Պերնիէն կը փնտռեն անոնի, որ զիրար հրճեցելով դուրս կ'ելլեն ֆուէարկուրեան սրահէն, ուր ծափահարուրիւնը կը շարունակուի սակաւին:

ԱՌԱՋԻՆ ՆԿԱՐԻՉԸ. — *Կը կարծեն որ ե՞ս շահած եմ:*

ԵՐԿՐՈՐԳ ՆԿԱՐԻՉԸ. — *Տէր Աստուած, զիս ալ կ'ողջագուրեն:*

ԱՄԵՆՅԸ. — *Կեցցե՛ս, կեցցե՛ս:*

ՊԷՐՆԻԷ, սկար ձայնով. — *Շնորհակալ եմ... շնորհակալ եմ...:*

ՈՒՐԻՇՆԵՐ, հոն հստակելով. — *Մէր է ան:*

ՆԿԱՐԻՉ ՄԸ. — *Այս կողմ եկէ՛ք:*

ՊԷՐՆԻԷ, ողջագուրուելով. — *Շատ գո՛ն եմ...: Շատ գո՛ն եմ...: Ի՛նչ աղուոր պահ մըն է:*

ՈՒՐԻՇ ՄԸ. — *Երեք ձայնի մեծամասնութեամբ շահեցար շքադրամը...: Քիչ մըն ալ աւելի...:*

ՊԷՐՆԻԷ. — *Որուն հոգը...: Ի՛նչ աղուոր պահ մըն է:*

ԽՈՒՄԲ ՄԸ, հոն հստակելով. — *Կեցցե՛ Պէրնիէ, կեցցե՛ Պէրնիէ:*

ՏԻԻՄԱ, ուժգնօրէն սեղմելով Պերնիէի ձեռքը. — *Իսկապէս արժանի էիր այդ շքադրամին: Քու արժանիքովդ շահեցար: (Սերքենի մօտենալով որ հակառակորդ խումբի մը կողմէ երջապատուած է՝ ձախակողմքը:) Ցաւակցութիւններս: Դուք միայն արժանի էիք, շքադրամը ստանալու...:*

Սերթեճը դուրս կը հանեն կէս մը նուազուն :

Սէրթէնի ՉԱՅՆԸ .— Խե՛րը անիծեմ . . . Խե՛րը անիծեմ :

Սերթեճ կը հեռանայ, խումբի մը կողմէ փախուելով :

Սէլիէ, Պերնիէին .— Ինքզինքս հպարտ կը զգամ . . . իրրելի բարեկամ . . . Ինքզինքս հպարտ կը զգամ . . . : (Սերթի մը) Չեմ հասկնար եղածը . . . բայց շատ լաւ եղաւ :

ՆԿԱՐԻՉ ՄԸ, յաւակնոս .— Կեցցե՛ս, շատ կեցցե՛ս, բիւրիցս կեցցե՛ս :

ՈՒՐԻՇ ՄԸ .— Իսկ հոչակաւոր Սէրթէն ի՞նչ եղաւ . . . : Ինծի ըսին թէ հոս էր . . . :

Պէրնիէ, յաղթական .— Աւասիկ . . . կը տանին այդ բանը . . . այդ քուրջի կտորը . . . Այլ լինցաւ . . . : Քիչ մը առաջ շունչը փչեց :

ՆԿԱՐԻՉ ՄԸ .— Ի՞նչ կ'ըսէք :

Պէրնիէ .— Այո՛, իմ նկարիս առջև հողին աւանդեց, համեստութեան շանթահարիչ կաթուածի մը հետեանքով :

ՆԿԱՐԻՉ ՄԸ .— Խեղճ մարդը ի՞նչ ըսաւ, լուրը տանելուն պէս :

Պէրնիէ .— Ականջովս լսեցի որ կ'ըսէր. «Գետնին տակը անցնիս, ո՛վ Ֆրանսա» :

ՆԿԱՐԻՉ ՄԸ, իր մօտը գտնուող անձի մը .— Անպուժ, վայրագ յաղթանակ մըն է որ տարաւ :

Պերնիէի թելերը մտած, կը տանին :

ԵՐԿՐՈՐԴ ՆԿԱՐԻՉԸ .— Ահա՛ մէկն ալ, որ փճացած է այլ ևս . . . : Այսուհետև, անճոռնի նկարներ պիտի չինէ, ծախելու համար միայն :

ԵՐՐՈՐԴ ԵՆԿՍՐԻՉԸ.— Ամէն սպարազայի մէջ, տակաւին երիտասարդ էր երէկ, բայց այսօր ծեր մըն է...

Հարիւր ձեռներ կ'երկարին: Ազմուկ, ժխոր:

Մէկէլ, Պերնիէի մօտեցալով.— Սիրելի՛ վարպետ... սիրելի՛ վարպետ:

ԱՌԱՋԻՆ ԵՆԿՍՐԻՉԸ.— Կը տեսնե՛ս, մարդ ի՛նչպէս կը ծերանայ հինգ վայրկեանի մէջ:

Սէլիէ, Պերնիէի.— Եկո՛ւր, ոսկիէ շրջանակը դի՛ր նկարիդ տակ:

Պէրնիէ, համեսօրէն.— Ոչ... ոչ...: Կարեւորութիւն չունի...: Լօլիթ յողնած է:

Սէլիէ.— Ի՛նչ ունի: Հիւանդ է:

Պէրնիէ.— Խեղճ աղջիկը յուզուած է:

ԹԱՊՈՒՐԹ.— Գէթ, իր յուզումը ծածկելու է...:

ԼՕԼԻԹ.— Բայց դիւրին բան չէ յուզումը ծածկել:

ԵՆԿՍՐԻՉ ՄԸ.— Ո՛վ փառք, ո՛վ դափնեպսակ:

Այդ պահուն թնդանօթի ձայն մը կը լսուի հեռուէն:

Սէլիէ.— Թնդանօ՛թ:

ԿՐԷՎԻԼ, հասնելով.— Էնվալիտի թնդանօ՛թն է:

ԼՕԼԻԹ.— Տէ՛ր Աստուած, թնդանօ՛թ...: Աս ալ քեզի համար կը նետե՛ն:

Քրֆիզներ:

Պէրնիէ, խնդալով.— Ոչ, կը ցաւիմ որ ինձի համար չէ...: Ալֆօնս ԺԳ.ի համար է...: Պուա տը Պուլօնների պողոտայէն ճամբայ ելած է:

ԵՆԿՍՐԻՉՆԵՐ.— Ի՛նչ, Ալֆօնսի համար է, կ'ըսե՞ս: Այո՛, այնպէս է:

ՉՍՅՆ ՄԸ.— Ի՛նչ կ'ըսէք... վար իջնե՛ք... քանի ծափահարութիւնը կը շարունակուի:

Պէրնիէ.— Այո՛... վար իջնել կ'ուզէ՞ք...: Օ՛ն, թագաւորը ծափողջունելու գացէ՛ք, ու յետոյ՝ ուղղուեցէ՛ք

դէսլի Լըտուայէն: Շուտով, հոն կը միանամ ձեզի: (Լօլէթի ուղղելով խօսքը:) Զարմանալի՛ բան որ հոս չեմ տեսներ իմ մեծաշուք ճարտարադէտ եղբայրս: Որքան որ կը ճանչնամ զինքը, քանդակագործութեան սրահին մէջ թափառած ըլլալու է, ի հարկին երեան դալու համար յաղթանակի առտեն, և կամ կծիկը գնելու համար՝ ձախողութեան պարագային:

ԼՕԼԷԹ. — Աւասի՛կ, սա խոշոր մարդուն ետին կեցած է:

ՊԷՐՆԻԷ. — Քեզի չըսի՞:

ԷՅԺԷՆ ՊԷՐՆԻԷ, թեւերը բացած. — Եկո՛ւր, քեզ ողջագուրեմ:

ՊԷՐՆԻԷ. — Ի՛նչ փոյթ, եթէ ողջագուրող մը աւելի կամ պակաս ըլլայ այսօր:

ԷՅԺԷՆ. — Զկրցի զսպել փափաքս . . . Գրասենեակէն դուրս ելլելէս յետոյ . . . հարկ եղաւ թափառիլ այս կողմերը . . . : Կինս ալ գոհ պիտի մնայ:

ՊԷՐՆԻԷ. — Անշուշտ: Հիմա որ պաշտօնական հանգամանք ունիմ, ա՛յ կրնաս հացկերոյթներուդ հրաւիրել զիս . . . : Լաւ դիրք մը պիտի գրաւեմ սեղանին մէկ ծայրը:

ԷՅԺԷՆ. — Ի՛նչո՞ւ ատանկ խօսքեր կ'ընես:

ՊԷՐՆԻԷ. — Խօսքեր որոնք կարեորութիւն չունին: Երթա՛ս բարով, բարեկա՛մ: Բայց քանի որ չես մեկնած տակաւին, քեզի իմաց պիտի տամ երկու աննշան բաներ . . . : Պէզիէցի մէկ ընկերս տակառ մը գինի զրկած է ինծի, և որովհետեւ գարեջուր միայն կը խմեմ, քու բնակարանդ, Պուլփար Մալէրալ պիտի զրկեմ գինին: Միւս ըսելիքս է Լօլէթի հետ ամուսնութիւնս:

ԷՅԺԷՆ. — Ի՛նչ, անոր հետ կ'ամուսնանա՞ս:

ՊԷՐՆԻԷ. — Այո՛ . . . չհասկնալու բան չկայ . . . դո՛ւս պաններուն և հայթայթ իչներուն գործին կուգայ:

ԷՅԺԷՆ. — Ա՛հ, ի՛նչ կ'ըսես . . . խելքդ թոռցե՛ր ես:

ՊԷՐՆԻԷ. — Ուրիշ առթիւ պիտի բացատրեմ քեզի: Այսօր, ատեն չունիմ: Մնաց որ, քեզի ի՛նչ փաս ունի: Տեսե՛

դու թիւն, եղբայր, ու բարեկեր կ'ստճոյ : (եղբայր մեկնելի յետոյ՝ Լօլէթին կը դառնայ :) Լօլէթ : Ա՛հ, ողորմելի՛ արարած է ան . . . : Բայց չպիտի կրնայ մեր երջանկութեան արդելք ըլլալ : Աչտակներդ թո՛ղ խնդան . հարսնիք պիտի ընենք, Լօլէթ :

Չեմբերու սեղմում. ժխտ :

ՍԱՊԱԹԻԷ, ամբոխն նեղելով. — Պետութիւնը . . . :

ՊԷՐՆԻԷ. — Ի՛նչ ըրեր է :

ՍԱՊԱԹԻԷ. — . . . զնամ է քու նկարդ, Լիւքսէմպուրկի մէջ դրուելու համար :

ՈՒՐԻՇ ՄԸ. — Շատ բախտաւոր մարդ է սա անպիտանը :

ՊԷՐՆԻԷ. — Ո՛ւր է ան :

ՍԱՊԱԹԻԷ. — Հոն է : Գեղարուեստից նախարարութեան խորհրդականը, թայեան Պիլիար, եկած է եւ կ'ուզէ ձեռքը սեղմել . . . : Յետոյ էլիզէ պիտի երթայ, Ալֆօնսը ընդունելու համար . . . : խորհրդականը չէ ուզած հասկէ անցնիլ, ատանց . . . :

ԼՕԼԷԹ. — Բայց դուն արդէն ծախած ես նկարդ :

ՊԷՐՆԻԷ. — Հո՛ղ չէ : Երկու անգամ պիտի ծախեմ . . . :

Յետոյ կը կարգադրենք գործը :

ԼՕԼԷԹ. — Ո՛ւր է պետութիւնը : Ո՛ւր է :

ՍԱՊԱԹԻԷ. — Սա մարդուկը, որ պզտիկ մօրուք մը և խոշոր փոք մը ունի . . . : ահա՛ Պետութիւնը :

ԼՕԼԷԹ. — Իրա՛ւ կ'ըսես . . . : Շատ տղեղ արարած մըն է եղեր . . . :

Խորհրդականին պատճենական մուտք : Ոլջոյններ : Չեմբ սեղմումներ :

ՍԱՊԱԹԻԷ. — Ահա՛ պարոն Պէրնիէն :

ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉԸ, բարեմիտ երեւոյթով, սեւ զգեստով եւ դեղին բարձրիւով. — Պարո՛ն . . . : Նախ ձեզ կը շնորհաւորեմ այդ շքադրամին էամար, որ

յանձինն ձեզ՝ կը փառաւորէ նոր գպրոցին ամենէն երիտա-
տարդ և լաւագոյն ներկայացուցիչներէն մէկը :

Պէ՛րՆԻ՛է, մեծաւալից. — Շատ գոհ եմ... շատ գոհ
եմ...

ԿՐԷՎԻ՛՛՛, նկարիչի մը. — Վա՛յ անպիտան : Սրին մէկը,
Սէ՛վրի դարգանօթներուն վրայ ալ պիտի անցնի : Հաւատա՛
ըսածիս :

ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉԸ. — Լիւքսէմ-
պուրկի թանգարանին համար ձեր նկարը գնելու բարերախ-
ղութիւնը պիտի ունենայ կառավարութիւնը : (Կը ծափա-
հարեն) : Բայց ինչպէս յայտնի է... վարկերը քիչ են...
պղտիկ գումարներ ունինք մեր տրամադրութեան տակ... :
Վալուա փողոցի պաշտօնատունէն անցէք վաղը, եթէ եր-
բեք պահանջկոտ չէք... հոն կարծիքի փոխանակութիւններ
պիտի ունենանք այդ մասին :

Պէ՛րՆԻ՛է. — Բայց, պարօն տնօրէն... ամէն զիջում
պիտի ընեմ... : Արդէն իսկ, հանրապետական կառավարու-
թիւնը շատ աղուօր բան մը ըրած կ'ըլլայ, մեր տրամադ-
րութեան տակ գնելով Լիւքսէմպուրկի փոքր գքսութիւնը :

Հաւանութեան ծիծաղներ :

ԿՐԷՎԻ՛՛՛. — Ու խորհի՛ւ որ սա մարդը թերևս տասը
տարիէ ի վեր կը սպասրաստէ այդ պարբերութիւնը :

ԱՌԱՋԻ՛՛՛՛ ՆԿԱՐԻՉԸ : մինչդեռ Թայեան-Պիյեար դուրս
կ'ելլէ ԵՐՉԱՊԱՏՈՒՄԸ. — Լօլէթ, աւասիկ լաւ բախտ մը, որ
անձնապէս կը շահագրգռէ ձեզ : Անշուշտ, կ'ըմբռնէք, այն-
պէս չէ :

ԼՕԼԷԹ. — Ոչ :

ԿՐԷՎԻ՛՛՛. — Ի՞նչպէս կ'ըլլայ որ չէք ըմբռներ : Բայց
ձեր մարդակազմութիւնը Լիւքսէմպուրկի գլուխ գործոցնե-
րուն մէջ պիտի ցուցադրուի : Ասկէ աւելի ի՞նչ մեծ պա-
տիւ կայ :

ԼՕԼԷԹ. — Ճշմարիտ է :

ԱՌԱՋԻՆ ՆԿԱՐԻՉԸ. — Անկէ ետքը, կարգը պիտի գա՛յ
Լուսի: Չեր հոլանկարը հոչակաւոր պիտի դառնայ թի-
թիէնի «Վէնիւս»ին պէս... Մանէի «Օլիմբիա»յին պէս:

ԼԱՖԱՐԿ. — Չեր վրայ պիտի հիանան, ձեր վրայ պիտի
խօսին տարիներով:

ԿՐԻՎԻԼ. — Տիկին, խորհեցէ՛ք որ ձեր յետոյքը ոչ
միայն ձեռք պիտի բերուի Պետութեան կողմէ, այլ և ա-
պագայ սերունդին ժառանգութիւն պիտի մնայ...:

ՈՒՐԻՇ ՄԸ. — Դարուց ի գա՛րս:

ՈՒՐԻՇ ՄԸ. — Հոյակապ բան է:

ԼՕԼԷԹ, հիացիկ. — Շիտակ է, ամէն պարագայի մէջ:

Թնդանօթի նոր հաւուած:

ՍԱՊԱԹԻԷ. — Պո՛ւմ... Աս ի՛նչ փառաւոր օր է: Ահա՛
թագաւորը կ'իջնէ էլիզէէն: Բազմութեան հետեւի՛նք: Չար-
մանալի՛ բան, քանդակագործութեան ամբողջ սրահը պար-
պուած է:

ՉԱՅՆԵՐ, խորեհ. — Ինձի նայեցէ՛ք, պարոններ...
վար իջնե՛նք, Ալֆօնսը տեսնելու համար:

ՍԱՊԱԹԻԷ. — Պէրնիէ, օ՛ն յառաջ դէպի Լըտուայէն...
մեծ «սրիչ» մը պիտի ուղղեն քեզի:

Կը փորձեն ինտերնէն սանիլ Պերնիէն:

ԼՕԼԷԹ, աթոռի մը վրայ փռուած. — Աստուած իմ, որ
քա՛ն յոգնած եմ:

ՊԷՐՆԻԷ. — Լըտուայէն գացէք. հոն կը միանամ ձե-
զի...: Կ'ուզեմ պահ մը հանգչեցնել Լօլէթը... և արդէն,
անոր ըսելիքներ ալ ունիմ...: Այս ատուրնէ ի վեր,
մարդ ինքզինքին տէրը չէ այլ ևս:

ԿՐԻՎԻԼ. — Շատ բնական է: Բայց մի՛ կարծեր որ ըն-
կերներդ հանգիստ պիտի թողուն քեզ:

ՊԷՐՆԻԷ. — Վայրկեան մը: Ինձի նայեցէ՛ք, կարսօն...

սեղան մը կը շտկէ՞ք ձախակողմը, անկիւնը, շեղ բարա-
վանին առջև... : Լօլէթ, դուն ետին անցի՛ր... : Յետոյ՝
ձեզի կը միանամ : (Խօսքը Թապուրոյին ուղղելով աշխուժօ-
րեն :) Թապուրօ, աղնուութիւնը ունեցիր զիս հարցնողնե-
րուն ըսելու թէ քիչ մը առաջ հեռացայ հոսկէ, Լըտուայէն
երթալու համար... : Կարտօն, կը հաճի՞ք անոնց պատաս-
խանել թէ հոս չեմ գտնուիր, եթէ զիս փնտռեն... ու կ'ա-
ւելցնէք թէ նկարս տեսնելու գացած եմ վերը : (Կարսօնին :)
Այս կողմ հրեցէք... : շնորհակալ եմ... : Օ՛Ֆ... : (Բարավա
նին անկիւնը կը շտկէ, ու Լօլէթը անոր ետին կը տեղաւորէ :)
Հանգիստ ե՞ս, աղուորս :

Պերնիէ գորովալից շեշտով մը կը խօսի Լօլէթի հետ :

ԼՕԼԷԹ.— Շնորհակալ եմ, Բիէրօ : Ստամոքսս պարանպ
է : Երէկ իրիկուընէ ի վեր, քերանս քան դրած չեմ :

ՊԷՐՆԻԷ.— Լաւ, վայրկեան մը սպասէ՛... : հիմա սան-
տուիչ մը կ'ապսպրեմ :

Պերնիէ ալ կը տեղաւորուի պնակադարանին հով, բա-
րավանին ետին : Նկարիչներ ճակաւին կը կանչեն Պերնիէն.
որ մերժողական նշաններ կ'ընէ :

ԹԱՊՈՒՐՕ, մօտեցող անձերուն.— Քիչ մը առաջ մեկնե-
ցաւ... : հոնկէ... : ձախակողմէն... : Տեսէ՛ք, կը հեռանայ,
քիչ մը անդին է... :

ՊԷՐՆԻԷ, բարավանին ետին, Լօլէթի ժպտելով.— Ազնի՛ւ
Թապուրօ :

Լօլէթ գլուխը ձեռներուն մէջ կ'առնէ :

ԼՕԼԷԹ.— Հակազգեցութիւնն է :

ՊԷՐՆԻԷ, բարավանին վրայէն նայելով.— Ըսածիս պէս
եղաւ... : եկողները կը հեռանան... : Ի՞նչ կ'ուզես, Լօլէթ :
Սարտին-պէօր կ'ուտե՞ս :

ԿՆՐՄՕՆԸ. — Չուենինք . . . Անձրուկ (անշուա) . . . թա-
նափկիթ (խափեար) կ'ուզէք . . . :

ԼՕԼԷԹ. — Ո՛չ, «պապա» մը բե՛ր, ուրիշ բան չու-
զեր :

ՊԷՐՆԻԷ. — Լուլու, անհաւատայի չե՞ս դաներ ե-
ղածները : Ուրիշ բան մըն ալ պիտի հաղորդեմ քեզի . . . :
Կը յիշե՞ս այն օրը, երբ ըսի քեզի. «Եթէ ձեռք բերեմ այդ
չքաղրամը, կ'երգնում որ . . . » :

ԼՕԼԷԹ. — Լուէ՛, գիտեմ թէ ի՞նչ պիտի ըսես : (ԼՕԷՅ կը
հեծկլսայ) : Բայց ի՞նչ ըրի միթէ, այսքան երջանիկ ըլլալու
համար :

ՊԷՐՆԻԷ. — Ի՞նչ ըրիր : Գէշ օրերու մէջ, բարի, արի,
անկեղծ ու ազնիւ . . . և շիք եղար . . . Քեզի կը պարտիմ
երջանիկ տարիներ . . . ու չքաղրամի կտոր մը : Այս ամէ-
նուն փոխարէն՝ մեծ բան մը ըրած չեմ ըլլար, քեզի հետ
ամուսնանալով : Խոստացայ, ու խօսքս պիտի յարգեմ : Փա-
ռաւո՛ր կեանք մը պիտի վարենք այսուհետեւ . . . : Քանի որ
գո՛հ ենք . . . : Մ'ն յառաջ, Լուլո՛ւ . . . : Մ'ն, ամոփուէ՛ այս
երջանկութեամբ : Իրերը չափազանցելու չէ : Որովհետեւ կա-
րեւորութենէ զուրկ են :

ԼՕԼԷԹ. — Ա՛հ, չես գիտեր թէ ինձի համար ի՞նչ կը
նշանակէ ատիկա . . . : Ես քու կի՛նդ . . . ի՞նչ երազ :

ՊԷՐՆԻԷ. — Տղայութի՛ւն չուզեր : Ոչ մէկ բան պիտի
փոխուի :

ԼՕԼԷԹ. — Այո՛, ի՛նչ է՛ ծանր և թէ քաղցր բան մըն է . . . :
Եկեղեցին պիտի ըլլայ մեր պսակը, այնպէս չէ :

ՊԷՐՆԻԷ. — Եթէ կ'ուզես, հոն թո՛ղ ըլլայ . . . իմ փոյթս
չէ բնաւ :

ԼՕԼԷԹ. — Ինձի համար մեծ կարեւորութիւն ունի, երբ
մտքիս առջեւ կը բերեմ . . . :

ՊԷՐՆԻԷ. — Կը զգամ որ ատիկա հաճոյք կը սլատճատէ
քեզի . . . բայց ես ու ե կարեւորութիւն չեմ ընծայեր այդ
ձեակերպութիւններուն : Գիտե՞ս, կարեւորը ի՞նչ է, իրա-
սիրելն է :

ԼՕԼԷԹ.— Այս՝... բայց ուրիշ բան է ամուսնացած
ըլլալ... Բիէրս, չես գիտեր թէ ո՞րքան կը սիրեմ քեզ :
Ոչ, չես կրնար գիտնալ... : Որքան հեշտ է խորհիլ թէ ի-
րարու հետ պիտի կենակցինք... միասին պիտի ծերանանք :
Ա՛հ, կ'ուզէի քեզի նուիրել այն բանը զոր չեմ կրնար ըն-
ծայել : Ես խոր վիշտ մը կը զգամ, աչքիս առջև բերելով իմ
անցեալս... անբիծ կին մը չպիտի ըլլամ քեզի համար...
Գուն անբիծ կին մը ունենալու արժանի էիր :

ՊԷՐՆԻԷ.— Յանցանքը քուկդ չէ, այնպէս չէ... :
Այդ գաղափարները ուրկէ՞ յղացար հիմա... : Կեանքը այս-
պէս է :

ԼՕԼԷԹ.— Կը բաղձամ որ այսօր առաջին անգամ քեզ
ձանչֆած ու քեզի հանդիպած ըլլայի... : Երեւակայէ՛, ի՛նչ
աղուոր բան պիտի ըլլար :

ՊԷՐՆԻԷ.— Ոչ սո՞նքան աղուոր որքան առաջին ան-
գամ... երբ իմ աշխատանոցս եկար, սիրունիկ ու վարդա-
վիթիթ գէմքով մը... աջ սրունքդ երկայն գուլպայ մը հա-
գած, իսկ ձախ սրունքդ... կարճ գուլպայ մը : Լուլու,
միտքդ բե՛ր անգամ մը :

ԼՕԼԷԹ.— Մի՛ խօսիր ատոր վրայ :

ՊԷՐՆԻԷ.— Ինչո՞ւ : Մեր անցեալին համար չեմ ամըչ-
նար... : Իմ աշխատանոցս եկար, բոլորովին մերկ... պա-
տուհանէն ներս մտնող թռչունի մը պէս... ու ես վար
դրի քեզ : Ըսէ՛, լաւ չըրի... : Տխմա՛ր արարած, ո՛րի՞թէ
լաւ չէ՞ր մեր առաջին գիշերը, երբ իրար չէինք ձանչնար
գրեթէ... ու յետոյ՝ երբ գիրար գիտեցինք, ուժասպառ,
աչքերնիս միժաստուեր, Գուն կ'ըսէիր. «Ես ասա՛նկ
աղջիկ մըն եմ... կապոյտ համբոյրներ կուտամ :»

Կը ծիծաղին :

ԼՕԼԷԹ.— Ու Գուն ալ խոչոր ապտակ մը իջեցուցիք
երեսիս, ըսելով. «Ես ալ կարմիր ապտակներ կ'իջեցնեմ» :

ՊԷՐՆԻԷ.— Ըսածիդ պէս է : Առաջին նախանձս եղաւ :

1,01,1,10.— Միակը... եզականը... Բիէր: Անկէ Ետքը
Երբեք չես ունեցած այդ նախանձը: Մե՛ղք:

Պէ՛րՆիէ.— Հասցա զարթնո՛ւմը: Երբ մօտէն դիտեցի
դէմքդ, ցանկեր տեսայ հոն, զոր չէի նշմարած մինչև այն
ատեն...: Տեղեկութիւններ տուիք դէմքի ցանկերուդ մա-
սին...: Քաշքշուքներ կ'ընէիր, ըսելով. «Յաները կարասիի
պէս կը զարդարեն դէմքը... աւելի լաւ կ'երևայ ան: Թափուր
յարկարածնի մը կը նմանի դէմքը, երբ հոն ցան չկայ...:
Սա ցանը մէջտեղի սեղանն է, անդիինը՝ անկիւնի թիկնա-
թոռը... աջակողմի պզտիկ ցանը՝ սիկատի տուփն է»: Երբ
քեզ համբուրեցի լիաշուրթն, դուն քրքիջով մը պատաս-
խանեցիր. «Սա ցանը ձուկի տուփի կը նմանի»: Աստուած
իմ, որքա՛ն միամիտ ու տղայամիտ էինք այն ատեն: Որ-
քա՛ն հաճելի է յիշել այդ վսեմ բոպէները: Հիմա, պաշտօ-
նական հանգամանք ունիմ այլ ևս...: Պաշտօնական մարդ
մը կը գտնուի դիմացդ...: Բախտաւոր անձնաւորութիւն-
ներ ենք, ու պիտի հարստանանք...: Դրամի հետ պիտի
խաղանք այսուհետև:

1,01,1,10.— Կը հաւատա՞ս որ այդպէս է: Վաթսուն հա-
զար Ֆրանքը մէկ անդամէն ձեռք պիտի անցնե՞նք:

Պէ՛րՆիէ.— Այո՛, մէկ անդամէն... հօ՛ք...: Ու դեռ
սկզբնաւորութիւնն է...:

1,01,1,10.— Ինձի նայէ՛, Ես քիչ մը լայնօրէն պիտի
ծախսեմ...: Մինչև հիմա, սուերը ութը-տասը մասերու կը
բաժնէի. ա՛յ կը բաւէ...: Օ՛հ, շոայլ չպիտի ըլլամ. բայց
վերջապէս պիտի կրնամ իրագործել քանի մը փոքր անուրջ-
ներ...: Շատ մը մարօն կլասէ պիտի ուտեմ...: Զմեռը՝
վարդագոյն մեխակներ պիտի գնեմ չիակիս վրայ...: Յե-
տոյ՝ պիտի գնեմ հեծելանիւի զգեստ մը՝ կանաչ թաւիչէ...:
Ջրադուէսի մորթէ գրակով: Շատոնց այդ փափազը ունիմ:

Պէ՛րՆիէ.— Ուրեմն, երջանիկ, շատ երջանիկ պիտի
ըլլաս, այնպէս չէ՞:

ԼՕԼԷԹ .— Աչքերուս մէջ 'նայէ' . . . ու հոն պիտի տես-
նես երջանկութիւնը . . . : Որքա՞ն կը սիրեմ քեզ :

ՊԷՐՆԻԷ .— Իրա՞ն կ'ըսես :

ԼՕԼԷԹ .— Ձե՞ս զգար միթէ : Երեսս 'նայէ' :

ՊԷՐՆԻԷ .— Այո՞ :

ԼՕԼԷԹ , ՊԷՐՆԻԷի փարսած .— Բողոքովին քուկինդ եմ . . .
ու միշտ քուկինդ պիտի ըլլամ . . . : Դուն ես իմ տէրս : Ի՛նչ
որ կ'ուզես ըրէ՛ գիտ , Բիէր : Օ՛հ , չես գիտեր ո՛ր աստի-
ճան քեզի կը պատկանիմ : Երբ քու առջեզ կը կենամ 'նկարի
համար . . . մերկ վիճակի մէջ . . . այնքան գողտրիկ բան մը
կը զգամ որ չեմ ուզեր ժամերով տեղէն շարժիլ քու 'նայ-
ուածքիդ տակ , որ մերթ կը սեւեռի վրաս , մերթ կը քթթէ
ու սիրով կը պարուրէ գիտ . . . : Կը զգամ թէ այդ 'նայուած-
քը կ'անցնի , այդ 'նայուածքը կը տոչորէ գիտ , ու տաքուկ
լոյսի մը պէս կը մօտենայ մարմնիս . . . : Բիէր , ճշմարտու-
թիւնն է որ կ'ըսեմ . . . : Ատենօք բան մը չէի զգար իմ վրաս
յառած 'նայուածքներէն , երբ 'նկարիչներուն առջեզ կը կե-
'նայի : Ինձի համար 'նշանակութիւն չունէին . . . : Հիմա ,
կը համբերեմ քու 'նայուածքիդ տակ , որ կը կպչի , կը մա-
զըլցի , կը յողնեցնէ . . . : Կը լսեմ քու շունչդ , հոն , վեր-
ձիններուն ետին , ու կը տեսնեմ պոստած յօնքերդ . . . : այն
ատեն ինձի այնպէս կը թուի որ սիրասուն մեծ զաւակ մը
կը գիւցնեմ . . . : Բիէրօ , այդ պահուն շատ կը վախնամ անոր
չնչառութիւնը խանգարելէ :

ՊԷՐՆԻԷ .— Բայց կը վստահեցնեմ որ հիմա ուրիշներու
պիտի ձգես այդ երջանկութիւնը : Խօսքին շխտակը , գողու-
թեամբ չէ որ պիտի հարստանանք : Քիչ մըն ալ կարգը մեզի
եկած է . . . : Եթէ գիտնայի՛ր : Քեզ ճանչնալէ առաջ , սու-
կալի օրեր անցուցած եմ . . . : Թէե բան մը չեմ ըսած քե-
զի . . . :

ԼՕԼԷԹ .— Գիտեմ . . . :

ՊԷՐՆԻԷ .— Ոչ , ամէն բան . . . : Այնպիսի բաներ կան
զոր մարդ գժուարաւ կը խոստովանի : Անշուշտ , կրնայի

դրամ ուզել եղբորմէս... բայց չսխտի դժկամակէ՞ր տալու :
Մնաց որ՝ չստիազանց հպարտ եմ : Կը նախընտրեմ անօ-
թութենէ սատկիլ... ամէն բանի տոկալ... քան թէ բան
մը խնդրել... : Կը յիշեմ անօթի մնացած ըլլալս... : Այո՛ , չոր
հացի օթեկ կեղեւներ բակի աղբիւրին տակ կը թրջէի , որ-
պէս զի կարենայի ակռաներով ծամել... : Յետոյ կազին
վրայ կը տաքցնէի :

ԼՕԼԷԹ .— Օհ , իմ գլխէս ալ անցած են այդ բաները :
Ես ալ ամէն բան չեմ ըսած քեզի... : Մարդ չի համարձա-
կիր ըսելու... : Երեւակայէ՛ որ նկարիչներուն առջև կենալէ
առաջ , մօրս թելադրութեամբ՝ մուրացած եմ փողոցներուն
մէջ... : Քեզի պատմելու չեմ այս բաները , այնպէս չէ :

ՊԷՐՆԻԷ .— Ինչո՞ւ :

ԼՕԼԷԹ .— Օր եղաւ որ բնակարան չունէինք... : Պուա-
տը-Պուլօններ կ'երթայինք , պառկելու համար... : Փոքր
կայարաններուն մէջ կարելի է մնալ մինչև ժամը տասնըմէկ :
Յետոյ կ'երթայինք մեծ կայարան մը , ու նստարանի մը
վրայ առեն կ'անցնէինք մինչև ժամը երեք... : Երբ միտքս
կ'իյնայ... :

ՊԷՐՆԻԷ .— Բան մը չէ ատ . գիտե՞ս , ի՛նչ ըրած եմ ,
առանց քաշուելու , էրիկ մարդ ըլլալովս մէկտեղ... : Ա՛հ , Օրին
մէկը , շատ կը տառապէի... անտանելի բան էր պարզա-
պէս... ասպարանքի մը դրան վրայ , փողոցին մէջ , ծալ-
լուած թուղթ մը կար... հետաքրքրութեամբ բացի զայն... :
Ուտելիքի աւելցուքներ էին... (Չայնը կը խեղդուի:) ու
սկսայ... :

ԼՕԼԷԹ , ՊԵՐՆԻԷ ՎԻՂՐ ՎԻՍՔՐՈՒԵԼՈՎ .— Բիէրօ՞... :
(Գ՛արտասուեն:) Որքա՛ն տառապեր ես :

ՊԷՐՆԻԷ .— Հապա՛ դուն , խեղճ ձագուկս :

ԼՕԼԷԹ .— Բայց երբեք չէինք համարձակած այս ամէնը
իրարու ըսելու :

ՊԷՐՆԻԷ .— Ոչ , ամէն բան չըսուիր իրարու... : Բաներ
կան որ մարդ ինք իր մէջ կը պահէ : Ասանկ օրերու... մեծ... :

չատ մեծ... երջանկութեան օրերու մէջ երեւան կ'ելլեն
 ասոնք... : Բայց դիւրին է հիմա յիշել այդ աղտոտ յիշա-
 տակները : Օ՛Ֆ, վերջապէս, յաջողութիւն ձեռք բերինք... :
 Ա՛հ, ի՛նչ կատաղութիւններ, խուլ զայրոյթներ ունեցած
 եմ այն օրերուն, երբ կը պտտէի Բարիգի, ամբողջ Բարի-
 գին մէջ, որուն խուլ թաւալումները կը լսուին պայատին
 ապակիներուն ետեւէն... : այն օրերուն երբ կը թափառէի
 Շան զ'էլիզէի կառքերուն, փոշիին, պերճանքին, երջան-
 կութեան մէջ, լիաթոք շնչելու համար այդ ամէնը, աչքե-
 րուս ու մատներուս մէջ ունենալով ըղձանքը բոլոր ճոխ
 բաներուն... : այո՛, այն բերկրութիւնը զոր միշտ զգացած
 եմ գեղեցիկ նիւթերու՝ սաթէնի, մետաքսի, նուրբ միսե-
 րու, սուղ ծաղիկներու հանդէպ... : այն տենչանքը զոր ու-
 նեցած եմ, ձեռքով շոյելու համար օթօմօպիլներու ջնարակ-
 ուած ատաղձը, կիներու գլխարկները, ու բովանդակ
 արբշոանքը երջանկաւէտ զօրութեան... : Ու ես ատոնց
 մէջէն յառաջանալով, կ'ըսէի. անցէ՛ք, միշտ անցէ՛ք փոշիին
 մէջէն. օրին մէկը՝ Բարիգի տէրերէն մէկը պիտի ըլլամ, ու
 իմ ձեռքիս մէջ պիտի բռնեմ զայն... : բուրումնալից քուրջի
 մը պէս... : Ու այդ օրը պիտի տեսնենք... :

Պերնիե ու Լօյեթ գլուխ կը համբուրեն յաղթանակի ըն-
 ծայած վեբացման ու ցուազիւն արբեռութեան մեջ : շեռուն :

ԶԱՅՆ ՄԸ.— Փակումի ատենը եկած է... : Փակումի
 ատենը եկած է... :

ԼՕԼԷԹ.— Կանուխ չէ՞ տակաւին :

ՊԷՐՆԻԷ.— Ատենը եկած է. քուէարկութիւնը ուշ
 մնացած էր... :

ԼՕԼԷԹ.— Բարեկամները քեզի կը սպասեն Լըտուայէնի
 մէջ :

ՊԷՐՆԻԷ.— Գործ չունիմ այդ միտքին հետ : Այս իրի-
 կունը սիրոյ նուիրուած է ամբողջովին : Այս հանդիսաւոր
 ու գեղեցիկ վերջալոյսին, հետիոտն պիտի երթանք մինչեւ

պուլվար, վերարկուս թեւիս վրայ առած...: Պիտի թա-
փառինք, անունս տեսնելով իրիկուան թերթերուն մէջ...
յետոյ՝ կատախումբ պիտի նստինք, հետուն, շատ հետուն,
Ս. Ժէրմէն երթալու և հոն ճաշելու համար... սիրահարնե-
րու պէս... կ'ուզե՞ս որ երթանք:

ԼՕԼԷԹ.— Հարկաւ կ'ուզեմ...: Չեսքոյ տո՛ւր որ համ-
քուրեմ: (Լօլէթ կր համքուրե Պերնիէի ձեռքը:) Հոգիս ու
կեանքս ես դուն:

Վերջապոյտը շեկ ցոյփերով կ'իջնէ բափուր պայասան մեծ
ծածկոյթներուն մեջ:

ՊԱՀԱՊԱՆԻ ՄԸ ՉԱՆՆԸ, հեռուէն.— Փակումի ատենը
եկած է:

ՊԷՐՆԻԷ.— Օ՛ն, կծիկը դնենք ուրեմն...: Ատենը ե-
կած է:

ԼՕԼԷԹ.— Դրամը վճարէ՛:

ՊԷՐՆԻԷ.— Քիչ մը առաջ ապսպրուած ընկերիներուն
դրամը տրուած է արդէն: Միայն աս կայ:

ԼՕԼԷԹ.— Այո՛, բայց պատուոյ շքադրամ ստացար...:
Խոչոր պարգեւ մը տալու ես, ուրիշ ճար չկայ:

ՊԷՐՆԻԷ.— Քու կարծիքովդ, ի՞նչ տալու է:

ԼՕԼԷԹ.— Չեմ գիտեր...: Ատոր մէջ վարժութիւն
չունիմ...: Բէլիէի ձգած պարգեւին պէս բան մը տո՛ւր, երբ
անիկա մեզի հրաւիրեց պուլվարի ճաշարանը:

ՊԷՐՆԻԷ.— Բայց սուղ ճաշարան էր ան...: Կը յիշե՞ս
թէ ո՛րքան տուա:

ԼՕԼԷԹ.— Տասը ֆրանք դրաւ պնակին մէջ:

ՊԷՐՆԻԷ.— Տասը ֆրանքը շատ է:

ԼՕԼԷԹ.— Ուրախութեան խոյսեմով մը ու մեծ շարժու-
մով մը.— Հո՛գ չէ, սովորական բան մը չէ ասիկա: Ամբողջ
ոսկին տո՛ւր:

ՊԷՐՆԻԷ.— Թո՛ղ ըսս ծոյ ըլլայ...: (Մ] Եղեռ Լօլէթ
դեպի խորը կը յառաջանայ, պօսան առնելու համար, Պեր-

նիւ կարսօնը կը կանչէ, ու բանկոնակին գրպանին մէջ ոսկին հինգ ֆրանկնոցէն զատելէ յետոյ, արծաթ դրամը սեղանին վրայ կը նետէ եւ հոնկէ անցնող կարսօնին կ'ըսէ:) *Կարսօն, առէ՛ք սա հարիւր սիւնոցը: Մնացորդը վար դրէ՛ք:*

Ու երկուքը միասին կը հեռանան, իբարու թեւ մտած:

ԼՕԼԷԹ. — Անուշիկ ամուսինս:

ՊԷՐՆԻԷ. — Անուշիկ կինս:

Քանդակագործութեան սրահին մէջ միշտ կը լսուի պահապանին ձայնը. «Փակումի ասենք եկած է... փակումի ասենք եկած է...»:





Շատ վայելուչ փոքր սալոն մը, անոր ետին աշխատանոց մը. բայց աշխատանոցը շատ խորն է, ձախակողովը, շեղակի: Հոն, ամէն ինչ նոր է, սպիտակ ու ջնարակուած: Կապոյտ սիրամարգերով նկարուն ծոփորներ: Աջակողմը, ներքին փոքր լանդուխ մը. որ դէպի սենեակները կ'առաջնորդէ, ու սպասման յատուկ նստարանի նմանող կարասի մը՝ մեկուսի դուռ: Աջակողմը, դէպի յառաջարեմը, սպասման սենեակին վրայ բացուող դուռ մը: Անկիւնը, կարմիր պղինձէ շրմինէ մը: Վառուած շատ մը նրագներ: Արեւակնագոյն ձեղուն: Մաննաքոս, բերքի քիկնաքոսներ, արոսներ, եւ այլն:

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ՊԵՐՆԻԷ, ԼՕԼԷԹ, ԿՐԷՎԻԼ, ՌՕԼՍԻՆԻ, ԿԱՐՉԷՆ, ՏԻԿԻՆ,
ԿԱՐՉԷՆ, ՏԻԿԻՆ ՄՈՒԼՉԻ Է ԵՐԿՐՈՒ ՀՐԱՒԻՐԵԱՆՆԵՐ

Վարագոյրը բացուած պահուն, հոն հաւաքուած են Պեր-
նիէ ու իր կիներ, Կրեվիլ, իսալացի նկարիչ Ռոյսիների՝ քաւ-
եթեսով, գեր ու կարճահասակ, ծեր նկարիչ Կարգեն ու իր կիներ՝
համեստունակ ու պառաւջամ, յետոյ՝ գաղթածին կամ խառ-
նածին մը, Տիկ. Մուլգի՝ անխօս դերակատար, հեղահամբոյր ու

հանդարտ երեւոյթով: Ուրիշ երկու հրաւիրեալներ, խորը, սանդուխին աստիճաններուն վրայ: Լօլէթի մազերը մեջտեղէն նեղուած ու երկու կողմերուն վրայ բերուած շէին, այլ ներկուած ու անուաճել պլորուած էին: Շատ մը մասանիներ դրած է Լօլէթ:

ԼՕԼԷԹ. — Օ՛ն... ամէն ինչ աչքէ անցուցի՞ք վարը:

ՏԻԿԻՆ, ԿԱՐՁԷՆ. — Հոս ի՞նչ կայ:

ՊԷՐՆԻԷ. — Ներքին սանդուխը, որ դէպի տնաբաժինը կ'առաջնորդէ:

ԼՕԼԷԹ. — Գործին կէսը հազիւ աւարտած է տակաւին: Գործաւորները կ'երերտկան...: Յունիսին միայն ամէն բան պատրաստ պիտի ըլլայ... մինչդեռ երկու ամիսէ ի վեր ելած ենք մեր նախորդ յարկաբաժինէն:

ԿՐԷՎԻԼ. — Նորաբնակ տան առաջին խնջոյքին հրաւիրուած ենք, անշուշտ:

ՊԷՐՆԻԷ. — Մեր առաջին ընդունելութեան ներկայ կը գտնուիք: Նաւակատիքն է ասիկա: Բուն խրախճանքը պիտի սարքենք մէկ-երկու ամիսէն միայն: Ահա՛, սպասարկու լուին: Չեզի կը ներկայացնեմ զայն...: Ամէն շաբաթ, ան պիտի սպասարկէ ձեզի...: Գացէք տեսէ՛ք աշխատանոցին մէջ ունեցած իր գործասեղանը:

ՌՕԼՍԻՆԻ, ցած ձայնով, Կրեվիլին. — Ատոր մօտան անցած է...: Ի՞նչ նորամուտիկ մըն է եղեր:

ԿՐԷՎԻԼ. — Չտե՛ս կ'ըսեն ատոր...:

ԵՐԿՐԱՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՄԻԵԻՆՈՅՆ ԱՆՁԵՐԸ, ԹԱՊՈՒՐՑ

ՊԷՐՆԻԷ. — Բարեւ, թապուրօ...: Գուն ի՞նչ կ'ըսես:

ՌՕԼՍԻՆԻ. — Ըսել է, մեզի համար, յոյն պարուհի մը հրաւիրած էք:

Պէ՛րՆԻԷ. — Արդէն ամէն շարաթ օր, այս կարգի փոքր ներկայացումներ պիտի սարքուին: Մենք ասանկ ենք...: (Մեկուսի, Թապուրոյին): Խառնածինը տեսա՞ր:

ԹԱՊՈՒՐՕ. — Լի՞ւր է:

Պէ՛րՆԻԷ. — Քիչ մը անդին:

ԹԱՊՈՒՐՕ. — Կրո՞ղը տանի:

Պէ՛րՆԻԷ. — Լուլուի հին բարեկամուհիներէն է, ու անոր կողմէ հրաւիրուած է այս իրիկուն, առանց իմ տեղեկութեանս... բայց այս իրիկուն, բացումի առաջին շաբաթն է. հոգ չէ, փորձ մըն է որ կ'ընենք: Սակայն, տասնըհինգ օրէն մեծ փորձը պիտի ընենք, շիք աշխարհիկ անձեր հրաւիրելով:

ԿՐԷՎԻԼ, ԼՕԷՔԻ կը նայի, որ իր ԵՐՉԱԳԳԵՍՈՎ՝ կիսաբոլորակներ կը գծէ կեցած սեղը, Տիկին Մուլգիի եւ Տիկին կարգէնի հետ խնդալով. — Շա՛տ լաւ է ան:

ԹՕԼՍԻՆԻ. — Հրաշալի՛:

Պէ՛րՆԻԷ, Թապուրոյին. — Շիտա՞կը, ըսելիք չկայ: Բայց ի՞նչ կ'ընէ հոն: Ուրիշ ճար չկայ, քեզի կը յանձնեմ Լուլուն:

ԹԱՊՈՒՐՕ. — Բարեմիտ մարդու մը տեղ կը գնես զիս:

Պէ՛րՆԻԷ. — Կատակ մի՛ ընենք...: Անհանգիստ գրութեան մը մատնուած եմ...: Տասնըհինգ օրէ ի վեր, Լուլուն կը վարժեցնեմ մեր մեծ ընդունելութեանց համար... բայց մարդուն սիրտը նորէն հանգիստ չըլլար բոլորովին, երբ անոր հետ է գործը. հաւատա՛ որ Լուլու առանց քաշուելու սանդուխին բազրիքն ի վար կ'ըջնէ, սրունքները բացած: (Կը կանչէ զայն): Լուլո՛ւ:

ԼՕԷԹ. — մօտենալով. — Ի՞նչ կայ սիրելիս:

Պէ՛րՆԻԷ, ցած ձայնով. — Ի՞նչ կ'ընէիր շրջազգեստովդ:

ԼՕԷԹ, կը դառնայի:

Պէ՛րՆԻԷ. — Կը յիշե՞ս ինձի ըրած խոստումդ:

ԼՕԷԹ. — Միթէ՞ գէ՞ջ բան մըն է ըրածս:

Պէ՛րՆԻԷ. — Բայց մի՛ մտնար որ հիւր կ'ընդունիս
հիմա... : Հասցա՛ սա մազերդ... նորէն տարողներ են... :

ՌՕԼՍԻՆԻ, Կրեվիլի հետ, Պերնիէի մօտեցալով. — Շիք
մարդոց համար ընդունելութիւններ սարքել կուզէ՞ք :

Պէ՛րՆԻԷ. — Այդ նպատակով առի ու կահաւորեցի այս
յարկարածիւնը... եթէ ոչ՝ իմ վերջին աշխատանոցովս պիտի
բաւականանայի :

ԿՐԷՎԻԼ. — Անշուշտ : Պէտք չէ փախցնել յաճախորդ-
ները և մրցանակները : Վեհապետներու նկարիչը ապա-
րանք մը ունենալու է Մօնսոյի մէջ... : Այս իրիկուն, վե-
հապետներու նկարիչը սմօքինկ հագեր է :

Պէ՛րՆԻԷ. — Լաւ չէք գտնե՞ր սմօքինկս :

ԿՐԷՎԻԼ, երկու քայլ հեռուէն՝ աչքերը Պերնիէի վրայ
դարձնելով. — Ատիկա մէկն է այն գեղեցիկ բաներէն զոր
գրականութիւնը արտադրած ըլլայ երբեք տասը տարիէ ի
վեր : Օձիքը լաւ է... բաճկոնակն ալ աղէկ է... (Դադար :)
Միայն թեւերը շատ խոշոր են :

Պէ՛րՆԻԷ. — Դերձակին պիտի վերադարձնեմ :

ԼՕԼԷԹ. — Նախանձո՛տ քեզի :

ԿՐԷՎԻԼ. — Պէրնիէ, կը յիշէ՞ք թէ ե՛րբ ծանօթացանք
իրարու հետ : Հինգ տարի առաջ... քանդակագործութեան
պիւֆէին առջև, չքաղրամի օրը : Ինչե՛ր անցան դարձան
քանի մը տարուան մէջ :

Պէ՛րՆԻԷ. — Շատ լաւ կը յիշեմ :

ԿՐԷՎԻԼ. — Երկուքնիդ ալ շատ հաճոյակատար էիք...
երկշուս նասպատակներու պէս՝ անկիւն մը կձկտած : Այն
ատեն նեղ գրութեան մէջ կ'ապրէիք... : Անշուշտ, գեղանի
տիկիներու աշխարհիկ նկարիչը չէիք այն ատեն... ու ես եր-
բեք չպիտի կրնայի կուսնել թէ թաւիչէ տարատ հագած այդ
բարձրահասակ երիտասարդը պիտի յաջողի... որովհետև,
սիրելիս, Քապառէ տէ Քաթր զ'Առ յաճախողներուն գրոջմը
կը կրէիք : Մարդ որքա՛ն կը փոխուի եղեր :

Պէ՛րՆԻԷ. — Բայց ոչ, կը սխալիք, կրէ՛վիլ... : Շատ մը

ձախաւերութիւններ կ'ընէի, օրինակի համար Լավալիէր փողկապ ու բազի կտուցի պէս կօշիկներ կը կրէի, բայց թաւիչ չէի հաղներ... այն ատեն, հիմակուրնէ տարբեր մէկը չէի... Գէթ ես այնպէս կը յիշեմ:

ԿՐԻՎԻԼ. — Պապին նկարը գծելնէդ յետոյ կը սկսին ձեր առաջին մեծ յաջողութիւնները կիներու աշխարհին մէջ...: Հոսմ գացիք. հանձարեղ գաղափար մըն է ատիկա...: Շատ կը փափաքէի վատիկանի մէջ տեսնել Տիկին Պէրնիէն:

ԼՕԼԷԹ. — Չափազանց լուրջ էի, այնպէս չէ՞:

ԿՐԻՎԻԼ. — Իրա՞ւ է որ, ինչպէս ըսին ինձի, Լօլէթ չափազանց յուզուած, յամառօրէն կրկնած էր, խօսքը Պապին ուղչելով. «Շնորհակալութիւն, Սուրբ Աթոռ, շնորհակալութիւն, Սուրբ Աթոռ»:

ՊԷՐՆԻԷ. — Արարողական ձեւերու հետամուտ չէ:

ԼՕԼԷԹ. — Ո՛չ նեղուեցայ և ո՛չ ալ շշմեցայ այն ատեն:

ՊԷՐՆԻԷ. — Արդէն, ոչ մէկ բանի առջեւ ամի ի բերան կը մնայ: Այս ամառ, Մեծ Արջ համաստեղութիւնը ցոյց տուի անոր: «Ա՛ս է եղեր Մեծ Արջը, որուն վրայ այնքան կը խօսին», ըսաւ Լօլէթ, ու յետոյ յարեց. «Այնքան տարօրինակ բան մը չէ եղեր»:

ՏԻԿԻՆ ԿԱՐՉԷՆ, ձախակողմը մեծ պատկերակալ մը ցոյց տալով, որուն վրայ գտնուող նկարը դէպի պատին կողմը դարձուած էր. — Ներսը դուրս դարձած գլուխ գործոց մըն է՞ սա նկարը:

ՊԷՐՆԻԷ. — Այո՛, իշխանուհի Շապրանի նկարն է:

ՏԻԿԻՆ ՄՈՒԼԶԻ. — Չենք կրնա՞ր տեսնել այդ նկարը:

ՊԷՐՆԻԷ. — Ոչ, ոչ... հոս դրած եմ, որպէս զի աշխատանոցին մէջ տեղ չբռնէ, ու պարուհին իր զխտերով չփճացնէ նկարս...: Կարելի չէ բան մը տեսնել նկարին վրայ, քանի որ ուրուադի՞մ մըն է տակաւին:

ՏԻԿԻՆ ԿԱՐՉԷՆ. — Իշխան Շապրանի հետ ամուսնա-

ցած հրէութիւն չէ՞ միթէ. էրիկը եօթանասուն տարեկան է,
իսկ կինը՝ երեսուն: Մարդ նողկանք կը դրայ: Անշուշտ,
կինը շատ կը ձանձրանայ:

ՌՕԼՍԻՆԻ.— Ընդհակառակը կը զուարճանայ:

ԿՐԷՎԻԼ.— Ֆրանսայի ամենէն մեծ անուաներէն մէ-
կուն ուղեց տիրանալ: Ամուսինը ըլլալիք մարդը վարնոց
խաղարաններու և թշուառութեան մէջ կը տապալակէր: Կի-
նը ազատեց դայն:

Կիները աշխատանոց կը մտնեն, Մերուկ Կարգէն մատովը
ցոյց կուտայ պատկերակալը, Բիերի թելը մտնելով իսկոյն:

ԿԱՐԶԷՆ.— Զաւա՛կս, այս կողմ դարձո՛ւր պատկերը:

ՊԷՐՆԻԷ.— Վստահ եղէք որ հազիւ ուրուագծած եմ:

ԿԱՐԶԷՆ.— Հո՛ր չէ... դարձո՛ւր, այս կողմը դար-
ձո՛ւր իշխանուհին:

ՊԷՐՆԻԷ, դարձնելով.— Տեսէ՛ք, դեռ նոր սկսուած է:
Ներկի թեթեւ ու թափանցիկ խաւ մը միայն կայ անոր
վրայ:

ԿՐԷՎԻԼ.— Գէշ չէ:

ՌՕԼՍԻՆԻ.— Շի՛ք է:

ԿՐԷՎԻԼ.— Տպաւորիչ երևոյթ ունի: Ժամանակակից
Ռէպրընն է ան... աւելի խստագիծ:

ԿԱՐԶԷՆ, Բիրս շեշտով ու շարժուածք մը րնելով.— Դար-
ձո՛ւր... այդ դիրքին մէջ շատ տեսայ... ասդին դարձո՛ւր
իշխանուհին... շո՛ւտ էրէ:

ՊԷՐՆԻԷ, նեղուած, բայց ծիծաղկոտ.— Բաթրօնը խիստ
է... սնշնորհք բաթրօն:

ԿԱՐԶԷՆ.— Ոչ... ինչո՞ւ այդպէս ըլլամ...: Կը սպա-
սեմ...: Զայն չեմ հաներ... ուրիշ ոչինչ:

ՏԻԿԻՆ ՄՈՒԼՉԻԻ ՉԱՅՆԸ, աշխատանոցէն.— Պարոն
Պէրնիէ, պարոն Պէրնիէ...: Եկէք գինովցուցէ՛ք զիս...:
Վստահութիւն չունիմ սպասարկուին վրայ:

ՊԷՐՆԻԷ.— Չեր հրամանին պատրաստ եմ:

Պերնիէ կը հեռանայ:

ԿԱՐՁԷՆ, խօսքը երկու հոգիի ուղղելով.— Հը՛մ...: Ու
խորհի՛լ որ այս մարդը ստեղծուած էր աքաղաղի երկու-
րիք ու փորը ձեղքուած եզեր գծելու, փոխանակ աշխարհիկ
կիներու...: Ու հիմա, ամենուն կողմէ կը ծափահարուի:

ՌՕԼՍԻՆԻ.— Քսան հազար Քրանք, այո՛, սիրելիս,
քսան հազար Քրանք կը վճարեն այդ պատկերներուն, այ-
սինքն մարդամեքենաներուն համար...: Ըսելիք չկայ,
մեզ կը տապալէ կ'անցնի:

ԿՐԷՎԻԼ.— Հանրութիւնը չափազանց կը հիանայ այդ
պաղապուր գործերուն վրայ...: Մորթափաճառ մըն է ան,
մազ խուզող մը, ջարդուկ ծախող մը:

ԿԱՐՁԷՆ.— Որքան կը չարախօսէ՛ք:

ՌՕԼՍԻՆԻ.— Միշտ կը գուրգուրաք ձեր նախկին ա-
շակերտին վրայ... բաթրօն:

ԿԱՐՁԷՆ.— Կը խոստովանիմ...: Կատարեալ տագնապի
մը մատնուած է... բայց աս ալ կ'անցնի:

ՌՕԼՍԻՆԻ.— Յաջողութեան տագնապը վաղանցիկ տագ-
նապ մը չէ:

Լօլեթ կ'անցնի ու սանդուխեմ վեր կ'ելլէ, Տիկին Մուլզիի
ու Կարգեմի հետ:

ԼՕԼԷԹ, կիներուն.— Տիկիննե՛ր, հիմա եկէ՛ք տեսէ՛ք
իմ սենեակներս: (Կրեվիլը կեցնելով:) Կիները միայն:

ԿՐԷՎԻԼ.— Ձեր սենեակը սպիտակ ջնարակուած է:

ԼՕԼԷԹ, սանդուխին վրայէն.— Ոչ... Բիէրին սենեակը
այդպէս է: Ամենէն գեղեցիկ սենեակը անորն է: Ինչպէս
գիտէք, չեմ սիրեր ինծի յատուկ սենեակ մը ունենալ:

ԿՐԷՎԻԼ, մեղմաձայն.— Հի՛ն սովորութիւն...: Ինք-
զինքը աւելի լաւ կը զգայ ուրիշներու սենեակին մէջ:

Պերնիէ խումբին հետ վեր ելած է: Հոն կը մնան միայն
Ռօլսինի, Կրեվիլ ու Կարգեմ:



ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՌՅՈՒՍԻՆԻ, ԿՐԷՎԻԼ, ԿԱՐՁԷՆ

ՌՅՈՒՍԻՆԻ, ծիծաղուն.— Ա՛խ, սա կրէվիլը... : Ամենքն ալ կը հարուածէ : Ի՛նչ անզգամ մարդ է :

ԿՐԷՎԻԼ, սիկառի տուփ մը պրպսեյիկ յետոյ, վար կը դնէ զայն.— Շիտակը, ես շատ կը զարմանամ : Ձեզի կը հարցընեմ թէ այդ մարդիկը մինչեւ ո՞ւր կ'ուզեն բարձրանալ... : Կը կարծե՛ն որ Լօլէթ աշխարհիկ ընկերութեան մէջ պիտի ընդունուի ատոր համար :

ԿԱՐՁԷՆ.— Լօլէթ շատ ազնիւ ընթացք մը ունի անոր հանդէպ... որովհետեւ երկուքն ալ շատ դժբախտ եղած են, զրկանքներու մատնուած ըլլալնուն :

ԿՐԷՎԻԼ.— Կը հասկնամ զրկանքը... բայց ատոր համար մարդ չամուսնանա՛ր : (Ծիծաղներ :) Ես այդ կարծիքը չունիմ : Նկարիչ Տըկան է որ այդպէս կը խորհի :

ՌՅՈՒՍԻՆԻ.— Լօլէթ շատ գոեհիկ կին մը չէ... հետըզհետէ կը շտկուի :

ԿԱՐՁԷՆ.— Ես շատ նուրբ կը գտնեմ զայն... ինքնաշատուկ ու մանկունակ շնորհով մը օժտուած, բան մը որ հասկնալի է ինծի համար :

ԿՐԷՎԻԼ.— Բայց գինետան մարմարէ սեղանին վրայ խողի միս ուտող մէկուն պէս մատները կը հոտին... : Կիներ կան որոնք շուտ կը յարմարին միջավայրին... ու կիներ որոնք չեն յարմարիր : Տեսէ՛ք, Բիէր ի՛նչ եղած է... աշխարհիկ նկարիչ մը... ուժեղ և քաջատողջ... գեղադէմ երիտասարդ մը՝ լայն կուրծքով, որ կ'ուսի քաբայծի մորթէ ժիլէին տակ... ինչպէս կը նկարեն հանդէսներու,

մէջ, ու ինչպէս կ'երազեն Քուր էթրանժէրի ճեմավայրի կիները:

Կարգեն ինչ մը կը հեռանայ:

ՌՕԼՍԻՆԻ, Կրէվիլիէ.— Ձեր ըրածը ձախաւերութիւն է... հարիւր սուով վարձուած մօտէլներու հետ ամուսնացողները կը քաշքշէք հայր կարգէնի առջեւ, որ իր խոհարարուհիին հետ կարգուած է...:

ԿՐԷՎԻԼ, — Կրո՛ղ... իրաւունք ունիս... Մարդ միշտ կը մոռնայ այդ բաները:

ՌՕԼՍԻՆԻ.— Մէյ մը նայեցէ՛ք սա մայր կարգէնին...: Ամէն գործ տեսնող նախկին սպասուհիի մը չի՞ նմանիր...: Ահա՛ նկարիչներու բուն կիները... յաւիտենական կիները:

Տիկին Կարգեն եւ Մուլզի սանդուխտէն վար կ'իջնեն յամբօրէն, իրարու հետ խօսքի բռնուած: Ու սա խօսքերը կը լսուին.

ՏԻԿԻՆ, ԿԱՐԳԷՆ.— Նորմանտական ազարակէ մը բերել կուտամ կարագը... կէս քիլօն մէկ Ֆրանք եօթանասունը հինգ սանթիմի: Պատուական կարագ է:

Երկու կիները աշխատանոց կը մտնեն խօսակցելով:

ԿՐԷՎԻԼ, աղուաներուն մէջ սիկստ մը.— Մէկ Ֆրանք եօթանասունը հինգ սանթիմ շատ ածան է: Լուցկի մը կը գտնուի՞ միթէ այս արդիական սճով կարասիներուն մէջ:

ԼՕԼԷԹ, որ սանդուխտէն կ'իջնէ ամենէն վերջը.— Կրակ կը փնտռէ՞ք, Կրէվիլ...: Կեցէ՛ք, իմ կրակովս վառեմ ձեզ:

ԼՕԼԷԹ լուցկիի տուփ մը կ'առնէ փոքր սեղանի մը վրայէն:

ԿՐԷՎԻԼ.— Լաւագոյն պիտի ըլլայ ձեր կրակովը վառի...: Մտիկ ըրէ՛ք, լուցկիի վրայ սպասութիւն մը ընեմ ձեզի...:

ԼՕԼԷԹ, լուցկի մը վառելով կ'երկարեք.— Բարեկամ,
ուրիշ ատեն կը պատմէք... մատներս պիտի այրին հիմա:
ԿԲԷՎԻԼ, առանց անապարելու.— Միկառիս ծայրը պիտի
կտրեմ: Լաւ էք այդպէս: Փարոսի մը երեւոյթը ունիք:

ՊԷՐՆԻԷ, խորը, ներս մտնող կնոջ մը ցոյց տալով Լու-
լուն.— Աւասիկ, հո՛ն է...: Չեզ չտեսաւ...:

ԼՕԼԷԹ, լուցկին օդին մէջ բռնելով.— Շուտ ըրէ՛ք,
չուտ ըրէ՛ք: (Մասը կ'այրի:) Ա՛հ, քակո՛ր: (Իե՛ճ առ դե՛մ
կուգայ այդ կնոջ ու Պերնիէի հետ): Օ՛հ, ներողութի՛ւն:

ԿԲԷՎԻԼ.— ծիծաղուն.— Ֆրանսական ազգ. բան է
ատիկա, ի պէտս նորատի աղջիկներու:

Միւսներուն կը մօտեցան այդ կիները:

ԹԱՊՈՒՐՕ, Բիերի մօտեցալով, որ տեղէն չէ հեռացած.—
Ի՞նչ կայ: Հիւանդի երեւոյթ ունիս: Բայց ամէն բան կարգին է:

ՊԷՐՆԻԷ, քրքումով.— Գործերը ամէն ատենուան պէս
կ'ընթանան... այսինքն սոսկալի՛ գէշ: (Ծառայ մը ներս
կը մտնէ ու նամակ մը կը բերէ արքային:) Ի՞նչ է ատ:

ԾԱՌԱՆ.— Շօֆէթը մը բերաւ այս նամակը, ու ըսաւ
որ իսկոյն ձեզի յանձնեմ:

ՊԷՐՆԻԷ, նամակը պահելով.— Ահա՛ ուրիշ մըն ալ:
Իշխանուհին կուգայ...: (Թապուրոյին որ Պերնիէն կը դիտէ:)
Թապուրօ, իշխանուհին կուգայ...: Ու հոս, անձոտնի մար-
դիկ միայն կան:

ԹԱՊՈՒՐՕ.— Շնորհակա՛լ եմ:

ՊԷՐՆԻԷ.— Խօսքս քեզի համար չէ...: Եթէ գիտնայի
որ իշխանուհին պիտի գար... ատանց հրաւերի, քանի մը
ականաւոր անձեր կը հրաւիրէի: Հիմա իշխանուհին ի՞նչ
պիտի ըսէ այս խառնիճաղանձին: Օրինակի համար, խառ-
նածին Տիկին կարգէն:


ԹԱՊՈՒՐՕ.— Ի՞նչ կուզէ թո՛ղ ըսէ: Լօլէթին իմաց
տալու է:

ՊԷՐՆԻԷ, անոր թեւէն բռնելով.— Չըլլա՛յ որ իմաց

տաս Լօլէթին: Իշխանութիւնէն քիչ մը հեռու պահած եւ միշտ
 Լուլուն...: Քեզի չեմ ըսած միթէ...: Լուլու երկու-երեք
 նկարանիստ նուիրած է իշխանութիւն՝ Սէն-թ'Օնօրէ արուար-
 ձանի իր աշխատանոցին մէջ, այն շրջանին երբ նկարիչնե-
 րու առջև կը կենար ան...: Իշխանութիւն սկսած էր արդէն
 նկարել... դիտես թէ կը նկարէ ան...: Օ՛հ, աննշան ու փոքր
 յիշատակ մը... միայն այս գիշեր կը զգամ որ իշխանութիւն,
 դիտմամբ, այս գորտերու ճախճախուտքին մէջ կը նետուի
 գլխիվայր: (Չայրագած:) Ամենէն աւելի ինծի մտահո-
 գութիւն կը պատճառէ սա խառնածին կիւր:

ԹԱՊՈՒՐԹ.— Ատոր ճարը կայ. կ'ըսես թէ Ռանավա
 լոյի աղջիկն է ան, ինչ որ պատիւ պիտի բերէ քեզի:

Ռօյսինի, Կարգեն եւ Կրեվիլ թե՛ կը խմեն եւ թե կը
 քղբասեն նկարներու քղթակալները: Կիները աշխատանոցին
 մեջ են: Չախակողմեն՝ նոր հրաւիրեալ մը ներս կը մտնէ:
 Առաջին արարուածին մեջ տեսնուած բարեկամ մըն է:



ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՄԻԵԻՆՈՅՆ ԱՆՁԵՐԸ, ԼԱՅԱՐԿ

Պէ՛ր՛նիէ, խօսքը Լաֆարկին ուղղելով ու անոր ձեռքը
 սեղմելով.— Վերջապէ՛ս եկար...: Բարի՛ իրիկուն:

ԼԱՅԱՐԿ.— Լիւքսէնպէրկի թանգարանապետին քովէն
 կուգամ:

Պէ՛ր՛նիէ, մեկուսի անկիւն մը տանելով զայն.— Պէնէ-
 տիթթէին հետ տեսնուեցայ: Մարդը պոսթկուսով ըսաւ.
 «Բայց ես չեմ հասկնար Պ. Պէրնիէի գիմումները: Այս առ-
 տու, Քեղարուեստից վարչութենէն նամակ մը ստացայ:
 Լսուած բան չէ, որ մարդ ուզէ թանգարանէն վերցնել իր ա-

Մենէն դեղեցիկ նկարներէն մէկը եղող սա մերկ, սա պատմական կիներ... որուն համար պատուոյ շքադրամի արժանացած է արդէն: Խեղբի դէմ է պարզապէս»:

Պէ՛րՆԻ՛է. — Պէտք եղած բացատրութիւնները տուի՞ր անոր:

ԼԱՅԱՍԿ. — Անշուշտ: «Ի՞նչ կրնանք ընել, ըսի անոր նկարիչը կը նեղուի, տեսնելով որ իր կ'նոջ մերկութիւնը ցուցադրուած է ամէնուն աչքին առջև, օդի հոսանքներու ինթակայ»:

Պէ՛րՆԻ՛է. — Ի՞նչ պատասխան տուաւ:

ԼԱՅԱՍԿ. — Ահա՛ պատասխանը. «Ի՞նչ կայ նեղուելու...: Նկարը կոնակէն հանուած է»:

Պէ՛րՆԻ՛է. — Շիտակը, հիստալի՛ պատճառարանութիւն:

ԼԱՅԱՍԿ. — Հոգ մի՛ ըներ, ամէն բան ըսի...: դիտել տալով որ եթէ նկարը հոն մնայ, ընկերներուդ և աշխարհիկ շրջանակիդ Տէջ հազարումէկ կատակներու առարկայ պիտի դառնայ... նոյնպէս ըսի թէ ատիկա մշտնջենական հակակշիռ մը պիտի ըլլայ Տիկին Պէրնիէի անձին վրայ...: «Բայց ո՛ւր կ'ուզէ զբկել իր կիներ», հարցուց ան: Քարքասօնի թանգարանը պատասխանեցի:

Պէ՛րՆԻ՛է. — Այո՛, Քարքասօ՛ն... Քարքասօ՛ն: Հոն զըրկելու է:

Քանի մը վայրկեանէ ի վեր, Լուլու աշխատանոցէն դուրս ելած ու անոնց մօտեցած, մօիկ կ'ընէ:

ԼՕԼԷԹ, բացազանչութիւն մը զսպելով. — Քարք...:

Պէ՛րՆԻ՛է եւ ԼԱՅԱՍԿ, ետեւին գառնալով. — Ի՞նչ

կայ:

ԼՕԼԷԹ. — Չարմանալի՛ բան...: Շիտակը, անվայել բան է ըրածդ...: Դիմումներ կ'ընես, Քարքասօն փոխադրել տալու համար զիս:

Պէ՛րՆԻ՛է, նշանայի հասկցնելով որ ձայնը մեղմացնէ. —

Վարչական տեղափոխութիւն մըն է պարզապէս: Պատճառը պիտի ըսեմք եղի:

ԼՕԼԷԹ.— Փառքի ամենէն աղուոր տիտղոսս է ան: Մեր լաւագոյն յիշատակն է... այդ նկարը: Օ՛հ, Բիէր, երբեք չպիտի ներեմ այդ բանը: Անարդարութիւն է...: Ինծի համար հաճոյք մըն է ամէն ամիս երթալ տեսնել այդ նկարը:

Պէ՛ՐՆԻԷ.— Ի զուր փորձեցի համոզել որ թէ՛ իրեն և թէ ինծի համար այնքան նախանձելի տեղ մը չէ, այնպէս չէ՞, Լաֆարկ: Դուն ի՞նչ կ'ըսես:

ԼՕԼԷԹ.— Ինչէ՛ն նախանձելի չես գտներ Լիւքսէմպուրկի վերնապէսքը: Թիթիէնի մերկ կնոջ պէս Լուվրի մէջ գտնուելու էի: Արդէն որոշուած էր:

Խեղդուկ բայց ազդու ձայներ լսելով՝ ետեւնին կը դառնան:

Պէ՛ՐՆԻԷ, Լօլէթին.— Ո՛չ, չըլլար...: Քու ըսած նկարդ Ֆիորէնցայի մէջ կը գտնուի գոնէ:

ԿԱՐՉԷՆ, հեռուէն.— Ի՛նչ, հիմա ալ Թիթիէնի հետ չափուելու ելե՞ր է:

ԿՐԷՎԻԼ, մօտենալով.— Ի՛նչ կայ:

ԼՕԼԷԹ, շարունակելով.— Մեր կուսքն էր ան...: Մեր երկուքին գարունը: Ա՛հ, գէշ բան է, Տիկին Կարգէն:

Լօլէթ կ'ուղղուի դեպի Տիկին Կարգէն եւ Մուլլի, որոնք աշխատանոցէն դուրս կ'ելլեն:

Պէ՛ՐՆԻԷ, Քապուերոյին.— Տեսա՞ր հիմա... ամէնքն ալ վկայ կը բռնէ...: Գայթակղութիւն մը պիտի ծաղի:

ԼՕԼԷԹ.— Տիկին Կարգէն, Բիէր իր նկարը Լիւքսէմպուրկէն վերցնել տալ կ'ուզէ, որովհետեւ զիս կը ներկայացնէ այդ պատկերը: Ասիկա անհասկնալի կը թուի ձեզի, այնպէս չէ՞:

ՏԻԿԻՆ ԿԱՐՁԷՆ.— Իրաւունք ունի, պարոն Պէրնիէ . . . :
Ես սեւ է անպատուութիւն չեմ տեսներ սա բանին մէջ որ կին
մը իր նկարին համար ամուսնին ասջե կեցած ըլլայ : Ընդհա-
կառակը :

Պէրնիէ.— Աս ըսել չեմ ուզեր :

ՏԻԿԻՆ ԿԱՐՁԷՆ, հեզնական.— Թանգարաններուն մէջ
նկար չպիտի մնար, եթէ երբեք նկարիչներու օրինաւոր կի-
ները վերցնել տային բոլոր այն նկարները, որոնց համար
կեցած են իրենց ամուսնիներուն ասջե :

Պէրնիէ.— Անշուշտ, անշուշտ :

Կրեվիլ ու Ռօլսինի մօտեցած են : Կարգէն շքմիքի մօտ
կը մնայ, նեղացած :

ՏԻԿԻՆ ՄՈՒԼՁԻ.— Ես Արիէնի թանգարանը կը գրտ-
նուիմ :

ՏԻԿԻՆ ԿԱՐՁԷՆ.— Ես ալ Քէմբրէի թանգարանը, ամ-
ուսինս գծած է շատ հողանի մէկ նկարս, որ Մ. Շօշարի
քով կը գտնուէր : Բայց ատոր համար չե՞նք նեղուիր Բօլ ու
ես : Ոչ թէ մեզի արատ կը բերէ այլ նկարը, այլ մեր
փասքն է ան :

Հեզնաբան Ռօլսինի եւ Կրեվիլ զիրար կ'արմկանարեն :

ԼՕԼԷԹ, յաղթական.— Հիմա հասկցա՞ր :

ԿՐԷՎԻԼ, Ռօլսինիի.— Հարիւր սուի փոխարէն չեմ ծա-
խեր իմ տեղս . . . : Ինչո՞ւ խաբուիմ :

Պէրնիէ, իր կինը մօտելով.— Հասկցանք, հասկցանք . . . :
Լիւքսէմպուրկի մէջ պիտի մնայ նկարդ . . . : Տե՛ս, յոյն պա-
րուհին աշխատանոց կը մտնէ : Գնա՛, ընդունէ՛ զայն : Օ՛ն,
ամէնքդ ալ հեռացէ՛ք :

Պերնիէ դեպի աշխատանոց կը մղէ զանոնք, քրմնջելով :

ՀԻՆԿԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՊԷՐՆԵԼԷ, ԿՐԷՎԻԼ, ՌՕԼՍԻՆԻ, ԹԱՊՈՒՐՕ,
ԼԱՖԱՐԿ, յեառ, ԿԱՐՁԷՆ

ՊԷՐՆԵԼԷ. — Ձեզի կ'ըսեմ, ա՛լ կը բաւէ որքան զուար-
ճացաք:

ՌՕԼՍԻՆԻ, ծիծաղուն. — Անիրաւութիւն չուզիր: Շատ
լաւ ազդիկ մըն է ան:

ՊԷՐՆԵԼԷ. — Գիտեմ թէ անձնուէր ու սիրուն է ան...
չատ կը սիրեմ... բայց զայրացուցիչ վայրկեաններ կան:
Բարեկամներու միջև միայն կարելի է խօսիլ այդ մասին,
այնպէս չէ:

ԿՐԷՎԻԼ. — Ահ, կ'նոջ մը ատաջին քսանըհինգ տարի-
ները... միշտ հետք մը կը ձգեն: Անջինջ հետք մը... որ
մարդուն մորթին մէջ կ'անցնի:

ԼԱՖԱՐԿ, ցած ձայնով՝ Ռօլսլինիին — կը տեսնե՞ս, Լօ-
լէթը երեսի վրայ կը ձգէ, մարդկային նկատումներով:

ՌՕԼՍԻՆԻ — Ո՛րքան մեծ ծառայութիւն մատուցած
պիտի բլար, նիթէ ետեւէն, ու ամբողջովին ձգէր զայն...:

ԼԱՖԱՐԿ. — Այո՛, շարունակեցէ՛ք... վարժուած եմ:

ՊԷՐՆԵԼԷ, մօտեցալով. — Պիտի ուզէի որ մօտէն տես-
նէք զիս...: Ամէն ջանք կը թափեմ, զայն չտկելու
համար մրգանուշի անօթի մը պէս, զոր կարելի չէ հաւա-
սարակչութեան մէջ գնել: (Ծիծաղներ:) Հեշտ այլ յամառ
գիմարութիւն մը ունի, որուն ատջև մարդ կը ջախջախ-
ուի: Սուքը մէջերնիս, գիտեմ որ մեծ կարևորութիւն չու-
նին այս բաները, բայց վերջապէս...:

ՌՕԼՍԻՆԻ. — Ի՛նչ փոյթ, բարեկամս: Մնաց որ՝ դուք
ուզեցիք կարդուիլ անոր հետ:

ԿՐԷՎԻԼ. — Եւ այնպիսի շրջանի մը մէջ, երբ մտադիր
չէիք կարգուեալու :

Բոկոսն պարունիին աշխատանոցէն դեպի խորը կը յառա-
ջանայ :

ԼՕԼԷԹ, պարունիին հետ երեւան գալով — Այրե՛ր, նոս
կուտա՞ք : Օր. Իզատորա Լօրէնդը պիտի ներկայացնեմ ձեզի :

ԿՐԷՎԻԼ. — Շիք ու տարօրինակ է Յոյն-Ամերիկոսէին :
Օրիո՛րդ, ի՞նչ պիտի պարէք :

ԻԶԱՏՕՐԱ, կօթիկները հանելով. — Ձեզի պիտի պարեմ
այն պարը զոր երեք քնքուչ հեղինակներ կը պարէին
ճամբուն վրայ, օրին մէկը, երբ անոնք սիրահարուած էին
Բագոս շատուածին :

ԿՐԷՎԻԼ. — Ա՛հ, շատ կը փափագիմ տեսնել Բագոս
շատուածին սիրահարուած քնքուչ կինը :

ԹՕԼՍԻՆԻ. — Հապա ե՛ս :

ԼԱՅՆՆՐԿ. — Ե՛ս ալ :

Աշխատանոց կը խուժեն, Կարգէն լսիկ մտիկ ըրած է խօ-
սակցութիւնը, ֆօնեա՛մ մը կուլ տալով ու ծխելով :

ԿՐԷՎԻԼ, Պերնիէի մօտենալով, աշխատանոց երթալի ա-
ռաջ. — Այգքան իրար անցնելու բան մը չկայ . . . : Սիրուհի
մը ունէի, որ Լօլէթի կը նմանէր . . . թոյլ կուտա՞ք որ այս
բաղդատութիւնը ընեմ . . . ու ես շատ լաւ կը պրծէի, ա-
մէն անառ համբոյր մը և մտրակի հարուած մը տալով ա-
նոր . . . : Շատ երեսի վրայ ձգուած մեթոս մըն է սա . . . : Այգ
բանը չէ որ խորհուրդ կուտամ ձեզի . . . քանի որ բարե-
կիրթ մարդ մըն եմ . . . բայց սիրոյ երկու խորհրդանշաններն
են ատոնք . . . մարդ շատ լաւ կրնայ ծեծել կին մը, նոյ չէ
թէ ծաղիկով մը ըլլայ :

ՊԷՐՆԻԷ, Կեկվիլի ձեռքը սեղմելով. — Շնորհակալ եմ . . . :
Շատ գոհ եմ ձեր ցոյց տուած շահագրգռութեան համար . . . :



ՊԵՅԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՊԼՐՆԻԷ, ԿՍՐՁԷՆ

ԿՍՐՁԷՆ, ՊԵՐՆԻԷ, ուսին դպչելով.— Ականջ մի՛ կա-
խեր այդ մարդոց խօսքերուն... ձգէ՛ որ ուղածնին ըսեն,
զաւակս: Ես ալ սիրուհիիս հետ ամուսնացած եմ...: Քեզի
չեմ ներկայացներ, հոս է...: Արժէլէս գտնուող ազարակի
մը մէջ սպասուհի էր...: Մի՛ կարծեր որ կնոջս պատճա-
ռով չեմ տառապած...: Էրիկ մարդիկ վատ կ'ըլլան: Եր-
բեմն, սալօններու մէջ կամ փողոցը, բարեկամներու հան-
գիպած պահուս, կնոջս անտաշութիւնը կը նեղէ զիս...:
Ատոր համար ամօթ կը զգամ զես ու գէշ կը պարտկեմ այդ
ամօթը: Փողոցին մէջ կնոջս հետ խօսած պահուս, յանկարծ
անոր թեւը կը թողում... այն թեւը զոր կը սիրեմ, սա-
կայն... գրպանս թաշկինակ մը փնտռելու սնտոի պատ-
րուակով...: Բայց նէ այնքան պարզամիտ է, ու ինձմով
հպարտ, որ բնաւ չէ գրացած ու չէ տեսած այդ փոքր
ուրացումները: Նէ կեանքի մէջ կը յատաճանայ շիր շի-
տակ, իր պայծառ աչքերով...: Այո՛, անոր թեւէն կը բաժ-
նուիմ, առանց յայտնելու պատճառը. բայց երբ Գալալէր
երթամ ամբան, այդ սիրուն բոյնը, ուր տամուկ նարդէսի
և հիրիկի բոյրեր կը շնչեմ, և երբ մշուշապատ ծովափէն
գառնամ իրիկունը, աշխատանքի օրէն ու մենութեան
իմաստը ըմբռնելէս գոհ, օ՛հ, այն ատեն ո՛րքան գեղեցիկ կը
գտնեմ զայն...: Մեր հին սէրը, իր պարզութեան մէջ,
բոլոր այդ լաւ բաներուն էական մասը կը կազմէ: Ասիկա
կը նմանի հացի այն խոշոր շերտերուն զոր գիւղացիները
կը կտրեն լոթիկ, իրենց կուրծքին կրթնցուցած... Այն

ուակը՝ գնահատէ՛ այն բովանդակ ձախաւերութիւնը, միա-
մտութիւնը, մերկութիւնը որ կայ կնոջ մէջ... Հմայիչ
է ան, որովհետեւ աշխարհի վրայ բնազդական մարդոցմէ ա-
ւելի սիրուն էակ չկայ: Գնա՛ բանդ: Ան է որ դաս կուտայ
քեզի, ու դուն անոր աշակերտն ես:

ՊԷՐՆԻԷ. — Այ, ապահովարար...

ԿԱՄԶԷՆ. — Եթէ երբեք չկարենաք իրարու հետ հա-
հաձայնիլ՝ այդ լաւ չղեկավարուած բնազդին պատճառով,
եթէ երբեք կինդ օրին մէկը շատ գրգռէ ջիղերդ ու շատ
տխրեցնէ քեզ, Գալստէր եկո՛ւր, մեր տունը, կնոջ հետ
քանի մը օր անցնելու համար: Հուսամով ծածկուած
լեռը կ'ելենք երեքնիս, մենք և կինդ. հոն, կինդ կը կըր-
թընցնենք թեղօշի մը, այն բարձրաբերձ ու կապտորակ թե-
ղօշին, որ ծանօթ է ինձի... ու յետոյ կը դիտենք զայն...
երկար ատեն... այն ատեն կը տեսնես թէ նէ ի՛նչպէս պիտի
դաշնաւորուի բնանկարին... ու ամէն բանի հետ... յետոյ
պիտի վերադառնանք... եթէ այդպէս ըլլայ... այն ատեն
պիտի ըմբռնես... Ը երբ գիշերը հասնի, պիտի գրկես
կինդ... Օ՛ն, ձեռքէ մի՛ հաներ զայն: Քեզի պէտք եղած
կինն է ան: Հիմա, եկո՛ւր տես արտառոցութիւնները:
Եկո՛ւր:

Պարզէն խորամանկ ու հեզուական երեւոյթով մը աշխա-
տանոցէն ներս կը մտնէ յուշիկ:

ՊԷՐՆԻԷ, առանձին. — Առ քեզի բնանկարիչ մը:

Մօտէն կը լսուին պարուհիին համար եղած ծափահա-
րութիւնները: Պահ մը լուսեմէ յետոյ կը լսուի պարուհիին
սա յայտարարութիւնը.

ԻԶՍՏՕՐԱՅԻ ԶԱՅՆԸ. — Հիմա պիտի խաղամ այն պարը
զոր ինձի սօրվեցուցած է Պէնօժժօ-Կօժժօյի նկարին մէջ
գտնուած փոքր հրեշտակ մը: Ահա՛ այդ հրեշտակիկը:

Անախորժ նուագ:

ԵՓԵՐՈՒՄ . ՏԵՍԱԲԱՆ

ԲԻԷՐ, ՊԷՐՆԻԷ, ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Պերնիե կը դիտե, պատուհանի խորշին կրթնած: Ետին կը դառնայ, քեթեւ շունկ մը լսելով: Բոլ ջը Շապրան իշխանունին է, որ ներս կը մտնէ գողունի: Բարձրահասակ, գեղեցիկ կին մըն է, Թիթիէնի մը պէս, ոսկեհամուկ ու փերուզակի գոյնով քոյլ ու ծփուն զգեստ մը հալած, մազերը ցած շկուած: Բիշ մը ցատկուտուն փայլածով մը ունի:

ՊԷՐՆԻԷ.— Դ՛ո՛ւք հոս:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ, պատին մօտ կեցած.— Երկտողս ստացա՞ր:

ՊԷՐՆԻԷ.— Մէկ քատորդ ժամ առաջ: Ձեր ճամբան կը սպասէի...

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Մածկամի՛տ քեզի. ահա՛, յանկարծակիի բերի ձեզ... Ինչո՛ւ գիտ չհրաւիրեցիք: Ըրածնիդ տղեղ բան է, Պօպի:

ՊԷՐՆԻԷ.— Կը խոստովանիմ որ միտքս չի՛նկաւ: Այն խատանոցի՛ քանի մը հին բարեկամներ կան հոս, ինչպէս Ռօլֆինի, Կրէվիլ և այլն... պարտաւորիչ և հին հիմնադրամ մը, առանց տոկոսի... բայց ո՛չ՝ ձեզի արժանի... Որքան աղուոր է զգեստնիդ... Օ՛հ, ո՛րքան սիրուն է սա մասը:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Լաւ գիտեա որ արդուզարդի ոգի ունիմ... Դուն ըսիր այդ բանը: Պէտք է որ վարժուիս անոր:

Պէ՛րՆԻԷ. — Հապա՛ սա մազերու յարդարանքը...
մազերու հիւսակները... :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Լո՛ւէ՛, կը գրգռես զիս... : Ձեռքս
համբուրէ՛... կ'արտօնե՛մ : Բայց, երկչոտ արարած, մէջ
մը չորս զին նայէ՛ որ մէկը կուզա՞յ... : Մաքսախոյսի
հոգի ունիս :

Պէ՛րՆԻԷ. — Պար... :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Լո՛ւէ՛, կ'ըսեմ քեզի... : կը գրգռես
զիս : Անմիտ խօսքեր միայն պիտի ընես... (հեզնական)
Ձէի՛ր յուսար որ հոս տեսնես զիս... : Յանկարծակիի բերի
քեզի, իմ մինինիկ Պօպիս... : Ասոր համար կը զայրանա՛ս
(կը ծիծաղի) : Իսկ ես կը զուարճանամ... : Ուրիշ որ մը
ճաշի պիտի գամ յանկարծ... : Ի՞նչ պիտի հրամցնես...
խաշած միս թէ խորոված վառեակ... : անշուշտ խորոված
վառեակ... : Միթէ կրնա՞նք զիտել ներսը... : Ի՞նչ կ'ընեն
հոն, կը պարե՞ն արդեօք... :

Պէ՛րՆԻԷ. — Խնդրեմ, մի՛ երեւար տակաւին... : Թոյլ
տո՛ւր որ ես միայն քեզ տեսնեմ ու վայելիմ առանձին.
Կեցի՛ր... :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Սպասէ՛... : Ետիս կ'ուզեմ աչքէ ան-
ցընել այդ մարդոց դէմքերը :

Պէ՛րՆԻԷ. — Հեռուէն նայէ՛, վարագոյրին վրայ կըր-
թնած :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ, կարճատեսներու յատուկ ակնոցով մը կը
դիտէ, որ իր սօթուառին վրայ կախաւած է. — Շատ սիրուն է այդ
պարուհին, բայց չափազանց կը շարժի : Հին տարագ մը կը
կրէ, թէև մաքուր չըլլայ : Ահ, Ռօլսինի՛ն է. կը ճանչնամ
զայն... : Քիչ մը սնդին ո՞վ կայ... : Քու կինդ է, և դէմ-
քին երեք քառորդ մասը կ'երեւայ :

Պէ՛րՆԻԷ, — Հաւանարար... : Ի՞նչ փոյթ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Շատ գէշ չէ արդուզարկը... : Անոր
զգեստները ո՞վ կը կօրէ :

Պէ՛րՆԻԷ, անկամբեր, իշխանուհին մեկդի կը փառէ. —

Հոս եկո՛ւր, հոս եկո՛ւր...: Նստէ՛... ոտքի վրայ
պիտի խօսիմ քեզի հետ... սա անկիւնը կրնանք խօսիլ...:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Բայց, դուր հրէ՛: (Պերնիկ կը հրէ:
Իշխանուհին վերաբերուց հանելի յետոյ կը նստի, ու մերկ քե-
ւերը կը տոյժ մսկոտ եւ զգայնոտ անձի մը շուրժուածելով:)
Ուրեմն, գոհ չե՛ս հոս, քու մի՞նչոյորտից մէջ տեսնելով
զիս...: Եթէ քու տեղը ըլլայի... շատ գոհ... և հպարտ
պիտի զգայի ինքզինքս:

Պէ՛րնիկ.— Ա՛յո՛ գոհ և հպարտ կը զգամ ինքզինքս:
Բայց, ազնո՛րս, կարծեմ հոս եկած էք, ծաղրանքի ժպիտ
մը ունենալով ձեր շրթուներն անկիւնը: Աս է որ կը խան-
գարէ ամէն բան:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Ոչ, Պօպիս...: Ինչո՞ւ այդպէս ըլ-
լայ...: Գերբնաիր ընդունելութիւն մը չէի սպասեր, այլ
կ'ուզէի տեսնել կինդ, և քեզ՝ իբր տանտէր: (Իշխանուհին
կը խնդայ:)
Միայն թէ ինքզինքս գեղեցկացուցի առաւե-
լապէս, գերազանցապէս...: Երկու ժամ զբաղեցայ արդու-
զարդովս...: Մանրամասնօրէն խօսէ՛ անոր վրայ: Ինծի հա-
ճոյք պիտի պատճասէ, քանի որ քեզի համար է այս ար-
դուզարդը:

Պէ՛րնիկ.— Պիտի փափաքէի ձեռքերով ու շրթուներ-
ներով արտայայտուիլ:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Ուրիշ գիշեր մը չէ՛...: Պօպի, գե-
ղեցիկ եմ, այնպէս չէ՛...: Սա փոքր առարկան կը տեսնե՞ս
(լանջօքի՞ն հեղին վրայ գոհարեպէն մը ցոյց կուտայ:)
Հին գո-
հարեղէն մըն է...: Իտէսլ բան մը, այնպէս չէ՛...: Մէ
թ'էօն ամուր... (Ամենասիրուն բան:)

Պէ՛րնիկ.— Հաճոյք կը զգամ երբ «ամուր» (սէր) բառը
լսեմ բռնեկդ. երեք «ն»-ով կ'արտասանես զայն:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Կարելի չէ շատ ծանրանալ այդ բանին
վրայ: Գերմանական հին «ն» է որ կ'ոկորդիս մէջ կը
մնայ... ու երեք գիր կը հաշուուի...: Եկո՛ւր, խեղդէ
զայն: (Իշխանուհին կ'երկարէ շրթուներ: Պերնիկ ջերմապէս

կը համբուրէ զայն:) Ա՛հ, կը զգամ թէ այս իրիկուն իմա
ես դուն...: Առջի իրիկուն, հասկէ դուրս ելած պահուս,
զգացի որ ամբողջ հոգիդ կը տանէի ինձի հետ...: (Բացաս-
րողական շարժումներ մը կ'ընեն:) Կիները շատ լաւ կը զգան
այդ բանը: Արդէն, հետեւեալ օրն իսկ ետ ասիք այդ հա-
գին: (Թշուաճուհիին պոնդ մը կուտայ Քիւրի լանջապահին,
արհամարհոս ձեւով մը:) Օհ, չեմ սիրեր սա շաղկիկդ կո-
ճակները: Չտեսի՛ գործ է:

Պէ՛րՆ,ԻԷ. — Ի՛նչ կ'ըսէք:

ԻՇԽԱՆՆՈՒՀԻՆ. — Տակաւին շատ բաներ պիտի սորվե-
ցնեմ քեզի: Այո՛, դուն յառաջդիմութիւններ կ'ընես, քեզի
հետ ըլլալէս ի վեր:

Պէ՛րՆ,ԻԷ. — Հեզ և հլու պիտի ըլլամ:

ԻՇԽԱՆՆՈՒՀԻՆ. — Աւելի լաւ: Փէթ դուն կը գնահատես
զիս...: Շատ գոհ եմ ասոր համար. գոնէ զիս համտեսող
մէկը ունիմ...: Ո՛հ, ի՛նչ ազեղ բառ ելաւ բերնէս... կրք-
նամ չհաշխարհիկ կի՛ն մը ըլլալ ճաշակի տէր անձի մը հա-
մար: Հաճելի բան է ըմբոշխնուիլը: Ինչպէս յայտնի է,
հակառակ ամէն բանի, չհաշխարհիկ կի՛նը քիչ մը արտաուց
կ'ըլլայ ընկերութեան մէջ...: Եթէ այդ ընկերութեան մէջ
գտնուէիր, գեղեցկագիտութեան դէմ սնուցուած թշնամու-
թիւնը աչքիդ պիտի զարնէր... ու շատ պիտի տառապէիր
ասոր համար, Պօպի...: Յաջողած եմ ոտքերուս տակ
ունենալ այդ կարգի բոլոր անձերը: Իմ գեղեցկութիւնս, իմ
վայելչութիւնս կը տարփողեն, բայց ետեւէս ալ կը քաշ-
քշեն զիս...: Հիմա որ լաւ բան մը կ'ընեմ ինձի համար,
գոնէ զիտեմ թէ կորստեան չպիտի մասնուի ան, քանի որ
զիս գնահատող մը ունիմ: Իմ միջակ նկարիչս, ո՛րքան զուար-
ճալի կը դառնաք իմ տանս մէջ: Չեր աչքէն բան չիւրի-
պիր... խենթի մը պէս... ամէն կողմ փնտառուքի կ'ելլէք
... գզրոցներս կը բանաք... անգործ Պարպ-Պլէօի մը
պէս...:

Պէ՛ՆՆԻ՛Ն. — Քու պերճանքդ չէ որ կը զինովցնէ զիս .
այդպէս մի՛ կարծեր : Պերճանքին հետ ունեցած ներդաշ-
նակութիւնդ է որ կը զինովցնէ զիս . . . : Մտիկ ըրէ՛ , ան-
փայլ մորթիդ վրայ հազած ճերմակեղէնիդ որակն իսկ , որ
ոչ շատ ճերմակ է և ոչ այ գունաւոր , նկարչական տեսա-
կէտով անօրինակ է . . . : Գիւտեր են ասոնք . . . : Եւ դուն
ունիս այն ինքնահիացումը և ինքնափորձատութիւնը , ո-
րուն պէտք կայ , այս աստիճան հսկելու համար ամէն
բանի վրայ . . . : Այսպիսի պայմաններու մէջ գտնուող սէր
մը երկինքը կը յիշեցնէ քիչ մը . . . որովհետեւ յիակատար
ներդաշնակութիւն մը կայ հոն : Բոյր զգայարանքները
կը զմայլին համակ . . . օ՛հ , չես կրնար երեւակայել թէ
որքան կ'աճապարեմ . . . որպէս զի շուտով վաղը ըլլայ . . .
քու քովդ գտնուելու համար . . . :

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ. — Ծշմարխտ գօլէճական մըն էք , բա-
րեկամս . . . : Միթէ առաջին աշխարհիկ կինը ե՞ս եմ որ
ձեզի անձնատուր եղած ըլլամ : Ո՛չ , լուռ կեցի՛ր , քանի որ
պիտի ստես , ու շիք մէկուն անունը պիտի տաս , պարծենալու
համար , թէ եւ ստոյգ չըլլայ . . . : Միամիտ գօլէճականի մը
կը նմանիք , և ատ է որ հրապոյր կ'ազդէ ինձի . . . : Այս-
պէս , անցած ատու , մոլորազոյն արեւածաղիկներով ասեղ-
նադործուած ասուիներուն վրայ խենթեցար կարծես : Իսկ
ես կը ծիծաղէի , տեսնելով որ քեզի պէս մեծ արուեստա-
գէտ մը այդքան զմայլի , այդ տղեղ բաները համարեղ
գտնելու համար :

Պէ՛ՆՆԻ՛Ն. — Ինչո՞ւ տղեղ ըլլայ :

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ. — Լռէ՛ : Անճոռնի բան է . . . : Անիկա
մնացած է այն ատենէն ի վեր , երբ նախարտֆա-
յէլեան էի , ու Պրրն-Ճօնսի շինելի կուտայի իմ առաջին
գիմասեկարս , մարմարէ գահի մը վրայ : Իմ գերման երի-
տասարդութեանս գմնդակ օրերուն մէկ հին նշխարն է
ան : Իսկ ես կը պաշտեմ քեզ , երբ կը տեսնեմ . . . սա ջգա-
գրգռուած . . . հեշտատէր աչքերդ ու ձեռքերդ : Անցած օր

հիանալի էիք սալօնին մէջ, երբ տաղտկայի անձեր կային հոն... Աղուոր կազմուած գիրք մը առիք սեղանին վրայէն... ու կենդանի մը, շնիկ մը շոյելու պէս շոյեցիր զայն: Կէս ժամ տեւեց ատիկա... Երեսդ նայեցայ... բայց դուն բան մը չնշմարեցիր... Կ'ուզէի քեզ դըրկել... Կը փափաքէի այդ գիրքը նետել ու անոր տեղ անցնիլ...:

Պէ՛րՆԻԷ.— Ձեռ գիտեր թէ հազուագիտ, գեղարուեստական բան մը ո՛րքան կը զմայլեցնէ զիս... Ատենօք իմ մտքէս ալ չէր անցնէր այդ բանը... Ինքնախաբէութի՛ւն մի՛ ունենար... Մի՛ կարծեր որ քու անձդ և քու ընկերային վիճակդ շմեցուցած են զիս... Ոչ, արբշիռ մարդ մըն եմ պարզապէս: Համանման բաներ զգացած եմ, Իտալիան քողամերկելով... հաճոյքէն մոնչելու տենչ մը... Միայն թէ քեզի հանդէպ ունիմ նաև վայելքի... ճշմարիտ վայելքի մը արբշոանքը: Ըսէ՛, զուարճանալի՞ չէ այս ամէնուն վրայ խօսիլը... երբ քիչ մը անպին, բոլոր այդ տխմարները այնպէս կը ձեւացնեն թէ խեղճուկրակ բաներով կը խանդավառուին:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Ա՛հ, քեզի պէս էրիկ մարդու մը և ինձի պէս կնոջ մը միութիւնը ի՛նչ աղուոր բան պիտի ըլլար:

Պէ՛րՆԻԷ.— Այո՛: Բայց հանդիպումը շատ կը յամենայ, կեանքի համը ատնելէ և արժէքը ըմբռնելէ յետոյ: Ասկէ առաջ, անկարելի էր այդ բանը:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Այդպէս մի՛ խորհիր... Մ՛հ, եթէ երբեք ուզէի... Այդպէս մի՛ ըսեր... Երբ բան էր ըզձամ, Աստուած իսկ տեղի կուտայ: Արդէն, Աստուած անգամ կը վախնայ որ... ամուսնութիւնս կը լուծեմ Հոսմի մէջ... Պէտք է որ ան հնազանդի, եթէ ես այդ փափաքը ունենամ:

Պէ՛րՆԻԷ.— Խենթութիւն պիտի ըլլար:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Ձեմ ըսեր թէ այդ բանը կ'ուզեմ,

այլ կ'ըսեմ. եթէ երբեք ազգի... Հոռոմի արքունիքին կար-
 ծիքը շօշափեցի... հետաքրքրութեան համար... Սակա-
 ցոյցի գործ է... Պօպի, դուն չես ճանչնար զիս: Սիրելիս,
 Պլոխէնթալ անուն կի՛ն մըն էի, շափազանց հարուստ,
 բայց Պլոխէնթալ մը վերջապէս. սիրելիս, դուն ալ գիտես
 թէ ի՛նչ թշնամութիւն կը սնուցանեն ցեղի մը հանդէպ...
 Մաղթեցի որ ոտքերուս տակ ունենամ Բարիդի ամբողջ
 ազնուապետութիւնը... և ունեցայ... գնեցի զայն...
 Գոհ եմ... Հիմա, այդ ազնուապետութիւնը ձանձրոյթ կը
 պատճառէ ինծի... Որքա՛ն ճղճիմ են մեր անուրջները...
 Երեւակայէ՛ որ կամքս գոհացում գտնելուն պէս՝ կը ձանձ-
 րանամ... Մարդ ուզածը ձեռք բերելէ յետոյ՝ պէտք է
 ուրիշ բանի մը ձգտի... Մնաց որ՝ կեանքի մէջ ձախտ-
 դա՞ծ եմ թէ ոչ, ես ալ չեմ գիտեր... կը ծիծաղիս, այն-
 պէս չէ՛... իրաւունք չունիս... Չես հասկնար միտքս...
 Ես արուեստի համար ստեղծուած էի արդէն... Մեծ ա-
 նուրջ մը իրագործելու էի իմ միլիոններովս, ևուի տը
 Պալիէրի պէս... բայց աւելի ճաշակ գնելով անոր մէջ...
 Մինչգեռ, դուն, իբր խաղակից, այդ բանը ընելու կարո-
 ղութիւն չունէիր: Դուն մանր պուրժուա մըն էիր...
 Ինչո՞ւ ամուսնացար այդ կնոջ հետ... Քեզի արժանի չէր
 ան... Չարմանալի կը գտնեմ նրբաճաշակ մարդու մը
 այդ ընթացքը... Անաստորժ բան մըն է... Չեր կիներ
 սիրուն է անշուշտ, բայց շատ սովորական... և եթէ կը
 թոյլատրես որ ըսեմ, «Մօնմարթը» կը հոտի պարզապէս:
 Չե՞ս նեղանար այս խօսքերուս համար... Արդէն իր ան-
 ձին ալ խնամք չի տանիր կի՛նդ...

Պէ՛րՆԻԷ, Նեղացած. — Խենթ ե՞ս... Բայց ի՛նչ
 կրնայի ընել... օրին մէկը օդը ազուոր էր... արեւը կ'ո-
 գեւորէր զիս:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Կը սիրես կի՛նդ... այո... շատ կը
 սիրես... Աչքերուդ մէջ կը կարդայուի այդ սէրը... երբ
 կնոջդ կը նայիս, մտահոգութեան կը մատնուիս թէ ի՛նչ
 պէս պիտի շարժի ան:

Պէ՛րնի՛կ .— Մարդ կրնա՛յ դուշակել միթէ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ .— Մի՛ ամչնար ատոր համար . . . : Ե-
ղածը սա է որ մանր պուրժուային մէկն հս պարզապէս . . .
(Զգալով որ Լօլէթ ներս կը մտնէ, ու այնպէս ձեւացնելով որ
չի տեսներ զայն, բարձրաձայն կ'ըսէ Պէրնիկի, մինչդեռ այս
վերջինը պատին կը դարձնէ կռնակը:) Շրջանակ շինողը
կ'առաջարկէր Լուի ժե . սճով շրջանակ մը . . . : Իսկ հս
չընդունեցի :

Պէ՛րնի՛կ .— Ի՞նչ ըսիք . . . :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ .— Յաամս կոչուած շրջանակ մը յանձ-
նարարեցի . . . : հին սակիէ . . . : Օ՛հ , դո՛ւք էք , բարի իրի-
կուն :



ՈՒՓԵՐՈՐԴ ՅԵՍԱՐԱՆ

ՄԻԵԻՆՈՅՆ ԱՆՁԵՐԸ , ԼՕԼԷԹ

ԼՕԼԷԹ , ապշահար .— Դո՛ւք հոս :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ .— Պ . Պէրնիկ բան մը չըսա՞ւ ձեզի :

Պէ՛րնի՛կ .— Ո՛չ , ատեն չունեցայ իմաց տալու :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ .— Երեւակայեցէ՛ք որ ժամադիր պիտի
ըլլայի ամուսնիս հետ , ահուժքէն ելլելէն յետոյ . . . : Յի-
շեցի որ այս իրիկուն ընդունելութիւն ունիք . . . : Ձեր
տունը ճամբուս վրայ կը գտնուէր . . . : ու քիչ մը առաջ շօ-
ֆէօրը դրկեցի , իմաց տալու համար թէ ապաստան պիտի
խնդրէի ձեր մօտ : Արդէն հինգ վայրկեան պիտի մնամ . . . :
Իշխանը գալուն պէս՝ հրաժեշտ պիտի առնեմ ձեռնէ :

ԼՕԼԷԹ , ցուրտ շեշտով մը .— Խօսակցութեան ձայն ա-
սի . . . : Հոս եկայ , հասկնալու համար թէ ո՛վ էր . . . :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ .— Չուզեցի տպաւորութիւն առաջ բե-
րել , ներս մտնելով , երբ այդ կիներ մարզանքներ կ'ը-

նէր : Շատ սիրուն է ձեր շրջագրեալը . . . : Թի-կաուն է ,
այնպէս չէ . . . :

ԼՕԼԷԹ , ակաաներուն մեջեկի .— Մ՛հ , ի՞նչ կ'արժէ ձեր
արգուզարդին քով . . . :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ .— Ինք ալ միշտ սիրուն է : Ա՛հ , երբ կը յի-
շեմ որ մազերը ճակատին երկու կողմերը կ'ամփոփէր նէ . . . :
Սիրելիս , կարծեմ ձեռնէ առաջ ճանչցած եմ զայն : Երեւակայե-
ցէ՛ք որ գրեթէ նիհար . . . ու մանրուք կ'երևար . . . : Ինծի նայե-
ցէ՛ք , Պարոն Պէրնիէ , քանի որ առանձին կը գտնուինք ,
գացէք կալըրիէն բերէք ծրար մը զոր ձեզի ձգելու մտազ-
րութիւն ունէի : Սենեկապանէն խնդրած էի որ վազը առ-
տու միայն յանձնէ ձեզի : (Պերնիէ կը հեռանայ : Իշխանու-
հին արագօրէկ կ'ըսէ ԼՕԼԷԹ :) Ուրեմն ամէն շարաթ օր ըն-
դունելութիւն ունի՞ք . . . : Վերջին նկարանիստէն յետոյ՝
պատկերս տեսա՞ք : Բաւական առաջ տա ուսած է , այնպէս
չէ . . . : Լաւագոյն նկարս պիտի ըլլայ . . . : Բազուկին զրծ-
ուած ըր ու վզին շարժումը հաճոյ կը թուին ինծի . . . այն
պէս չէ . . . : Հով մը ունի :

ԼՕԼԷԹ .— Այո՛ . . . շատ լաւ սկզբնաւորութիւն ունի
նկարը . . . :

Պերնիէ կը բերէ ծաւր :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ .— Շատ շնորհակալ եմ . . . : Աւասիկ . . .
երեւակայեցէ՛ք որ ձեր փոքր մէկ զիմանկարն է , զոր հին
պատկերներու մէջ գտայ , կարասիի մը ետին գրուած . . . :
Խորհեցայ որ ձեր երկուքին ալ հաճոյք պիտի պատճառէ
այդ յիշատակը , եթէ ձեռք բերէիք զայն . . . : Ասոր համար
հետոս բերի :

Պէրնիէ .— Շատ գոհ եմ . . . : Իսկապէս հաճելի բան է :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ .— Աւասիկ : Ուրիշին ցոյց մի՛ տաք .
ձեզի համար պահեցէ՛ք : Լաւագոյն չըլլա՞ր որ փոխանակ իմ
քովս գտնուելու , ձեր մօտ մնայ , քանի որ ասդին անդին
կը նեղէին բնակարանիս մէջ , իբր աւելորդ բան . . . :

Պէ՛րՆիէ. — Օ՛հ, ս՛րբան հեռաքրքրական է :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Արդէն իսկ, իր արտայայտութեամբ, հեռաքրքրական էր միթէ . . . : Վարպե՛տ, ողորմելի բան է իբր նկարչութիւն . . . : Ներողութի՛ւն . . . : Սկսնակի առաջին շրջանիս մէջ գծուած է ան . . . :

Պէ՛րՆիէ. — Բայց ոչ . . . աչքերուն բիծը բաւական ճիշդ գծուած է . . . մազերուն առնչութիւնը նախալզին հետ՝ գէշ չէ : Նմանութիւն ունեցող պատկեր մըն էր :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ, ԼՕԼԷԹ. — Այո՛, կարծեմ . . . շատ կը նմանի . . . : Կը յիշէ՞ք թէ միշտ մտած կուզայիք : Աշխատանքս, այցուբա էր . . . :

ԼՕԼԷԹ, որ մերք Պերնիէի եւ մերք իշխանուհիին կը նայի. — Կը յիշեմ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Խորհեցայ որ Տիկին Պէրնիէ խելացի ըլլալուն, այդ փոքր յիշատակով պիտի հրձուէր . . . մանաւանդ հիմա որ բարիզեան ճշմարիտ պարիկ մը դարձած է . . . : Բայց իբր վաւերագիր, մեզ երեքիս համար շահագրգռական է, այնպէս չէ՞ և ահա ինչո՛ւ հետս կը բերեմ զայն :

Պէ՛րՆիէ. — Ձեր ազնուութիւնը ցոյց կուտար, այդ բանին վրայ խորհելով . . . : Ինձի նայէ՛, Լուլու, մտացիք կ'երեւաս . . . :

ԼՕԼԷԹ. — Բայց դուն մտացիք կ'երեւաս . . . : Գէթ, վայրկեան մը ներս գնա՛ : Հաւատա՛ որ այս իրիկուն քոլորովին երեսի վրայ ձգած ես հրաւիրեալներդ :

Պէ՛րՆիէ. — Իրաւունք ունիս :

ԼՕԼԷԹ, ցած ձայնով՝ Պերնիէի. — Հիացիկ երեւոյթ մը աւնիս :

Պերնիէ ուսերը ցնցելով կը յառաջանայ դեպի սեւագգետս հրաւիրեալները :



ԻՆՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԼՕԼԷԹ, ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

ԼՕԼԷԹ, քնդհուպ, արագ շեշտով մը.— Տիկին, ըսէ՛ք . . . :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Ի՞նչ բան . . . :

ԼՕԼԷԹ.— Թէեւ արտասոց ու շատ անմիտ պիտի երեւամ ձեզի . . . բայց ներեցէ՛ք . . . : Բիէր յաճախ չի դարպասե՞ր ձեզի :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ, նստած ու այգով մը թղթատելով.— Ինձի այնպէս կը թուի որ իր պարտականութիւնն է որ կ'ընէ :

ԼՕԼԷԹ, չափազանց կարկամած, ակնեհեւ ու յարածուն յուզումով.— Անշուշտ . . . : Բայց շատ կը նեղուիմ, ձեզի յայտնելու համար այն բանը զոր կ'ուզեմ ըսել : Կ'ըմբռնեմ որ վտանգաւոր է ինձի համար . . . : Բայց ձեռքս չէ. երբ սիրտս տրտիէ, պէտք է որ խօսիմ . . . : Խօսքերը ինքնին դուրս կուգան իակոյն, հակառակ իմ կամքիս . . . : Անկեղծութիւն կ'ըսեն ասոր. կարծեմ, նուազ բարձր զգացում մըն է, բայց աւելի ընդոստ զգացում մը :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Ի՞նչ նախաբան է աս . . . : Որքա՞ն սիրուն է : Խօսեցէ՛ք, ասանց անձկութեան և ասանց արտակարգ վրդովումի . . . :

ԼՕԼԷԹ.— Չեմ համարձակիր . . . : Տիկին, սուր նայուածք մը ունիք, որ կը վախցնէ, կը նեղէ զիս :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Կ'ուզէ՞ք որ ուրիշ տեղ նայիմ :

ԼՕԼԷԹ.— Ո՛չ, այդպէս նայեցէ՛ք, հիմա համարձակութիւն կը զգամ . . . : (Լօլէթ գլուխը ձեռքերուն մեջ առնելով յանկարծ, յուզուած ու դողդոջուն ձայնով մը կ'ըսէ :) Տի-

կին, Բիէրը այնքան կը սիրեմ որ աշխարհի վրայ ո՛չ ոք
պիտի կրնայ հաւատ ընծայել իմ սիրոյս . . . : Իմ ամբողջ
կեանքս է ան : Հետեւաբար, այն կինը որ պիտի ուզէ ինձ
խլել Բիէրի սիրար, տգեղ, սոսկայի բան մը ըրած պիտի
ըլլայ . . . :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ, ընդմիջելով Լօլէթը ու ծիծաղելով.—
Ա՛ս էր ձեր ըսելիքը : Օ՛ն, ձեռքերնիդ վառ առէ՛ք, նայի՛մ,
նոնոչիկս . . . :

ԼՕԼԷԹ.— Տէր Աստուած, ի՛նչ անխելքութիւն ըրի . . . :
Ներողութիւն կը խնդրեմ ձեռէ . . . : կը զգամ որ այդ խոս-
քերը ընելու չէի :

Լօլէթ ետին կը դառնայ ամօթապարս :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Արդարեւ, կրնայի նեղանալ, ու
պէտք եղածին պէս սաստել ձեզ : Լաւ գիտցէ՛ք որ ոչ ոք
համարձակութիւն ունեցած է այդ լեզուով խօսելու ինձի
հետ . . . : Բայց վստահ եղէ՛ք որ, ընդհակառակը, շատ սի-
րուն կը գտնեմ խօսելու այդ պարզ ձեւը, որ ինքնատիպ
է դոնէ . . . : Շատ անուշիկ էք :

ԼՕԼԷԹ.— Պէտք չէ մեղադրել զիս . . . : Բիէր ու ես չա-
փազանց կը սիրենք զիրար : Մ՛ըքան բարի, ո՛րքան դորո-
վալից է ան . . . : Այո՛, երբեմն խիստ կը վարուի ինձի հետ,
բայց ատ ալ վարուելակերպ մըն է : Շատ հմայիչ սէր մը
ունի ինձի հանդէպ . . . : Մնաց որ՝ ես ալ երբեմն կը նեղա-
ցնեմ զինքը . . . : Իրարու հետ կը վիճինք : Բայց շատ չան-
ցած, իրար կը պաշտենք : Իսկապէս զօղուած ենք իրա-
րու . . . : Ուրեմն մեղադրելի չէ, այնպէս չէ՞, երբ քիչ մը
մտահոգութիւն կը յայտնեմ. որովհետեւ կը տեսնեմ որ
շատ զժուար է կեանքի մէջ սիրել ատանց տառապանքի :

Լօլէթ խոր հառայ մը կ'արձակէ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Օ՛ն, ձեր կասկածը փարատեցէք, Տէր

Անասուած . . . : Երկու քնիդ ալ շատ համակրելի կը գտնուի,
բայց . . . ինչպէս ըսեմ որ հասկնաք . . . (միակնոցը դրած ու
ժպտուն) երկու քնիդ ալ իմ միջավայրիս . . . ըսել կ'ուզեմ՝ իմ
ընկերութեանս չէք պատկանիր բոլորովին : Ձեզ և Պ. Պէրնիէն
կը նկատեմ պատուական անձեր, կամ բարեկամներ, ինչպէս
որ կ'ուզէք, բայց ձեր տունը կուզամ օրինազանցութիւն
գործողի մը պէս : Կը հասկնա՞ք : Ահա ինչն'ը, բնաւ չեմ քաշ-
ուիր անսնդմէ, ինչպէս կը տեսնէք հիմա . . . : Բայց, խնդրեմ,
հաւատապէք որ ուրիշ անձնական յարաբերութիւններու
հետամուտ չեմ : Իրաւ որ զուարճալի է : Բարեկանայու բան
չկայ :

ԼՕԼԷԹ. — Օ՛հ, իրաւունք ունիք իմ գիրքիս մէջ պա-
հելու զիս : Բայց ես չյափշտակեցի զայն . . . : Անխելութիւն
բրի պարզապէս . . . (Ասի կ'ելլէ :) Եթէ Բիէր իմանար, սր-
քան պիտի կատաղէր . . . : (Իսպառ մը :) Հիմա, կրնամ ձեզի
ըսել թէ կատաղութիւն կը զգայի, տեսնելով որ այդ նկարը
բերած էիք այս իրիկուն . . . Բիէրի համար, որ այնքան
գիւրազգած է այդ մասին . . . : Գէշ գիտաւ որութիւն մը տեսած
էի անոր մէջ . . . :

ԻՇԽԱՆՈՒ ՀԻՆ. — Շատ կը սխալիք : Կը ցաւիմ որ միտքս
լաւ չեմ հասկցուցած : Բայց կ'ուզէ՞ք օգտուիլ սա բացատ-
րութենէս, որպէս զի շատ լաւ բարեկամութիւններ պանանք
իրարու . . . : Իմ ուզածս սա է :

Իսխանուհի, չփակիլն վրայէն հանելով գոհարեղէնը,
ԼՕԼԷԹի կուրծք կ'անցնէ :

ԼՕԼԷԹ. — Ինչ կ'ընէք, Տիկին :

ԻՇԽԱՆՈՒ ՀԻՆ. — Այս իրիկուն խօսակցութեան իբր
յիշատակ՝ պահեցէք զայն, խօսակցութիւն մը որ այնքան
անմատչէն ընդհատեց ձեր փոքր ընդունելութիւնը :

ԼՕԼԷԹ, խոյանալով. — Օ՛հ, անշուշտ, թոյլ կուտաք որ
ձեռքերնից սեղմեմ : Ո՛րքան չիք է ձեր ըրածը, քիչ մը
ասաջուան խօսքերէս յետոյ . . . : Հարցնելու պէտք չկայ թէ

կ'աղե՛մ՝ ձեր բարեկամու՛նին ըլլալ . . . : Օ՛հ, ի՛նչ կ'ըսէք,
ատոր արժանի չեմ . . . : Դղու՛մի չափ անմիտ եմ . . . : Ի՞նչ
դու կին մէկը . . . :

ԽՆԽԱՆՈՒ ՀԻՆ. — Ինքզինքնից կը զրպարտէք . . . : Շատ
սիրուն մէկ քանի խօսքեր ըրիք :

ԼՕԼԷԹ. — Իրա՛ւ կ'ըսէք . . . : Մասնաւոր գիտումով
չըսի . . . : Բայց պիտի ջանամ ապացուցանել որ ի հար-
կին կրնամ լաւ բարեկամու՛նի մը ըլլալ, գոնէ . . . : Պիտի
տեսնէ՛ք . . . : Օ՛հ, ս'ըքան գոհ եմ . . . :

ԼՕԼԷ, մտերմաբար, իշխանուհիին ձեռքերը կը բռնէ:
Պերնիէ, իչ մը մտահոգ, աշխատանոցին դրան մեջ կը տես-
նուի Թապուրոյի հետ:

ԹԱՊՈՒՐՕ. — Քիչ մը առաջ կ'ըսէիր թէ կինդ և իշ-
խանուհին մտերմական յարաբերութիւն չունին . . . : Չար-
մանայի՛ր քան : Չափազանց մտերիմ անձերու պէս կը տես-
նուին :

ՊԷՐՆԻԷ. — Այո՛ : Շատ չեմ ախորժիր այդ քանէն
(Իսկէն կանչելով) : Հոս կուգա՞ք, իշխանուհի . . . : Ինչո՞րեմ,
ակնարկ մը միայն ձգեցէք :

ԽՆԽԱՆՈՒ ՀԻՆ, ստի՛կելով. — Անշուշտ, մեծ հաճոյ-
քով :

Այդ պահուն ԼՕԼԷ՞ դեպի ձախակողմի մուտքի դուռը կը
դառնայ : Ռուսարն է որ կը յառաջանայ : Հանդիսական սեւ
զգեստ չի կրեր, ու նեղուած կը զգայ ինքզինքը : Ռուսարը տես-
նելուն պէս՝ ԼՕԼԷ՞ իչ մը կը թզուցնի, ու շուրջը կը կտրի :
Աչքերը Պերնիէի կ'ուզողէ անձկութեամբ :

ԼՕԼԷԹ. — Բիէ՛ր :

ՊԷՐՆԻԷ. — Ի՛նչ կայ :

ԼՕԼԷԹ. — Ռուշարն է . . . :

Ռուսար մտեցած է իշխանուհիին, Պերնիէի եւ ԼՕԼԷ՞ի

կայսրմամ խուճբին. նախ՝ Պերնիէի ու յետոյ Լօլէթի ձեռքը կը
տեղակ:

ՌՌԻՇԱՐ. — Բարի՛ իրիկուն, սիրելիս... բարի իրի-
կուն, տիկին...:

Ո՞ր նրա իրեալի մը պէս, դեպի աշխատանոց կ'ուղղուի
իսկոյն:

ԼՕԼԷԹ, իշխանուհիին. — Իշխանուհի, կը թոյլատրէ՞ք
որ բան մը ըսեմ ամուսնիս...:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Ըսէ՛ք... ես կրնամ ատանձին ներս
երթալ...: Ռօլսինին կուգայ:

Զգայազունց այլ վերապահ մութ մը կը գործէ իշխա-
նուհին:



ՏԱՍՆԵՐԱՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՊէՐՆԻԷ, ԼՕԼԷԹ, յետոյ ՌՌԻՇԱՐ եւ ԻՇԽԱՆ ՏԸ ՇԱՊՐԵՆ,

ԼՕԼԷԹ, Պերնիէի. — Ռուչար հո՛ւ է: Ի՞նչ է սա: Դո՞ւն
հրաւիրեցիր:

ՊէՐՆԻԷ. — Այո՛: Ի՞նչ եղեր ես այս գիշեր: Ամէն
բանի հակառակը կ'ընես ու ամէն բան ծուռ կը հասկնաս:
Ինչո՞ւ չհրաւիրէի Ռուչարը...: Անիմաստ բան մը պիտի
ըլլար, խօսքին շխտակը...: Միշտ, իրարու կը հանդի-
պէինք, ու ամէն անգամուն ալ բարկացտ նայուածքներ
կ'ուղղէինք...: Արդ, վերջին անգամուն, իրարու հեռ
խօսեցանք յանձնաժողովին մէջ...: Հոս տեղաւորուած ըլ-
լայս լայտնեցի... ու պարզապէս ըսի անոր. «Շարաթ օր մը
հրամմէ. ճաշէն յետոյ կ'ընդունինք, յառաջիկայ շաբաթէն
սկսեալ»: Վերջապէս, այդ վիճակը չէր կրնար շարունակ-
ուիլ այլ եւս: Խորհէ՛ անգամ մը...: Աս է լուազոյնը:

ԼՕԼԷԹ, հեղձամղձուկ ձայնով մը ու աչեքը չբաժնելով Պերնիէի վրայէն. — Բայց ի՞նչո՞ւ ըրիր այդ բանը: Հարկաւ, պատճառ մը կայ:

Պէ՛րՆԻԷ. — Ի՞նչ պատճառ, Տէր Աստուած...: Չբսե՛ս, ի՞նչ է պատճառը:

ԼՕԼԷԹ. — Ես գիտե՞մ...: Կը փնտտեմ պատճառը...: Բայց պատճառ մը ըլլալու է...: Չիս նուաստացնելու համար... քու աչքերուդ, իմ աչքերուս սաջե... գիս սպաիկ-ցընելու, տխրեցնելու համար... ես ի՞նչ գիտնամ:

Լօլէթ անձկութեամբ կը հարցա՛նկնէ:

Պէ՛րՆԻԷ. — Օ՛Ք...: Աս քեզի մեծ մեծ խօսքեր... որոնք նշանակութիւն չունին...:

ԼՕԼԷԹ. — Բայց վստահ եմ թէ ու ե է մութ պատճառ կայ, էրիկ մարդու պատճառ մը, որ ինձի դէմ է... Ի՞նչո՞ւ այդ նախատինքին առարկայ ըլլամ...: Թէեւ չար մէկը չես դուն, բայց համարձակեցա՛ր այդ բանը ընելու: Ի՞նչպէս կրցիր ընել: (Ֆանկարծ:) Բիէր, այլեւ չես սիրեր զիս:

Պէ՛րՆԻԷ. — Ի՞նչ կ'ըսես...: Բայց ի՞նչ կապ ունի: Քիչ մը առաջ՝ քեզի չըսի՞ միթէ. ամէն ինչ ծուռ կը հասկընաս...: Ի՞նչո՞ւ կարեւորութիւն կ'ընծայես այդ բանին...: Երկու-երեք ընկերներէս զատ, որոնց հետ յարաբերութիւն չունիմ այլ ևս, ոչ ոք գիտէ թէ ստեղծք իրարու հետ կենակցած էք:

ԼՕԼԷԹ. — Բիէր, ա՛լ չես սիրեր զիս:

Պէ՛րՆԻԷ. — Բայց, իմ բարեկամս չեմ դարձներ Ռուչարը: Հոս կուգայ կ'երթայ... ու կ'անհետի...: Խոստովանէ՛ որ շատ աւելի բնական բան մըն է...: (Ռուշարը տեսնելով, որ աշխատանոցէն վար կ'իջնէ, Պերնիէն ու Լօլէթը փնտրողի երեւոյթով:) Կուէ՛:

ՌՈՒՇԱՐ. — Սիրելի՛ս, ներողութիւն կը խնդրեմ, հանգիստական զգեստ չկրելու համար...: Վարանեցայ...: Երբեմնի Պէրնիէն աչքիս սաջեւ ունէի քիչ մը...:

Ազնուական մըն է, զուտ և հին արծաթէ . . . : Տամաս-
կինեան գրուագներու երեւոյթը ունի : Շատ ալ շիք է . . . :
Արդէն, ամէն ինչ վայելուչ, ճոխ է հոս . . . : Ա՛հ, Լօլէթ,
որքան փոխուած էք : Շնորհաւորութիւններս :

ԼՕԼԷԹ, ինքզինքն անասացած զգալով ու յետոյ ձայնով
մը. — Հոս գալու չէիք : Չեղի եղած հրաւերը մերժելու
փափկանկատութիւնը ունենալու էիք :

ՌՈՒՇԱՐ. — Հէ՛գ Լօլէթս, ինծի ալ մեծութի՛ւն կը ծա-
խէք : Կ'երդնում որ գոհ եմ, ձեզ երջանիկ ու յիսածու տես-
նելուս, այն պահուն երբ մեծ թոխք մը կ'առնէք . . . :
Պէտք չէ որ ինծի դէմ վշտանաք, քանի որ հոս ե-
ղած եմ, անձամբ ստուգելու համար այդ բանը . . . : Բայց ա՛լ
չպիտի գամ, եթէ ձեզի անհաճոյ կը թուի այցելութիւնս :

ԼՕԼԷԹ. — Այո՛ :

ՌՈՒՇԱՐ. — Ա՛հ, Լուլու, ինչո՞ւ այդ շեշտը : Շատ սի-
քած ենք զիրար, ու հայրիկ մը եղած եմ քեզի, ինչպէս
կ'ըսէիք :

ԼՕԼԷԹ, դեպի ետ փառուելով ու անոր խօսքը ընդմիջե-
լով. — Կ'աղաչեմ, պարո՛ն :

ՌՈՒՇԱՐ. — Զայրանալու բան չկայ . . . : Անցեալէն ա՛յ
մէկ բան գոյութիւն ունի մեր միջե, բայց և այնպէս իմ
մէջս կայ տակաւին . . . : Ա՛յ թէ ամենափոքր սէր սը, այլ
բղձանքի պէս բան մը, այո՛, ճշմարիտ փափաք մը կեանքի
մէջ երջանիկ տեսնելու սա աղջիկը . . . : Այլրնիւ Թրոշոյի սա
ձագու կը . . . : զոր շատ մեծ խանդաղատանքով մեծցուցած եմ :
Կա՛ւ, լա՛ւ, հասկցայ, ատոր վրայ չպիտի խօսիմ այլևս . . . :
բայց խնդիրը սլարդուելու էր, այնպէս չէ . . . : որովհետեւ
տարիներէ ի վեր կրնայիք ճիշդ հակառակ կարծիքը ունե-
նալ . . . : ինչ որ ճշմարիտ չէ . . . : Իմ մինիսիկ Լուլուս, կրցած-
նուզ չափ երջանիկ եղէ՛ք . . . : Սրտանց կը մաղթեմ . . . : Աս
այժմ կը բարձրանաք, միշտ կը բարձրանաք . . . : չա՛տ լուս . . . :
Սակայն, շատ բարձրերը մի՛ կլլէք . . . : որպէս զի ձեր թե-
ւերը չկտարին . . . : զգուշացէ՛ք այդ բանէն :

ԼՕԼԷԹ, իր սեղը գամուած. — Մնա՛ք բարով, պարոն:
ՌՌԻՇԱՐ. — Երթա՛ք բարով, եթէ կ'ուզէք:

Յուզում կայ Ռուսարի ձայնին մեջ: Անիկա քերել խո-
ւարհութիւն մը կ'ընէ, ու ձախ դռնէն գուրս կ'ելլէ: Լօլէք
պահ մը հոն կը մնայ անշարժ. լեռայ արտի մը վրայ կը
էտուի, ու հոն կը կենայ անշարժ, քերելը վար կախած:



ՏԱՍՆԱՎԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԼՕԼԷԹ, ՏԻԿԻՆ, ԿԱՐԶԷՆ, յեռայ ՊԱՐՌԻՇԻՆ

ՏԻԿԻՆ, ԿԱՐԶԷՆ, հեռուէն. — Ա՛հ, սիրելիս, հո՞ս էիք
Լօլէք սեղէն չի շարժիր: Տիկին կարգէն կը մօտեցայ: Ի՞նչ
ընէք: Ես այ ձեզ կը փնտաէի: Ինչո՞ւ այդպէս սմբեր
ք...: սա ամսոյն վրայ... հիւանդ էք...:

ԼՕԼԷԹ. — Ձե՛մ դիտեր թէ ի՞նչ եղայ յանկարծ...:
Ես մարդիկը... երեկոյթը...:

ՏԻԿԻՆ, ԿԱՐԶԷՆ. — Ի՞նչ եղաւ որ երեկոյթին մէջ...:
Եկէ՛ք, աւելի գուարթօրէն վերջացնենք երեկոյթը:

ԼՕԼԷԹ. — Չարմանայի՛ բան... ի՞նչ կ'անցնի կը գառ-
այ հոս...: Կարծես թէ այս իրիկուն ամէն ինչ ինծի դէմ
կ'ելլէ... ամէն բան ինծի դէմ պատրաստուած է...: Սա-
կայն, ձեռքէս եկածը կ'ընեմ...: Ի՞նչ կայ, ի՞նչ կայ:

ՏԻԿԻՆ, ԿԱՐԶԷՆ. — Գիշերուան ժամը տասնըմէկին,
արդ տասնի գաղափարներ չունենար, չխտակը:

ԼՕԼԷԹ. — Յանկարծ, ասանձին զգացի ինքզինքս...
Ա՛հ, ըստորովին ասանձին...: Բան մը կայ որ չեմ հաս-
կանար... հոս եղածներուն... իմ շուրջս անցած դարձած
աններուն իմաստը...: Թեթեւ դիմովութիւն մը ունեցող
արդու մը զգայութիւնը ունեցայ...: Կը տեսնեմ որ

շուրջս կը խնդան, ու կը շարժին... բայց ինքզինքս ա-
սանձին կը զգամ... ասանձին... :

ՏԻԿԻՆ ԿԱՐՁԷՆ. — Յոյ ութեան արդիւնք է: Երբեմն,
եւ ալ այլ բաները կը զգամ մեծ վաճառատուններուն...
կամ ասորերկրեայ երկաթուղիին մէջ... :

ԼՕԼԷԹ. — Կէս ժամէ ի վեր, ինծի այնպէս կը թուի
որ իմ առնա չեմ գտնուիր, ու կը նեղուիմ՝ իմ վրաս խըն-
դայնուն համար... : Ինքզինքէս կ'ամչնամ... : Քիչ մը ա-
սաջ, հեղնական ծիծաղներ կ'արձակէին... : Չախո՛րդ բան
չէ... :

ՏԻԿԻՆ ԿԱՐՁԷՆ. — Բայց ոչ... ինչո՞ւ ձախո՛րդ ըլլայ:

ԼՕԼԷԹ. — Ես ալ չեմ գիտեր... : Կ'ուզեմ ննջասենեակ
երթալ, պատկերու համար... : Այլ կը բաւէ: Զի՛ւթ... : Լայս
կուգայ:

Մափահարութիւնները կը սկսին: Պարերը վերջացած են
Իգաճորա Լօրեճ գուրս կ'ելլէ աշտուժ ֆայերով:

ՏԻԿԻՆ ԿԱՐՁԷՆ. — Ինքզինքնիդ բռնեցէ՛ք քիչ մը...
Պարերը աւարտեցան... : Հիմա պիտի մեկնին... : Ինք-
զինքնիդ բռնեցէ՛ք: Ահա՛ պարուհին:

Լօրեթ ոտքի կ'ելլէ յոգնած ու շօմած:

ԼՕԼԷԹ, պարուհիին. — Իսկոյն պիտի մեկնի՞ք:

ԻԶԱՏՕՐԱ. — Ի՞նչ ըսիք:

ԼՕԼԷԹ. — Իսկոյն կը մեկնի՞ք:

ԻԶԱՏՕՐԱ. — Այո՛... կառքս վարն է... փոքր եղ-
բայրս ալ մէջն է... : Վերարկուս պիտի ասնեմ:

Պարուհին սանդուխտն կ'ելլէ, որուն վերի կողմը՝ բազմի-
քին վրայ դրած եր ֆառեկաւոր պասսաճէ «սախ» վերարկու մը

ՏԻԿԻՆ ԿԱՐՁԷՆ, Լօրեթին. — Պատճառը հասկցայ: Զե-
ամուսինը պահ մը ասաջ քիչ մը խտառութեամբ վարուե-
ցաւ ձեզի հեա... ասոր համար է որ տակնուվրայ
դած էք:

Պարուհին նորէն վար կ'իջնէ ու վերարկուն կը հագնի



ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԳ ՏԵՍԱՐԱՆ

ՄԻԵԻՆՈՅՆ ԱՆՁԵՐԸ, ԿՐԷՎԻԼ, ՌՕԼՍԻՆԻ,

յետոյ ՊԷՐՆԻԷ ԵՒ ԻՇԽՈՆՈՒՂԻՆ, ԻՇԽԱՆԸ, ԹԱՊՈՒՐԹ

ԿՐԷՎԻԼ, — Վայրկեան մը... ձեզի պիտի ընկերակցիմ...: Բայց անտիկներդ չվիրաւորուին:

ԻԶԱՏՕՐԱ, — Հոգ մի՛ ընէք... բան մը չեն ըլլար... փոքր հրեշտակները ինծի սորվեցուցած են թէ ի՛նչպէս ոտք կը կոխեն երկրին վրայ... ու կեանքի մէջ չեն վիրաւորուիր երբեք...:

ԿՐԷՎԻԼ, — Սակայն, բարա չունիք եղեր:

ԼՕԼԷԹ, պարուհիին, պանֆսումսեր տալով անոր. — Ձեզի պիտի ընկերանամ:

Երկուքը միասին դուրս կ'ելլեն ձախակողմէն: Լաճարկ եւ Թապուրօ կը դիտեն երկու կիները, որոնք խնդալով կը հեռանան:

ԼԱՅԱՐԿ և ՌՕԼՍԻՆԻ, Կրեվիլին. — Ի՛նչ, կծիկը կը գնէ՞ք:

ԿՐԷՎԻԼ, — Պիտի ջանամ պարուհիին թեւէն բռնել... և կատքէ գնել զայն:

ԼԱՅԱՐԿ, — Բայց փոքր եղբայրը կատքին մէջն է, կարծեմ:

ԿՐԷՎԻԼ, — Ի՛նչ փոյթ, դանակէն դուրս պիտի նետեմ զայն:

Կրեվիլ դուրս կ'ելլէ: Լաճարկ ու Ռօլսինի աշխատանոց կը դառնան: Իմացնին կ'ելլէ թխանուհի՞ն, եւ որուն կը հետել Պերնիէ:

Պէ՛ՐՆԻԷ, բարձրաձայն. — Անպատճառ պիտի մեկնի՞ք :
ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Պէ՛տք է որ մեկնիմք : (Աջակողմի
հասարակին վրայ նետուած վերարկուն ցոյց տալով) Աւրեմն,
ինձի տուէ՛ք սա վերարկուս . . . :

Պէ՛ՐՆԻԷ. — Իշխանը չի գտնուիր :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Ռօյտիսի ձեռքը կը սեղմէ . . . Տիմա
կու գայ : (Յաճ ձայնով՝ Պերնիէի, որ վերարկուն կ'երկարէ). —
Հագցո՛ւր :

Պերնիէ յամբողջ կը հագցնէ վերարկուն :

Պէ՛ՐՆԻԷ. — Աւրեմն վաղը . . . նկարանիստի համար :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Ոչ, սիրուքտելու համար : Աւելի
լաւ կ'ըլլայ :

Երկուքը միասին դեպի ձախակողմ կը յառաջանան, դրան
մօտ, ուրկէ դուրս ելած էին Լօլէք ու պարուհին :

Պէ՛ՐՆԻԷ, վերարկուն իշխանուհիին հագցուցած պա՛-
հուն. — Փափաք կը գգամ ձեզ համբուրելու :

Լօլէք նախասենեակէն դուրս կ'ելլէ ու անոնց ետին կը
զտնուի բնականաբար :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ, ցած ձայնով. — Միայն չնչէ՛ գիտ . . . :
Այս գիշեր, քու էութիւնդ է որ իմ հետս կը տանիմ, այն-
պէս չէ՞ :

Պէ՛ՐՆԻԷ. — Ամբողջ էութիւնս, միթէ չե՞ս գգար ա-
տիկա :

Լօլէք հոն է, ու կը լսէ խօսքին այդ մասը : Գրեթէ ան-
ոնց անջեւ կը զտնուի, գունաս ու խստադեմ : Յանկարծ,
կը փափրէ այն վերարկուն զոր Պերնիէ իշխանուհիին
ուսերուն վրայ կը գետեղէր, ու գետին կը նետէ մեծ ուժգնու-
թեամբ :

ԼՕԼԷԹ. — Դո՛ւք . . . դո՛ւք . . . : Ափսո՛ս : (Սպառնական

բռունցքով: Այդ պահուն իշխանը կը հասնի աշխատանոցէն: Լօյէք կը նստարե իշխանը ու անոր երեսն ի վեր կը գոչե. մասնանիշ ընելով: *Չեր կիւնը... ձեր կիւնը...*

Բառերը կը խեղդուին կոկորդին մեջ, բազուկները կը գողան, աղետալի երկար ճիշ մը կ'արձակե ու գիտին կ'իյնայ կունակի վրայ, ջղային գալարումի ենթակայ:

ԻՇԽԱՆԸ, վերարկուն կը վերցնէ գետնէն, ու անապա-
րանքով դեպի դուռը կը հրէ իր կիւնը. — *Անցէ՛ք... բայց
ինչո՞ւ չէք անցնիր: Սիրելիս, սաղակալի բաներ են ա-
սոնք... այնպիսի բաներ որոնցմէ խուսափելու էիք...*

Իշխանը եւ իշխանուհին դուրս կ'ելլեն: Պերնիէ օգնու-
թիւն փութացած է իր կնոջ մօտ, որ, գետնին վրայ փրո-
ուած, կ'աղաղակէ: Ընդհանուր շարժում մը առաջ եկած է
այդ աղմուկէն յետոյ: Աշխատանոց կը դառնան հրաւիրեալ-
ները: Հետզհետէ հոն կը հասնին, գլուխնին ունենալով Թա-
պուրօն: Սա բառերը կը լսուին. «Ի՞նչ է: Ի՞նչ կայ:»

ՊԷՐՆԻԷ, Թապուրոյին. — *Դուռը գոցէ՛, դուռը գոցէ՛:*
*Անիծա՛ծ: Թոյլ մի՛ տար որ ներս մտնեն: Բանալիով
կղպէ՛...: (Թապուրօ աշխատանոցին դրան վրայ կը նետուի,
երեք-չորս հոգի ետ կը մղէ, հրմտակելով զանոնք, ու բանալին
կը դարձնէ փականքին մեջ: Պերնիէ կը փորձէ գետնէն վեր-
ջրնել Լօյէքը:)* *Օ՛հ, օգնէ՛ ինձի որ վերցնեմ:*

Պերնիէ եւ Թապուրօ ձախ կոպիլը զնուտոյ բազկաթոռին
վրայ կը փոխադրեն Լօյէքը: Բայց աշխատանոցին դուռը
փոքր ֆառակուսիներով սպակիկներ ունի. հինգ գլուխներ
կ'երեւան հոն:

ՊԷՐՆԻԷ. — *Վարագոյրը վար քաշէ՛...: Շուտ ըրէ՛...
քաշէ՛:* (Թապուրօ դրան վարագոյրը կը ֆառէ: Այդ գործը
լնցած է: Առանձին են անոնք: Ամէն կողմ գոց է: Չափա-
զանց շուտ տեղի ունեցած է այդ ամէնը: Լօյէքի հեծեծուն

հուելիւնները մեզմացած, խուլ ու միօրինակ սղբ մը կը դառնան:) Սեղանին վրայ քիմիական աղեր չկան միթէ...: Տիկին Կարգէնէն կ'ուզե՞ս...: Անպատճառ կ'ունենայ...: Կանչէ՛ Տիկին Կարգէնը: Չգէ՛ որ միայն ան ներս մտնէ:

Թապալուօ կես մը կը բանայ դուռը: Պահ մը կը լսուի երկուքին խօսակցութիւնը: Թապալուօ քոյլ կուտայ որ Տիկին Կարգէն ներս մտնէ:

Տիկին, ԿԱՐԳԷՆ, դեպի այն նստարանը վազելով, ուր Լօյէթ տարածուած է — Ա՛հ, Տէր Ատառած, Տէր Ատառած:

ՊԷՏՆԻԷ.— Բան մը չկայ: Չգային թեթեւ նոպայ մըն է... յոգնութենէն...: Երբեմն կը պատահի...: Բան մը չէ: Քիմիական աղեր ունի՞ք...: Շնորհակալ եմ...: Յետոյ ձեզի բան մը ըսեմ... Թապալուօյի հետ ջանացէ՛ք բոլոր հիւրերը ձամբել աշխատանոցի կողմէն: Այնպէս չէ՞...: Կրցածնուդ չափ բացատրութիւն մը տուէ՛ք հիւրերուն...:

Տիկին ԿԱՐԳԷՆ.— Կը նախընտրեմ որ հոս հսկեմ Լօյէթի վրայ...: Դուք անձամբ ձամբեցէ՛ք հիւրերը:

ՊԷՏՆԻԷ.— Չըլլա՛ր, ոչ սք հոս մնալու չէ, և ոչ իսկ գուք: (Թապալուօյին՝ ցած ձայնով:) Ես ալ իմ պատճառներս ունիմ անշուշտ...: Գնա՛, բարեկամս, մեզ առանձին ձգէ՛...: Ամէն սարգ ցրուելու է ուզածին պէս... աւելի գէշ:



ՅԱՍՆԵՐԵՔԵՐԱՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԼՕԼԷԹ և ՊԷՏՆԻԷ, առանձին

Լօյէթի աչքերը սեւեռուն են, ու խոտը բացուած: Իր առջեւ կը նայի, յամբ, ցաւագին ու կանոնաւոր խօսուեալ մը, որ կոկորդեն կը լսուի:

ՊԷՏՆԻԷ.— Լուր՛ւ... Լուր՛ւ... կը լսե՞ս: Օ՛ն... ուժով չնչէ՛: (Լօյէթ ձեռքով ետ կը հրէ սրուակը, առանց շարժելու ո՛չ իրանք եւ ոչ ալ գլուխը:) Լուր՛ւ... իմ նո-

նայիկ Լուր՝ . . . ինծի նայէ՛ . . . երբ ինքզինքդ դանեա, այն
ատեն պիտի բացատրեմ քեզի . . . Կեցի՛ր լոյսը աչքերուդ
մէջ կը մանէ: (Կը մարկ ձեղունի Բանի մը լամբարները):
Հիմա աղէ՛կ է: Պատասխան տո՛ւր . . . Օ՛հ, ի՛նչ անմիտ
բաներ են ասոնք: Կ'երդնում որ եղածը չարժեր . . . մարդ-
մարդկային տկարութիւն մը, որ ո՛չ մէկ փոփոխութիւն ա-
ռաջ կը բերէ: Դուն շատ լաւ դիտես թէ նկարիչ ըսուածը
ի՛նչ է, ա կը հասկնաս եղածը, այնպէս չէ՞: Գլուխ դլխի տե-
սակցութիւնը . . . եղած խօսքերը . . . Ասկէ՛ զատ, Լուր,
մեր անհրաժեշտ վերելքը դէպի աշխարհիկ ընկերութիւնը ու
բարձր գասերը, քիչ մը վրդովում կը պատճառէ
մեզի . . . Այեծփառքի մտանում ենք . . . Պէտք է ճշ-
դել . . . Դուն ի՛նչ կարծիք ունիս: Ինչո՞ւ չես խօսիր: Ինչո՞ւ
չես ազեր խօսիր . . . Ըսէ՛, ինչո՞ւ . . . Լա՛ւ . . . (Պերնի
կը սկսի շափշփել): Ինծի նայէ՛, Լուրէթա . . . վիշտերու մէջ
մի թաղուիր: Միտքդ դրած էս որ բերանդ չբանաս: Կը
աստապի՞ս դեռ: Տաւ մը կը դգաս . . . Զուր կ'ուզե՞ս:
(Լուր չի պատասխաներ: Բան մը չըսեր, տեղէն չի օտար:
Հիմա արցունքներ կը հոսին աչքերէն): Բայց մինչեւ վերջը,
աչքերդ այսպէս սեւեռած չպիտի մնաս անշուշտ . . . Մտիկ
բրէ՛, եթէ գիտնայիր որ շատ պարզ բան մըն է պատահածը:

ԼՕԼԷԹ. զողողոջուն ձայնով մը. — Որքան կը սիրէի
քեզ . . . որքան կը սիրէի քեզ . . .

ՊԷՐՆԻԷ, էիչ մը ապահովում, կը մօտեցայ. — Բայց
ես այ քեզ կը սիրեմ . . . Ոչ մէկ բան փոխուած է . . . Ար-
դէն, կեանք բաժնի ի՛նչ է . . . Ճամբայ մը, այնպէս չէ՞:
Լա՛ւ, ի՛նչ կայ ճամբուն վրայ . . . սոհասարակ . . . եզերք-
ներուն վրայ . . . Մտեր . . . գասիթափեր . . . իմ գատ-
ութեանս հետեւէ՛ . . . աւասիկ ծառ մը . . . ուրեմն . . .

ԼՕԼԷԹ. — Որքան ասանձին եմ, Տէ՛ր Աստուած . . .
որքան ասանձին . . .

ՊԷՐՆԻԷ. — Զափազանցելու բան չկայ, շիտակը:

Դուր յուսիկ կը բացուի, Տիկին կարգէն գլուխը ներս

կը խորե ու ոսկերուն ծայրին վրայ կոխելով, ներս կը մտնէ:
Մեղմաձայն խօսակցութիւն Պերճիէի հետ:

Տիկին ԿՍՐՁԷՆ. — Ամէն մարդ կը մեկնի...: Ապահով
եղէք: Ամէն բան շատ լաւ անցաւ: (Պերճիէ նշանացի կը
հասկցնէ որ Տիկին Կարգէն առանձին ձգէ զինքը, վախնալիք
բան մը չըլլալուն, ու սենեակէն հեռանայ: Տիկին Կարգէն
կը մօտենայ, ձեռքը Լօլէթի երկարած, ու այս վերջինն ալ ձեռքը
կը կարկանդակ, առանց երեսը նայելու:) Գիշեր բարի, սի-
րեմ...:

Ու Տիկին Կարգէն կը հեռանայ ոյնպէս, ինչպէս որ ե-
կած էր: Լօլէթ կը թեկուի յանկարծ: Ուժգին շարժուածելով
մը՝ իշխանուհիին նուիրած գոհարեղէնը շփակէն կը հանէ
ու հեռուն կը նետէ:

ՊԷՐՃԻԷ, շտապ. — Ի՞նչ է աս: Լօլէթ հեծկլտանքի նո-
պայ մը կ'ունենայ, ու յորդ արցունք կը բախէ:) Լուչմ'ւ,
Լուչմ'ւ, այդպէս մի՛ լար: Գիտես թէ միշտ կը սիրեմ
քեզ...: Էականքը աս է:

ԼՕԼԷԹ, Հասկօեայ բառերով ու արտասուտայից. — Ո՛չ,
ձգէ՛... կը մտիմ, հով մի՛ աար...: Ա՛ն, ս'րքան կը մը-
սիմ...: Ո՛րքան առանձին կը դգամ ինքզինքս...:

Լօլէթ կը սարսռայ:

ՊԷՐՃԻԷ. — Արդարեւ, սաստիկ ցուրտ կ'ընէ այս սենե-
կակը, Գիտես որ շքմիքնէն տեղաւարուած չէ տակաւին...:
Օդի հոսանքին մէջ կը դանուիս...: Եկո՛ւր, վերի սենե-
կակը, անկողինդ պառկէ՛...: Հոս տնկանդիսա ես... հոն,
աւելի լաւ բացատրութիւններ պիտի տամ քեզի:

ԼՕԼԷԹ. — Ոչ, ո՛չ... կ'ուզեմ հոս մնալ... ամբողջ
գիշերը լալով անցնել... այսպէս կ'ուզեմ...:

Լօլէթ բարձրուն վրայ կը դարձնէ գլուխը: Ու կը լսուի
անոր լացը տղու մը պէս:

ՊԷՐՃԻԷ. — Ինձի նայէ՛, Լուչմ... շարութիւն չու-

դիր... : Վերը փոքր անկողինից մէջ, աւելի հանգիստ պիտի ընես... ու հոն պիտի խօսու ըռտինք... :

ԼՕԼԷԹ. Ոչ, վերջացո՛ւր... վերջացո՛ւր... Թո՛ղ ձգես օձիքս :

Պէ՛րՆԻԷ, փորձելով վերցնել Լօլէթը. — Քեզ պիտի քնացնեմ, եղածը բացատրելով... այն ստան պիտի հասկընաս... հոն... քու կարծիք մարդուց ուսին կրթնած... ան թէկու քիչ մը խիստ... բայց սիրտը կակուղ է... : Քալէ՛, երթանք... :

ԼՕԼԷԹ. — Օ՛հ, վիշտ ունիմ... : Մեծ վիշտ ունիմ... :

Պէ՛րՆԻԷ. — Ուրեմն, չե՞ս գար : Ի՛նչ փոյթ... բազուկի ու ժով պիտի սանիմ քեզ... :

ԼՕԼԷԹ, սապկեցելով. Ոչ :

Պէ՛րՆԻԷ. — Տղու մը պէս պիտի քնացնեմ քեզ :

ԼՕԼԷԹ. — Ոչ, ո՛չ :

Պէ՛րՆԻԷ. — Ոտքերդ գետին մի՛ դարնիր... Չգէ՛ որ սանիմ... : Նա՛... հիմա... պտճիկ ընելու կ'երթանք : (Լօլէթ ընկվզում չի յայտնեմ, առաւելայի մը պէս Պերնիէ իր քեւերուն մէջ կ'առնէ գայն:) Մ՛շիկ մ՛շիկ կը քնանաս... :

ԼՕԼԷԹ. — Վիշտ ունիմ... մեծ վիշտ ունիմ... :

Պերնիէ դեպի սանդուխ կը սանի Լօլէթը, գրեթէ գրկամ :

Պէ՛րՆԻԷ. — Հուսա՛, մօտիկն է... : Եկո՛ւր, եկո՛ւր :

ԼՕԼԷԹ, Պերնիէի քեւերուն մէջ բաղուած, թոյլ կուսայ որ զինքը սանի փակուսելով, ու կը հեծկցայ. — Խե՛ղճ Լուլու, քու խե՛ղճ Լուլուդ... :





Բոլոր Նապրան իշխանուհիին աշխատանքը Ան Բ'Օնորտ արուարձանի
 իր ապարանքին մէջ: Խորը, ապակեպատ խորը մը, որ կը նայի ապարան
 քին սեփական պարտեզին վրայ: Էլիզէի մօտիկ, Կուպրիէի ծառայիին վրայ
 գտնուող մեծ պարտեզներէն մէկը կը ձեւացնէ ան: Աջակողմը, նախասեն-
 եակին վրայ բացուող դուռ մը: Իսկ ձախակողմը՝ փոքր դուռ մը, որ սնա-
 բաժնիներուն վրայ կը նայի: Ճոխ աշխատանք մըն է, անքերի նաւակով
 յարդարուած, հենովական հին թախտ օրացներով: Մեծ երգեսն մը, աջա-
 կողմը, որմանկարներուն մաս կը կազմէ: Քարիէզի կողմէ քանդակուած
 դուռ մը: Աթուակի մը վրայ գահանդի մը կը տեսնուի: Պատին վրայ
 կիսուածանկարէ մեծ հարթաճանդակ մը, սպիտակ ու կապոյտ, հաւանաբար
 Լուիս Տէլլա Ռօպպիայի կողմէ կերտուած: Եռոսանի մը վրայ՝ վենեսիկցի
 Քարթայիօ նկարչին մէկ գործին քնդօրինակուրիսը՝ իշխանուհիին կողմ
 գծուած: Շքեղ չկայ: Չախակողմը, ինչ մը բիւզանդական ձեւով արտ
 մը, որուն վրայ իշխանուհիին իր դիմանկարը հանել տուած է Պրեն Ճօնիս
 Խորը, ապակեպատ խորին մէջ, լայն ու երկայն բազմաջ մը: Վարագայր
 բացուելուն՝ իշխանը մէջտեղի սեղանին առջեւ նստած է իր փախանորդին
 փաստարանի Ռիպէի հետ: Իշխանը բաղուած է մեծ թիկնաթուի մը մէջ, իր
 ծունկերուն եւ ուտերուն վրայ ունենալով գծուած վերակու մը, ու տեսն
 մը շարփաւէ՛ գլխուն վրայ: Կարմրուակ մանիւշակագոյնի թիկնոցակ մը կը կրէ:

ԱՌԱՋԻՆ ՅԵՍԱՐԱՆ

ԻՇԽԱՆԸ, ՓԱՍՏԱԲԱՆ, ՌԻՎԷԷ

ԻՇԽԱՆԸ, անախորժ ու չոր ձայնով մը. — Վստահ է՞ք որ նուիրաատու թիւնը նստարական թուղթով բլլալու է:

ՓԱՍՏԱԲԱՆ, ՌԻՎԷԷ, քուղբերը եւ քղբապանակը կարգի դնելով. — Ես կը նախընտրեմ սա կարգադրութիւնը: Պարտն իշխան, պարզ ստացադիր մը կը բաւէ: Բայց, ի հարկին, նախամեծար կը նկատեմ մանրամասն մուրհակ մը:

ԻՇԽԱՆԸ. — Լա՛ւ... Լա՛ւ...: Ի՞նչ կ'ըսէինք թիչ մը առաջ...: Սիկատէթ մը կ'առնէ՞ք, մէթը Ռիվէ...:

ՓԱՍՏԱԲԱՆ, ՌԻՎԷԷ. — Շնորհակալ եմ, ծխելու սովորութիւն չունիմ:

ԻՇԽԱՆԸ. — Այո՛...: Արժեթուղթերու ընտրութիւնը կ'ընենք երկու սակք հասանալի կամք: Ուրեմն, պէտք չկայ գնահատման ենթարկելու ունեցած քանի մը նկարներու, որոնք միակ շարժումն հարստութիւնս կը կազմեն...: Սակայն, եթէ հարկ բլլայ...:

ՓԱՍՏԱԲԱՆ, ՌԻՎԷԷ. — Չեք արամադրութեան սակ կը գտնուիմ:

ԻՇԽԱՆԸ. — Շնորհակալ եմ:

ՓԱՍՏԱԲԱՆ, ՌԻՎԷԷ. — Պարտն իշխան, շատանց զոյ՞ր առած եմ ձեզի հանդէպ ունեցած անձնուիրութիւնս:

Շառայ մը ներս կը մտնէ:

ԻՇԽԱՆԸ. — Ի՞նչ է ան...: (Սպասաւորին երկարած ափսեին մեջէն կ'առնէ այցեռոմս մը:) Ոչ, չպիտի ընդունիմ այդ անձը...: Ըսէ՛ք որ հոս չեմ...: Սպասեցէ՛ք վայրկեան մը...: Թերեւս նախընտրելի է... այո՛: Վեր առաջնորդե՛-

ցէ՛ք . . . : (Սպասաւորը դուրս կ'երի: Փաստաբան Ռիվիի ուղ-
ղելով խօսքը:) Սիրելի Ռիվէս, հաճեցէ՛ք քանի մը վայրկեան
մնայ յարակից սենեակը, ուր մեր փոքր գործը պիտի պատ-
րաստէք: Այցելուն ճամբելուս պէս՝ ձեզ պիտի կանչեմ:

ՓԱՍՏԱԲԱՆ ՌԻՎԷ.— Ատկէ պիտի օգտուիմ, արժե-
թուղթերու մէկ ցանկը պատրաստելու համար . . . ձեր
տուած ցուցակին համաձայն:

ԻՇԽԱՆԸ.— Այո՛ . . . : Յետո իմ յարկարածինս պիտի
ելլենք միասին, աշխատանոցը իշխանուհիին ձեռքու համար,
որ ժամը շորսին պիտի վերադառնայ, կարծեմ . . . : Ձեր
ինքնահոս գրիչը, եթէ կը հաճիք . . . :

Փաստաբանը կ'երկարե գրիչը:

ՓԱՍՏԱԲԱՆ ՌԻՎԷ.— Իշխա՛ն, խնդրեմ, մի՛ յոգնիք:

ԻՇԽԱՆԸ.— Ապրիլի գեղեցիկ օդ մը կ'ընէ, այնպէս չէ՞:
Այո՛, ստուգիւ, արեւու տաքուկ ճառագայթ մը կը
չողայ պարտէզին վրայ . . . : Արեղակը ու ձերերը լաւ կը
հասկնան գիրար . . . : Մե՛ղք որ իրարմէ կը բաժնեն գա-
նոնք . . . : Ընդհուպ կը տեսնուինք:

Իշխանը սեղանին վրայէն կ'առնէ կրքի սրուակը, ու մը
մը կը խմէ, ու կը սպասէ:



ՆՐԱՐՈՐԳ ՏԵՍԱՐԱՆ

ԻՇԽԱՆԸ, ԼՕԼԷԹ

ԼՕԼԷԹ.— Պարո՛ն . . . :

ԻՇԽԱՆԸ.— Ի՞նչ ծառայութիւն կրնամ մատուցանել
ձեզի . . . : Խնդրեմ, նստեցէ՛ք:

ԼՕԼԷԹ. ղեւքին ֆողը վեր կ'առնէ եւ իշխանին կողմի
մասնամուտած թիկնաբոսը կը մերժէ շարժուձեւով մը:

Ահա՛ ինչդիրը... մանուածապատ խօսքեր չպիտի ընեմ...
Այսպէս է իմ վարուելակերպս... Ուրեմն, ներողութի՛ւն,
պարոն, իմ բացայայտ խօսքերու համար... Գիտէք թէ
գործը ո՛ւր տեղուանքն է, այնպէս չէ՞... Ուրեմն ճշ-
դե՛նք... անոնք կ'ուզեն օձիքնին ազատել մենէ... իրենց
վրայէն նետել, շետեւարար, հոս եկած եմ, ձեզի ըսելու
համար թէ մենք հրկուքս թոյլ չպի տանք որ անոնք ու-
զածնին ընեն, ու մեր քթէն բոնեն այսքան դիւրաւ...
Հաւաքական շահեր ունինք... կ'ուզէ՞ք որ միասին գոր-
ծենք... մեր ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու
համար... :

ԻՇԽԱՆԸ.— Տիկին, չեմ հասկնար թէ ի՞նչ բանի մա-
տին կը խօսիք, և ինչո՞ւ այդ բուն յարձակումը կ'ը-
նէք... :

ԼՕԼԷԹ.— Պարոն, ձգեցէ՛ք այդ խօսքերը... Հիմա
ատենը չէ ձեւացումներ և խուսափումներ ընելու...
Իրողութիւնները չեմ պարտկեր. շատ լաւ գիտէք թէ ի՞նչ
է մեր կացութիւնը... ձերինը, խմինս... Եթտակը, փայլուն
կացութեան մը մէջ չենք գտնուիր։ Ձեր կինը ամուսնա-
լուծում կ'ուզէ, ու իմ ամուսինս ալ միեւնոյն բանը կը
փափաքի... նաևրը տարբերութիւն մը կայ... Բայց ես
միտքս գրած եմ ամէն բան ընել, որպէս զի արգիլեմ
այդ ամուսնալուծումը, կը հասկնա՞ք... Ձեն կրնար ամ-
ուսնալուծման վճիռ արձակել ինձի դէմ, այնպէս չէ՞։ Ու
աշխարհի վրայ չկայ այնպիսի ուժ մը որ կարենայ իմ հա-
ւանութիւնս կորզել, Արդ... ի՞նչ պիտի կրնան ընել, եթէ
մեր շահերը և գործելակերպը միացնենք... Ուրիշ բան
թէ ի՞նչպէս պիտի ապրիմ այնուհետեւ. յետոյ կը խորհիմ
ատոր վրայ։ Ամէն պարագայի մէջ, աղուոր կեանք մը
չպիտի վարեմ... Բայց մենք պիտի թողո՞ւնք որ ոչ
միայն իրարու միասնան անոնք, այլ և վերամուսնանան
մեր քթին ասկէ։ Ա՛հ, պիտի հասկցնեմ անոնց... Միտքս
գրած եմ ինքզինքս պաշտպանել, կեանքս պաշտպանել ա-

մենամեծ կորովով... Երեմիական ողբեր կարդալու ատեն
չէ հիմա... կորով և վճռականութիւն կ'ուզէ...
Ամէն բան պիտի ընեմ...

ԻՇԽԱՆԸ. — Ի՞նչ բան:

ԼՕԼԷԹ. — Ամէն բան... Աղմուկ, գայթակղութիւն...
Ի՞նչ վնաս ունիմ գործին մէջ: Ա՛հ, անոնք կարծեցին որ
իրբ հեղահամբոյր. . բարի աղջիկ մը... պիտի ձգէի որ
երկու բոպէի մէջ խեղդէին զիս, երեք շարժումներ ընե-
լով...: Պարոն, իմ կեանքս, իմ երջանկութիւնս է որ կը
պաշտպանեմ... գէթ ձեռքս մնացած երջանկութիւնը:
(Շեշտը փոխելով): Ու իրաւամբ, խորհեցայ որ, ասանկ
գործերէ բան մը չհասկնալուս, երկուքնիս միասին աւելի
զօրաւոր պիտի ըլլայինք, այնպէս չէ՞... Հաւաքական մի-
ջոցներ ձեռք առնենք...: Այն ատեն միայն պիտի կըր-
նանք յաջողիլ:

ԻՇԽԱՆԸ. — Ի՞նչ բանի մէջ:

ԼՕԼԷԹ. — Ի՞նչ բան պիտի ըլլայ...: Մեր աւնեցածը,
պիտի պահենք... դուք, հարստութիւննիդ, հանգարտու-
թիւննիդ... ես ի՞նչ գիտնամ... ձեր փնտռածը... ես
այ՛ սէրս... օ՛հ, ո՛չ անոր սէրը, որ վերջ գտած է այլևս,
տէ՛ք Աստուած, այլ իմինս... միակ բանը սրուն կը
կառչիմ:

ԻՇԽԱՆԸ. — Ու կ'ենթադրեմ որ ձեր դիրքն այլ:

ԼՕԼԷԹ. — Այո՛, իմ դիրքս այլ...:

ԻՇԽԱՆԸ. — Ի՞նչ միջոց կայ:

ԼՕԼԷԹ. — Կորով...: Երբ անոնք տեսնեն որ մաքեր-
նիս դրած ենք տեղի չառալ, ու վճռած ենք ամէն բան ընե-
լու, աղմուկ ու գայթակղութիւն հանելու...:

ԻՇԽԱՆԸ, ընդմիջելով ԼՕԼԷԹ, հաճախ լռութեամբ
ժուռուկով մը. — Ո՛հ, տգեղ, գէշ միջոց մըն է ասա...: Ամէն
բանէ առաջ, խորհուրդ մը ասմ ձեզի. ո՛չ մէկ աղմուկ...
ընդհակառակը՝ կարելի եղածին չափ քիչ աղմուկ...: Անձ-
նապէս կը խորշիմ աղմուկէն, որ գէշ ծառայութիւն մը կը

մատուցանէ արդէն... : Տիկի՞ն, ձեր գործելակերպը խոր-
շելի կը թուի ինծի, ու այն ճամբան, որուն մէջ կ'ուզէք
մտնել, ապետայի ու շափաղանց անստոյգ կ'երեւայ... :
Մտացայ հարցնելու թէ ծուխը անհանգիստ կ'ընէ՞ ձեզ :
Շնորհակալ եմ... : Հաշտութենէն միայն կարելի է
օգտուիլ. ընդհակառակը՝ աննպաստ դէպքերը և... :

ԼՕԼԷԹ. — Շիտակը, հաւատարմ չի գար : Դուք էք որ
այդպէս կը խօսի՞ք ինծի հետ... :

ԻՇԽԱՆԸ. — Ինչպէս կը տեսնէք, խոհեմութեամբ շար-
ժելու է, խոհեմութեամբ... :

ԼՕԼԷԹ. — Ուրեմն, ձեզի համար նշանակութիւն չունի,
երբ ձեր կիներ գէշ վայրեր յաճախէ : Արիւնք գլուխնիդ չի
ցաակե՞ր միթէ... : Իրա՛ւ որ, ե՛ս եմ տխմարը : Կը բաւէ
ձեզ գիտել, հասկնալու համար թէ ասիկա ի՞նչ ազաւորու-
թիւն կը ձգէ ձեր վրայ... : Ա՛հ, քանի՞ կ'առնես խոս-
տումը... : Ինչո՞ւ եկած էի հոս... դաշնակից մը գտնելու
համար... և տհա կը գտնեմ... :

ԻՇԽԱՆԸ, րևզմիջելով գայն. — Տիկի՞ն, շատ ծեր ըլլա-
լուս, պէտք է յարգէք դիս... (Լօլէթ կանգ կ'առնէ : Լուս-
քիւն :) Եթէ չէք ուզեր որ սաքի ելլեմ իսկոյն, խորհուրդ
կուտամ ձեզի որ այս տեսակցութեան պատշաճող լեզու մը
գործածէք, քանի որ պարտաւոր չէի այս տեսակցութիւնը
չնորհելու... : այսինքն այնպիսի լեզու մը որ նուազ տկա-
րեմական ըլլայ, ժիւլեանի Ակազեմիին օճօվ : Կ'ըսէք թէ
շահքնկերի մը կոչ ընելու եկած էք. արտասո՛ց բան :
Եթէ կ'ուզէք հոսկէ մեկնիլ, լաւ խորհուրդ մը ասնելէ յե-
տոյ, չեմ գլանար այդ բանը... : բայց այնպէս մը ըրէք որ
կարենամ այդ խորհուրդը ձեզի տալ... : Թօ՛ղ ձեզի անհա-
ճոյ շթուի, երբ բսեմ թէ մեր երկուքին շաղերը միե-
նոյնը չեն... : Իշխանուհի Շապրանի և իմ միջեւ ըլլալիք
ամուսնալուծում մը կախում չունի Պէրնիէ ամուլին գործե-
րէն... : Ու ձեր մերժումը իրաւախոհութեան— գիտամբ
կը գործածեմ այս բացատրութիւնը— մասին, չի կրնար եր-

բեք փոփոխութեան ենթարկել իմ գոյութեանս հետ անըն-
չութիւն ունեցող որոշումները: Հասկցա՞ք...: Գլուխնիդ
կը ծռէք... բան մը չէք բտեր այլևս...: Կ'երեւայ որ ա-
ւելի խելօք կը դառնաք...: Աւելի լաւ...:

ԼՕԼԷԹ, գլուխը վեր առնելով.— Ի՞նչ կ'ըսէք...: Ձեր
ըսածը մտիկ իսկ չէի ընել: Ի՞նչ կ'ելլէ ատկէ: Հասկցած
էի, ու հիմա ալ հասկցայ...: Հոս եկած էի միամտօրէն,
ինչպէս միշտ, և ահա՛ կարգադրութիւններու հանդէպ կը
զանեմ ինքզինքս...: Օ՛հ, չեմ գիտեր թէ ինչպէս համա-
ձայնած էք ձեր կնոջ հետ, բայց քանի մը խօսքով հասկը-
ցայ թէ հոս ալ թշնամի եմ եղեր... ամէն տեղ... միշտ
թշնամի... ո՛ւր որ ալ դիմեմ...: Ամուսնիս և ինձի հետ
ունեցած յարաբերութիւններուն մէջ՝ ամէն ոք ցուրտ քա-
ղաքաւարութիւն մը ցոյց կուտայ, ինչ որ տարախոյս չի
վերցնել բնաւ...: Հեռանալուս պէս՝ սա խօսքը կը փախ-
ցընեն իրենց բերնէն. «Ինչո՞ւ չես ձգեր կինդ»: Եւ ահա՛ այդ
խայտառակութիւնը մէկ անգամէն ընդունած պիտի ըլ-
լամ...: Ամէն մարդ անտարբեր ու մեղսակից է...: Ա՛հ,
դուք զօրաւոր էք, ու անոր համար կը պնդէք...: Որքան
լաւ կազմակերպուած է կեանքը...: Ի՞նչ կրնամ ընել ձեզի
դէմ: Օ՛հ, ոչ թէ ձեզի, այլ ուրիշներու համար է խօսքս:
Ամէնուն համար է...: Հասկցայ, ուրիշ տեղ դիմելու է:
(Յուսահատօրէն): Ձեմ ուզեր կորստեան մասնիկ ինքզինքս,
այնպէս չէ...: Անընդունելի բան մը չէ:

ԻՇԽԱՆԸ.— Ու շատ ալ օրինաւոր, տիկին:

ԼՆՈՒՐԻԷ:

ԼՕԼԷԹ, թափ ապարդ ու բնական ձեւով սփի ելլելի յե-
տը.— Պարոն, ներողութիւն կը խնդրեմ, ձեզ անհանգիստ
ըրած ըլլալուս համար...:

ԼՕԼԷԹ ընկճուած ու վիասած երեւոյթով, դեպի գուռը
կ'ուղղուի:

ԻՇԽԱՆԸ.— Այգքան մի՛ վհատիք...: Ուրիշ ծայրայե-

դու թեան մէջ մի իյնաք հիմա՛յալ . . . : Ձգայու մենքու ինչ
յախուռն ոստումներ : Վճռական որոշումով մը հաս եկաք,
և ահա՛, իմ կատարած ընդունելութիւնս կարծես պատ-
ճաս կը դառնայ որ ձգէք հեռանաք հոսկէ :

ԼՕԼԷԹ. — Բան մը չէ, կ'անցնի . . . : Վայրկենական
սպաւորութեան արդիւնք է, այնպէս չէ՞ . . . : Պէտք է որ
ամէն ինչ ձեռքովս ընեմ, ու զինուիմ . . . : Բոլոր այն բա-
ներուն գէ՛մ, որոնց նշանակութիւնն ալ շատ լաւ չեմ հաս-
կընար . . . : Ոչ բարեկամ ունիմ, ոչ ալ ազգական . . . : Նոյն իսկ
չեմ գիտեր փաստաբանին, նոտարին ինչ ըլլալը : Սակայն,
փոխանորդ մը կարգեցի : Ինծի ըսին թէ պէտք է փոխա-
նորդ մը ունենայի . . . : Ինչ պիտի ընեմ հիմա . . . :

Լօլէթ աչեքը խեղճ բացած, մտախոն ու ինքնամիտփ
անձկութեամբ մը կը նայի գորգին : Կարծես բէ ո՛չ իշխանին
եւ ոչ ալ հսն զսնուող ո եւ է բանի վրայ կը խորհի ահ :

ԻՇԽԱՆԸ. — Արդարեւ, մարդկային ընկերութիւնը լաւ
կազմակերպուած է զօրաւորներուն համար . . . : Դուք ալ օրին
մէկը ինկաք ընկերային այն անուաշարին մէջ, որ ա-
մուսնութիւն կը կոչուի . . . : Բայց պէտք է գիտնաք որ
ամուսնութիւնը անվրէպ զէնք մըն է, Լըպէլի հրացան մը՝
սքանչելապէս պատրաստուած . . . : Միայն թէ գործածել գիտ-
նուիւ է . . . : Պէտք չէ կարթին վրայ կոխել, ստանց
հասկնալու այդ զէնքէն : Խորհեցէ՛ք . . . : ասդին ան-
գին դարձուցէք զէնքը, ուսումնասիրեցէ՛ք զայն . . . : Ու
պիտի տեսնէք որ այդ զէնքը կրնայ հիանալիօրէն ծառա-
յել ձեզի, պիտի կրնաք անոր շնորհիւ յաղթական հան-
գիտանալ, ձեռքերնուդ մէջ ունենալով երջանկութեան ու
սպաճանքութեան յաղթաքարտեր . . . : Չեղի կ'իյնայ պար-
տազրեւ պայմանները դաշնագրի մը, ուրիշ երաշխաւոր-
ուած դուրս պիտի գայ ձեր կեանքը եւ ցոյց չպիտի տամ
այդ պայմանները : Ինծի նայեցէ՛ք . . . : Չեր մտքէնս նցածը
կը դուշակեմ, գուցէ մտովի կ'ըսէք, եթէ համարձակու-

թիւն ունիք, թէև մեծ համարձակութեան պէտք կայ, իմ
 մասին այդպէս խորհեալու համար. «Աս քեզի ազատա մար-
 դուն մէկը...»: Այ, այդպէս չէ...: Նկատի ունեցած եմ
 ժամանակաշրջանս և այն ընկերութիւնը, որուն մէջէն
 արհամարհանքով անցած եմ...: Սփռո՛ւ, միջոց չունէի այ-
 լապէս ընելու...: Չեւքս մնացած բանը — փճացած ըլլալով
 այն տարիքին մէջ ուր պէտք է հարուստ ըլլալ —, իմ ա-
 նունս էր, զոր օգտագործեցի այնքան ընդարձակ սահմանի
 մէջ որքան կը թոյլատրէր օրէնքը...: Սեպեցի ունե-
 նայ լաւ վախճան մը, մահուան աղաւթը կայան մը, իմ
 նախահայրերուս խնայելու համար իրենց զաւակին Քիզի-
 քական նուաստացումը... վարձու սենեակի մէջ մահա-
 ցումը... աղքատներուն մեռելակառքը...: Է՛ն, ի՛նչ օր աչ
 ըլլայ, հիմա վստահ եմ թէ մինչև վերջը պիտի կարենամ
 ծիծիլ արեւելեանս սա պատուական ու սուղ սիկանէթի-
 ները... գալով այն ժպիտին որ սիկանէթին կ'ընկերանայ,
 ո՛չ ոք ինձի չափ պիտի կրնայ ըմբոշխնել նշանակութիւնը
 այն արհամարհանքին, զոր ունիմ ուրիշներուն և ինձի
 հանդէպ, միւս բարեւէն ասաջ...: Կենցաղագրութեան
 այս փոքր դասը թո՛ղ բանի մը ծառայէ ձեզի... ուրեմն
 կ'արժէր որ այդ գասը ասյի ձեզի, — ասանց մեծ պատ-
 րանքի...:

ԼՕԼԵԹ, ուժգնօրէն ցցելով իր գլուխը, ու աչկերը
 մարտահրաւերով և քաղութեամբ առլցուն. — Ամէն մարդ
 գործելու եղանակ մը ունի, այնպէս չէ...: Ես սրոշած եմ
 մեռնիլ, արիարար սոստապանելով ինքզինքս...: Ես պիտի
 գործեմ...: Ինձի համար կուտ մը չարժեք կեանքս...
 թշուառութեան մէջ ապրած եմ. գիտեմ անոր ի՛նչ ըլ-
 լալը...: Բայց գալով սրտիս, պիտի պաշտպանեմ զայն:

ԻՇԵՍԱՆԸ, ստի ելլելով ու ցուրտ շեշտով. — Ինչպէս օր կ'ու-
 ղէք: Խնդրեմ, կարճ կապենք այս խօսակցութիւնը: Տի-
 կի՛ն, գիտ շատ յօգնեցնելու չէ: Ծեր ըլլալուս, ուժերս
 խնայելու եմ: Խորհեցէք որ գուք կեանքի քաջաուով շքր-

ջանին մէջ գտնուած ատեննիդ — ու կը մաղթեմ որ երջանիկ ըլլաք և լաւ հասկցուիք — ևս հրածեշտ տուած պիտի ըլլա՞մ աշխարհի փոքր հաճոյքներուն...: Աւրեմն, երթա՛ք բարով, տիկին, ու բարի յաջողութիւն:

ԼՕԼԷԹ. — Մնաք բարով, պարոն:

ԻՇԽԱՆԸ, առաջնորդելով Լօլէթը. — Հաւատացէ՛ք որ ազմուկ հանելու պէտք չկայ բնաւ...: Ամէն բանէ առաջ շահերը, ու միայն շահերը նկատի ունենայու է...:

ԼՕԼԷԹ. — Աէն-թ'Օնօրէ արուարձանէն անցնելով հասկայ, բայց ատենօք հօս նկարի համար եկած ըլլալուս, կը յիշեմ թէ կապրիէլ պողոտային վրայ այ մուտք մը կայ:

ԻՇԽԱՆԸ. — Այո՛... պարտէզէն անցէ՛ք, Շան գ'էլիզէէն դուրս ելլելու համար ուղղակի...: Վար իջած ատեննիդ, իմ կողմէս գոնապանին ըսէ՛ք որ պարտէզին փոքր դուռը բանայ: Ինծի հաճոյք պիտի պատճատէք, եթէ նորափթիթ լիւաներ քաղէք պարտէզէն, առանց քաշուելու...: Երթա՛ք բարով, տիկին...: (Իշխանը դուռը կը գոցէ Լօլէթի վրայ ու զանգակը կը հնչեցնէ: Կապաւոր մը ներս կը մտնէ: Իշխանը՝ ծառային): Տ/կինը զ'երազարձա՞ւ...: Կարձեա թէ օթոյին ձայնը լսեցի...:

ԾԱՌԱՆ. — Այո՛, պարոն իշխան, կէս ժամ առաջ... Տիկին իշխանուհին իր սենեակն է:

ԻՇԽԱՆԸ. — Տիկինէն խնդրեցէ՛ք որ հաս գայ ստիպողական գործի մը համար:

Մտաւն դուրս կ'ելլէ:

ՅԲՐՈՒԳ ՏԵՍԱՐԱՆ

ԻՇԽԱՆԸ, ՌԻՎԷ:

ԻՇԽԱՆԸ, ձախակ ումի գուռը բանալով. — Շատ չմտա՞ք այս սենեակին մէջ:

ՓԱՍՏԱԲԱՆ ՌԻՎԷ.— Բնաւ շմսեցայ. . . : Աւասիկ
մօ աւորապէս, ինչ որ. . . .

ԻՇԽԱՆԸ.— Սիրելի Ռիվէս, իշխանութիէն խնդրեցի որ
հոս գայ. . . այն ատեն վերջնականօրէն նկատի պիտի առ-
նենք խնդիրը. . . : Կ'ուզեմ որ դուք ալ հոս գտնուիք :

ՓԱՍՏԱԲԱՆ ՌԻՎԷ.— Ի՞նչ զիրք պիտի բռնեմ. . . :

ԻՇԽԱՆԸ.— Չէզոք : Արձանագրեցէ՛ք, արձանագրե-
ցէ՛ք. . . ի հարկին, ինծի ուժ տուէ՛ք ձեր ձեռնհասու-
թեամբ. . . .

Քանի՛ մը բապէներ կ'անցնին :



ՉՈՐՈՐԴ ՏԵՍԱԲԱՆ

ՄԻԵՒՆՈՅՆ ԱՆՁԵՐԸ ԵՒ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

ԻՇԽԱՆԸ.— Սիրելի բարեկամութիւն, ներողութիւն կը
խնդրեմ, ձեզի անհանգստութիւն պատճառած ըլլալուս հա-
մար. . . : Քիչ մը առաջ այցելութիւն մը ընդունեցի. . . :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Գիտեմ :

ԻՇԽԱՆԸ.— Բայց գիտէ՞ք թէ ո՛րու այցելութիւնը :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Ո՛չ :

ԻՇԽԱՆԸ.— Տիկին Պէրնիէի :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Ա՛հ, արտունջներ կամ սպասնալիք-
ներ ըրա՞ւ ձեզի :

ԻՇԽԱՆԸ.— Երկուքն ալ. . . (Կնոջը, Ռիվէէն մեկուսի) :
Սիրելի բարեկամութիւն, ուշադրութիւն ըրէ՛ք. հասարակ
ժողովուրդի գաւակ եզոզ այդ կնիկը բաւական նեղութիւն
պիտի պատճառէ մեզի. . . : Այդ կարգի կիներ ձկնավաճա-
ռութի ձեւեր կ'առնեն իսկոյն. . . : Հսկեցէ՛ք անոր վրայ :
Կը զգար՞ թէ կուի պիտի հանէ ան :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Իմ գիտնալիք բանս է ատ :

ԻՇԽԱՆԸ.— Կատարելապէս. . . : Միայն ինքզինքի՞ս

թոյլ կուտամ ձեզի խնայելու այդ բանը, սիրելի բարեկամուհի. . . ու կը խորհիմ որ ուրիշ կողմէ ինչ աւելի իրազեկ էք անցած դարձածին: (Անփոյթ ու բարեկիրք շեշտով մը:) Ուրեմն, ուրիշ նիւթի վրայ խօսինք: Կը հաճի՞ք որ մեր անձնական գործերով զբաղինք վայրկեան մը, քանի որ փոխանորդս Մէթր Ռիվէ հոս է, և պիտի կրնայ իր կարծիքը յայտնել ի հարկին. . . :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ, հազած վերարկուն ցոյց տալով. — Հագուես մը փորձելու վրայ էի. բայց քանի մը վայրկեան կը տրամադրեմ ձեզի: Ուրեմն, մտիկ կ'ընեմ:

Կը նստին:

ԻՇԽԱՆԷ՛. — Ահա՛ ինչ որ կը խորհիմ. . . : Սիրայօժար պիտի ընդունէի ձեր առաջարկած քսան հազար Ֆրանքի կենսաթոշակը, բայց կարգ մը պատճառներով չեմ հաւանիր ատոր:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Ներեցէք սր ձեր խօսքը ընդմիջեմ: Պէտք կը զգամ ձեզի դիտել աալու թէ ո՛չ մէկ բան կը բռնադատէ զիս, այդ նուէրը ընելու ձեզի: Ասկէ առաջ, ըսած եմ արդէն: Փոխանակ ամուսնալուծուելու, կրնամ մեր ամուսնութիւնը շեղեալ նկատելու մասին վճիռ ձեռք բերել դիւրաւ, և պարենագին մը յատկացնել ձեզի. . . :

ԻՇԽԱՆԷ՛. — Շատ ճիշդ է: Բայց իբր լաւ ու պատուական բարեկամներ, պիտի վիճարանինք այն պայմաններուն վրայ, որով պիտի կրնամ վերադարձնել ձեր ազատութիւնը: Անօգուտ է իրաւունքներ արժեցնելը. միայն փափաքներ է որ կը յայտնենք:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Ուրեմն, շարունակեցէ՛ք ձեր խօսքը:

ԻՇԽԱՆԷ՛. — Կարելի է դրամի պէտք ունենամ. . . ձերութեան օրերուն մէջ. . . օրինակի համար, վիրաբուժական գործողութիւն մը կրնայ մեծ ծախքերու դուռ բանալ: Մէկ խօսքով կը փափաքիմ արժեթուղթեր ունենալ իմ տրամադրութեանս տակ. . . : Խելքի դէմ չէ ըսածս. . . :

Հետեւաբար... կենսաթոշակ չեմ ուզե... եւ եթէ ձեզի
& սմար միեւնոյն բանն է, կը նախընտրեմ... :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Ո՞րքան կ'ուզէք :

ԻՇԽԱՆԸ. — Հինգ հարիւր հազար Ֆրանք :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Բաւական խոշոր գումար մըն է :

ԻՇԽԱՆԸ. — Օրինաւոր է : Ձեր ստաջարկած կենսաթոշակին դրամագլուխն է իսկապէս... Գիտեմ թէ ի՛նչ ստարկութիւն պիտի ընէք, բայց ձեզի գիտել պիտի տամ որ... :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ, ընդմիջելով. — Հարկ չկայ... կ'ընդունիմ... :

ԻՇԽԱՆԸ. — Շնորհակալ եմ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Թղթապանակիւ մէջ ունիմ երկու երեք արժեթուղթեր, որոնք այդ գումարը կը ներկայացնեն : Օրինակի համար, ուստիան Ծօսֆաթիւնի բոլոր արժեթուղթերս կ'ուզէ՞ք :

ԻՇԽԱՆԸ. — Ա՛հ, ներկայ պայմաններ... մէջ... :

ՓԱՍՏԱԲԱՆ ՌԻՎԷ, միջամտելով. — Տիկին իշխանուհին չի կրնա՞ր պարտն իշխանին փոխանցել անուանական եւ այլազան արժեթուղթեր... Գ իշխանին միտքը կը հասկընամ. միակ տեսակէ արժեթուղթ մը միեւնոյն բախտին ենթակայ է : Ձեր արժեթուղթերու մեծ մասին ցուցակը ունիմ. օրինակի համար, աիկին, չէք կրնա՞ր (քուղթերը պեպսելու երեւոյթով մը) փոխանցել Իրօթէք Թաթիթի եւ Հուարնի հանքերու արժեթուղթերէն ոմանք :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Ներեցէք : Յառաջիկայ տարի, Հուարնի արժեթուղթերուն կտրօնը վճարուելէն յետոյ՝ սակաքանական շահաբեր գործողութիւն մը պիտի կատարուի, եւ ես ատոր վրայ յոյս դրած եմ :

ՓԱՍՏԱԲԱՆ ՌԻՎԷ. — Հապա թաթիթիները :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Խոշոր եկամուտ ունեցող արժեթուղթեր են, ու հարիւրին վեցէն մինչեւ ութը շահ կը բերեն : Կը հասկնամ ձեր միտքը, բայց... :

ԻՇ ԽԱՆՆԸ. — Շատ լաւ, սիրելի բարեկամուհիս, ձեր
ուզած արժեթուղթերը տուէ՛ք . . . :

ԻՇ ԽԱՆՆՈՒ ՀԻՆ. — Սեղացած, ցուրտ եղանակ մը — Լ.Մ.Ն. :
Էական խնդիրը սա է որ իրարու հետ համաձայնինք . . . :
Ու հիմա, համաձայն ենք, չէ՞ . . . : Մանրամասնութիւն-
ները ճշգրտու առեն ունինք միշտ . . . : Հինգ հարիւր
հազար ֆրանքի արժեթուղթ կ'ուզէ՞ք : Ա՞նչ է. բոլոր
ուզածնից :

ԻՇ ԽԱՆՆԸ. — Այո՛ :

ԻՇ ԽԱՆՆՈՒ ՀԻՆ. — Աւելորդ է ըսել որ ձեր տրամադ-
րութեան տակ կը գտնուին ձեր յարկարամնին բոլոր կա-
րասիները . . . :

ԻՇ ԽԱՆՆԸ. — Պէտք չկայ ատոր : Պիտի ստիպուիմ ամ-
բողջ յարկի մը կարասիները տեղահանել :

ԻՇ ԽԱՆՆՈՒ ՀԻՆ. — Ուզածնուց պէս շարժեցէ՛ք : Չեղի կը
պատկանին այդ կարասիները : Չեղի կուտամ զանոնք :

ԻՇ ԽԱՆՆԸ. — Արդէն հասկցած էի որ այդպէս պիտի
ըլար :

ԻՇ ԽԱՆՆՈՒ ՀԻՆ. — Անշուշտ ձեր նկարները պիտի վե-
րադարձուին ձեզի : Բայց անոնց մէջ կայ նկար մը, զոր
վար գնել կը փափաքիմ, որովհետեւ հոս իրեն յարմար
տեղը կը գրաւէ, ու ինձի համար շատ հետաքրքրական եւ
խորհրդատու գործ մըն է. Ռընուարի գծած նկարին հա-
մար է որ կ'ըսեմ :

Իջաննուհին պատին վրայ ցոյց կուտայ կնոջ մը դիմա-
նկարը :

ԻՇ ԽԱՆՆԸ. — Օր. Քրազիլիթի դիմանկարին համար կ'ը-
սէ՞ք . . . : Անշուշտ, գիտէք որ . . . :

ԻՇ ԽԱՆՆՈՒ ՀԻՆ. — Գիտեմ թէ ձեր տարօրուհին եղած է
ան, և դուք մտադիր էիք այդ նկարը ձգել Քոմէտի-Ֆրանսէզի,
որուն ամենէն գեղեցիկ գերասանուհիներէն մէկը եղած է
այդ կինը . . . : Բայց կ'ուզեմ վար գնել նկարը . . . :

ԻՇԽԱՆԸ, հեղինակաւոր շեշտով մը, ծածկոյթը վրայէն
նկատելով. — Այդ կիներ, ամբողջ տասը տարի, իմ ամենէն
քնքուշ ու պաշտելի տարիուհիս եղաւ . . . : Պէտք է որ իմ
անարիս քով գտնուի անոր նկարը :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Սիրելիս, ինծի այնպէս կը թուի որ
մեր խզումի պայմանները ձեզի նպաստաւոր ըլլալուն, պէտք
է որ ինծի նուէր մը ընէք աղնուօրէն, երբ անձամբ կը խն-
դրեմ . . . : Կը փափաքի՞մ վար գնել Ռընուարի այդ նկարը :
Հաճոյակատարութիւնը ունեցէ՛ք ինծի ձգելու այդ սպաս-
կերը : Այլ չխօսինք անոր վրայ :

ԻՇԽԱՆԸ. — Անգին յիշատակ մըն է ինծի համար :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ, ոտի կ'ելլէ ու խրոխտ շեշտով մը. —
Շատ լաւ, այդ սպասկերը պիտի գնեմ ձեռնէ . . . : Այլ չխօ-
սինք անոր վրայ : (Փաստաբան Ռիվէի), Պարոն, նօթ ա-
ռէ՛ք որ վեց հարիւր հազար ֆրանքի կը բարձրացնեմ նուէ-
րիս գումարը : Կարծեմ թէ իր արժէքէն աւելի գին մը
կուտամ :

ԻՇԽԱՆԸ, շափազանց զուհասած, ու հասակը ցցելով
խրոխտաբար. — Աւելի առաջ մի՛ երթար, սիրելիս, եթէ
ոչ՝ այնպիսի խօսք մը պիտի փախցնեմ բերնէս որ աճուր-
դողի մը մուրճէն աւելի աղմուկ պիտի հանէ . . . : Գունհիկ
մարդիկ կրնան փրփրկած զղեակ մը գնել, բայց յարգանքի
թերացում չունենալու համար, պէտք է սպասեն որ զղու-
կատէրերը դուրս ելլեն շէնքէն . . . : Իմ աւերուն կեանքիս
մէջ, սիրելիս, հոգի մը կայ տակաւին : Սպասեցէ՛ք որ
տանտիրուհին հետանայ հոնկէ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Թիւերու վրայ ծանրանալէ յետոյ
հիմա ալ կը ճառէք : Երկու միջոցներուն ալ կը դիմէք :
Բայց այսքան մեծ աղմուկ հանելու պէտք չկայ նկարի մը
պարզ գնահատութեան համար :

ԻՇԽԱՆԸ. — Ես ալ սիրուած եմ ատենօք, թէեւ այսօր
չստ ծերացած ըլլամ . . . : Ես ալ դիւթիչ ժամեր ապրած եմ
ամենուն պէս, վերը, սենեակիս մէջ կը գտնուի Օր. Վարա-

տէօյլի գիմանկարը... իսկ ձեր սենեակին մէջ դրած էք,
Տիկին Տինանի գիմանկարը. իմ անցեալիս ամենէն սիրելի
յիշատակն է որ ունիք հոս... : Ես կ'ըզամ, մեռած պահուս,
պատին վրայ տեսնել բոլոր այդ կիներուն ժպիտը... :
Բաներ կան, զոր մարդ չի կրնար ձեռք բերել, ո՛րքան
այ հարուստ ըլլայ... : Վաւերական մոմնա մը գնեցի՛ք, իր
երաշխաւորուած բոլոր տիտղոսներով, բայց զոնէ ձգեցէ՛ք
այն սրուակը, ուր տակաւին կը վերապրի ողեսանուած
խկուժիւնը... : Սերիչ ոչ մէկ խօսք այդ մասին, եթէ կը
հաճիք :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Այո՛, ձեր անունը ծախեցիք ին-
ծի... : Ձեզի կը վերադարձնեմ զայն... : Շատ պարզ է
ասիկա, ու չէր արժեր որ այսքան ճանէիք... : Ի՞նչ բանի
դէմ արտունջ կը յայտնէք : Ընտանիքի հօր մը պէս շահա-
գործեցիք զրամը... :

ԻՇԽԱՆԸ, նորէն ժպտադեմ. — Ափսո՛ս, ընտանիքի տղու
մը պէս շահագործեցի... : Բայց չեմ գանգատիր... :
չնորհակալ եմ ձեզի, սիրելի բարեկամուհի... : միայն կը
ցաւիմ որ մեր բարւոք յարարերու թիւնները քիչ մը ցրտա-
ցած են ճիշդ այն պահուն, երբ Բարիզի ամենէն անմիարան
զոյգը կը ձեւացնէինք սքանչելիսպէս : (Իշխանուհիին ձեռքը
կը համբուրէ) : Մէթր Ռիվէ անշուշտ միտքը չպիտի պահէ
այս խօսքերը, այնպէս չէ՛ :

ՓԱՍՏԱԲԱՆ ՌԻՎԷ, ֆիքր իր թուղբերուն մեջ մխրճած. —
Մհ, պարոն իշխան, ես գործի մարդ եմ... : Իատական
Քրանսերէնը միայն կը հասկնամ... :

ԻՆՈՒՐ կը զարնուի :


ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Մտէ՛ք :

ՍՊԱՍԱԻՈՐԸ. — Պ. Պէրնիէ կը հարցնէ թէ արդեօք
իշխանուհին կրնա՞յ զինքը ընդունիլ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Սպիտակ սալօնը առաջնորդեցէ՛ք :
Հիմա կուգամ :

ԻՇԽԱՆԸ. — Ոչ, ոչ . . . Քանի որ ձեր տան մէջ կը
դանուիք, ես կը քաշուիմ հոսկէ . . . Բայց մեծ գոհունա-
կութեամբ պիտի սեղմեմ անոր ձեռքը . . . Եստ համակրելի
է ան: (Մտռան դուրս կ'ելլէ:) Սիրելի Ռիօլէս, վերջնակա-
նապէս պիտի փոխադրուիմ իմ յարկաբաժինս: Առէ՛ք սա-
բանը . . . Ա՛հ, վերաբերուս այ միասին . . .

Իբիանը քեւերուն վրայ կ'առնէ ծածկոյթը, ու գլուխն
այ կը ծածկէ:



ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՄԻԵԻՆՈՅՆ ԷՆՁԵՐԸ, ՊԷՐՆԻԷ

ԻՇԽԱՆԸ, Պերնիէի, որ դրան վրայ կ'երեւայ. — Բարի
լոյս, սիրելի պարոն, հրամանեցէ՛ք . . .

ՊԷՐՆԻԷ. — Իշխանուհին ո՞ւր է:

ԻՇԽԱՆԸ, Պերնիէի ձեռք սեղմելով. — Ներեցէ՛ք որ
չպիտի կրնամ վայելիլ ձեր ընկերակցութիւնը, որովհետեւ
սա պարոնին հետ կարգի գրուելիք գործեր կան: Սակայն
բարեբախտութիւնը կ'ունենամ ձեռքերնից սեղմելու և
ձեզ շնորհաւորելու . . . Հիանալի նկար մը զրկած էք . . .
Արդեօք ձեր լաւագոյն գործն է անիկա . . .

ՊԷՐՆԻԷ. — Եստ ազնիւ էք, իշխան . . . Խեղճուկ
եթիւս մըն է . . .

ԻՇԽԱՆԸ. — Զմայիկ ի արտայայտութիւն մը և ո՞վ մը
ունի: Անշուշտ շատ գոհ էք ձեր յաջողութենէն . . . Իշ-
խանուհին գիմանկարէն դատ՝ ուրիշ նկար մը կը պատրաս-
տէ՛ք Սալօնին համար:

ՊԷՐՆԻԷ. — Իտալիայէն բերած մէկ ուրուագիծս կը
մեծցնեմ . . . Օ՛հ, անշնորհք ուրուագիծ մըն է . . .

ԻՇԽԱՆԸ. — Վստահ եմ որ մայրսին պիտի տեսնենք
 զայն . . . : Յտեսութիւն, պարսն, ու կրկին իմ բոլոր
 շնորհաւորութիւններս . . . : Յտեսութիւն սիրելի բարեկա-
 մ լինի . . . : (Իշխանը խնամեցուքիւն մը կ'ընէ: Դուրս ելած
 պահուն՝ ցած ձայնով կ'ըսէ: փաստարան Ռիվէլ:) Ռիվէլ, սե-
 ղանին վրայ մտցայ սրուակը . . . : (Ռիվէլ սեղանին վրայէն
 աննւար կը վերցնէ եթերի սրուակը, ու Պէրնիէ, յարգովից,
 դո՛ւր բաց կը պահէ իշխանին առջեւ: Իշխանը անխոյր ու
 սիրուն շարժումն մը կ'ընէ:) Խնդրեմ . . . անհանգիստ
 մի՛ ըլլաք, սիրելի պարսն . . . :

Իշխանը դուրս կ'ելլէ վերահաս թելին վրայ, Ռիվէլի
 բնկերակցութեամբ:



ՊԵՅԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ, ՊԷՐՆԻԷ

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ. — Կ'երիւայ որ կ'ինչ հասկէ դուրս
 ելած է:

ՊԷՐՆԻԷ. — Միթէ այդ համարձակութիւնը ունեցած
 է . . . : Տեսա՞ր զինքը . . . :

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ. — Իշխանը տեսած է զայն . . . և ո՛չ թէ
 ևս . . . : Արդէն իշխանը տեսնելու եկած էր:

ՊԷՐՆԻԷ. — Ինչո՞ւ . . . ի՞նչ շարժառիթով . . . :

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ. — Անշուշտ, կը ջանայ գիմադրութիւն
 կազմակերպել, և համոզել իշխանը որ մերժէ ամուս-
 նալուծումը . . . : Ան չի գիտեր թէ որո՞ւ հետ պարձ ունի . . . :
 Բնականորար քեզի իմաց տուած չէ . . . :

ՊԷՐՆԻԷ. — Արդէն, շատ քիչ կը խօսինք իրարու
 հետ:

ԻՇ ԽԱՆՈՒՀԻՆ. — Ի՞նչ կ'անցնի կը դառնայ տանդ մէջ :

ՊԷՐՆԻԷ. — Գուշակածիդ պէս . . . : Լուսթի՛ւն . . . երթեւեկ . . . երբեմն արցունքի կաթիլ մը . . . : Երբ իրարու հանդիպինք, քաղաքավարական կամ բարկաճայթ երկու խօսք . . . դրան մը շատաչիւնը . . . :

ԻՇ ԽԱՆՈՒՀԻՆ. — Շիտակը, շէնչող տուն մըն է եղեր . . . : Ի՞նչ ունիս : Տխուր կ'երեւաս . . . :

ՊԷՐՆԻԷ. — Բօ՛ւ, դուն երջանկութիւնը լիուլի կը պարզեւես ինծի, բայց ես չափազանց դժբախտ եմ . . . :

ԻՇ ԽԱՆՈՒՀԻՆ. — Հէ՛ք բարեկամ, կը հասկնամ թէ ի՞նչ ըսել կ'ուզես : Սակայն . . . :

ՊԷՐՆԻԷ. — Մի՛ խօսիր ատոր վրայ : Ի՞նչ օգուտ ունի : Տալիք պատասխանդ գիտեմ . . . : Լռիկ գործե՛նք ոճիրը . . . : ատանց բան մը ըսելու . . . մարդասպաններու պէս . . . :

ՊԵՐՆԻԷ ձեռքերուն մեջ կ'առնէ գլուխը :

ԻՇ ԽԱՆՈՒՀԻՆ. — Դուն միշտ կը սիրես զայն :

ՊԷՐՆԻԷ. — Ոչ : Ոչ եւս : Բացօրձակապէս ո՛չ . . . : Ահա՛ ինչո՛ւ աւելի դժուոր է անգութ ըլլալը . . . : Երբ մարդ չսիրէ այլեւս . . . արդարատէր կ'ըլլայ, պաղարիւնութիւն կ'ունենայ . . . : Այն ատեն յիմացինը կը դատէ իբր ազգական մը, բարեկամ մը : Սոսկալի՛ բան է : Կը հասկնաս, այնպէս չէ՞ . . . : Կը չքմեղացնե՞ս զիս : Լօլէթի հետ ութը տարուան կենակցութիւնս չի կրնար անհետեւանք մնալ : Այդ անպաշտպան էակը, զոր ճամբուն վրայ կը լքեմ . . . մեծ փոտահութիւն ունէր իմ վրաս : Հայր կարգէն կ'ըսէր ինծի. « Լօլէթ իր գլուխը ձեզի դարձուցած է այնպէս, ինչպէս արեւուն կը դարձնէ . . . » : Պէտք է արիութիւն ունենալ . . . : Մինչդեռ, Լօլէթ իրաւամբ կը հաւատար որ իրարմէ անբաժան պիտի ընթանայինք կեանքի ուղիին մէջ . . . : Գոնէ աղէտ մը մեզ իրարմէ բաժնէր յանկարծ . . . ո՛չ . . . երկար պիտի տեւէ ասիկա . . . հարկ պիտի ըլլայ դո՛հը ջուրին տակ պահել օրերով . . . : Ա՛հ, չես կրնար երեւակայեղ իմ վի-

ճակս: Քիչ մը սուաջ, հոս եկած պահուս, փողոցին մէջ
կտուքերուն զարնուեցայ...: Հէ՛ք կի՛ն:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Ուրեմն ինչո՞ւ այսպէս կը վարուիս:

ՊԷՐՆԻԷ. — Որովհետեւ, քեզ կը սիրեմ... ու չա-
փազանց կը սիրեմ...: Առանց այս սիրոյն...

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Ի՞նչ լու ըսիր...:

ՊԷՐՆԻԷ. — Ա՛հ, մի՛ ծաղրեր...:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Բայց չեմ ծաղրեր, այլ շնորհակա-
լութիւն կը յայտնեմ քեզի:

ՊԷՐՆԻԷ. — Այո՛, կը ժպտիս: Բայց ժպտելու բան
չկայ...: Խենթի մը պէս, անբան արարածի մը պէս կը
սիրեմ քեզ, ու հաւատա՛ որ զարմանալի բան մը չէ ը-
րածս...: Նողկալի է պարզապէս: Առաջին անգամ քեզի
տիրացայ նորամուտիկ մարդու մը նման... այո՛, խոստո-
վանինք թէ վայելեցի իշխանուհին... ինծի պէս նկարիչի
մը անձնասիրութիւնը կը գգուէր ատիկա... բայց, նո՞ւրբ,
հիմա այդպէս չէ...: Դիւահար մը դարձած եմ... չեմ
կրնար ապրիլ, առանց քու վրայ խորհելու...: Ինծի հա-
մար ամէն ինչ ես դուն... այո՛, ամէն ինչ... թէ՛ միտը
և թէ՛ կեանքը...: Ահա՛ ինչ որ զուգադիպեցաւ իմ ճաշա-
կիս, իմացականութեանն ու տաղանդիս յայտնութեանը
հետ...: Չեմ ուզեր այլեւս տեսնել երբեմնի նկարներս,
որովհետեւ իմ անցեալս անհանդուրժելի դարձուցած են:
Կը ժխտեմ անցեալին մէջ կատարած գործերս...: Ծխափող
կը հասի երբեմնի հոգիս, ու փափազ կը զգամ խոյս աա-
լու, կծիկը դնելու... բայց հոս կը մնամ... քուկդ, բոլո-
րովին քուկդ ըլլալու համար...: Մի՛ հեգներ, եթէ գիտ-
նայի՛ր որ ի՞նչ սրտածմլիկ բան է...: Կը տառապիմ...:
(Իօխանուհիին ձեռքը բռնելով): Դէ՛մքիս փակցո՛ւր մորթդ,
ու լուս կեցի՛ր. ի՞նչ կ'արժեն խօսքերը:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Բիէր, դուն չպիտի ըլլայիր հիմակ-
ուան էակը, եթէ չտառապէիր...: Ահա՛ փոքր փրկանքը
այն երջանկութեան, որ քեզի կը սպասէ: Ա՛հ թանկագին

«իրեցեալս, պիտի տեսնես թէ ի՞նչ կեանք պիտի վարենք
դուն և ես... այն կեանքը զոր քեզի կ'ընծայեմ... Քու
արուեստդ, քու ճաշակներդ, քու անկախութիւնդ, հրա-
շալի դարգացում մը պիտի ունենան, իմ ամբողջ հարըս-
տութիւնս պիտի գործածուի, մեր երկուքին կեանքը ար-
դիւնաւորելու համար: Մտաբերէ՛ որ մեր երկուքին կեան-
քը պիտի արդիւնաւորուի վերջապէս... կ'աճապարեմ...
Որքան անկատար էր մեր կեանքը: Ինծի պէս էակ մը չի
կրնար այդ խառնակեցութիւնը ունենալ ձերուկի մը հետ...
կ'ուզեմ շուտով խոյս տալ այդ տափակ ու կեղծապարիշա
ընկերակցութենէն զոր ես փնտսեցի. . . և ուր կը խեղդուիմ
այսօր: Օ՛ն յառաջ... ո՛րքան երջանիկ պիտի ըլլանք.

Պէ՛րՆԻԷ. — Բայց ատ է սոսկալին... Այո՛, հրաշալի
կեանք մը պիտի վարենք... կը դգամ ասիկա, . . . խօլ,
անյուսալի բախտ մըն է արուեստագէտի մը համար, երբ
անիկա կիսատաուածի մը կը փոխուի շնորհիւ այն սի-
րոյն զոր դուն կը տածես... Բայց ո՛րքան ալ մեծ ըլլայ
իմ երջանկութիւնս, այնքան աւելի ինծի սղբալի կը
թուի այն էակը զոր աղջամուղջին մէջ պիտի նետեմ. . .
Խեղճ աղջիկը, Լօլէթ, երջանիկ չպիտի ըլլայ... Գէշ օ-
րեր պիտի անցնէ իմ քովս:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ. — Բայց, քիչ մը չափազանց կը մեղ-
քընաս...: Միտքդ բե՛ր որ ի՞նչ էր նէ, քու քովդ գալէ
առաջ. միտքդ բե՛ր թէ ո՛ւր և ի՞նչպէս ձեռք անցուցիր
զայն... ու ո՛րքան երջանիկ տարիներ պարզեցիր ա-
նոր... խորհէ՛ որ մէկ օրէն միւսը ի՞նչ գիրք պիտի ունե-
նայ, շնորհիւ ինծի, շնորհիւ մեզի: Գոնէ մի՛ չափազան-
ցեր: Ազուոր անուրջ մը ունեցած պիտի ըլլայ ան, մինչեւ
կէս ճամբան միայն ընկերանալով քեզի:

Պէ՛րՆԻԷ. — Այն օգնական ձիերուն պէս, որոնք դեր-
բուկ զասիթափ մը կը բարձրանան, ու կառքին կը լծուին,
այդ վերելքը կատարելու համար միայն... Այդ ձիերը
ձեզի օգնած են իրենց ճիգերով... ու երբ հարթ ճամբան

ելլէք, կառքէն կը քակին զանոնք... Ալ գործ չունին
այդ ձիերը... Ուրիշներուն օգնելու իրենց բաժինը կա-
տարած են, վարձատրութեան արժանի չեն... զատիվեր
բարձրացող օգնական ձիեր ըլլալնուն:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Ես արդարացի կը գտնեմ: Ուրիշ
բան չէին կրնար ըլլալ այդ անասունները: Ստորադաս
գործաւորներ են: Չունին այն օգնիւ արիւնք ու ցեղը,
որոնք անհրաժեշտ են կառքը քաշելու և վարելու համար:
Նախասահմանուած զոհերն են կիտնքի, քանի որ փեղկիկ
արշաւներ կատարելու ճկունութիւնը չունին: Օ՛ն, յառաջ,
Բիէր...: Վրայէդ թօթափէ՛ սա կարեկցութիւնը...: Քեզ
կը տիրեմ անոր համար որ ո՛չ թոյլ և ո՛չ ալ զգայնիկ ես...:
Բայց չե՛ս նշմարիր որ կ'ուզեմ երիտասարդական սխալէ
մը ազատել քեզ...: Ոչ ոք լուրջ բան մը կը նկատէր քու
կնքած ամուսնութիւնդ, այդ օրինաւոր միութիւնդ...:
Աննշան նկարչի անցեալդ տեղի սլիափ տայ քու արուես-
տագէտի և ազնուապետականի հոգիիդ առջեւ, որ թաքուն
կը մնար:

ՊԷՐՆԻԷ.— Ա՛հ, կ'աղաչեմ, անհաճոյ բաներ մի՛ ըսեր
այսօր:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Ե՛ս, Բայց անհաճոյ բաներ ըսողը
ո՞վ է:

ՊԷՐՆԻԷ.— Այո՛... կը կարծես որ չե՛մ հասկնար քու
չեչտոյ:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Ինձի նայէ՛...: Խելքիդ եկեր է:

ՊԷՐՆԻԷ.— Ես շատ լա զիտեմ ըսածս: Էրկանդ
պէս... դուն ալ կը դրդուես ջիղերս: Կը կարծես որ ես
բան մը չնշմարեցի քիչ մը առաջ, երբ ամուսինդ իր գտա-
կին ու ծածկոյթին տակ, քթիս խնդալու ձեւ մը ունէր
գոլորշիացած ջնարակի նմանող փոքր ու խորամանկ աչքերովը:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Տմարդութիւն չուզեր... արտառոց
կռիւներ կը փնտռես:

ՊԷՐՆԻԷ.— Որովհետեւ տանդ մէջ բաներ կան, որոնք

անհաճոյ կը թուին ինծի: Ահա՛ սա երկու լուսանկարները,
որոնք գրուած են հոն, գունաւոր կարտասիին վրայ:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Նիցչէյի և Գերմանիոյ կայսեր սլաւ-
կերներուն համար կ'ըսե՞ս:

ՊԷՐՆԻԷ.— Կարելի է որ քեզի կորով ներշնչող բրօ-
Ֆէստօրներդ ըլլան անոնք, ինչպէս կ'ըսես... ամէն պա-
րագայի մէջ՝ չեմ գնահատեր զանոնք... ու հայրենասիրու-
թիւնս վիրաւորուած կը նկատեմ...:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ, խնդալով.— Որքա՞ն անմիտ ես...
սրամտութիւն չուզեր: Վար իջի՛ր, հոս եկո՛ւր...: Վար
իջի՛ր կ'ըսեմ քեզի...: Ա՛հ, չե՞ս ուզեր գոյ... հոս եկո՛ւր,
կասկածոտ խոչոր շուկի մը պէս, որ միշտ պատրաստ է
խածնելու, ու գգուանքով միայն կը զսպուի...: Ինչօք-
ցա՞ր: Բոլորովին խելօքցա՞ր...: Ներողութիւն խնդրէ՛...:
Չեոքս համբուրէ՛, նայիմ...: Ա՛հ, սնգունքդ կը շարժին,
այտերդ կը գունատին քիչ մը...: Աւելի լաւ...: Օ՛հ,
ի՛նչ ուժով կը խածնէ...: (Թխանուհին կը փայփայէ ա-
նոր մազերը): Ա՛հ, սիրելիս, անհորձ Պօպի, հաւատա՛ որ
զմայլելի կեանք մը պիտի վարենք: Գօրֆուի մէկ անկիւնը,
որ ինծի ծանօթ է, իտէայ բնակարան մը պիտի կառուցա-
նենք: Դուն պիտի շինես անոր յատակագիծը:

ՊԷՐՆԻԷ.— Մեծ մեծ մի՛ ջարդեր... Վենետիկցի
դուքսի մը աղջկան պէս կը խօսիս: Քիչ մը ետքը Ադրիա-
կանն ալ ինծի պիտի տաս:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Ինչ որ քեզի պիտի տամ, այն եր-
ջանկութիւնն է որուն արժանի է քեզի պէս մեծ արուես-
տագէտ մը, մեզի պէս անձեր...: Չե՞ս գիտեր որ մենք
հիանալի մարդիկ ենք...: Հոյակապ, արտակարգ էակներ
պիտի ըլլանք մենք...: Մի՛նչդես, Բարիզի մէջ, մանր
պուրժուաներ միայն կը գտնուին...: Ի՛նչ աղուոր բան
պիտի ըլլայ, երբ ապշութեան մասնենք զանոնք: Հրճուան-
քի, պերճանքի և արուեստի անասունները ըլլա՛նք:

ՊԷՐՆԻԷ, շօտաւորութեամբ.— Կը կարծե՞ս թէ այդ

երկու անձերը իրարու չեն բաւեր . ի՞նչ անհրաժեշտութիւն
կայ օրինաւոր կապերով . իրարու միացնելու զանոնք
Մենք սիրահարներ ենք . աւելի լաւ չըլլա՞ր որ սիրահար-
ներ մեանք միշտ Մեր ամուսնական սպազան զժուա-
րութիւններով շրջապատուած է

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ , ոտի ելլելով . — Այ կը բաւէ , չափը
կ'անցնես Ամէն բան սահման մը ունի Այ ձանձրա-
ցայ այս անստոյգ վիճակէն , որ նախատական կը դառնայ :
Մի՛ պնդեր . . . այլ եւս չեմ կրնար քու սիրունիդ ըլլալ . . .
սիրահար բոնող կիներէն չեմ . . . անօգուտ է , այդ կողմէն
յոյս մի՛ ունենար : Իսկն գիտես որ , սիրային քմայքի մը
վրայ չի դառնար խնդիրը : Մտով ու մտքով կը սիրեմ
քեզ : Ես պէտք ունիմ սիրուելու , ինքզինքս լիովին նուի-
րելու սիրոյ մը Միանգամ ընդ միշտ բաժնուի՛նք ի-
րարմէ , սիրելի՛ս , բայց մեր միացումը չվտանգե՛նք յաւեր-
ժօրէն Իմ վերջին որոշումս տուած եմ արդէն Տա-
րօրինակը սա է որ խնդիրը այդ կնոջ վրայ միայն կը
դառնայ : Բայց ես չեմ ուզեր որ միայն անոր վիշտին վրայ
խօսուի Կարծես թէ . այդ կնոջմէն զատ ուրիշ մէկը
չկայ . ամէնուն բարիք ընելո՞ւս համար է որ բանի տեղ
չեն դներ զիս Բայց վերջապէս , անարդար ու՛նուա-
տացուցիչ բան է : Կ'ընդունիմ որ այդ ազջիկը ինձի չափ
հոգածութեան տարկայ ըլլայ , բայց ես ալ վիշտե՞ր ունիմ ,
եւ ալ զոհողութիւններ կ'ընեմ Աշխարհիկ նախանձելի
դիրքէս կը հրաժարիմ , անստոյգ ապագայի մը բախտին
ենթարկուելու , առժամապէս անկանոն կեանք մը ընդգր-
կելու համար . . . ուրիշներու բախտը կը շինեմ , ու այս ա-
մէնը կ'ընեմ սիրոյն համար մարդու մը , որ կը արտնջայ
չարունակ , ու իբր սճրապարտ կը զրպարտէ զիս : Նոյն իսկ
չեմ գիտեր թէ պիտի կրնա՞նք օրին մէկը ամուսնալուծում
ձեռք բերել այդ կարծեցեալ զոհէն , որ կարող է շատ սու-
ղի ծախել ինքզինքը :

Պէ՛րՆԻԷ. — Մ'հ, անոր հաւանութեամբք ամուսնալուծո՛ւմ, ըլլալիք բան չէ. հիմակու ընէ կ'ըսեմ քեզի:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ. — Դո՛ւն ես ըսողք...: Ուրեմն ի՛նչ բնելու է: Սա աչքս կ'առնեմ այդ անկումը, այդ ճախճախուտքը, առանց գիտնալու թէ անկէ պիտի ազատի՞նք. միթէ վիշտ չէ՞ ասիկա...: Բայց ի՛նչ որ ալ ըլլայ, սա է աէրը, և կամ ես չեմ գիտեր սիրոյ ի՛նչ ըլլալը...: Խանդավառ սիրունի մը կ'ուզէր իբր բազրոտն ծառայել քեզի և ամբողջովին քեզի նուիրուիլ...: Բայց դուն անիրաւ, անհամբոյր ու անհանգուրժելի կը դատնաս: Նոյն իսկ չես նշմարեր ամենէն յանկուցիչ փափկանկատութիւնները...: Գիտնալով որ ժամը չարսին հո՛ս պիտի գաս, տուն դառնալուս պէս՝ սիրոյ արդուզարդը ըրի, ինչպէս կը ցանկաս տեսնել դիս, անակնկալ մը, ուրախութիւն մը պատճառելու համար քեզի...: Ահ, իրաւ որ...: դուն կը խանդարես ապրելու բովանդակ երջանկութիւնը:

Իշխանուհին վրայեկ կը նեճէ վերաբուճ, ու սրճեղութեան շնորհալի շարժուճելով մը երեւան կուգայ, բափանցիկ պատեանի մը մեջ, որ մերկ էր ձգէ թելերը եւ լանջօր: Պերնիէ կը մօտեանայ իշխանուհիին եւ շրթուները կը գրուճ: մե անոր ուսին վրայ: Լռութիւն:

Պէ՛րՆԻԷ. — Մ'հ, քու մտից զօրութիւնը... անլո՛ւր բան է...: Մարդ ինչե՛ր չպիտի ընէ, տիրանալու համար այդ անլուր բանին, այսինքն քեզի... ու բլ՛ամատիս տակ... ես իսկոյն պիտի ձգմեմ զայն... վարդապոյն տորոնի ցօշունի մը պէս... և համբոյրներ պիտի քանդակեմ անոր վրայ...: Տո՛ւր ծոծրակից... վեր հանէ՛ սազերից...: Տո՛ւր...: (Մեկդի փառուելով ուժգնօրէն:) Այ կը բաւէ այսքան խենթութիւն...: Անխմաստ պայքար մըն է: Դուն ալ հասկցար թէ ժամանակ շահիլ կ'ուզէի: Ի՛նչ պէտք կայ անխուսափելի պայմանաժամը ձգձգելու: Ուշ կամ կանուխ, քուկց պիտի ըլլամ, քանի որ ո՛չ մէկ բան պիտի կարենայ

իրարմէ բաժնել մեզ . . . : Բնաջինջ ընենք բոլոր այն բանե-
րը , որոնք իրարմէ կ'անջատեն մեզ . . . : Պէտք է
այդպէս ընել . . . :

Պերնիե վայրագ Եւրոպայի կ'ընէ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ . — Այո՛ , վերջապէս պէտք է կամենալ :
Ատենը եկած է :

ՊԷՐՆԻԷ . — Հեռանա՛նք , հեռանա՛նք , ազանց կտեւնիս
նայելու : Եթէ չկարենաս անմիջապէս մեկնիլ , ես տուն
չպիտի վերադառնամ . . . : Այս իրիկուրնէ սկսեալ , կը ջախ-
ջախեմ իմ անցեալս , կը խորտակեմ իմ կեանքս : Թո՛ղ վրձ-
նական ըլլայ այս օրը . . . :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ . — Այո՛ , արիւթիւնը ունեցի՛ր միան-
գամ ընդ միշտ յաղթելու գթասրտութեանդ և ինձի ատ՛ւր
այն բանը զոր երկար ատենէ ի վեր կը պահանջեմ քեռէ :

ՊԷՐՆԻԷ . — Ա՛հ , քեզի կուտամ բոլոր այն բաները զոր
սէրը կարող է ընծայել :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ , Պերնիեի աչեբուն խորը նայելով . —
Ամենէն գեղեցիկ բանը զոր սէրը կրնայ ընծայել , անգթու-
թիւնն է . . . :

ՊԷՐՆԻԷ . — Լսէ՛ , սոսկալի բան է : Բայց , պիտի վայե-
լիս այդ սէրը . . . կ'երգնում . . . :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ . — Լաւ միտքդ պահէ՛ . . . : Չպիտի մոռ-
նամ այդ խոստումդ , կ'աղղարարեմ քեզի : Եթէ երբեք ա-
նոր հետ կապուիս դարձեալ , ես պիտի ձգեմ քեզ : Այդ
յանձնառութիւնը կստանձնեմ . . . : Պէտք է որ այդպէս
ըլլայ . . . :

ՊԷՐՆԻԷ . — Ինչ բաժնուէ , եթէ չյարգեմ իմ խոստումս
. . . : Կրնանք երջանիկըլլալ . . . : Օհ , ուրիշ սչ ոք , այլ դուն
և ես , ես ու դուն միայն : Այսպէս կրնանք երջանիկ ըլլալ :

Խորը գնաւոյ դուռը մեղմօրէն ու մեծ զգուշութեամբ
կը բացուի : Իբսանուհին եւ Պերնիե իրարու կը նային Եւրո-
պայ : Լօլիթ ներս կը մտնէ , ու դուռը կը գոցէ ուժգնօրէն :



ԵՓԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՄԻԵԻՆՈՅՆ ԱՆՁԵՐԸ, ԼՕԼԷԹ

ԼՕԼԷԹ, իժխանուհիին, որ շարժում մը կ'ընէ դեպի ձախակողմի դուռը.— Մի' հեռանաք... կ'արդիւեմ... կը պոռամ, կը կանչեմ, եթէ տեղերնուդ շարժիք... Միտքս դրած եմ ամբողջ փողոցը իրար անցընել:

Պէ՛ր՛ն՛ի՛, կնոջը մօտ վազելով.— Հո՛ւ ատանկ բան չըլլար: Աղմուկ մի' հաներ... Օ՛ն... դուրս ելլե՛նք:

ԼՕԼԷԹ.— Դուռն լռէ՛... Քեզի հեա չեմ խօսիր... Այս կնոջ հեա է իմ խօսքս... Արդարեւ, մէկուն ձեռքէն էրիկը յափշտակողը պէտք է որ երկու վայրկեանի տեսակցութիւն մը շնորհէ անոր... Նոյն իսկ այդքանն ալ շատ կը տեսնէ՛ք... Ես կ'ուզեմ որ խօսինք... ու պիտի խօսինք:

Բուռն խօսակցութիւն:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ, ինքզինքը գտնելով.— Բայց, ես խոյս չեմ տար, տիկին. հոս կը մնամ: Անշշուկ կրնայիք մըտնել հոս, ու դարձեալ պիտի ընդունէի ձեզ...:

ԼՕԼԷԹ.— Վարն էի... պարտէզին մէջ պահուրած, երբ տեսայ անոր ներս մտնելը... Գիտէի թէ հոս էիք... ցոփութեան մէջ թաթխուած... Դուք, ս'վ կնիկ, կը վախնա՞ք միթէ: Կատարելապէս ապահով չըլլալնուդ, ձեռքերս կը դիտէք: Թերեւս բէվօլլէր մը ունենամ սաքսակին մէջ... բայց դուրսէն կը տեսնուի՞ն ատանկ բաները...:

Պէ՛ր՛ն՛ի՛.— Կ'աղաչեմ, կը պաղատիմ, Լօլէ՛թ... Բու բանականութեանդ կը դիմեմ: Եկո՛ւր երթանք:

ԼՕԼԷԹ, ետ նրելով զայն.— Դուռն լուս կեցի՛ր... Ա՛հ, կը խանդարեմ ձեզ, այնպէս չէ՛... Ի՛նչ հաճելի բոպէներ կ'անցընէիք երկուքնիդ միասին... (Լօլէթ վերէն վար շափշփելով իժխանուհիին, ու հեզնական ծիծաղով:) Սա արդուզարդին նայեցէ՛ք... Լաւ կը հագուիս, սիրելի՛ս, շնոր-

հաւորութիւններս . . . : Հապա ձեր աչքերը . . . : ձեր երկու-
քին սոսկալի՛ աչքերը . . . : Սա փողկապղ շտկէ՛ , տխմա՛ր . . . :

Պէ՛հ՛ի՛ , փորձելով դուրս հանել Լօլէթը .— Այլ կը բուռ-
այս աշխանդակ վէճը . . . : կը հրաւիրեմ որ վար իջնես , եթէ
ոչ՝ թեւէդ պիտի բռնեմ :

ԼՕԼԷԹ .— Ձեզի կ'ըսեմ թէ խօսելիքնէր ունիմ : Ձեր
երկուքին հետ ալ . . . : Ոչ մէկ բան պիտի կրնայ արգելք
ըլլալ ինձի . . . : և ոչ իսկ քու սպառնալիքներդ :

Պերնիէ ցած ձայնով . « Խե՛նք ես , ի՛նչ ես . . . : օ՛ն . . . : ե-
կո՛ւր . . . » Լօլէթի ձայնը կը լսուի , որ յամառօրէն կը պա-
սասխանէ . « Ոչ . . . : ոչ . . . » :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ .— Բայց մի՛ միջամտէք այլ եւս . . . :
Տիկինը իրաւունք ունի . . . : Պարտաւոր ենք բացատրու-
թիւն տալու իրարու . . . : շատ պարզ է :

Պէ՛հ՛ի՛ , գլխարկը դնելով յանկարծ .— Շա՛տ աղէկ ,
թո՛ղ աչքպէս ըլլայ . . . : Բայց լաւ բացատրութիւն մը , ան-
կեղծ ու վերջնական , քանի որ դուն ուզեցիր : Օ՛ն ուրեմն :

ԼՕԼԷԹ , Պերնիէի նայելով .— Վա՛տ , վատասի՛րտ :
(Յանկարծ Լօլէթի դեմքը կը կծկուի ու ձեռքերով աչքերը կը
զոցէ :) Ա՛հ , սոսկալի՛ բան է : Ձէք կրնար գիտնալ թէ ի՛նչ
կը զգամ , երբ երկուքնիդ այսպէս կը տեսնեմ . . . :

Լօլէթի աչքերը կ'արցունեցնէին ձեռքերուն ետին , ու սը-
րունիզները կը դեղնէին :

Պէ՛հ՛ի՛ , շխրօրէն .— Ինչո՞ւ հոս եկար , զաւակս :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ .— կը խնդրեմ , նստեցէ՛ք , Տիկին :

ԼՕԼԷԹ .— Շնորհակալ եմ . . . : Ա՛հ , ուժս չի պակսիր ,
ու միշտ պիտի պահեմ ուժս . . . : (Լռութիւն) : Այո՛ , իրարու
ըսած էք . « Լքանուս նետե՛նք սա նեղացուցիչ կիներ : կին
մը կ'առնեն , կը դորձածեն զայն , և ուզած տեսնենին . . .
փողոց կը նետեն զայն . . . » : Ա՛հ , ձեզի պիտի հասկցնեմ :
Այգքան զիւրին բան չէ : կինը ըսածդ ինքզինքը կը պաշտ-
պանէ . . . : Փորձեցէ՛ք , տեսնեմ . . . : Մանչս , զիս հրապուրե-

ցիր, ինձի հետ ամուսնացար... ու հիմա ըրածիդ վրայ կը
ցաւի՛ս միթէ... աշխարհս՝ պիտի կրնայիր գիտաւ օձիքդ
ազատել... է՛ն ուրեմն, կ'ուզեմ գիտնալ թէ գուք երկուք-
նիդ ի՞նչ մտադրութիւն ունիք ինձի հանդէպ: կ'ենթադրեմ
որ բաւական ատենէ ի վեր կը խորհիք այդ բանին վրայ...
բայց ես իրազեկ չեմ...: կ'ուզեմ իմանալ ինձի վերապահ-
ուած վիճակը...: Օ՛ն, ձեզ մտիկ կ'ընեմ, կը սպասեմ...
կը սպասեմ:

ԼՅԻԹ ԸՆԴԵՐ ԱԵՂԱՆԻՆ ԿՔ ՎԱՐՆԵ յՈՒՈՐՏԱՎԻԿ:

ՊԷՐՆԵՆԻ: — Այո՛, իմ կարծիքովս, աւելի լաւ պիտի
ըլլայ որ մեր գիրքը ճշգինք, նայն իսկ քու օգտիդ համար,
փոխանակ կեղծիքի և քինասխնդրութեան կեանք մը ապ-
րելու... փոխանակ ապագային սպասելու...: Ինքզինքս
չեմ արդարացներ, ու արդարացնելու ճիգեր ալ չեմ բներ:
Ճակատագիրներ կան որոնց գէմ չենք կրնար բան մը ընել. ա-
նոնց ուժէն կը տարուինք բոլորովին: Հետացի՛ր անցնող
երկանաքարէն, որ կրնայ քեզ ջախջախել անօգուտ կեր-
պով...: Նայէ՛ որ կեանքդ ազատես: Շատ լաւ գիտես որ
քեզ սիրած եմ, խորապէս սիրած, ու տակաւին այս բանը
կ'ըսեմ քեզի, գորովալից սրտով...: Պրծի՛ք... երջանկու-
թիւնդ ապահովէ՛... կրնաս այդ բանը ընել, քեզ կը վրա-
տահացնեմ որ տակաւին կրնաս ընել...: Մնացեալին հա-
մար ներողութի՛ւն:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Այո՛, ներողութի՛ւն: Տիկին, էրիկ
մարդու պէս կը խօսի ան: Նայնպէս, ներողութի՛ւն, ձեզի
պատճառած բոլոր չարիքներու համար:

ԼՕԼԷԹ. — Սոսկալի՛ բան է, ինձի այնպէս կը թուի որ
գլուխս պատին գէմ ջախջախուած է, ու երազի մը մէջ կը
լսեմ ձեր խօսքերը... այդ զարհուրելի՛ բաները...: Մա-
հավճիս մըն է որ կը ծանրանայ իմ վրաս: Բիէ՛ր, գո՛ւն
ես այդ խօսքերը ընողը, քու բերնէ՞դ կը լսեմ սա խօսքը.
«Գնա՛, գլխուդ ձարը նայէ՛», ճիշդ այն ձայնով, երբ կ'ըսէիր «-

տենօք. «Իմ ձագճուկս, իմ ձագճուկս...» Ապրիլ, ա՛հ, ի՛նչ դիւրին է ըսելը. բայց զ՛հերեւայ որ դուք չէք գիտեր թէ ի՛նչ է ապրիլը...: Ի՞նչպէս կ'ուզէք որ ապրիմ այսուհետեւ, ջախջախուած սրտով մը...:

ԻՇԽՆՈՒՀԻՆ, ուժգին քափով մը, ու Պերնիէի նշան ընելով որ խօսքը իրեն ձգեւ.— Ձերմապէս կը փափաքիմ կարելի եղածին չափ դարմանել ձեզի հասցուցած ֆնասս, շատ լաւ և ձեզի պատշաճ ապրուստ մը ապահովելով: Ձեր ամուսինն իսկ չպիտի կրնար այդքան ծախսել: Կը խոստովանիմ որ շատ թեթեւ վարձատրութիւն մը պիտի ըլլայ ատիկա:

ԼՕԼԷԹ.— Հիմա ալ ողորմութեա՛ն վրայ կը ճանէք: Շիտակը, ի՛նչ չարժեր ձեր ողորմութիւնը...: Պէտք է ամօթով ընդունիմ զայն... եթէ չեմ ուզեր խշտեակի մը վրայ շնթակիլ: Ուրիշ ճար չկայ:

ԻՇԽՍՆՈՒՀԻՆ.— Իմ ըմբռնումովս, ողորմութիւն չէ ըրած առաջարկս: Հաւատացէ՛ք որ ողորմութենէն շատ արելի գերազանց բան մըն է:

ԼՕԼԷԹ.— Կը յուսամ որ ձեր ըսածին պէս է...: Ամէն ինչ ձեռքէս առնելէ յետոյ, դի՞րք մըն ալ չպիտի ապահովէիք ինձի համար: Ի՛նչ, դրամի՞ վրայ կը խօսիք. այո՛, դրամի պէտք ունիմ, ո՞ ձեր ըսածին պէս, շատ պէտք ունիմ... Դուք հարուստ էք...: Ան որ էրիկ մարդ մը ձեռք անցընելու պերճանքը կը վայելէ, պէտք է գիտնայ թէ ո՛րքան սուղի կը նստի այդ բանը:

ՊԷՐՆԻԷ.— Լօլէ՛թ:

ԻՇԽՍՆՈՒՀԻՆ, նստելով.— Աւելի լաւ, Տիկին: Այդ գետնին վրայ շատ աւելի լաւ պիտի կրնանք իրարու հետ համաձայնիլ: Կ'ուզէ՞ք որ գործնականապէս նկատի առնենք ինքիւրը: Կը թոյլատրէ՞ք որ ձեզի բացատրեմ թէ խընդիրը ի՛նչպէս կ'ըմբռնեմ: Դուք կրնաք ըսել թէ կը սխալիմ, կամ թէ այդ բանը չի գոհացներ ձեզ...: Նախ՝ կանոնաւոր կենսաթոշակ մը պիտի յատկացուի ձեզի... ու այդ կենսաթոշակը պիտի ըլլայ...:

ԼՕԼԷԹ, յեղակարծ զայրոյթով մը ընդմիջելով իշխանու-
 հիին խօսքը.— Չեմ ուզեր ձեր աղտոտ դրամը, ձեզի պա-
 հեցէ՛ք...: Ի՛նչ, կը կարծէ՞ք որ այդ դրամով աղտոտեմ
 ձեռքերս: Սրունգներս կը սկսին դողալ, երբ մտքիս առջև
 կը բերեմ թէ մէկ բնիոն իսկ ողորմութիւն պիտի ստանամ
 ձեռէ: Արիւնը գլուխս կը ցատկէ բարկութենէս, երբ կը
 սկսիք ձեր գձուձ հաշիւները ընել...: Վերջացուցէ՛ք...:
 կը նախընտրեմ անօթութենէ սատկիլ փողոցներու սալայա-
 տակին վրայ...: Կեանքս կը յափշտակէք, ու ատոր համար
 բաւական կը գտնէք սա խօսքը. «Ահա՛, ձեզի դրամ, իբր
 փոխարինութիւն...»: Թշուառակա՛ն, պիտի կրնա՞ք արդեօք
 իմ երջանկութիւնս վերադարձնել ինծի...: (Այս խօսքին
 վրայ՝ իշխանուհին մեկդի կը փառուի յանկարծ:) Թրդեօք
 ինծի պիտի վերադարձնէ՞ք այն մարդը զոր կը սիրէի.
 կը թուի որ մէկ օր իսկ չպիտի կրնամ շնչել, առանց այդ
 մարդուն...: Այո՛, այո՛, սոսկալի բան է այս վատութիւ-
 նը խոստովանիլ...: Ամէն ինչ ձեռքէս կը յափշտակէք ձեր
 դրամին շնորհիւ: Նոյն ինքն Բիէրը դրամով գնած էք ինէ,
 բայց երբեք չպիտի կրնաք դրամով ձեռք անցընել զիս...:
 Ձեր երկուքին առաջարկներն ալ լսեցի: կը մերժեմ, ամէն
 բան կը մերժեմ...: Ամուսնալուծում չկայ...: Ես տեղի
 չեմ տար...: Դուք պէտք է հեռանաք...:

Լօլէթ բռունցքը կ'երկարէ դեպի իշխանուհին:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ շփուելով.— Շիտակը, այսպէս չի կրնար
 շարունակուիլ: Վճռեցէ՛ք մեր բախտը, Պարոն Պէրնիէ...:
 Ինչպէս կը տեսնէք, նեղ դրութեան մէջ կը դնեն զիս...:
 (Հրամայական շեշտով մը:) Պէտք է վճռական ըլլալ այս բո-
 պէիս...: վերջնական ու անվերաքննելի պիտի նկատեմ
 ձեր ընելիքը: Մեր երկուքէն մէկը պէտք է մշտնջենապէս
 բաժնուի ձեռէ:

ԼՕԼԷԹ.— Այո՛, Բայց ես չեմ որ պիտի բաժնուիմ:

Որովհետև, դուն իրաւունք չունիս լքելու զիս: Ինչ պիտի ըլլայ վիճակս: Խորհէ՛ անգամ մը...: Սիրահա՞ր մը պիտի ունենամ դարձեալ...: Բայց դուն վարժեցուցիր որ քեզի հաւատարիմ մնամ, և հիմա չեմ կրնար քենէ դատ ուրիշ մէկը սիրել: Ես չեմ կրնար ապրուստ որոնել, ու ասոր անոր վրայ վազել, այն մարդը գտնելու համար, որ պիտի ուզէ իմ ապրուստս հոգալ: Ոչ այդ ոյժը պիտի ունենամ, և ոչ ալ այդ արիութիւնը...: Ուրեմն, սոսնկութե՞ան մէջ պիտի իյնամ դարձեալ, տաջուան պէս...: Այո՛, այդպէս պիտի ընէի, եթէ զիս ձգէիք այն վիճակին մէջ, ուր կը գտնուէի նախապէս...: Այլ եւս չեմ կրնար այդ բանը ընել: Յանցանքը քուկդ է: Գիտակցութիւնը արթնցուցիր մէջս: Ինչո՞ւ այդպէս ըրիր, Տէ՛ր Աստուած: Ամէն անգամ որ գեղեւումներ կ'ունենայի, զիս կը նեղէիր, որպէս զի քու բարձրութեանդ հասնիմ...: Յաջողեցայ հոն հասնիլ: Վերջապէս, քու փախաքած կրնդ եղայ...: Հիմա չեմ կրնար այլ եւս միւս կրնը դառնալ նորէն: Ալ լինցած է: Պարտականութիւն մը ունիս դուն: Պէտք է վար դնես զիս, ու պիտի դնես...:

Պէ՛րՆԻ՛է. — Ա՛հ, ներողութիւն, կրնաս սիրոյ վրայ խօսիլ, եթէ կ'ուզես... բայց ո՛չ պարտականութեան վրայ. այն ատեն խնդիրը կը փոխուի...: Այո՛, ես ձեւակերտեցի քեզ, ու օգնեցի որ ընկերային վերելք մը ունենաս. բարձր մակարդակի մը վրայ կը ձգեմ քեզ, ինչ որ իբր կռուան կրնայ ծառայել: Կեանքը կարծածէդ աւելի հարուստ աղբիւրներ ունի: Կրնաս ընկերային շրջանակ մը ստեղծել քեզի համար, ու ամէնուն պէս գտնել իմինէս լաւագոյն սէր մը, ու աւելի, շատ աւելի երջանիկ դառնալ:

ԼՕԼԷԹ, սրտառուչ ճիշով մը. — Ա՛հ, կը զգամ որ ինձի գէ՛մ գատապարտութեան վճիռ կ'արձակես...: Ընտրութիւնդ ըրած ես: Չարսի՛րտ, գնա՛ երջանիկ եղիր անոր հետ...: Բայց երբեք չպիտի գտնես Լուլուի սէրը... քու նոնոշիկ

Լույսը... քու բոկոտն եղկելիից սէրը... : Չենք կրնար մի-
 եւնոյն վիճակը ունենալ դարձեալ : Ան չպիտի կրնայ քեզ
 վայելել ինծի պէս, քու երիտասարդութեանդ ու թշուա-
 րութեանդ մէջ, երբ խեղճուկրակ կ'սպրէինք միասին : Բա-
 րի՛ ժամանակներ, ուր պատուաբար տարատներ կը հագնէիր
 ու չորս հաս շապիկ չկար դարանից մէջ... : Ա՛հ, միշտ
 այսպէս չիք պարոն մը չէ եղած ան... : Խեղճութեան,
 մեծ թշուարութեան մէջ կը տապալակէր... : Շիտակը, գո՛հ
 չպիտի ըլլայիք ձեր սիրուէն... բայց ես կը ուրեքի զայն : Ի-
 րարու համար ստեղծուած էինք : Իմ լաւագոյն տարիներս
 անոր նուիրեցի... : Ամբողջ կեանքս ալ պիտի ընծայէի... :
 Ա՛հ, Բիէր, Բիէր ինչո՞ւ այսպէս բրիւ :

Լօլիթ կ'արտասուէ փղձկու՛մով :

Պէ՛րնիէ. — Հէ՛գ աղջիկս, եթէ գիտնայիր որ ի՛նչ ան-
 հուն կ'ալիք մը կը զգամ... :

ԼՕԼԷԹ, անոր թեւեմ բռնե ով. — Մ՛հ, կարելի բան չէ
 սակայն : Տեսէ՛ք, հիմա ալ, զիս մեղքնալու ելեր է... : Իմ
 ձեռքէս չպիտի առնէք զայն... : Ինծի պիտի ձգէք... : Չը
 ըրածին վրայ գաղտնի չունիք... : Չէք գիտեր թէ ի՛նչ
 վիճակի պիտի մատնուիմ, եթէ երբեք չկարենամ գոուել
 սիրելի զայն... քովը գտնուիլ Բիէրօ կողմէ, որ աշխարհի
 մէջ ամենէն քաղցր անունն է : Իրիկուան՝ տուն դարձիս
 չպիտի կրնամ հանդուրժել սա գաղտնիքին թէ ինծի պա-
 տասխանող չկայ : Մի՛ ընէք այդ բանը... : Գիթացէ՛ք իմ
 վրաս... : Չեմ կրնար ապրիլ առանց անոր... ի՞նչ կրնամ
 ընել... : Ինծի համար ըրէք այդ բանը : Եկո՛ւր, Բիէր,
 հօտէ հեռանանք : Եկո՛ւր, սիրելիս... անուշիկս : Տակա-
 ւին զիս կը սիրես քիչ մը, չէ՞ : Եկո՛ւր, կ'աղաչեմ...
 Եկո՛ւր, մեր տունը վերադառնանք... :

Լօլիթ ծուկի եկած է, գլխահակ, ձայնը մարած : Պերնիէ
 կը փորձէ գեղեկ վերցնել զայն, բայց Լօլիթ կը դիմադրէ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Ձեմ ուզեր ասանկ տխուր բանի մը պատճառ դառնալ...: Պարոն Պէրնիէ, ազատ էք...:

ԼՕԼԷԹ.— Տն'ս, նոյն ինքն կ'ըսէ...: Գէ'չ երազ մըն էր...: Եկո՛ւր, եկո՛ւր...: Վերջացաւ... տուն դառնանք: (Լօլէթ անոր թեւեւ բռնելով կը փախէ: Իշխանուհին սեղանին վրայէն առնելով Պերնիէի գլխարկը, անոր կ'երկարէ: Պերնիէ մերժողական նշան մը կ'ընէ իշխանուհիին, ինչ որ յի վրիպիւր Լօլէթի աչքէն: Այս վերջինը կը շեկուի, նշարով:) Ա՛հ, տեսայ: Դուն նշանացի անոր հասկցուցիր որ լուռ մնայ...: Ես ծունդի եկած, կը քաշքրտուէի, մինչդեռ անոնք անոնք ամէն ինչ վճուր են, ու անգրգուելի պիտի մնան. ըրած շարժումը տեսայ...: Որքա՛ն կ'ատեմ քեզ, որքա՛ն կ'ատեմ ձեզ...: Ա՛հ, իմ ո՛վ ըլլալս պիտի հասկնաք...: Ձեզի պիտի ցուցնեմ... դո՛ւք, անառակուհի... և դո՛ւն, կաւատ...:

Պէրնիէ.— Ինչե՛ր կ'ըսես, Լուլու...:

ԼՕԼԷԹ.— Այո՛, այո՛, ամբողջ ուժովս պիտի պոռամ: Ա՛հ, չէք կրնար վախցնել զիս: Պիտի դիմադրեմ: Կը դիմադրեմ...: (Լօլէթ կանգ կ'առնէ յանկարծ, քանի մը երկվայրկեան կը մնայ այդպէս. յետոյ շատ պարզ շարժումով մը անսահման վիատութեամբ մը:) Ա՛հ, ո՛չ, կեցէ՛ք, հասկըցայ... ամէն բան լինցած է...: Ամիսներով պիտի մաշեցընեմ ինքզինքս... բայց դուք ձեր նպատակին պիտի հասնիք դարձեալ...: Ամէն ինչ լինցաւ. փճացած եմ այլ եւս...: Մէկ խօսքով ի՛նչ կ'ուզէք ինչ...: Կ'ուզէք որ ձեզի թո՛ւղթ մը յանձնեմ, որպէ՛ս զի երջանիկ ըլլաք, այնպէ՛ս չէ՞...: Լա՛ւ, ուզածնիդ պիտի տամ...: Մեղան կա՞յ հոս...:

Պէրնիէ.— Ինչե՛ր ընել կ'ուզես տակաւին...:

Լօլէթ սեղանին ֆով կ'երթայ:

ԼՕԼԷԹ.— Ձգէ...: (Կը գրէ, բարձրաձայն տուն տալով ինքզինքին:) «Պարոն, ամուսնալուծում կը պահանջեմ ամուս-

Երբ արդէն Պերնիէի դէմ...: Հանեցե՛ք վերջնական նկատելի
 այս խնդիրքս: (Պերնիէ եւ իշխանուհին իրարու վրայ կը
 սեւեռեն նայուածքնին: Կարծես կը ջանան փոխադարձաբար
 խրախուսել զիրար, մինչդեռ Լօլէթ սեղանին վրայ հակած,
 կը գրէ, ցամբած աչքերով, աւերուն ու փայփայուն դեմքով:
 Յետոյ՝ Պերնիէ շարժում մը կ'ընէ դէպի Լօլէթ, որ ետ կը մղէ
 զայն, առանց վեր առնելու գլուխը:) *Լոէ՛... Լոէ՛...: Հաս-
 ցէն գրեչէ յետոյ՝ նամակատուն կը յանձնէք...:* (Լօլէթ
 ոտքի կ'ելլէ, ու առանց մեկուն նայելու:) *Բիէ՛ր, ամէն ինչ
 վերջացաւ մեր միջեւ...: Ձեր ուղածը եղաւ վերջապէս...:*
 Պէ՛րնիէ, իր գլխարկը եւ գաւազանը առնելով.— *Հա՛ւ,
 հետո եկո՛ւր հիմա:*

Լօլէթ, մեծ շարժումներով մը իրմէ կը հեռացնէ Պեր-
 նիէն, երբ այս վերջինը կ'ուզէ իրեն հետեւիլ.— *Ա՛հ, հիմա,
 ես քեզի կը հրամայեմ որ ետեւէս չգաս: Ամէն ինչ լինցաւ:
 Ձեր ուղածը եղաւ... հանդարտ ձգեցէ՛ք զիս: Ո՛չ, ո՛չ,
 չեմ ուզեր ոտնաձայն մը լսել իմ ետիս... ոչ մէկ բան...
 ո՛չ մէկ բան... չեմ ուզեր երեսնիդ տեսնել այլ եւս...
 Լինցա՛ւ:*

Պէ՛րնիէ.— *Ըսէ՛, ո՞ւր կ'երթաս...:*

Լօլէթ, առանց ետին դառնալու.— *Բա՛, քեզի ի՛նչ,
 այսուհետեւ:*

Լօլէթ դուրս կ'ելլէ: Դուռը կը գոցուի: Պերնիէ ցաւա-
 գին նայուածք մը կը ձգէ իշխանուհիին վրայ:





Նեոյեիի մեջ, գեցնայարկ սենեակ մը, Տօթթ. Օրածծիի
 տունը: Լուսաւոր, մաքուր ու վայելուչ խուց մը, որուն ետեւի
 մասը կը նայի հովանուս պարտեզի մը վրայ (*ցերեկ ատեն*):
 Մեջտեղը դրուած է մահնակալ մը, ուր կը հանգչի Լօլէթ...
 կիսադեմքը հանդիսականներուն դարձուցած...: Զարդախու-
 ցին դուռը կը գտնուի մահնակալին մօտ: Պարտեզին պատու-
 հան-դուռը, քառակուսի փոքր ապակիներով, կիսաբաց է:
 Վարագոյրը բացուելուն, Սիւզօն Քասաներ կը խօսի ման-
 կամարդ հիւանդապահուհիի մը հետ, որ իսկ վարժուհիի մը
 կը նմանի:

ԱՌՄՁԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ, ՍԻՒԶՕՆ

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ, Սիւզօնին, որ ներս կը մտնէ.— կը
 քնանայ:

ՍԻՒԶՕՆ, մեղմաձայն, բաւերաբեմին յառաջակողմը.—
 Տօթթ. Օրածծի ի՞նչպէս կը գտնէ հիւանդը:

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ.— Ես կը վկայեմ որ վտանգէ
 զերծ... բուժուած է ան...: Տօթթ. Օրածծի ալ կը հաս-
 տատէ ըսածս...: Քանի մը օր առաջ, կրնար մեկնիլ հոս:

կէ, եթէ ուզէր... : Անշուշտ, գնդակը թոքին մէջ պիտի մնայ միշտ, բայց կարելի է շատ լաւ լաւ ապրիլ, գնդակը թոքին մէջ :

ՍԻԻԶՕՆ. — Անվտանգ :

ՀԻԻԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ. — Եթէ երբեք բարդութիւններ առաջ չգան, ու հանդարտ և նստուկ կեանք մը վարէ ան... վտանգ մը չկայ : Լսածիս նայելով, կուրծքը տկար է քիչ մը :

ՍԻԻԶՕՆ. — Ուրեմն ի՞նչ պիտի ըլլայ :

ՀԻԻԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ. — Բայց, Տիկին, կարելի է վրտանգէ զերծ նկատել ձեր քոյրը : Բժիշկները աւելորդ կը նկատեն գնդակը հանել : Երբ տասնըհինգ օր առաջ, Պ. Պէրնիէ հոս բերաւ ձեր քոյրը, չէի կրնար իր կեանքը երաշխաւորել... բայց արիւնահոսութիւնը երկար չտեւեց :

ՍԻԻԶՕՆ. — Բարեբախտաբար, գնդակը սահած է, Լօլէթ վախցած ըլլալուն : Գիտէ՞ք թէ ի՞նչպէս տեղի ունեցած է դէպքը... : Իրանը մերկ, հայելազարդ դարանին առջեւ կեցեր է... : Հրազէնին փողը բռներ է երկու ձեռքերով : Բայց կարթը քաշած պահուն՝ խեղճ աղջիկը շատ վախցեր է... երկու աչքերն ալ գոցեր է... ուստի հարուածը դէպի աջակողմ ուղղուեր է : (Հիւանդապահուհիին) Բնաւ չշարժեցա՞ւ հիմա :

ՀԻԻԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ. — Ոչ :

ՍԻԻԶՕՆ. — Ատ չեղաւ... կարեւոր բան մը պիտի ըսէի, բայց ինչ որ է, մի՛ արթնցնէք, կը սպասեմ : Ամէնուս ալ ըսին որ ժամը երկուքէն երեք կրնանք այցելել : պատասխան մը բերի այն գործի մասին, զոր ինձի յանձնած է... : Ինչ որ է, պիտի սպասեմ մինչև վերջը :

ՀԻԻԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ. — Կ'ուզէք հո՞ս մնալ թէ պարտէզ երթալ :

ՍԻԻԶՕՆ. — Հոս կը մնամ... զուարթ բան մը ունի այս սենեակը... բայց ես շատ տխուր եմ, խորհելով որ Լօլէթ հոս պառկած է, երեսի վրայ ձգուած :

ԼՕԼԷԹ. — Ո՞վ է խօսողը :

ՍԻԻԶՕՆ.— Ա՛հ, արթնցուցինք... :

ԼՕԼԷԹ.— Դո՞ւն ես, Սիւզո՛ն :

ՍԻԻԶՕՆ, մահնակալին մօտ խոյանալով — Այո՛, ես եմ... : Բարեւ, հոգի՛ս... : Օ՛հ, դէմքդ շատ աղէկ է... : Տե՛ս... կաս կարմիր կտրեր է :

ԼՕԼԷԹ, կուսակուած պզտիկ բարձերու դեզին վրայ երկուելով.— Այո՛, պէշ չէ վիճակս... : Ի՞նչ կայ, չկայ :

Հիւանդապահուհին դուրս կ'ելի :



ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՍԻԻԶՕՆ, ԼՕԼԷԹ, յետոյ ՀԻԻԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ

ՍԻԻԶՕՆ.— Այո՛... ես ալ ատոր վրայ կը խորհէի : Բայց, անհամբեր մի՛ ըլլար... : Իմ բարեկամուհիս, ես ո, ժօրժ լաւ հետապնդեցինք դայն... : Սովորականին պէս ձեր տունը դարձած ու հոն պառկած է :

ԼՕԼԷԹ.— Կը ստես, Սիւզօն, կը ստես :

ՍԻԻԶՕՆ.— Բայց ո՛չ, վստահ եղի՛ր... : Սակայն, լաւագոյն պիտի ըլլայ որ ամէն բան իմանաս, ընդհակառակը, որպէս զի ամենափոքր պատրանք մը չունենաս : Ու է յոյս չկայ այդ մարդոցմէ... : Այո՛, այո՛... տարակոյս չունինք այդ մասին... դիչերը այդ կնոջ մօտ անցուցած է :

ԼՕԼԷԹ.— Արդէն գիտէի... կը զգայի... : Տե՛ս, յորբան հանդարտ եմ... արցունք ալ չեմ թափեր... : Դուրսը պատահած անցքերը ինչ շատ հեռու են... : Ու է կապ չունիմ դուրսի հետ : Սիւզօն, միտքդ պահէ՛ սա բանը. եր-

Չանկութիւնը կը նշանակէ ո՛չ թէ երջանիկ ըլլալ... այլ
չտառապիլ... :

ՍԻԻԶՕՆ.— Ինչե՛ր կ'ըսես :

ՀԻԻԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ, ներս մտնելով.— Տիկի՛ն, մէկը
եկած է, ու ձեզ տեսնել կ'ուզէ... :

ԼՕԼԷԹ.— Ո՞վ է :

ՀԻԻԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ.— Տիկի՛ն տը Շասպրան :

ՍԻԻԶՕՆ.— Ա՞ն է :

ԼՕԼԷԹ.— Անշուշտ : Ինչո՞ւ զարմանալի կը գտնես :

ՍԻԻԶՕՆ.— Անիկա... հո՛ւ... : Կարծեմ, անկէ ի վեր՝
երեսը չես տեսած :

ԼՕԼԷԹ, շատ մեղմ շեշտով.— Ո՛չ, միայն թէ, նամակով
մը ինէ խնդրած է որ այս օրերս տեսակցութիւն մը ունե-
նայ ինծի հետ : Ընդունեցի : Մտքէս ալ կ'անցնէր որ այսօր
թերեւս այցելէ :

ՀԻԻԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ.— Ի՞նչ պատասխանելու է :

ՍԻԻԶՕՆ.— Չեմ յուսար որ ընդունիս զայն, քիչ մը
առաջ քեզի ըսածներէս յետոյ :

ԼՕԼԷԹ.— Բայց ինչո՞ւ չընդունիմ... : Ներս մտցուցէ՛ք :
Հիւանդապահուհին դուրս կ'ելլէ :

ՍԻԻԶՕՆ.— Իրա՞ւ կ'ըսես : Այդ անզգամ կի՛նը պիտի
ընդունի՞ս :

ԼՕԼԷԹ.— Լո՛ւէ՛, լո՛ւէ՛ : Պէտք է քաղաքավար, շատ քա-
ղաքավար ըլլալ, Սիւզոն... : Ուրիշ ճար չկայ... : Փորձա-
նութեամբ հասկցա՛յ, ատանկ ըլլալը . . . ինծի տո՛ւր հայելին :

ՍԻԻԶՕՆ.— Այդ կեղծաւորը ի՞նչ կ'ուզէ... : Չբաւե՞ց
ըրածը... :

ԼՕԼԷԹ.— Օ՛հ, որքա՛ն տգեղ ու դունատ եմ, Տէր Աս-
տուած : Ահա՛ մրցակից մը : Արսափելի՛ դէմք մը ունիմ... :
Լա՛ւ, աղջիկս, դուն պաշտօնդ կատարեցիր. վար դի՛ր
սա հայելին, ու հեռացի՛ր հոսկէ, անիկա ներս մտնելուն
պէս, չըլլա՞ր... : (Իշխանուհի սը Շասպրան ներս կը մտնէ :
Լօլէթ, իսկոյն, շատ մեղմ, գրեթէ հանելի շեշտով մը, գրեթէ

կ'ընդունի այդ ծաղիկները, ու ես ալ իբր այն բերած եմ
զանոնք:

ԼՕԼԷԹ.— Բա՛... ես մեռնելու էի...: Բայց կը տես-
նէք, որ գործը ձախողեցաւ...: Նախ խորհեցայ իրագործել
ձեր փափագը, այսինքն ամուսնալուծուիլ, հեռանալ...
բայց փողոց ելլելուս պէս, ինքնիրենս ըսի. «Աւելի լաւ
կ'ըլլայ որ կեանքիս վերջ տամ, այս վիճակին մատնուելէս
յ'տոյ...»: Իրա՛ւ ալ, լաւագոյն բանը պիտի ըլլար մեռ-
նիլ: Բայց ձախողեցաւ գործը:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Պէտք է որ խոնարհիմ այդպիսի
աղէտի մը առջեւ: Հիմա, ձեր ցաւը ինծի փոխանցելու էք,
որպէսզի ես կրեմ զայն: Պարտաւոր եմ այդ անձնուրացու-
թիւնը ցոյց տալ ձեզի հանդէպ... Թէև մեծ ու շատ ցա-
ւագին անձնուրացութիւն մը ըլլայ, որուն ի՛նչ ըլլալը
ինչ շատ աւելի լաւ գիտէք... բայց Բիէր ու ես պար-
տաւոր ենք այս համակերպութիւնը, այս զոհողութիւնը
ցոյց տալ... ի՛նչ որ ալ ըլլայ մեր երկուքին զգացած
մորմոքը. ի՛նչ հարկ ծածկելու վիշտ մը, զոր շատ լաւ կը
ճանչնաք: Այո՛, ամէն բան խոնարհելու է ձեր առջեւ:

ԼՕԼԷԹ.— Գիտեմ... գիտեմ: Հիմա, ամէն մարդ վե-
հանձն է ինծի հանդէպ:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Կ'ազաչեմ, ո՛չ մէկ կեղծիք չկայ իմ
դիմումիս մէջ...: Շատ լաւ գիտեմ թէ ինչո՛ւ հոս եկած
եմ:

ԼՕԼԷԹ.— Օ՛հ, հիմա կը կռահեմ որ ամէն մարդ
ձեռքէն եկածը պիտի ընէ ինծի համար: Մարդիկ կար-
ծուածին չափ չար չեն իրենց էութեամբիսկ...: Ա-
նոնք շատ մը բաներ կ'ըղձան... միայն թէ կուգայ որ
մը որ ամէն ինչ կը քչէ կը տանի...: Սակայն, շնորհակալ
եմ ձեր դիտաւորութեան համար: Գոնէ կը հանգարտեցնէ գիտ:

Իւխաճուհին եւ Լօլէթ կը խօսին այցելու կիներու
եետով. կարծես թէ ասելու թիւնը մոռցուած եր մահուամ
երկրին մէջ, կարծես թէ իրարու հետ կը խօսին տարիներով
սելոյ երկար նամբորդութեան մը յետոյ:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.—Շատ... շատ երախտապարտ եմ ձեզի, որ այս անսպասելի շեշտով կը խօսիք ինձի հետ, ու կը հաճիք քաղցր... պարզ... անքինախնդիր խօսքերով ընդունիլ զիս... :

ԼՕԼԷԹ.—Մարդ խելօք կը դառնայ, երբ տաքք, պազը գլխէն անցած ըլլան ինձի պէս... ու օրին մէկը բոլորովին կը խելօքնայ... :

Լօրէք կը ժպտի :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.—Օ՛հ, խոստացէ՛ք մեզի... խոստացէ՛ք անոր թէ բոլոր այդ մտաւէ՛ր գաղափարները պիտի հանդարտին, ու այլ եւս չպիտի վերսկսիք միեւնոյն բանը : Ամենքս ալ մեր պարտքը կատարենք, ձեռքերնուս եկածին չափ... : Ահա ինչո՛ւ հոս եկայ... ձեզի ըսելու համար թէ ի՛նչ ընելու մտադիր եմ... նոյնպէս հասկնալու համար թէ ի՛նչ կը սպասէիք ինչ... : Կարծեմ, արիտութեամբ ու... : Բայց կը զգամ որ մտիկ չէք ըներ զիս... : Բայց ինչո՞ւ... : Ի՞նչ բանի վրայ կը խորհիք :

ԼՕԼԷԹ.—Կ'ուզէի ձեր տեղը ըլլալ : Աս է իմ խորհածս : Որքան երջանիկ էք... : Ան երբեք այդպէս չէ սիրած զիս :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.—Բայց վստահ եղէք որ ձեզի պիտի վերադարձնեմ զայն :

ԼՕԼԷԹ, գլուխը ցնցելով.—Ա՛հ, եթէ միայն դուք ըլլայիք, բայց ան ալ կայ... ու ան չի սիրեր զիս... : Ան գամ մը մտքերնուդ առջեւ բերէք մէկը... որ չի սիրեր... : Երկուստեք սէրը ահարկո՛ւ է, ու ամէն բանէ գերիվեր... : Բայց երբ մարդ առանձին մնայ սիրոյ մէջ, բան մը չարժեր այլ եւս :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.—Բայց ձեզի կը խոստանամ որ արիասիրտ պիտի ըլլամ, ու բոլոր կամքովս պիտի ջանամ տուկալ... :

ԼՕԼԷԹ.—Գիտեմ թէ ի՛նչ կը նշանակէ Քրիէրը սիրել, յաւերժական սէր մըն է ան :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Մի՛ վհատեցնէ՛ք զիս :

ԼՕԼԷԹ. — Ահ, մէկ խօսքն իսկ կը բաւէ՞, ձեզ վհատեցնելու համար :

Երկուսն ալ աչեբերնից կը խոնարհեցնեն :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. սեսնելով որ Լօլէթ կը օտրծի. — Կ'ուզէ՞ք որ ձեզի օգնեմ : Գէշութիւն մը կը զգա՞ք :

ԼՕԼԷԹ. — Կ'ուզեմ քիչ մը աւելի՛ վեր ելլել : Շատ լաւ չեմ շնչեր տակաւին :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ, սեղաւորելով Լօլէթը ու կուրծից վրայ բծրելով օսպիկը. — Շապիկնիդ այսպէ՛ս բացած, չէ՞ք յսիր :

ԼՕԼԷԹ. — Ոչ : (Լօլէթ կիսովից եր բանայ օսպիկը) Տեօէ՛ք... հոս է... : Նայեցէ՛ք, գնդակը այս ուղղութեամբ մտած է... : Կ'երեւայ որ, գնդակը եթէ երկու սանթիմ ալ հեռուն երթար, գործս լինցած էր : Հո՛ն է սիրտը... : Ես հոն հարուածեցի... : Իսկ դուք անոր քովիկը հարուածեցիք :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Բայց, տես՛՛ք, վէրքերէն մէկը սրպիացած է արդէն... : Մի՛ սն ալ պիտի աղէկնայ... : Ամէն ջանք պիտի տանինք, այնպէս չէ՞... : Զեռքերնուս եկածը պիտի ընենք : Անոր կիներ եղէ՛ք դարձեալ : Գալով ինծի, ժամանակամամիջոց տուէ՛ք մոռնալու, դիմադրելու ինքզինքիս... կեանքիս... կը հասկնա՞ք միտքս... :

ԼՕԼԷԹ, անոր ձեռքը բռնելով անցողակի. — Աղւոր, շատ նուրբ ձեռքեր ունիք... : Ու խորհի՛լ որ հիմա կրնամ այդ ձեռքերուն դպչիլ, առանց սարսուռ զգալու : Այդ ձեռքերը այլեւս ցաւ չեն պատճառներ իսծի... ձեռքեր զոր կ'ուզէի ջախջախել, փշրել... : Բան մը չեմ զգար... : Սակայն... :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Դուք ալ կը զգաք որ առաջուան պէս ինէ վախնալիք բան մը չունիք... : Մենք թշնամիներ ենք, առջիւնիս ունենալով նախագիծ մը հաշտութեան... : անհրաժեշտ հաշտութեան... : Վերջ տալու է այս պատերազմին : Այլապէս՝ շատ մը անձեր պիտի վիրաւորուին :

Հօղէ՞թ. — Օ՛հ, այդպէս չէ...: Շատ լաւ գիտեմ
գլխուս գալիքը...: Ոչ, ձեր ըսածին պէս չէ...: Ձեզ կը
գիտեմ...: ձեր մազերուն յարդարանքը լաւ է...: Շատ
կը սիրեմ այդ ցած գիտակոյտերը: (դադա...): Ու խորհի՛ւ
որ խարտեաչները միայն կը սիրէր ան: (Հառաչ մը):
Իսկ դուք իմ անկողնիս քով կը գտնուիք հիմա, ու ես
բարեկամութիւն մը, անտարբեր կնոջ մը պէս կը խօսիմ ձեզի
հետ:

Յեղակարծ ասելութեան խուժում մը, շուտով զսպուած:

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻ, ներս մտնելով. — Պ. Պէրնիէ
եկած է...: կրնա՞յ ներս մտնել:

Հօղէ՞թ. — Բայց, միանգամ ընդ միշտ ձեզի ըսած եմ որ
կրնաք թոյլ տալ որ ներս մտնէ, առանց նախապէս իմաց
տալու...: Եկողը թո՛ղ ներս մտնէ...:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Ես կը հեռանամ:

Հօղէ՞թ. — Երբեք: Ինչո՞ւ: կը զգամ որ եղածը զուգա-
գիպութիւն մըն է, պարզ զուգադիպութիւն մը...: Դար-
ձեալ յանցանքը իմս է...: ամենուն ալ ըսի որ կրնան մի-
եւնոյն ժամուն այցելել...: Շատ բնական է եղածը...:
Իրարու կը հանդիպին, այնպէս չէ՞...:

Պերնիէ ներս կը մտնէ: Իջանուհին ոտքի վրայ կեցած է:

ԾԵՅԾԵՅԾ ԻՆՎԵՐՏԻՆԵ

ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆ ԱՆՁԵՐԸ ԵՒ ՊԵՐՆԻԷ

ՊԵՐՆԻԷ. — Տիկի՛ն: (Յիսո եւն կը բարեկէ: Խօսքի
ուղղելով, մօտեցած պահուն:): Ի՞նչպէս ես այսօր, սիրելի՛ս:

Հօղէ՞թ. — Աւելի լաւ, ատելի լաւ. Բիէր...: չնորհա-
կալ եմ...: Բոլորովին աղէկ եմ...: Ի՞նչպէս կը տեսնես,
տիկինը ազնութիւնը ունեցած է այս ծաղիկները բերելու
և որպիսութիւնս հարցնելու:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — կը յուսամ որ միւս անգամուն,
որպիսութիւններդ պիտի հարցնեմ Պրէմօնիէ փողոցի ձեր

տունը, և դուք ոտքի վրայ պիտի բնդունիք զիս :
ԼՕԼԷԹ, համոյակասարուբեամբ. — Ձէ՞ք ուզեր քիչ
մըն ալ հոս մնալ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Ոչ, կը բաժնուիմ ձեռնէ . . . Քիչ
ատենէն կը տեսնուինք, եթէ թոյլատրէք :

ԼՕԼԷԹ. — Անշուշտ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Խորին շնորհակալութիւններս :

ԼՕԼԷԹ. — Ես շնորհակալ ըլլալու եմ ձեզի : Բիէ՛ր,
կը հաճի՞ս դուռը բանալ Տիկինն աը Շապրանի առջև . . .
կ'աղաչեմ . . . Օ՛ն, ընկերացիր անոր . . . :

Պերնիէ դուռը բանալու կ'երթայ : Դրան առջեւ, իւ-
խա՛նուհիւն ու Պերնիէ ֆալաֆալա օրէն կը բարեւեն գիրար :
Իշխ սնուհիւն բարձուձեւով մը շուզեր ու Պերնիէ սեմէն անցնը :

ՊԷՐՆԻԷ. — Տիկին . . . :

Պերնիէ կը գոցէ դուռը :

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԼՕԼԷԹ, ՊԷՐՆԻԷ

Դուռը գոցուելուն պէս, Լօլէթի ֆալաֆալար ու ֆաղցե
ճեօսը ուրձփ խոպոս ու սխուր ձայնի մը կը փոխուի; Լօ-
լէթ կ'ըսէ .

ԼՕԼԷԹ. — Բիէր, ետիդ մի՛ գառնար որ խոսիմ : (Պեր-
նիէ ոտքի վրայ կը մնայ, ձեռքը դրան խնձորակիճ վրայ դրած :
Գիտեմ թէ երբեք աչքիդ առջեւէն չի հեռանար ան . . . կըզ-
գամ . . . բայց ի՛նչ որ ալ ըլլայ, ի՛նչ որ ալ ընես, Բիէրօ,
քեզի դէմ ոխ չունիմ . . . ու երբեք չպիտի ունենամ իմ
յիշողութեանս մէջ . . . Գիտեմ թէ ցաւ կը զգաս . . . մեծ
ցաւ կը զգաս՝ ալլելս զիս շարեւուդ համար . . . բայց ես
մէկ բան միայն կը յիշեմ այլ ևս . . . թէ դուն կիներուն
ամենէն երջանիկը ըրած ես զիս . . . :

Լօլէթ բարձիճ վրայ կը ձգէ գլուխը :

ՊԷՐՆԻԷ, Լօյկքի մօտ յառաջսնցալով.— Ա՛հ, Լուլու, ես
կը ճանչնամ քու սիրտդ... :

Պերնիե նախասկն գառնօրէն կը Ռամբուրկ Լօյկքը:

ԼՕԼԷԹ — Այդպէս կեցի՛ր քիչ մը... ձգէ՛ որ գլուխս
կրթնցնեմ թեւիդ վրայ, ինչպէս կ'ընէի ատենօք... : Որ-
քա՛ն լաւ է այսպէս... : Որքա՛ն լաւ է... : (Լօյկք իր բոլոր
ծանրութեամբ, գլուխը կը կրթնցնէ Պերնիեի արմուկնե-
րուն վրայ, ու Պերնիե քիչ մը իր կուրծքին կը կրթնցնէ անոր
գլուխը:) Կը յիշե՞ս արդեօք... : Այսպէս անցուցած եմ
ժամերով... : Կը յիշե՞ս առաջին նկարանիստը քու աշխա-
տանոցիդ մէջ... : Դուն յոգնած, բազմոցին վրայ պառկած
էիր, իսկ ես ճիշդ հիմակուան դիրքին մէջ կը գտնուէի :
Արեւը կը սփռուէր գորգին վրայ... : Դեռ աչքիս առջեւն
են կապոյտ ու վարդագոյն բաները... : Զուարճալի չէ՞ այս
ամէնը... : չար մարդ... : Հապա նկարը... : Շքադրամի
օրը ըսիր ինծի. «Օ՛ն, զուարճանանք Լուլու» : Ա՛հ, Բիէր,
ի՛նչպէս փոխուեցան բոլոր այդ բաները, հակառակ մեր
անուրջներուն... : (Սրկչօտութեամբ ու վեհերոտութեամբ:)
Չես կարծե՞ր որ, ըսէ՛... : չես կարծե՞ր որ քիչ մը «էր
մնացած է... : քու էութեանդ մէջ . . . եթէ լաւ պրպտես :

ՊԷՐՆԻԷ.— Անշուշտ, անշուշտ... :

ԼՕԼԷԹ.— Միթէ չպիտի կրնամ իմ տեղս գրաւել
դարձեալ... : Թերևս, պիտի յաջողիմ այդ կիներ հեռացնել
հեռագնետէ... :

ՊԷՐՆԻԷ.— Անտարակոյս, անտարակոյս... : ինչո՞ւ չէ :
(Յանկարծ:) Մտիկ ըրէ՛... : կրնամ ստել, երկդիմի խօսքեր ը-
նել... : Այդ բանը չպիտի ընեմ... : Դուն իրաւունք ունիս
ճշմարտութիւնը լսելու, բովանդակ ճշմարտութիւնը... :
Դուն, բաւական տառապած ըլլալուդ, պէտք է որ իմանաս
այդ ճշմարտութիւնը... :

ԼՕԼԷԹ, բարձերուն վրայ ձգելով ինքզինքը.— Օ՛հ,
սոսկալի բան մը պիտի ըլլայ ըսելիքդ :

Պէ՛ՐՆԻԷ.— Բայց ո՛չ, Լուլու, սոսկալի չէ, աս շատ պարզ բան մը: Կը զգաս թէ ինծի համար ո՛րքան դիւրին է քեզ ապահովել թէ այլեւս չեմ տեսներ զայն, և դուն պիտի ստիպուիս հաւատ ընծայելու խօսքիս... Այո՛, իրարու հետ կը տեսնուինք նորէն... Ու վստահ եղիր որ մեր տեսակցութիւններուն մէջ քու վրադ միայն կը խօսինք: Չեմ գիտեր թէ քեզի հաղորդած է մեր տուած որոշումները... ԼՕԼԷԹ.— Ինծի ըսաւ որ...

Պէ՛ՐՆԻԷ, ընդմիջելով Լօլէթը.— Հոգ չէ: Այդ որոշումները պիտի իմացնեմ քեզի: Հիմա կրնաս լսել, ու պէտք եղած հանդարտութեամբ ըմբռնել... Յուսահատութեան այն գազաթնակէտը հասայ, ուր, մարդ ամէն խօսքերէ վեր ի վեր կ'ապացուցանէ թէ աշխարհիս լաւագոյն պատճառները բան մը չեն արժեր բացարձակ տառապանքին հանդէպ: Ան միայն յարգելի է: Չափազանց դժբախտ, անհունօրէն դժբախտ էակ մըն ես դուն: Պարտաւոր եմ ամէն աջակցութիւն ընծայելու քեզի... Անցած օր, շիտակ խօսք մը ըրիր. իրաւունք չունիմ քեզ ձգելու... Չեմ կրնար ինք իր վիճակիդ մէջ ձգել քեզ. եթէ ոչ՝ չպիտի կրնաս ինքզինքդ գտնել... Ատոր մէջ գերագոյն պարտականութեան խնդիր մը կայ ինծի համար: Ուրեմն, համաձայն ենք. այլեւս կրնաս հանգիստ ըլլալ: Քեզի համար կ'ընեմ այն ամենէն մեծ զոհողութիւնը, որ երբեք կատարուած ըլլայ... Օ՛հ, չեմ պարծենար ատոր համար. սակայն անհրաժեշտ է որ հասկնաս այդ զոհողութեան չափը և արժէքը: Պզտիկ զոհողութիւն մը չէ ըրածս. Քեզի համար կը զոհեմ բոլոր այն վայելքը զոր մարդ կ'ակնկալէ կեանքէն... Այո՛, այո՛, անկեղծ ըլլա՛նք... ու բացայայտ խօսինք... Ինչպէս գիտես, այս ամուսնութեան շնորհիւ, ձեռք բերի կատարեալ յաջողութիւն, հարստութիւն, ամէն փառք, լիակատար ու բացարձակ երջանկութիւն... առանց խօսելու միւս զգացումներուն վրայ, որոնց համար ներողութիւն կը խնդրեմ... Բայց, տհա՛, ամէն ինչ վերջացած է... Այլ

ևս չպիտի խօսինք ատոնց վրայ... Դուն նախընտրեցիր
 մեռնիլ քան թէ ընդունիլ այն գործնական առաջարկները
 զոր շատ մը կիներ պիտի ընդունէին եթէ քու տեղդ ըլ-
 լային. մանաւանդ որ ո՛չ մէկ բան մեզ կը հարկադրէր
 խզելու անկեղծ բարեկամութիւն մը, որ կրնար իր գոյու-
 թիւնը պահել մեր ամուսնական միութենէն յետոյ... վեր-
 ջապէս, թո՛ղ այդպէս ըլլայ... այլ ևս չխօսինք ատոր
 վրայ: Իշխանուհի տը Շապրան չպիտի դադրի իշխանուհի
 տը Շապրան ըլլալէ... ուրեմն, քեզի կը պատկանի իմ
 կեանքս... Գոհ ե՞ս: Դուն լաւ գիտես որ իմ յանձնառու-
 թիւնս կը կատարեմ անպատճառ...: Հիմա իրադոր-
 ծումի ճամբուն մէջ մտնենք խկոյն, իբր գործնական
 մարդ...: Ինչպէս ասկէ առաջ քեզի ըսած եմ արդէն, հա-
 բաւակողմի քաղաք մը պիտի տանիմ քեզ, հոն տեղաւո-
 րելու համար...: Տեղեկութիւններ քաղեցի Քանի տան
 վրայ. .: Բառին բուն իմաստով՝ ապաքինարան մը չէ...:
 կը ցաւիմ որ մոռցայ անոր լուսանկարները առնելու Ավը-
 նիւ Վիքթոր Էիւկօ հաստատուած գործակալութենէն...:
 Բայց քիչ յետոյ պիտի առնեմ...: Պիտի տեսնես որ... ծո-
 վուն վրայ նայող գեղեցիկ թէրաս մը ունի...: Շուտով
 պիտի ազէկնոս, ու առառաւելն, երկու ամիսէն՝ օտքի
 պիտի ելլես...: Ես ալ հոն պիտի գամ...: Ժամանակս
 քեզի պիտի նուիրեմ կրցածիս չափ... անշուշտ, յանձ-
 նարարուած գործերը աւարտելու և աշխատանքը վերսկսե-
 լու եմ, քանի որ հարուստ չենք...: Քանի և Բարիզի
 միջև շատ դիւրին է երթեւեկը...: Ժամանակիս մեծ մասը
 քու քովդ պիտի անցնեմ...:

ԼՕԼԷԹ.— Բիէր, հօս, Բարիզի մէջ, պիտի շարու-
 նակե՞ս տեսնել զայն:

ՊԷՆՆԻԷ, պահ մը յետոյ.— կը հաւաստեմ, կ'երդնում որ
 քեզի պիտի նուիրուիմ ու համակ անձնուիրութեամբս պիտի
 դարմանեմ քեզ...: Իմ կեանքիս մէջ լայն ու մեծ բաժին
 մը պիտի ունենաս: Գալով մնացեալին, յօյսդ դի՛ր ապա-

գային վրայ, զոր կարելի է վարել, թէև մթաօքող բան մը
ըլլայ ան: Ինծի ձգէ՛ ատոր հոգը... բայց մանաւանդ,
զայրացուցիչ պարտաւորութեան մը մի՛ վերածեր այն զոհո-
ղութիւնը զոր օիրայօժար բնութենած եմ:

ԼՕԼԷԹ. — Ի՞նչ կ'ո՞ղէիր որ ըլլար... Կարեկցութիւն
յայտնող շատ լաւ խօսքեր կ'ընես: Կը հասկնամ թէ ինչե՛ր
կ'ընես ինծի համար, ու չնորհակայութիւնս կը յայտնեմ
այդ մասին, բայց անկարելի է ատկէ աւելի սոսկալի խօսք
մը ընել... Բոլոր խօսքերուդ մէջ չկայ բառ մը որ ուրիշ
բան ազազակէ, եթէ ոչ. «Այլևս չեմ սիրեր քեզ»:

ՊԷՐՆԻԷ, անհասկեր շարժում մը ընելով. — Ահ:

ԼՕԼԷԹ. — Ի՞նչ կայ:

ՊԷՐՆԻԷ. — Ի՞նչ կ'ելլէ բաձկդ:

ԼՕԼԷԹ. — Ի՞նչ, կարեւորութիւն չե՞ս ընծայեր: Բայց
ամէն ինչ, ամէն ինչ է ան...:

ՊԷՐՆԻԷ. — Հիմա ալ, սիրոյ պէտքը կը զգաս: Գոհա-
ցուցի՛չ չես գտներ ըսածս: Երէկ, կեանքը միայն կ'աւ-
ղէիր... իսկ այսօր սէրը...: Վաղը, կարգը սրտ՛ւն պիտի
գայ, բայց ես ի՞նչ կրնամ ընել: Մարդ իր զգացումներուն
տէ՛րն է միթէ...: Իսկ եթէ չզգամ... այո՛, բնաւ չզգամ
սէրը... վաղը պիտի վերսկսին տրտուեցնելերդ՝ ու մըշ-
տնջենական պահանջումներդ...: Այո՛, այդպէս է: Դո՛ւն,
երէկուան զոհը, այսօր կը կերպարանափոխուիս արդէն, ու
պահանջումներուդ ծանրութեամբը, պիտի ճնշես վրաս:
Է՛հ, կը զգամ... տրամաբանական շղթայաւորում մըն է
աս... այո՛, շղթայաւորում, ահա՛ բուն բառը... Օ՛հ,
այդ բանտը...: Դուն գաղափար չունիս թէ մարդ ի՞նչպէս
կը բռնուի, կը սախպուի նոյն իսկ սիրելու, բարի ըլլա-
լու, առանց ինքնարուխ զգացումի կամ արժանիքի...:
Մարդ սոսկումով կը լսէ սա խօսքը. «Այդ բանը ընելու
պարտաւոր ես»: Պարտականութեան մէջ կ'արգելափակ-
ուիս...: Արդարութեան զգացումէն կը մղուիս...: Անգամ
մը բարի եղած ըլլալուդ համար, այդ բարութիւնը քու մէջդ

կը ստեղծէ այնպիսի պարտականութիւններ, որոնք անհունապէս պիտի բազմապատկուին... օրէ օրէ պիտի աւելնան... քեզ խեղդելու աստիճան... Մարդ իր առաջին արարքին գերին է... Ահա ինչո՛ւ մարդ կը մղուի ամէն ինչ ջախջախելու... խոյս տալու... վանդակին ձողերը խորտակելու... :

ԼՕԼԷԹ. — Բայց սոսկալի՛ բան է, զարհուրելի՛ բան է այդպիսի խօսքեր լսել :

ՊԷՐՆԻԷ. — Այո՛, կը զգամ որ սոսկալի է, անգուժե և անարդար... կը տեսնեմ որ շմորած աչքերդ սոսկու մով կը դիտեն զիս... մտովի կը հարցնես թէ խելոյի՞՞ ակաւ արդեօք... Բայց ի՞նչ կրնամ ընել. ինէ աւելի զօրաւոր բան մը կայ. Ազատութեան, շնչելի օդի պէտքն է որ կը զգամ... :

ԼՕԼԷԹ. — Կը կարծէի որ իմ զգացած սարսափս գերազանցող բան չկայ... բայց հիմա լսած խօսքերս՝ մահուընէ հազար անգամ աւելի սոսկալի են... :

Պահ մը լուրջիւն :

ՊԷՐՆԻԷ, ձեռքը անկասիկ սանկրով. — Ներողութի՛ն կը խնդրեմ ձեռքէ... զայրոյթս է որ կը մզէ զիս... Այդ զգացումները չունիմ իսկապէս... Բառերն են որ կը խտտորին... չղթայուած ցուլն է որ կը կոխկրակէ ու կը մռնչէ... կարեւորութիւն մի՛ տար... կեցի՛ր, կեցի՛ր... ինքզինքս կը գտնեմ... ահա՛, ինքզինքս գտայ... Վրաստան եղի՛ր որ հիմա պայծառ կը տեսնեմ իմ մէջս : Մոռցի՛ր բարկութեան այս բռնակն, որ անիրաւ է. կրնամ ըսել ինչ որ կը զգամ իրապէս. Լուրու, կ'երդնում որ իմ մէջս ո՛չ ազգի և ոչ ալ գձուձ բան մը կայ... Օ՛ն... աչքերուդ անձկութիւնը փարատէ... Սոսկում ազդեցի՞ քեզի՞ն ներողութի՛ւն... Աստուծոյ առջեւ, այո՛, Աստուծոյ առջեւ իսկ այդպիսի խօսքեր չեն ըլլար. կ'երդնում որ նոյն իսկ վանկի մը սխալ չպիտի ընեմ հիմա... Հասկցի՛ր ըսածս... անհուն կարեկցութիւն մը, խոյանք մը ունիմ

քեզի հանդէպ... կը փափաքիմ որ երջանիկ ըլլաս, սիրե-
 լիս, ու ալլ եւս բնաւ վիշտ չպատճառեմ քեզի, որպէսզի
 քու հէք բերանդ ժպտի կեանքիդ մնացեալ օրերուն մէջ...
 Իմ բոլոր ուժերս պիտի նուիրեմ այդ բանին... : Բա-
 լարա՞ր կը գտնես... : Ա՞ն է որ սէր կը կոչես : Ո՞չ : Բայց
 ի՞նչ կ'ելլէ ատկէ : Միթէ կարելի չէ՞ ապրիլ առանց այն
 սիրոյն զոր դուն կը պահանջես... : Միթէ հազարաւոր ան-
 ձեր այս պայմաններուն մէջ չէ՞ որ կր միանան, ու անոնց-
 մով չէ՞ որ կը գոհանան մինչեւ իրենց վերջին շունչը... :
 Ու մենք այդ սէրն ալ ունինք մեր մէջ... : Բառին բուն
 իմաստովը՝ սէրը չի մեռնիր, այլ կը կերպարանափոխուի...
 Ինչպէս մեր դէմքերը կը փոխուին... երբ ծերանանք... :
 Սէրն ալ մեզի պէս քսանամեայ կամ քսոսանամեայ մար-
 դու դէմք կը կրէ... : կը համակերպինք մեր քայքայու-
 մին, բայց ոչ մեր զգացումներուն : Ինչո՞ւ... : Որովհետեւ,
 չենք կրնար լաւագոյնը ընել... : Ա՛հ, Լույս՛ւ, կ'ուզէի
 երբեմնի պէս սիրել քեզ, ինչպէս դուն տակաւին կը սիրես
 զիս... բայց պէտք է համակերպիլ, քանի որ չեմ կրնար
 սիրել... չեմ կրնար սիրել... : Եթէ երբեք կամքը կարե-
 նար վերածնունդ տալ անցեալին, կ'երդնում որ կիներուն
 ամենէն երջանիկը պիտի դառնայիր. չես գիտեր թէ՞ ո՞ր-
 քան ճիշդ է այն խօսքը զոր քիչ մը առաջ կ'ըսէիր. «Բիէրօ,
 կը զգամ որ դուն կը տառապիս, այլևս զիս չսիրելուդ
 համար...» : Ա՛հ, երբեք չպիտի հասկնաս ո՞րքան ճիշդ է
 այդ խօսքը... : Սոսկալի բան է ինք իր մէջ տեսնել իր
 երբեմնի սիրոյն մահացումը... : Կարծես տղայ մըն է, ո-
 րուն օգնութեան հասնիլ կ'ուզեն, ըսելով. «Զագուկս...»,
 ու ձեր բազուկներուն մէջէն անհետացած պահուն, ա՛յ աւելի
 կը սեղմեն զայն... : (Պերնիէ կիսադրեան ու անձկու-
 րեան ընդոս շարժում մը կ'ընէ.) Բայց, յանցանքը
 իմս չէ... :

101 էթ. — կը հասկնամ որ ամէն ճիգ կ'ընես, կը պայ-
 քարիս... : Բացատրելու պէտք չունիս, նայուածքդ կը
 բաւէ... : Ա՛հ, Բիէր, Աստուած քեզի չցուցնէ որ քու
 վրադ զգաս նայուածքը էակի մը, որ այլևս չի սիրեր
 քեզ... : Դժոխային ցաւ մըն է... :

ՊԵՐՆԻԷ.— Ես հաստատապէս կը կարծեմ որ պիտի կրնանք երջանիկ ըլլալ միասին: Քեզի հետ կապուած եմ այնքան հոյակապ ու հմայիչ յիշատակով մը որ այդքանը կը բաւէ քեզի, ուրիշ բան չբաղձալու համար...: Դուն լաւագոյն բանը առիք ինչ...: Մարդ չի կրնար նորէն ձեռք անցնել ո՛չ իր սէրը, և ոչ ալ իր երիտասարդութիւնը...: Ուրեմն, ա՛ն ինչ որ կուտամ քեզի, ու աւելին մի՛ պահանջեր...: Ինչ որ կը զգամ քեզի հանդէպ, պատկանելի է, ու խոյանքով առլցուն: Չեմ գիտեր թէ ի՛նչ անուշով որակելու է այդ զգացումը: Բայց եթէ կարենայիր սէր յորջորջել զայն, չես գիտեր թէ ո՛րքան հաճոյք պիտի պատճառէիր ինձի:

ԼՕԼԷԹ.— Ընկճուած եմ...: Կ'ուզեմ որ... բայց չեմ գիտեր թէ ի՛նչ կ'ուզեմ... օդ... հանդարտութիւն...:

ՊԵՐՆԻԷ.— Այո՛, այո՛, բոլոր խօսքերս կը վիրաւորեն քեզ...: Երթամ լուսանկարները բերեմ Ավրնիւ Վիքթօր-Հիւկոյէն...: Մի՛նչև այն ատեն պիտի հանդարտիս... ու այլևս չպիտի խօսինք այս բաներուն վրայ...: (Պերնիէ կ'երկարե անոխր, ու Լօրէթ կը բռնէ զայն:) Ըրած խօսքերս մեծ վիշտ պատճառեցի՞ն քեզի:

ԼՕԼԷԹ.— Ոչ: Շնորհակալ եմ: Դուն համարձակեցար ընել այն խօսքերը զոր ոչ ոք համարձակած է արտասանել...: Անկեղծ ես ... Բիէր, դո՛ւն չես սոսկալին, այլ սէրը սոսկալի է. . . Չանգակը կը հնչեցնե՞ս: Հոս, քովս է...:

Պերնիէ զակզակը կը հնչեցնէ: Լոուրիւն: Պերնիէ շակաւին կը նայի Լօրէթի: Մակիաւարդ կնոջ դիմքը աւրուած է, ու բարձիւն վրայ հնկած:

ՊԵՐՆԻԷ, դուրս ելած պահուն.— Ա՛հ, մարդ քսան տարեկանին սատկելու է, երբ անբան արարած մըն է և գիտակցութիւն չունի:



ՎԵՅՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԼՕԼԷԹ, ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ

ԼՕԼԷԹ.—Օ՞ր... արեւ... (Հիւանդապահուհին ներս կը մտնէ) Ժիւլի, կ'ուզեմ անկողնէս ելլել... շո՛ւտ... կ'ուզեմ շնչել, չեմ կրնար պառկած մնալ... կ'ուզեմ քալել... արեւը տեսնել... կ'ուզեմ կանաչութիւն տեսնել:

Լօլէթ վերնակը մեկդի կը նետէ սեւդոս շարժումով մը:

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ.— Հաւանաբար, շատ տկար ըլլալնուդ, չէք կրնար քալել... բայց եկէ՛ք ընկողմանեցէք թիկնաթոռին մէջ, պատուհանին քով, ինչպէս ըրիք երէկ իրիկուն:

ԼՕԼԷԹ.— Այո՛... այո՛... ինձի տուէ՛ք բէնեուարս, շուտ ըրէ՛ք... շատ լաւ... թեւերը անցուցէ՛ք... Ամէն ինչ, բայց ո՛չ այս անկողինը... Օ՛հ, կ'ուզեմ արեւ... ծառեր... կեանք: Աստուած ի՛մ, ո՛րքան տկար եմ:

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ.— Մի՛ ջղագրգռուիք... Ի՛մ վրաս կրթնեցէ՛ք... Տեսէ՛ք ի՛նչպէս լաւ կը քալէք... վարդագոյն մետաքսէ աղւոր ծածկոյթը ձեր ոտքերուն վրայ առած... Հիմա, բոլոր փեղկերը կոնակի վրայ պիտի բանամ... որպէսզի լոյսը ներս մտնէ... Ո՛րքան աղւոր է օդը:

Լօլէթ մահնաթոռին վրայ ընկողմանած է: Հիւանդապահուհին անբողջովին կը քանայ պարեկին վրայ նայող դուռ-պստուխանը: Լօլէթ հոն է, գլուխը բարձրուն վրայ դրած, այժերը փակ՝ յորդահոս շոյսին տակ: Դուռը կը բացուի, Ռուշար ներս կը մտնէ մեղմիկ, չորս դիւն կը նայի ու կը յառաջանայ: Հիւանդապահուհին պարեկը կը մնայ, տեսնելով որ մեկը ներս կը մտնէ:



ԵՕՓԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԼՕԼԷԹ, ՌՌԻՇԱՐ

ՌՌԻՇԱՐ, ներս մտնելով.— Լուի՛զ... :

ԼՕԼԷԹ.— Ժա՛ն :

ՌՌԻՇԱՐ. Լօշերի սօս փութալով.— Դժբախտ արարած... :
Կը թողատրե՛ս որ քեզ հ մտուրեմ :

ԼՕԼԷԹ, մեծ քափով մը ու անակուրեանս աղաղակով մը.—
Ա՛հ, թշուառականնե՛ր : Ձեռ գիտեր... չեռ գիտեր թէ անոնք
ի՛նչ բրին ինձի... :

ՌՌԻՇԱՐ.— Ամէն բան գիտեմ... : Ամէն ինչ իմացուցին
ինձի... հրազէնի հարուածը... տենդով անցուցած գիշեր-
ներդ... օրը օրին հետեւեցայ քեզի : Դժբախտ արարած... :

ԼՕԼԷԹ.— Ոչ, դուն չեռ գիտեր, ու չեռ կրնար գիտնալ,
ոչ ոք կրնայ գիտնալ թէ ի՛նչ նշան էմ ես, հէզ բարե-
կամս... : Թշուառականնե՛ր... :

ՌՌԻՇԱՐ.— Այս օրերս, քուզինդ, Մատի կրիյեօնը տե-
սայ, որու հին հագուստներ կուտամ, ինչպէս կ'ընէի քու
օրովդ... : Խնդրին բոլոր մանրամասնութիւնները իմացայ,
ու թերեւս քենէ աւելի տեղեկութիւն ունիմ... : Անտարա-
կոյս, մեծ յուզումով մը իմացայ այդ բաները : Բնականա-
բար, քեզի իմաց տուած չէին, իմ պատուէրիս համաձայն :
Ամէն օր հոս կուգայի, որպիսութիւնդ հարցնելու համար :

ԼՕԼԷԹ.— Ա՛հ դուն միշտ բարի եղած ես... :

ՌՌԻՇԱՐ.— Այդպէս չէ, այդպէս չէ... միայն թէ ի զուր
ինէ բաժնուեցար, ամէնէն մեծ վիշտը պատճառելով, զօր
զգացած ըլլամ երբեք... յիշատակներ կան, այնպէս չէ...
այդ յիշատակները կը վժան... կը յուզուին ամենափոքր
բաղխումով մը... : Իմ աղջնակս էիր, այնպէս չէ... : Երե-
ւակայէ՛ որ քիչ առաջ հոս էի, տնօրէն-բժիշկին գրասեն-
եակը, ու անոր հետ կը խօսակցէի, երբ տեսայ որ Պէրնիէ
կը հեռանայ, Իսկոյն որոշումս տուի... : Պէտք է համբուրէի
քեզ :

ԼՕԼԷԹ.— Իմ ճանչցած մարդոցս մէջ լաւագոյնն էիր դուն. բայց ո՛րքան գէշ վարուեցայ քեզի հետ... :

ՌՌԻՇԱՐ.— Ա՛հ, սա կիները... : Արդէն անցած գացած բաներ են ատոնք, մենէ շատ հեռու : Բայց, ինքզինքդ վիրաւորելու չափ տխմար գանուեր ես... : Շատ վնասուեցա՞ր... :

ԼՕԼԷԹ.— Այո՛, թոքէս վիրաւորուեցայ... բայց հոգս չէ... կ'ուզեմ մեռնի՛լ... ժան, կ'ուզեմ մեռնի՛լ... :

ՌՌԻՇԱՐ.— Ոչ, ոչ... : Եթէ այդպէս ընես, գործերդ կարգադրուած չեն ըլլար, այնպէս չէ՞ :

ԼՕԼԷԹ.— Ա՛հ, լմնցած, փճացած կիւն մըն եմ : Բանս բո՛ւրդ է... :

ՌՌԻՇԱՐ.— Ոտքը մէջերնիս, շատ փոխուած չես, քանի որ մտերմական լեզուդ կը գործածես դարձեալ, սեւամորթի այն խօսուածքը ունիս, որ երկու օր միայն կ'ուրախացնէր մարդդ... : Կը յիշե՞ս, «բանս բուրդ է» կ'ըսէիր, ամէն անգամ որ գործը չքալէր... : Այդ բարի՛ ժամանակներուն մէջ, տակաւին ծաղկատի աղջիկ, Պրէտա փողոցէն կուգայիր, մրգավաճառուհիին ցուցափեղկէն երկու խնձոր գողնալէ յետոյ աչքբացութեամբ, որովհետեւ քու համոզումովդ՝ աղանդերը դրամով առնուելու չէր... : Ա՛հ, շատ կուտ չունէինք այն ատեն, բայց եթէ չբաժնուէիր ինէ, այսօրուան վիճակին չպիտի մատնուէիր : Ընտանիքի պատուական հայր էի, և թոյլ չպիտի տայի որ դժբախտ ըլլաս, ամէնուն ղէմ պաշտպանելով քեզ :

ԼՕԼԷԹ.— Ա՛հ, վատահ եղիր որ եթէ գիտնայի այսպէս ըլլաւ... :

Լոյսեր կ'արժանանի :

ՌՌԻՇԱՐ.— Այն ատեն քեզի ըսի ըլլալիքը, երբ անձնական գոյքերդ առնելու եկար... իրիկուն մը... ա՛հ, ի՛նչ անիծեալ՝ գարշելի իրիկուն մըն էր ան... բայց դուն պատասխանեցիր. «Պէ՛րհի էի հետ կը կենակցիմ : Կը սիրեմ զայն» : Այն ատեն նախատեսեցի որ երջանիկ չպիտի ըլլայիր :

անոր հետ: Քեզի յարմար մէկը չէր ան: Արէէն իսկ ան-
հաղորդ, կամապաշտ ու յամառ մարդ մըն էր, ուրիշ ճա-
կատագիր ունենալու սահմանուած...: Կը բաւէր տեսնել
զինքը...: Շոգենաւեր կան, որոնք շինուած են, բաց ծով
ելլելու համար, իսկ ուրիշ շոգենաւեր ալ՝ ծովեզերքը մնա-
լու սահմանուած...: Անիկա ծովուն բացերը պիտի ելլէր
անպայման...: Այդ կարգի արուեստագէտի մը համար չես
ստեղծուած...: Մեզի պէս արուեստագէտներուն կը յար-
մարիս, որոնք երբորդ կարգի շքադրամ և օրական վեց
Քրանքի հաշուով՝ թոշակ կը ստանան:

ԼՕԼԷԹ. նակիսը ծեծելով. — Ա՛հ, եթէ շարունակէր սի-
րել զիս: Ահա՛ իմ ամբողջ գոթախտութեանս պատճառը:

ՌՈՒՇԱՐ. — Ի՛նչ որ ալ ըլլայ, միայն սիրային խնդրի
մը շուրջը չի դառնար աւելի ծանր ու անխուսափելի բա-
ւեր կան... ինչպէս կերպարանափոխիչ այն մեծ մեքենան,
որ իր ձանկին մէջ կ'անցնէ ոմանք, իսկ ուրիշներ ալ
կը փշրէ...: Քեզի պէս էակներ խեղճուկ ու բոլորովին մերկ
են... կեանքի մէջ մերկ ինչպէս մօտէլի սեղանին վրայ մերկ...
ամէն բանի անտեղեակ ու անզօր, երբ շփում կ'ունենան
գեղեցիկ այլ մակերասային հոգիներու հետ: Ու մարդկային
կարեկցութիւնը այդ մարդոց շընծայեր այն դիրքը, որուն
արժանի են անոնք, եթէ երբեք անոնց էութեան խորն
իսկ թափանցէ...: Թատրոնին յառաջակողմը՝ վերապահ-
ուած տեղեր կան: Խեղճ աղջիկս, դուն թատրոնին գեա-
նայարկը կը գտնուիս...: Բայց և անպէս թոյլ չպիտի
տան որ կեանքիդ վերջ տաս այսպէս: Դուն չպիտի վերս-
կսիս պայքարիլ, յուսալ, կեանքի վերջնական ոստումին
յանգելու համար, որ մաթեմատիքական ճշդութիւն ունի:
Անոնց համար անհրաժեշտ է որ դուն մէջտեղէն վերնաս:
Դո՛ւն ալ լաւ համոզուած ես այդ մասին...: Պէտք է որ
այդպէս ըլլայ...: Քու մարմնիդ վրայէն պիտի անցնին
անպայման...: կեանքի ուժն է ան:

ԼՕԼԷԹ. — Օ՛հ... վստահ եմ այդ մասին: Ահա ինչո՛ւ
հրազէնը պարզեցի դունչիս տակէն...:

ՌՈՒՇԱՐ, խիստ այլ երկչոն ձայնով. — Իսկ հիմա, այլ եւս

պէտք չկայ այսպիսի բան մը ընելու: Օ՛ն, հետս կը տա-
նիմ քեզ... (Լօրէք սպառնաւ Ռուշարի կը նայի:) Այո՛, այո,
սենեակս կը տանիմ քեզ, իբր ապահով տեղ մը... ձոն,
ուզածդ կրնաս ընել... կ'երթաս, կուգաս... անոնց հետ
տեսակցելու... անկարելին փորձելու համար... բայց միշտ
ազաւնոց մը պիտի ունենաս քու տրամադրութեանդ տակ,
հոն վերադառնալու, հանգչելու, շունչ առնելու համար...
հոն, թշուառութեան ժամերու մէջ, ապահովարար պիտի
գտնես ո՛չ թէ երջանկութիւն, որ այսպէս ձեռք չի բեր-
ուիր, այլ կ'երդնում որ պիտի գտնես սիրակցորդ սիրտ
մը, որ քեզի պիտի նուիրուի իր ամբողջ թափով, ինչպէս
ատենօք...:

Ռուշար լուց: Լօրէք կը պրպսկը արքողոց սպասան, ներ-
կան, անցեալը:

ԼՕԼԷԹ, յանկարծ յուսահասական շեշտով մը.— Ազատէ՛
զիս: Ազատէ՛ զիս... Այո՛, այո՛... եթէ տտենը չէ ան-
ցած տակաւին...: Տա՛ր զիս... մի՛ ձգեր որ մեռնիմ...
Օդ... կեանք կ'ուզեմ...:

ՌՌԻՇԱՐ, Լօրէքի ձեռքը թռնելով.— Այո՛, ձագուկս:
Ապաքինման շրջանդ պիտի անցնես ամուրիի այն միեւնոյն
յարկաբաժնին մէջ, որուն մուտքին վրայ ժանդոտած զանգակ
մը կայ և որուն պատշգամբը քարիւսի՛նի ծաղիկներով զար-
դարուած է: Թերեւս, զուարթ կեանք մը չպիտի վարես
հոն... բայց հոգ չէ. կրակը աւելի լաւ կ'արժարժի հոն ուր
մօխիք կայ...: Յետոյ աղէկնալուդ պէս, կրնաս ուզած տեղդ
երթալ... կամ հոն մնալ, քանի որ ընդարձակ տեղ կայ:

ԼՕԼԷԹ, սենդոս, վրդովուած, ոսփի կ'ելլէ, ինկիսինկէ սար-
սափահար.— Այո՛... , այո՛... այդպէս է...: Անմիջա-
պէս... վարկենապէս... տա՛ր զիս:

ՌՌԻՇԱՐ. Այո՛, անմիջապէս...: Այսպիսի սրտշուժ-
ներ իսկոյն կը արուին, եթէ ոչ՝ գործը կը ձախողի: Պարեմն,
կ'առեւանգեմ քեզ: Հօ՛ր, Շառ. լաւ է վիճակդ...: Այս օ-
րերս ամէն ինչ կանխատեսեցի...: Տնօրէն-բժիշկը, որ
ազնիւ երիտասարդ մըն է, ինձի յայտարարեց թէ ազատ
ես ուզածիդ պէս շարժելու և ուզած վայրկեանիդ մեկնելու:

Հօլիթ. — Ե՛րևա՛ն... կանչե՛ր հիւանդապահուհին...
Չանգակը հնչեցո՛ւր:

ՌՈՒՇԱՐ. — Պարտէզին մուտքին վրայ, աջակողմը,
կառք մը կը սպասէ ինծի...: Բնականարար, Պէրն է փո-
ղոցին դռնէն պիտի վերադառնայ...: (Իռուր ցոյց կուսայ.)
Վերարկու ունի՛ս: Գոյքերդ բերել կուտանք յետոյ...:
(Հիւանդապահուհիին ներս կը մտնի). Հարկ եղած հրամանները
պիտի տաս: (Հիւանդապահուհիին): Ահա... տիկինը ինծի
հետ դուրս կ'ելլէ կառքով: Պարտէզին վանդակապատին
տողել կառք մը կը սպասէ ինծի: Կը հաճի՞ք օգնել...:

Հօլիթ. — Այո՛... շո՛ւտ, ժիւլի... եմ եմ պահանջո-
ղը...: Պէտք է որ այսպէս ըլլայ...: Սեւ վերարկուս
տուէ՛ք...:

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ. — Լա՛ւ, տիկին՛ն...: Բան մը
չունի՛ր րսեչիք...: Տիկինը ուզածին պէս կրնայ շարժիլ:

Հօլիթ. — Օգնեցե՛ք ինծի...: Կ'ուզեմ մինչեւ դարդա-
խուցք երթալ:

ՌՈՒՇԱՐ. — Մի՛ յոգնեցնեք ինքզինքդ... անօգուտ
է... ուզածդ հոս պիտի բերեն... սրունդներուդ վրայ ծած-
կոյթներ պիտի դնենք...: Բայց օդը շատ տաք կ'ընէ դուրսը:

Հօլիթ. — Բայց շո՛ւտ... շատ շուտ ըրէ՛ք:

Իրարանցուսի մը մեջ, հիւանդապահուհին Լօրէքի կը հագ-
ցնի վերարկուն:

ՌՈՒՇԱՐ. — Տնօրէն-բժիշկին դիմելու պէտք կա՞յ:

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ. — Երբեք, Տիկինը ու է թոյլ-
ուուրեթեան պէտք չունի, (դիտմամբ) եթէ նոյն իսկ իրի-
կունը չվերադառնայ, Մեր հիւանդները աղէկնայլէ յետոյ
ազատ են ուզածնուն պէս շարժելու:

Հօլիթ. — Ա՛հ, տէր Աստուած, տէ՛ր Աստուած:

ՌՈՒՇԱՐ. — Բան մը չկայ, Լուլու...: Քաջուրթիւն ու-
նեցի՛ր... պէտք է որ ունենաս:

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ, մինչ Լօրէք ցփսփի մը կ'առնի վը-
րան. — Ներեցե՛ք պնդելուս վրայ... եթէ տիկինը չվերա-
դառնայ, ո՛ւր զրկելու է իր գոյքերը... պայուսակ-
ները...:

ՌՈՒՇԱՐ. — Ա՛հ, տիկին՛ն, կ'երեւայ որ մեր դիրքը կը

հասկնաք: Շատ մը վիտեր տեսած ըլլալով մօտէն, իսկոյն կ'ըմբռնէք եղածը: Այդ պարագային, աւասիկ տիկիւնին հասցէն... ամէն ինչ հոն դրկելու... և նոյն իսկ անձամբ գալու բարեհաճութիւնը պիտի ունենաք...:

ԼՕԼԷԹ. Շնորհակալութիւն, ժիւլի:

ՀԻԻԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ. — Ամէն ինչ պիտի ընեմ... վրաստան եղէ՛ք... (պատահականօրէն սոս արտաբերելով) պարտիզպանները կը նշմարեմ. անոնք պիտի օգնեն ձեզի, առանց ուշադրութիւն հրաժարելու...: (Կը կանչէ զանոնք:) Ժան, Ֆրանսուա... հոս կուգա՞ք օգնելու և հիւանդը մինչեւ վանդակապատ փոխադրելու համար...:

ԼՕԼԷԹ, աչկերը սեւեռուն, ձեռքերը կծկուած, նիզ մը ընկնով, առանց արցունքի քափելու, եւ ինկնակի սղերս մը ուղղելով կարծես, իր մէջ զննելու համար պէտք եղած արհուրթներ. — Ապրելու եմ...: Ապրելու եմ...:

Լօրէք միակ քառն ե գոր մեխնաքար կ'արտասանէ:

ՌՌԻՇԱՐ, արոտին վրայ Լօրէքը տեղադրած ասեղնին. — Օ՛ն, Լուիզ, վստահութիւն ունեցի՛ր...: Յոյս ունեցի՛ր: Հիմա դարձեալ ձեռք կ'անցնեմ քեզ...: Պիտի ջանամ քիչ մը երջանկութիւն պարգեւել քեզի...: Կեանքը կը վերսկսինք...: Ի՛նչ որ ալ ըսեն, մարդ նորէն կը սորվի թէ կեանքը ի՛նչ է...: Պիտի տեսնես:

ՀԻԻԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ, արոտին մէկ թեւեւ քունած ասեղն. — Ի՛նչ ըսելու է, երբ Պ. Պէրնիէ վերադառնայ:

ՌՌԻՇԱՐ, պահ մը շուն վնայի յետոյ, զայրուած յուզումով մը. — Լա՛ւ, անոր կ'ըսէք թէ ես առի ճամբուն վայ ձգած ծրարը... ու մինչեւ ծայրը պիտի տանիմ զայն:

Ռուշար եւ պարտիզպանը, արոտին մէջ մէկ թեւեւ քունած, պարտեզ կ'ելլեն, ուր անոնց անհետացումը կը նշմարուի(*):



(*). Ներկայացման ատեն, վարագոյրը կը փակուի այս պատասխանին վրայ: Յաջորդ տեսարանը պէտք չէ ներկայացնել բնաւ:

ՈՒՐԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ, ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՏԻԶՊԱՆԸ

ՀԻՒՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ.—Ֆրանսուա, ձեզի պէտք չունիմ այլ եւս:

ՊԱՐՏԻԶՊԱՆԸ.—Լա՛ւ:

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ. Սակայն, մինչեւ կառք ընկերացէ՛ք անոնց, ի հարկին օգնելու համար...: Բետոյ իմաց կուտաք սպասարկու բժիշկին:

ՊԱՐՏԻԶՊԱՆԸ.—Կարծեմ վիրադարձանուծով մը զբաղած է ան, երկրորդ շարկը...:

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ.—Ուրեմն ես կ'իմացնեմ իսկոյն:

Պարտիզպանը դուրս կ'երթէ արագօրէն: Վանդակապատին նրան ձայնը կը շուռի հետուս: Հիւանդապահուհին ֆիչ մը կարգի կը դնէ սենեակը. յետոյ զարդախուցը կը մտնէ, ուր աղմուկ մը կը շուռի: Դադար: Թասերսքեւը քափուր կը մնայ:



ԻՆՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Պերնիէ, ձախակողմի դռնէն կը մտնէ, ձեռքը ծրարներ քոնած:

ՊԷՐՆԻԷ.—Աւասի՛կ...: Տեսարաններու պատկերները բերի, Լուլու: Հոն ալ հանդիպեցայ...: (Պերնիէ կը նշմարէ որ անկողինը սարսափ է: Ապշահար, ջուկ մը կը շիկ զարդախուցէն:) Ա՛հ, հո՞տ ես...: Կրցի՞ր անկողնէդ ելլել:

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ, զարդախուցէն.—Ե՛ս եմ, պարոն:

ՊԷՐՆԻԷ.—Տիկինը ելած է...: Հո՞տ է...: Կրնամ ներս մտնել:

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ, երեսան զաղով.—Ոչ, պարոն, տիկինը հոս չէ:

Պէ՛րՆԻԷ. — Բայց խօլ անգգուշութիւն մըն է ըրածը...
շատ տկար է տակաւին... : Ո՛ւր է... : Պարտէ՞զն է :

ՀԻԻԱՆԴՊԱՂԱՀՈՒՀԻՆ. — Ոչ, պարո՛ն, տիկինը մեկնեցաւ :

Պէ՛րՆԻԷ. — Ի՛նչ կ'ըսէք... : Մեկնեցա՞ւ... :

ՀԻԻԱՆԴՊ. — Այո՛... ուղեց մեկնիլ... ու մեկնեցաւ...
պարոնի մը հետ, որ զինքը առնելու եկած էր... :

Պէ՛րՆԻԷ. — Որո՞ւն հետ... :

ՀԻԻԱՆԴՊ. — Պարոնի մը հետ, որուն անունը չեմ գի-
տեր... բարձրահասակ անձ մը... կարճ մօրուքով... քիչ
մը խարտեաց... ու մտղերը ճակատին վրայ ծփուն, կարծեմ :

Պէ՛րՆԻԷ. — Ի՛նչ կ'ըսէք... անկարելի բան է... :

ՀԻԻԱՆԴՊ. — Սա քարթը ձգեց : Վրան չնայեցայ...
Թերեւս, անունը գրուած է հոն... : Ամէն ինչ այդ հաս-
ցէին պիտի շրկեմ... :

Հիւանդասպահուհին Պերնիեի կուսայ քաղաքը :

Պէ՛րՆԻԷ, կարդալով. — Ռուշա՛ր... : (Հիւանդասպահուհիին
կը վերադարձնէ քաղաքը) Ենթահակալ եմ :

Պերնիե բան մը չըսեր այդ եւս : Այդ շուքեան հանդէպ
անդուած.

ՀԻԻԱՆԴՊ. կ'աւելցնէ. — Սպասարկու բժիշկը բացատրու-
թիւն պիտի տայ պարոնին :

Պերնիե նշանացի կ'ըսէ թէ հասկցած է : Հիւանդասպա-
հուհին զարդախուց կը մտնէ : Պերնիե առանձին կը մնայ : Երկա-
րօրէն կը դիտէ աւրուած անկողինը, իբր թէ հոն մէկը գտնուե-
ր սակաւի : Պղնձե՛կ ձողին վրայ արմուկը կը թնցուցած, այժերը կը
սեւեռէ քաշուր անկողնին, մարմնին ձգած դրոշմին ու քարձե-
րուն վրայ... : Այժերը կը քրջի : Անկողնին վրայ մնացած ծա-
ղիկներէն մէկը կ'առնէ մեխակաւար, ու քաշկիւնակի մը պէս բեր-
նին կը սանի :

Պէ՛րՆԻԷ. — Լուրձ... :



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220041701

[10804.]

A $\frac{11}{41701}$

Ճշմարտութիւնք	Ա. Ամստեանի	6	910	300
Երեք Հրացանակիրներ	Ա. Տիմա	5	913	40
Քսան Տարի կաք	Ն. Ն	6	911	300
Քամեկիազարդ Կինք	Ն. Ն	3	911	120
Ֆրանս. Յեղափոխութիւն	Ա. Թիւր	5	911	200
Բերայի Հովարտաները	Լ. Շարեանի		911	200
Պատերազմ եւ խաղաղութիւն	Լ. Թոլսթոյ	6	911	20
Իննսուն կրեք	Վ. Հիւլո	3	911	200
Մահուան Պատիժ	Ա. Կլե		911	200
Թորոս Լեւոնի	Ն. Կրեմլից		911	200
Թէրզորոս Իշտու. Լ			911	200
Երկունք			911	200
Վեներական Ախար	Տոկր. Ա. Կո.		913	40
Հայաստանի Մէջէն	Լ. Ֆ. Հոմեմեթոբ		913	100
Մտերիմ Զրոյցներ	Վ. Կոստի	2	913	150
Անտեսանելիին Մէջ	Փրոմ. Տոկոբո		914	50
Հաւատաքնութեան Կողմնակիցները	Ա. Ֆելեյալ		914	250
Կ. Պոլսոյ Առումը	Վիպրամ Երուսղէմ		914	75
Արեւ. Խնդիրը եւ Հայկ. Հարցը	Լ. Տոկոբո Տոկո		914	120
Յայտնութիւններ Կաթողիկոս Կողմնակիցներու	Կոմսուի Թրամար		914	50
Պատմութիւն Հայոց	Ս. Պարաստեանի Ա. Բ. Կոյ.		919	125
Լեռան Ազին	Ս. Աս		920	70
Հայաստանի Տոն Քիչօթը	Թորոսեցի		921	50
Վարժապետին Ազգիկը	Տ. Կոմսարական		922	100
Ազգիկան մը Սիրտը	Օր. Ա. Կո (Սիրտ)		922	110
Աշուղ Դարիպի Հէքեթը	Ա. Կոյ Ջիւանի Ա. Բ. Կոյ.	22-24	922	40
Տանօրեակ	Պոմպիո		923	60
Սալուէ	Օսկար Աւայր		923	20
Օթէլլօ Թատրերգութիւն	Շէկսբի		923	60
Ասիական Պատմութիւններ Թիւթակներու կախը (Ղաւլամ Հիւսէյնի արկածները)	Կոմս ար Կոպիւն		924	30
Մանչ-Ազգիկը	Վ. Մարկիթ		924	125
Յիմար Կոյսը	Յ. Պարսոյլ Թատր.		924	60

Մ Ա Մ Լ Ա Յ Տ Ա Կ

Մ. Թիւրքի, Ենեանի Բ. Կոյ.

ՍԱԹԵՆԻԿ ԵՒ ՏՐԴԱՏ